

ՀՀ ՔԱՄ Հ. ԱՇԽԱՏԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՁՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵՁՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2024, Նոյեմբերի 26-27)

ԵՐԵՎԱՆ
ՔԱՄ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024



ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2024, նոյեմբերի 26-27)

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

**INSTITUTE OF LANGUAGE AFTER R. ACHARYAN OF NAS RA
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА НАН АР**

ISSUES ON ARMENIAN LANGUAGE HISTORY

PROCEEDINGS OF THE INTERNATIONAL CONFERENCE

(Yerevan, 2024, November 26-27)

ПРОБЛЕМЫ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ

(Ереван, 2024, 26-27 ноября)

Yerevan -2024

Ереван- 2024

ՀՏԴ 811.19՝0(082)

ԳՄԴ 81.51դ 943

Հ 282

Հրատարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Բ. Գ. Պ. Վ. Լ. Կատվալյան

Խմբագրական խորհուրդ՝

Բ.Գ.Պ. Վ.Լ. Կատվալյան (նախագահ), Բ.Գ.Պ. Լ.Շ. Հովհաննիսյան,
Բ.Գ.Թ. Գ.Ս. Մխիթարյան, Բ.Գ.Թ. Ն.Ս. Միմոնյան

Հ 282 Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ: Միջազգային
գիտաժողովի նյութեր (Երևան, 2024թ., նոյեմբերի 26-27).- Եր.: ԳԱԱ
ԼԻ հրատ, 2024.-192 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2024թ. նոյեմբերի 26-27-ին Երևանում ՀՀ ԳԱԱ
Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի
կազմակերպած միջազգային գիտաժողովի զեկուցումները: Ներկայացվող նյութերն
ընդգրկում են հայոց լեզվի պատմության տարբեր փուլերի և խնդիրների առնչվող հարցեր:
Ժողովածուն օգտակար կլինի հայոց լեզվի պատմության ուսումնասիրության տեսական
ու գործնական հարցերով հետաքրքրվողներին, նաև՝ ուսանողներին:

ՀՏԴ 811.19՝0(082)

ԳՄԴ 81.51դ 943

ISBN 978-9939-970-07-3

DOI: 10.54503/978-9939-970-07-3

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
2024

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ, ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՎ
ԵՆԹԱԿԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Մխիթարյան Գայանե

բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. gayane.mkhitaryan@lang.sci.am

DOI: 10.54503/978-9939-970-07-3-5

Բանալի բառեր. Գրաբար, հոլով, դերբայ, Աստվածաշունչ, քերականություն, շարահյուսական կիրառություն:

Ենթական, բացի ուղղական հոլովից գրաբարում գործածվում է նաև սեռական, տրական և հայցական հոլովներով: Տարբեր հոլովներով ենթակաները գործածվում են այնպիսի կառույցներում, որոնց ստորոգյալները կա՛մ դերբայներ են, կա՛մ դիմավոր բայեր, կա՛մ էլ խառը տիպի՝ դերբայական և դիմավոր ձևեր են: Ուղղական հոլովով ենթակայի գործածությանը չենք անդրադառնա, քանի որ դա նրա արտահայտության հիմնական միջոցն է: Թեք հոլովաձևերով ենթակայի կիրառությունը դրսևորվում է որոշ առանձնահատկություններով: Խոսքը վերաբերում է անորոշ և անցյալ դերբայների հետ նրա գործածությանը: Այդ դերբայները իրենց անվանական և բայական հատկանիշներով Աստվածաշնչում ինքնատիպ ու հետաքրքիր դրսևորումներ ունեն, որոնք կարելի է համարել գրաբար խոսքի առանձնահատկությամբ պայմանավորված շարահյուսական կառուցվածքային յուրահատուկ միավորներ:

Երկու դերբայներն էլ ակնհայտ գործուն են և ունեն շարահյուսական լայն կիրառություն:

Անցյալ դերբայը, ինչպես բնորոշում է Ա. Բագրատունին, «ինքնին միայնակ վարի յաճախ փոխանակ դիմաւոր բայի»¹, այսինքն՝ դիմավոր բայի դեր է կատարում՝ կազմելով դերբայական նախադասություն: Արդի հայերեն է փոխարկվում կամ ընկալվում որպես դիմավոր նախադասություն. «Նորա տեսեալ զնշանսն՝ հաւատաց»/Նա տեսավ նշանները և հավատաց: Նման կառույցներում ենթական կարող է գործածվել ինչպես ուղիղ, օրինակ՝ «Նոքա առեալ տանէին զնա...» [Ծննդ, 2, 8], այնպես էլ թեք հոլովաձևերով, հատկապես սեռական հոլովով: Օրինակ՝ «Զչարն՝ չար ասէ՝ որոյ զնոյն ստացեալ ունիցի» [Առակ, Ի, 14]. «Բայց մարդոյ առեալ զանձնիշխանութիւն...» [Ծննդ.,], «Որոյ թողեալ զճշմարտութիւն Հոգւոյն...» [Թիւք, 4, 11], «Պօղոսի առ Եբրայեցիսն կարգեալ զանուանս՝ գովէ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն» [Թուղթ], «Եւ զերեսս Տեառն չէր աղաչեցեալ [Ա Թագ., ԺԳ,

¹ Ա. Բագրատունի, Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, 1852, էջ 119:

12]», «Հաւատքով սրբեալ զսիրտս նոցա» [Գործ, ԺԵ, 7]: Նախադասությունների համեմատությունը փաստում է, որ սեռական հոլովով ենթակա ունեցող կառույցներում դերբայն անկախ դիրք ունի, իսկ ուղղական հոլովով ենթակա ունեցող կառույցներում էական դեր ունի դիմավոր բայը և ոչ թե անցյալ դերբայը: Ասել է թե՛ անցյալ դերբայի պահանջով է ենթական դրվում սեռական հոլովով: Առկա է ստորոգումը՝ իբրև բայական հատկանիշի վերագրում ենթակային, որը երևում է ընդհանուր խոսքային միջավայրում: Ակնհայտ է, որ նման նախադասություններում բացառվում է ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:

Անցյալ դերբայ – սեռական, տրական հոլովով ենթակա կառույցները այնքան տարածված էին ու ճանաչելի, որ դրանց հանգամանակից անդրադարձել են գրաբարի բոլոր քերականները²: Վ. Չալրիսյանը իր Քերականության մեջ մի հետաքրքիր դիտարկում է անում՝ նշելով, որ կրավորական սեռի անցյալ դերբայը սեռական հոլովով ենթակա չի կարող առնել, իսկ չեզոք սեռի անցյալ դերբայը առավելապես ուղղական հոլովով ենթակա է վերցնում³: Թեպետ ներգործական սեռի բայերը ևս նույն ձևով կարող են արտահայտել նաև կրավորական սեռի նշանակություն, ինչպես՝ «...որ մեծ շնորհն պարգևեալ է նմա յԱստուծոյ» [Յեսու, ԺԴ, 10]. «Առաքեալ եմ առաջի նորա...» [Բ Թագ., ԺԶ, 20]. «Զորս տուեալ է ձեզ յԱստուծոյ...» [Ա.Թագ., ԻԱ, 13]: Գ.Զահուկյանը գրում է, որ «...հնդեվրոպական լեզվական միասնության շրջանում լեզվական համակարգի մեջ եղած հակասությունները հիմք են տվել հին հայերենի որակի սաղմնավորման համար: Ինչպես յուրաքանչյուր երևույթ, հին հայերենը ևս ուներ հին որակի հետքերը և նոր որակի սաղմերը»⁴:

Տարաբնույթ նախադասություններում՝ հատկապես խառը տիպի կառույցներում սեռական հոլովով ենթական ունենում է ոչ միայն անցյալ դերբայով, այլև դիմավոր բայով ստորոգյալ, այսինքն՝ անցյալ դերբայի պահանջով ենթական դրվում է սեռական հոլովով, սակայն շարունակության մեջ, դերբայ ստորոգյալից բացի, զուգահեռ գործածվում է նաև դիմավոր ստորոգյալը, օրինակ՝ «Զայս տեսեալ արքային Նաբուգոդոնոսորայ՝ ոչ հանդուրժէր ելանել ընդ առաջ նորա...» [Եր., 46, 18]. Ջի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է [Մնաց., ԺԵ, 25]

Ա.Բագրատունին նշում է, որ գրաբարում, թեպետ սավաղեպ, բայց անցյալ դերբայի հետ գործածվում է նաև տրական հոլովով ենթակա:

² Վ.Չալրիսյան, նշվ.աշխ., էջ 2213, Ա.Բագրատունի, նշվ.աշխ., էջ 248, Գ.Աւետիքեան, Քերականութիւն Հայկական, ի Վենետիկ, 1815, էջ 468, Ստ.Մալխասեանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 36-37:

³ Վ.Չալրիսյան, Քերականութիւն Հայկագնեան լեզուի. հանդերձ փոփոխմամբք եւ յաւելուածովք աշխատասիրեալ ի Հ. Արսէնէ Այտընեան, Վիեննա, 1885, էջ 214:

⁴ Գ.Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 94-95:

⁵ Ա.Բագրատունի, նշվ. աշխ., էջ 120:

Տրական հոլովով ենթական գրաբարում գործածվում է հիմնականում անորոշ դերբայի հետ: Աստվածաշնչում նման կառույցները ունեն հետաքրքիր առանձնահատկություն. մի դեպքում՝ անորոշ դերբայը ուղիղ ձևով կարող է տրական հոլովով ենթակա ստանալ. «...պահել զքեզ յամենայն ճանապարհս քո» [Մղ., 90,11]. «...պաշտել զանուն Տեառն Աստուծոյ իւրո...» [Բ Օր., 18, 7], մյուս դեպքում՝ անորոշ դերբայը **ի** նախդիրով գործածվելիս տրական հոլովով ենթակա է ստանում. «...ի պահել նմա հատուցումն...» [Մղ., 18, 12]. «Ի դարձուցանել Տեառն զգերութիւն Սիոնի» [Մղ., 125, 1]:

Նման կառույցներում գործողությանն առնչվող ժամանակի գաղափարը առաջնային է դառնում՝ պայմանավորված **ի** նախդիրի և անորոշի գործածությամբ:

Անորոշը բուն բայական իմաստով երբեմն կարող է ունենալ սեռական հոլովով ենթակա: Օրինակ՝ «Ակն ունէին նորա/նմա մեռանելոյ» - Սպասում էին, որ նա մեռնի կամ՝ «Չկայր հոյս զաւակի ելանելոյ.../ Հոյս չկար, որ զավակ կծնվեր - ելներ»:

Գրաբարի գրեթե բոլոր դերանունները, բացի փոխադարձ դերանուններից Աստվածաշնչում գործածվում են իբրև տրական հոլովով ենթակա: Դրանք են **անձնական** (ինձ, քեզ, նմա, մեզ, իւր .«...իւր իսկ արժան էր արարածս առնել» [Ծն., 2, 12], նոցա «Եթէ փոյթ ինչ ոչ է նոցա յայնմհետէ սուրբ սպանելոցն [Դատ., 5, 17]), **ստացական** (իմում «Եւ Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա» [Մղ., Դ, 15]), **ցուցական** (այնմ, դմա. «Զի հնար էր այնմ լինել...» [Ծն., 3, 12]. «Եվ չէ պարտ կեալ դմա/Դա չպետք է ապրի» [Ծն, 3, 17]), **հարցական և հարաբերական** («...որոց պարտ է պաշտել զնա...» [Մտ., 3, 18]), **անորոշ** (ումեք, «Զի ոչ է մարթ ումեք սկիզբ առնուլ լինելոյ...»), **որոշյալ** (ամենեցուն «...զի բարեաց գործոց նախանձաւոր լինել ամենեցուն...» [Եբ., 4, 14]):

Աստվածաշնչում անորոշ դերբայի հետ գործածվում են միադիմի կամ դիմագուրկ բայեր, որոնք խստիվ պահանջում են տրական հոլովով ենթակա. *հարկ է, մարթ է, պիտոյ է, վայել է* և այլն: Օրինակ՝ «Ո՞չ գիտէիք եթէ ի տան Հոր իմոյ պարտ է ինձ լինել» [Ղկ., 2, 49]. «Պարտ է որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոց» [Ղկ., 24, 7]. «Զի պարտ է նմա թագաւորել» [Ա Կոր., 15, 25]. «Պարտ է ձեզ, ով արք, անսալ ինձ» [Գործք, 27, 21]. «Ոչ է մարթ չգալ զայթակողութեան» [Ղկ., 17, 7]. «Զի ոչ է մարթ մարգարէի կորնչել արտաքոյ» [Ղկ., 17, 1]. «Որպէս վայել է Ատուծոյ ձերոյ՝ արարէք» [Բ Եզր., 7, 18]. «զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս» [Մտ. 3, 15]. «Երկու ինչք պիտոյ են ինձ» [Յբ., 13, 20]. «Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ ի՞ս գաս» [Մտ., 3, 14]. «Ոչ է պիտոյ բժիշկ կարողաց, այլ հիւանդաց» [Մտ. 9, 12]: Գրաբարի դասագրքերում, ձեռնարկներում սրանք կոչվում են եղանակիչ բա-

յեր»։ Դրանք անորոշ դերբայի հետ գործածվելիս արտահայտում են եղանակավորող իմաստ, այսինքն՝ անորոշին տալիս են այս կամ այն եղանակի, հատկապես հարկադրականի նշանակություն։ Եղանակիչ բայի հետ գործածվող ենթակայի իմաստ արտահայտող բառը դրվում է տրական հոլովով և արդի հայերեն է փոխարկվում ուղղական հոլովով, իսկ անորոշ դերբայը՝ դիմավոր բայով. «Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ ի՞նչ գաս»։

Նման կառույցները բնորոշ են նաև մերօրյա բարբառներին։ Անդրադառնալով բարբառային հայերենի շարահյուսական առանձնահատկություններին՝ Վ. Կատվայանը ընդգծում է, որ բարբառային խոսքում որոշ յուրահատկություններ կան նախադասության անդամների արտահայտության առումով։ «Ինչպես մի շարք այլ բարբառներում,- գրում է նա,- Բայագետի բարբառում ևս ենթական *ունեն, կամ, հըլնեմ* (լինել) բայերի կողքին հաճախ արտահայտվում է տրական հոլովով (Ըդոնցը էրկու բոստան ունին. Մեզի լավ տավար-մալ կար. Հ՛առէչ ասում ին, Նվոյ Սարոյ հօռթիկ հ՛էլե)։ Այսպիսի կառույցներում *կամ* բայի իմաստով գործածվում է *եմ* բայը (Էտ գ՛ախ մեզի էրկու կօվ էր)»։ Երբեմն կիրառվում է նաև առօրյա խոսքում՝ Ինձ պետք է գյուղ գնալ – Ես պետք է գյուղ գնամ. Ինձ պետք է գրքեր գնել – Ես պետք է գրքեր գնեմ. Ինձ պետք է հանգստանալ – Ես պետք է հանգստանամ։

Նման կառույցների գործածություն կա նաև ռուսերենում՝ *мне надо ехать, ему нечего делать*. Համեմատենք գրաբարյան ձևերի հետ՝ Պարտ է ինձ գնալ։ Ոչ է պիտոյ նմա առնել/ունել։ Նման զուգահեռ ձևերի առկայությունը պատահական չի կարող լինել։

Ըստ լեզվաբանական հետազոտությունների՝ հնդեվրոպական հոլովման հարացույցում ուղղականի ձևը ավելի ուշ է զարգացել, քան սեռականը⁶։ Սեռական, տրական հոլովով ենթակայի գործածությունը անցողական բայի (անցյալ դերբայի) հետ վկայում է հին հայերենի երգատիվ բնույթի մասին։ Գրաբարի այս կառույցին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ։ Տեսակտները տարբեր են. մի մասը բխեցնում է հայերենի **անցյալ դերբայի բնույթից**, որը բայանուն էր (Մեյե), գործող անձի սեռական հոլովով դրված լինելը պայմանավորված է ուղղականի փոխարեն երկրորդաբար հանդես եկող պերֆեկտի իմաստից (Կ.Տրոստ), սերում է աորիստի կամ անցյալի հիմքից և նախապես գործող անձ է եղել (Լ.Մարիեա), բխում է *ունենալ* բայով կազմված շրջասության իմաստից (Է.Բենվենիստ,

⁶ Ա.Աբրահամյան, Գրաբարի ձևնարկ, 1976, էջ 224-225։ Հ.Ավետիսյան, Ռ.Ղազարյան, Գրաբարի ձևնարկ, 1992, էջ 169-170։ Գրաբարի քերականության պատմության մեջ դրանք անվանվել են նաև դիմագուրկ բայեր (Մ. Չամչյան, Վ. Չալըխյան, Ա.Այտրնյան)։

⁷ Վ. Կատվայան, Բարբառային հայերենի շարահյուսական որոշ առանձնահատկությունների շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ. 15, 2023, էջ 315։

⁸ Յու.Գաբրիելյան, Հայերենը և հնդեվրոպական լեզուն, Ե., 2001, էջ 179։

Յ.Լոհման), ուշ շրջանի գոյացում է հայերենում (Ս.Ղազարյան): Մյուս մասը հայերենում էրգատիվ կատույցը համարում է կովկասյան լեզուների ազդեցության հետևանք (Է.Թումանյան), նաև՝ վերագրում է հնդեվրոպական ծագում ունի, որը պայմանավորված է հնդեվրոպական շրջանում վերականգնված նախնական սեռականի և արտոյուտիվի (պայմանականորեն հայցական) հոլովների հակադրությունից (Յու. Գաբրիելյան): Կարծիք կա, որ էրգատիվ կատույցը ընդհանուր լեզվաբանական բնույթ ունեցող տիպաբանական զարգացման արդյունք է (Ս.Սախուկիա): Սեռական հոլովով ենթական ունեցող կատույցների հնդեվրոպական բնույթին անդրադարձել է նաև Վ.Հաբարձումյանը Հովհ.Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանության առաջաբանում¹⁰:

Անժխտելի է, որ աշխարհի լեզուների մոտ մեկ քառորդը ունի էրգատիվ կատուցվածք, այդ թվում նաև մի շարք հնդեվրոպական լեզուներ (իտերերեն, լուվիերեն, իրանական շատ լեզուներ, հինդի և այլն): Դեռ ավելին, փաստերը վկայում են, որ մեր տարածաշրջանի բազմաթիվ լեզուներ, անկախ ծագումից, ունեցել են էրգատիվ բնութագիր: Իսկ էրգատիվ կատուցվածքից դեպի նոմինատիվ և հակառակ տիպի անցումները ոչ միայն արտառոց երևույթներ չեն, այլև ճիշտ հակառակը¹¹: Նյութերն, անշուշտ, հազարամյակների խորքերը ձգվող համադրությունների հնարավորությունն են ընձեռում՝ բացահայտելով հնագույն մշակույթների փոխազդեցությունները քաղաքակրթության զարգացման քառուղիներում:

Հին հայերենում նման կատույցները գործառական լայն ոլորտ ունեն. դա հաստատվում է ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գրականության ընձեռած նյութով, բարբառային հայերենի տվյալներով:

Мхитарян Гаяне - Употребление подлежащих родительного и дательного падежов в Армянской Библии.- Рассмотрены особенности употребления сослагательного наклонения с наклонными формами в армянской Библии. Употребление сослагательного наклонения с переходным глаголом в родительном и дательном падежах свидетельствует о том, что древнеармянскому языку не были чужды структуры эргативного характера. Исследования подтверждают, что подобные конструкции имели широкое функциональное применение в древнеармянском

⁹ Ս. Գազինյան, Հին հայերենի անցյալ դերբայի զարգացման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, հ. 2, 2007:

¹⁰ Հովհ.Օձնեցի, Երկեր, Առաջաբանը և ծանոթագրությունները Վազգեն Համբարձումյանի, Ե., 1999, էջ 16-17:

¹¹ Տե՛ս Այվազյան Ս., Հայերենի որոշ հնչյունափոխությունների ժամանակաշրջանի ճշգրտման հնարավորությունը Վանի սեպագիր (ուրարտական) արձանագրությունների միջոցով, Պատմաբանասիրական հանդես, հ.1, 2014:

языке. Об этом свидетельствуют материалы как переводной, так и самостоятельной литературы, подобные конструкции весьма распространены и в современном диалектном армянском языке. Все это опровергает утверждение тех, кто отрицает хотя бы тесную связь между армянским и урартским языком, что эргативный характер урартского языка исключает возможность его генеалогического родства с армянским. Все это опровергает утверждение тех, кто отрицает хотя бы тесную связь между армянским и урартским языком, что эргативный характер урартского языка исключает возможность его генеалогического родства с армянским.

Ключевые слова: Грабар, падеж, причастие, Библия, грамматика, синтаксическое употребление.

Mkhitaryan Gayane - Use of the genitive and dative cases in the Armenian Bible. - The peculiarities of using the subjunctive with oblique forms in the Armenian Bible are considered. Using the subjunctive mood with a transitive verb in the genitive and dative cases testifies that the Old Armenian language was not alien to the structures of the ergative character. The research confirms that such constructions had a wide functional application in Old Armenian. This is proved by the materials of both translated and independent literature, similar constructions are quite common in the modern dialectal Armenian language as well.

All this refutes the claim of those who deny at least a close connection between Armenian and Urartian that the ergative character of the Urartian language excludes the possibility of its genealogical kinship with Armenian.

Keywords: Grabar/Old Armenian, Case, Participle, Grammar, Syntactic usage.

«ՏՈՒՆ, ԲՆԱԿԱՎԱՅՐ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՓՈԽԱՌՅԱԼ ԾԱԳՄԱՆ ԲԱՌԵՐԸ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Դիլբարյան Նարինե

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԵՊՀ հայոց լեզվի պատմության և
ընդհանուր լեզվաբանության ամբիոն
narine.dilbaryan@ysu.am

DOI: 10.54503/978-9939-970-07-3-11

Բանալի բառեր. Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», «տուն, բնակավայր» հասկացույթ, աշխարհընկալում, մշակութային փոխազդեցություն, փոխառություններ, փոխատու լեզուներ, իմաստային տեղաշարժեր:

Ներածություն

Լեզվի՝ իբրև հասկացութային համակարգի ըմբռնումն ճանաչողական լեզվաբանության և մշակութաբանության առաջնային խնդիրներից է, որովհետև հասկացությունները բացահայտում են տվյալ լեզվի կրողների ազգային ինքնությունը և հոգևոր ու նյութական կյանքը: Հասկացույթն ըմբռնվում է որպես գիտակցական առանձին միավոր, որն ունի լեզվական արտահայտություն և խոսքային իրացում: Լեզվական հասկացութաբանությունը ժամանակակից միջգիտակարգային ուղղություններից է, որը վերջին տասնամյակում մեծ զարգացում է ապրում: Այս հայեցակետից լեզուն, լեզվական միավորները սկսում են ուսումնասիրվել այն կրողների, այսինքն՝ մարդկանց հետ փոխկապակցված: Պատկերավոր ձևակերպմամբ՝ լեզվի քննությունն անկախ մարդկային գործոնից կհանգեցնի նույն սահմանափակ արդյունքին, ինչ կենսաբանության մեջ մարդակազմության ուսումնասիրությունը գուտ գեղարվեստական պատկերների հիման վրա՝ առանց իրական մարդու և նրա մարմնի:

21-րդ դարում մարդակենտրոն հարացույցը դարձել է գերակա, մեր համոզմամբ, մարդակենտրոնության հարացույցն ավելի ստույգ կարելի է կոչել ազգակենտրոն հարացույց, քանի որ յուրաքանչյուր լեզվի պարագայում կարևորը ոչ այնքան ընդհանուր մարդկային մտածական որակներն են, որքան յուրաքանչյուր առանձին ազգին կամ ցեղակից, դրացի ազգերին բնորոշ առանձնահատկությունները: Հասկացութի ճանաչողական կառուցվածքի ընդունված սահմանումը ներառում է հետևյալ բաղադրատարրերը՝ հասկացական միջուկը, իմաստաբանական ոլորտը, ճանաչողական ոլորտը, պատկերային-խորհրդանշական ոլորտը և մշա-

1 Абилюдинова, Ж. Б., Карпец Ж. Б, Концепт как лингвокогнитивное понятие .- Молодой ученый, № 12 (354), 2021, с. 272.

կութարժեքանական ոլորտը: Յուրաքանչյուր հասկացույթի մեջ ամփոփվում են վերջինիս լեզվական բազմաթիվ նշանակումներ, որոնք կարող են ունենալ տարբեր ծագումնաբանություն, բառակազմություն, բայց ունեն միավորող իմաստաբանություն, դրանք վեր են հանում տվյալ լեզվակիր հանրույթի՝ ազգի մտածողության արժեքակերտը, հավաքական գիտակցության բնորոշ պատկերները, մշակութային, արժեքանական կողմնորոշումները: Մեր այս հետազոտության նպատակը Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում տուն, բնակավայր հասկացույթին վերաբերող փոխառյալ ծագման բառերի դասակարգումն ու վերլուծությունն է՝ ըստ հնչյունական, բառակազմական և իմաստաբանական բնութագրիչների, որոնք հայկականացման ընթացքում կրել են տարբեր փոփոխություններ:

Տուն, բնակավայր հասկացույթը ընդհանուր մարդկային տեսանկյունից առաջնային միավորն է, որն առավել բազմակողմ, խորքային է արտահայտում լեզվակիր ժողովրդի ինքնության հիմքերը, իր տեղի և ազդեցության գիտակցումը շրջակա մեծ աշխարհում: Այս հասկացույթը մշակույթի և լեզվի համակարգում կենտրոնական դիրք ունի, և նրա նշանակությունները տարբեր կերպ են դրսևորվում՝ կախված առանձին լեզուների և մշակույթների յուրահատկություններից: Աշխարհի լեզուների մեծամասնության մեջ այս հասկացույթն արտահայտում է ոչ միայն ֆիզիկական, այլև խորքային խորհրդանշական իմաստ, ունի արժեքակիր արժեք՝ արտահայտելով հայրենիքի, անվտանգության, ընտանիքի, արմատների և ազգային ինքնության գաղափարները: Բերենք մի քանի օրինակ, թե ինչպես են տարբեր լեզուներում և մշակույթներում ըմբռնում «տուն, բնակավայր» հասկացությունը: Այսպես՝ ռուսերենում «дом» բառը նշանակում է ոչ միայն շինություն, որտեղ ապրում են մարդիկ, այլ ընդգրկուն հասկացություն է, որը կապված է ընտանեկան արմատների, նախնյաց ժառանգության, սիրո և հարազատության հետ: Ռուսերենում հայտնի արտահայտությունն է կա. «дом – это не стены, а люди» («տունը ոչ թե պատերն են, այլ մարդիկ»), այս դարձվածն ընդգծում է ընտանիքի և մերձավորների կարևորությունը տուն հասկացության մեջ, դատարկ շենքը դեռ տուն չէ: Իսկ հայրենի տուն (родной дом) եզրույթն ավելի լայն է և ամփոփում է հարազատ եզերք հասկացողության ողջ համակարգը՝ ազգային արմատները, մշակութային պատկանելությունը, հոգևոր և մարմնավոր կապը նախնիների հետ, արյան կանչը: Անգլերենում տարբերակվում են home և house բառ-հասկացությունները: House-ը նշանակում է ֆիզիկական շինություն, իսկ home-ը ունի շատ ավելի խոր նշանակություն, դա այն վայրն է, որտեղ մարդն իրեն հարմարավետ է զգում, որտեղ նրան սպասում են, և որտեղ նա խաղաղություն է ձեռք բերում: Անգլերենում կա տարածված արտահայտություն «Home is where the heart is» («տունն այն-

2 Дербишева З. К. 2020. Основы лингвокогнитивного сравнения языков: монография, Москва, 2020, с. 71:

3 Абилюдинова, Ж. Б., Карпец Ж. Б, Концепт как лингвокогнитивное понятие, с. 274:

տեղ է, որտեղ սիրտն է»), որը ցույց է տալիս, որ տունը պարտադիր չէ, որ որոշակի վայր նշանակի, այն ավելի շուտ հոգեվիճակ է, զգացմունքային կապվածություն: Գերմաներենում ունենք **Heimat** և **Zuhause** բառ-հասկացությունները. Zuhause-ը բնակավայրն է՝ որպես ֆիզիկական տարածություն, իսկ Heimat-ը հայրենիքն է, որտեղից սերում է մարդը, և որի հանդեպ զգում է հուզագգայական և մշակութային կապվածություն, այս բառն արտահայտում է հողի, համայնքի, նախնիների և պատմության հետ մարդու ունեցած կապն ու միասնականությունը, նրանց անքակտելի հավաքական ուժը: Ուշագրավ է, որ մի շարք լեզուներում, ինչպես արաբերենն ու ճապոներենը, «տուն և բնակավայր» հասկացությունները ներառում են նաև պատասխանատվության զգացում, պարտք այն տան և վայրի հանդեպ, որտեղ ապրում են, պատասխանատվություն այն մերձավոր մարդկանց նկատմամբ, որոնց հետ համատեղ բնակվում են: Մեր հետագա այս հետազոտությամբ ցույց կտանք, որ հայերենում ևս «տուն, բնակավայր» հասկացության բառային նշանակիչներում առկա է այս պատասխանատվության, պարտավորության զգացումը: Հայոց լեզվում «տուն» հասկացությոնը արտահայտված է բազմաթիվ եզրույթներով, որոնք այս երևույթի ամենատարբեր կողմերն են արտացոլում՝ ներառյալ սերը, նվիրումը և անձնական պատասխանատվություն-պարտավորությունն իրենց հայրենի եզերքում ոչ միայն այս պահին ապրող հայրենակիցների, այլև հեռացած նախնիների, անցյալի ժառանգության և հոգևոր ու նյութական մշակութային արժեքների հանդեպ:

Տուն, բնակավայր նշանակող փոխառյալ միավորները

Հին հայերենում «տուն, բնակավայր» իմաստային դաշտի բառերի միջուկային միավորները ժառանգված են հնդեվրոպական մայր լեզվից, և դրանք բնորոշ են գրական հայոց լեզվի զարգացման հետագա բոլոր շրջափուլերին, այսինքն՝ ընդհանուր հայկական բառեր են, որոնք գրաբարից ժառանգվել են մեր արդի գրական լեզվին և բարբառներին: Բնակավայր հասկացության բառերի մեծ մասը պարզ արմատական է՝ կենսունակ բառային կապակցություններ կազմելիս:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում բնակավայր հասկացության բառերի մեծամասնությունը գրեթե չի ենթարկվել փոփոխությունների: Եղած փոփոխությունները հիմնականում վերաբերում են որոշ բառերի հիմնական գործածությունից դուրս մղվելուն, պատմաբառերի կամ հնաբանությունների վերածվելուն, իմաստի նեղացմանը: Ընդհանուր հնդեվրոպական «տուն, բնակավայր» նշանակող փոխառյալ բառերի շարքում բավական զգալի են իրանյան ծագման միավորները, որոնք հիմնականում պահլավական շրջանի փոխառություններ են:

Ինչպես նշեցինք, «տուն, բնակավայր» նշանակող բառերի շարքում միջուկային են բնիկ ծագման բառերը, բայց հասկացույթի կազմում, իմաստաբանության և ճանաչողական ոլորտներում բավական լուրջ դերակատարում ունեն իրանական միավորները: Լ. Հովհաննիսյանը, հանգամանալի ուսումնասիրելով իրանական փոխառությունները և նրանց դերը հայերենում, ճշգրիտ դիտարկում է կատարում՝ նշելով, որ իրանյան ծագման բառերի առկայությունը հայերենում պետք է դիտարկել իբրև ոչ այնքան լեզվական, որքան պատմամշակութային երևույթ, ինչպես լատիներենում հունարեն բառերի գործածությունը. «Այս եզրահանգման մեջ, իհարկե, դարձյալ բառապաշարի փոփոխության արտաքին և ներքին գործոնների փոխկապակցվածության և արտալեզվականի էական լինելու հարցն է»: Քանի որ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը հայերի ազգածագման հիմնարար մատենագիտական սկզբնաղբյուրներից է, այստեղ վկայված են «տուն, բնակավայր» իմաստը կրող գրեթե բոլոր համագործածական բառերը, ինչպես բնիկ, այնպես էլ իրանական ծագման, գործիչակ՝ **աշխարհ, ապարանք, աւան, շէն, դաստակերտ, աշտարակ, ապաստան, բուրաստան, գերեզման, դիւան, դաշտ, դիւան, դժոխք, դրախտ, դղեակ, խորան, կոյս** (կողմ), **մեհեան, նահանգ, տաճար, վանք/վանորայք, վիհ, սահման, ոստան** ևն: Հայոց լեզուն, ի սկզբանե եղել է մշակույթների և լեզուների խաչմերուկում՝ գործուն փոխառելով տարբեր բառեր, միաժամանակ և փոխատու լինելով: Իրանական եզրույթները փոխառվել են տարբեր ժամանակաշրջաններում՝ վաղնջահայերենից մինչև գրաբար, միջին հայերեն ամենատարբեր գործոնների ազդեցությամբ՝ մշակութային, կրոնական փոխներթափանցումներ, պետական-քաղաքական հարաբերություններ, առևտրային կապեր ևն: Մեր այս հետազոտության ընթացքում կիրառել ենք ներքին և արտաքին համեմատության, զուգադրման և վերականգնման մեթոդները:

Վերլուծությունը սկսենք բերված բառերի շարքում առավելագույն կիրառությունն ունեցող **աշխարհ** բառից: Իրանական ծագման արմատ է, ըստ Հր. Աճառյանի՝ **xšāy** «իշխել» արմատից⁴: Երկում հանդիպում ենք աշխարհ բառով մեծաթիվ կապակցությունների՝ **աշխարհ Ալանաց, աշխարհ Ասորուց, աշխարհ Ծովաց, աշխարհ Հայկազանց, աշխարհ Հայոց, աշխարհ Հոնաց, աշխարհ Հունաց, աշխարհ Ճենաց, աշխարհ Միջագետաց, աշխարհ Պաղեստինացուց, աշխարհ Պարսից, աշխարհ Վրաց, աշխարհ Քուշանաց, Արեաց աշխարհ, աշխարհ Բուղարաց, աշխարհ Հնդկաց** ևն: Այս կառույցները վկայում են, որ **աշխարհ** բառը երկրանուններ կազմող հիմնական միավորներից էր գրաբարյան տեղանվանացանկում: Գրաբարյան երկրանունները բաղադրյալ են՝

⁴ Հովհաննիսյան Լ.Շ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 39:

⁵ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, 1971, հ. Ա, էջ 217:

հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական կապակցություններ, որտեղ **աշխարհ** միավորը կայուն հատկացյալն է:

Հին հայերենում երկրների անվանման բանաձևը պարտադիր ներառում էր բնակիչների գործոնը, ժողովրդանունները, որոնք դրվում էին սեռական հոլովաձևով՝ որպես միաժամանակ ն' սերում-ծագում, ն' պատկանելություն արտահայտող հատկացուցիչներ՝ **Ալանաց, Միջագետաց, Ասորաց, Հայկազանց, Պաղեստինացուց** ևն:

Լայն կիրառություն ունեցող եզրույթներից է **սահման** բառը, բերենք այս միավորի իմաստային բեռնվածությունը բացահայտող բնագրային օրինակ. «Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ»⁷: Էդ Աղայանի՝ արդի հայերենի բացատրական բառարանում մեզ հետաքրքրող իմաստը հինգերորդն է՝ «որևէ սահմանագծից ներս գտնվող տարածություն, վայր»⁸: Բառը ծագում է **sāhmān* իրանյան արմատից: «Պատմութիւն Հայոց» -ում վկայված են այս եզրույթով կազմված բազմաթիվ բաղադրյալ կառույցներ, որոնք ունեն երբեմն դարձվածային, իսկ հիմնականում տեղագրական, տեղանվանական արժեք՝ **սահմանք քաջաց, սահմանք հայրենեաց, սահման Ասորեստանի, սահման Ասորպատականի, սահմանք Ադուանից, սահմանք Ասորուց, սահման սահման Բակտրիացուց, սահմանք Խաղտեաց, սահման Կեսարու, սահման Մանանաղոյ, սահմանք Մասքթաց, սահմանք Հայոց** ևն:

Հաջորդ կարևոր միավորը **շէն**-ն է. ՆՀԲ-ում այս բառն ունի «աւան, գիւղ, հարաքումն հիւղից եւ տաղաւարաց, նակարան գեղջկաց» իմաստները¹⁰: Արդի հայերենի բառարանում միայն վեցերորդ իմաստով է տրվում իբրև գոյական՝ գյուղ, գյուղակ նշանակությամբ: Առաջնային իմաստով դարձել է ածական՝ «մարդաբնակ, բնակչություն ունեցող» բացատրությամբ¹¹: Ծագում է իրանական **šen* «հանգստավայր, բնակատեղի» բառից¹²: Բացի ինքնուրույն կիրառությունից՝ ունի տեղանվանակերտ, տեղանվանանիշ լայն գործառույթ՝ **շէնն Նախճաւան, շէնն Սմբատաւան** ևն:

Բնակավայր, տուն նշանակող բառերի շարքում է նաև **դաստակերտը**: Նշանակում է շէն, ագարակ, ամառանոց, կալվածք, շէնքերի ու նրանց կից հողատարածքների՝ այգիներ, բանջարանոցներ, ամբողջություն գյուղական վայրերում¹³:

⁷ Խորենացի. 1981, 50: Այսուհետև տեքստում կնշվեն «Հայոց պատմություն» աշխատությունից բերվող նախադասությունների էջերը:

⁸ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, 1976, էջ 1271:

⁹ Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 664:

¹⁰ Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ ՆՀԲ), 1979, հ. I, էջ 476:

¹¹ Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 1105:

¹² Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 586:

¹³ Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 278:

Բերենք համապատասխան բնագրային օրինակ.«...գտեղի ճակատուն շինե **դաստակերտ**, և անուն կոչե Հայք» (էջ 44): Ծագում է հին պարսկերենի ***dastakrta** ձևից՝ «աւան, գիւղ» նշանակությամբ¹⁴:

Արքաների և իշխանների տունը և բնակության վայրը **ապարանքն** է, որը հայերենի բոլոր շրջաններում ունի «պալատ, փառահեղ տուն, բնակարան» իմաստները¹⁵: Նախաձևն է հին պարսկերենի **apadāna** կազմությունը, որը բաղադրված է **ap** մասնիկից և **adā** «կառուցանել, շինել» արմատից:

Պատմության մեջ վկայված է նաև ապարանքի հոմանիշ **դղեակ** եզրույթը՝ որպես իշխանների և արքաների բնակավայր: Արդի արևելահայերենում էլ գործածական այս բառը փոխաբերական իմաստով ձեռք է բերել նաև «գեղեցիկ, շքեղ տուն» նշանակությունը¹⁶: Գ. Ջահուկյանը ենթադրաբար այս բառը համարում է իրանական աղբյուրից փոխառյալ, բայց ոչ հավաստի, ուստի կարող ենք վերականգնել նաև ընդհանուր հնդեվրոպական նախաձև:

«Պալատ, շքեղ բնակարան, ապարանք» նշանակությամբ է հանդես գալիս նաև փոխառյալ բառերի շարքից մեկ այլ բազմագործառական եզրույթ՝ **տաճար**: «Արդի հայերենի բացատրական բառարանում» նշված են հետևյալ իմաստները. 1.(կրոն.): Կրոնական ծեսերի և արարողությունների տուն՝ շինություն: 2. Հեթանոսական աստվածների տուն, կոստուն: 3. (հին.): Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրը Էջմիածնում: 4.փխբ. Արվեստի, գիտության ևն այլ բնագավառի կենտրոնը՝ օջախը հանդիսացող շենք: 5. փխբ. Խորին հարգանք ու երկյուղածություններ շնչող վայր, տեղ՝ ասպարեզ, սրբավայր: Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամեն քար (Վ. Տերյան)¹⁷: Բնագրից բերենք ամենատարածված իմաստով օրինակ. «Եբաց **տաճարս** կըռոցն և կալաւ զպաշտօն հեթանոսութեանն» (էջ 184): Ծագում է հին պարսկերենի **taçara** «ապարանք, պալատ» բառից¹⁸:

Արդի շրջանում ևս մարդկային բնակավայր նշանակող գործունակ եզրույթներից է **աւան** բառը՝ «ոչ մեծ բնակավայր, գյուղ, գյուղաքաղաք, չպարսպապատված բնակավայր, շեն» իմաստներով¹⁹: Ծագումը ենթադրվում է միջին պարսկերենից՝ ***āvān** «գիւղ, աւան»²⁰: Անկախ կիրառության հետ մեկտեղ՝ ունի տեղանվանակերտ կապակցությունների բաղադրիչ դառնալու գործառույթ՝ **Թիլ աւան, Բագնաց աւան, Բակուրակերտ աւան, աւան Թորդան, աւան Կուաշ, աւան Չըրմէս, աւան Տատեօնք** ևն:

¹⁴ Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 185:

¹⁵ Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 97:

¹⁶ Նույն տեղում, էջ 303:

¹⁷ Նույն տեղում, էջ 1408:

¹⁸ Ջահուկյան Գ.Բ., նշվ. աշխ., էջ 719:

¹⁹ Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 118:

²⁰ Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 99:

Իբրև վանականների և միանձնուհիների բնակության վայր, տուն՝ մեր ուսումնասիրության դաշտում ընդգրկել ենք նաև **վանք** բառը: ՆՀԲ-ում վանք բառի դիմաց գտնում ենք հետևյալ իմաստները՝ օթեան, իջաւան, բնակարան, կայան, դադարք, վրան, հիւրանոց, տաղաւար, մենաստան, բնակարան միաբանակեցաց²¹: Այսինքն՝ վանքն ի սկզբանէ պարզ բնակարան էր, կայան, հետո միայն կրոնական բնակատեղի: Գ. Ջահուկյանի ենթադրությամբ փոխառություն է պարթևական աղբյուրից, որը համեմատելի է պարթևական van/ *vahana ձևերի հետ²²: Բայց նշենք, որ բացառելի չէ բնիկ ծագումը, ընդհանուր հնդեվրոպական արմատի վերականգնումը վերոնշյալ համահունչ **աւան** բառի հետ մեկտեղ:

Ոստան. այն քաղաքն է, որտեղ նստում էին թագավորները կամ իշխանները: Ստ. Մալխասյանցի բառարանում նշվում է, որ ոստանը Արշակունիների թագավորության ժամանակ արքունիքին պատկանող գավառ էր, կալվածք՝ ի հակադրություն նախարարական կալվածքների, ինչպես նաև թագավորանիստ կամ իշխանանիստ գլխավոր քաղաք, մայրաքաղաք²³: Հր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ենթադրությամբ փոխառություն է իրանյան աղբյուրից՝ համեմատելի **ōstāndār** «գաւառապետ» կազմության հետ²⁴:

Նահանգ եզրույթը երկրի, պետության խոշոր վարչատարածքային բաժանումների անվանումն է. ծագման վերաբերյալ կան տարակարծություններ, Հր. Աճառյանի ենթադրյալ ասորական աղբյուրին՝ **na-an-ga**, Գ. Ջահուկյանը հակադրում է միջին պարսկերենի ***nsng** նախաձևը՝ որպես առավել հավանական²⁵:

Դաշտ. լեռնային տեղանքում ապրող ժողովրդի համար բարեբեր բնակության վայր է, ինչպես ՆՀԲ-ն է արձանագրում՝ «տափարակ արձակավայր, խոտաւէտ, ասպարէզ կամ ընդարձակութիւն»²⁶: Մովսէս Խորենացին հայոց ազգաբանության մասին իր վիպասքը սկսում է ազատատենչ Հայկի՝ Բաբելոնից հեռանալու և լեռնոտի մի դաշտավայրում հանգրվանելու պատումով: Չցանկանալով հնազանդվել բռնակալ Բելին՝ Հայկը փորձում է ուժի դեմ ուժ, բռնության դեմ բռնություն չկիրառել՝ գերադասելով հեռանալ դեպի լեռներով պաշտպանված դաշտավայրը, որտեղ Բաբելոնյան աշտարակաշինությունից հետո սակավաթիվ մարդիկ էին սփռվել, ու հենց այստեղ է հիմնում իր «տուն բնակութեան կալուածոց». «Երթեալ բնակէ ի լեռնոտի միում դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ի ցրուելոցն դադարեալ բնակէին...»(40): Իր ընտրյալ լեռնադաշտը Հայկը կոչում է **Հարք/Հայրեր**. « .. այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի

²¹ ՆՀԲ, 1979, հ. II, 1981, էջ 783:

²² Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 703:

²³ Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, 1944, էջ 572:

²⁴ Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 604:

²⁵ Նույն տեղում, էջ 560:

²⁶ ՆՀԲ, 1979, հ. I, 1979, էջ 595:

տանն Թորգոմայ»: Ակնհայտ է, որ բնակվելու տուն դարձած դաշտի ընկալումը հայերենում ուղղակի կապվում է ազգի հայրերի՝ նախնիների հետ, իսկ «Թորգոմայ տուն» կապակցությունը Հայք-Հայաստանի հոմանիշ ժողովրդանուն-տեղանունն է: Հազարամյակներով հայոց սրբազան վայր դարձած Արարատյան դաշտավայրը տարածվում է Մասիս և Արագած լեռների միջև: Արդի արևելահայերենում այս բառի իմաստային բեռնվածությունը չի փոփոխվել. ծագումով իրանյան է, Գ. Ջահուկյանը համեմատում է պահլավական **dašt** նույնիմաստ արմատի հետ²⁷: Ուշագրավ է, որ Հր. Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարանում» այս բառի իմաստային բովանդակության մեջ նշում է իրանական աղբյուրներում առկա «վայրի, վայրենի» նշանակությունը²⁸. դաշտն ազատ էր, այսինքն՝ վայրի: **Դաշտ** եզրույթը Խորենացու երկում գործուն տեղանվանակերտ է, որի միջոցով ստեղծվել են բազմաթիվ բաղադրյալ տեղանուններ՝ **դաշտն Աղիովտի, դաշտն Աղուանից, դաշտն Ասորեստանի, դաշտն Արայի, դաշտն Արտագու, դաշտն Գարգարացոց** ևն:

«Տուն, բնակավայր» հասկացույթի միավոր ենք համարում **աշտարակ** եզրույթը, որը ՆՀԲ-ում բացատրվում է որպես «դիտանոց, մարտկոց, ամրութիւն պարսպաց»²⁹: Մտ. Մալխասյանցը շեշտում է այս բառի բովանդակության մեջ թշնամուն դիտելու և նրանից պաշտպանվելու նպատակը, աշտարակի հիմնական նպատակը թշնամուց պաշտպանվելն է³⁰: Պաշտպանունակ լինելը տան և բնակավայրի կարևորագույն հատկանիշներից է, որովհետև տունը գիտակցվում է որպես մարդու համար ամենաանվտանգ վայրը, նրա ուժի հիմնական աղբյուրը: **Աշտարակ** բառի ծագումը Գ. Ջահուկյանը ենթադրաբար իրանական է համարում, որի հավաստի աղբյուրը դեռևս գտնված չէ, հետևաբար չի բացատրվում ընդհանուր հնդեվրոպական նախաձևի վերականգնումը երկու լեզուների համար: Հր. Աճառյանը բառի ծագմանը չի անդրադառնում, այն համարում է «բերդ» բառի հոմանիշը³¹:

Դիւան եզրույթը զուտ գրաբարյան բառ է, արդի արևելահայերենում այն դուրս է եկել գործածությունից՝ վերածվելով պատմաբառի, հնաբան կազմություն է: ՆՀԲ-ում այն լայն իմաստի բառ է. նշանակում է արքունական դահլիճ, սրահ, սենեակ, հրապարակ, տուն կամ բնակարան³²: Գ. Ջահուկյանն իր ստուգաբանական բառարանում հավելում է նաև դպրոց, հարկատեսակ իմաստները, իսկ ծա-

²⁷ Ջահուկյան Գ.Բ., նշվ. աշխ., էջ 184:

²⁸ Աճառյան Հր., նշվ. աշխ., էջ 623

²⁹ ՆՀԲ, 1979, հ. 1, էջ 265:

³⁰ Մալխասյանց Մտ., նշվ. աշխ., էջ 198:

³¹ Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 1, էջ 221:

³² ՆՀԲ, 1979, հ. 1, էջ 629:

գումը կապում է միջին պարսկերեն *dēvān* բառի հետ³³: Նախաձևն ուներ պետական ասյան, խորհրդարան, դատարան, պահոց իմաստները:

Գրաբարում «տուն» իմաստով էր օժտված նաև **խորան** բառը, ՆՀԲ-ում այս եզրույթն ունի ինն իմաստային զարգացումներ, որոնցից վեցերորդը հետևյալն է՝ յարկ, տուն, սենեակ: Հույժ խորհրդանշական է հաջորդ իմաստային ճյուղավորումը, ըստ որի՝ մարդկային մարմինը ևս կոչվում է **խորան**՝ խորան հոգույ մարդոյն կամ մարդն որպես բնակարան, տուն³⁴: Ջուզահեռաբար այս եզրույթն ունի եկեղեցի, տաճար, սրբության վայր, դահլիճ, դիվան նշանակությունները: Բերենք բնութագրական օրինակ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ից. «Արտաշիսի հասեալ ի յԵրուանդայ շրջապատեալ առագաստն ի կաշեայ եւ ի կտաւեայ պարսպին էջ, և ի **խորանի** նորա բնակեցաւ զայն գիշեր» (էջ 204): Արդի հայերենում այս բառը կորցրել է իր առաջնային ոչ կրոնական, տեղանիշ նշանակությունը՝ վերածվելով կրոնական եզրույթի:

«Տուն» հասկացույթն իր մեջ ներառում է բավական զգալի կրոնական բովանդակություն, որի շնորհիվ նրա մեջ ընդգրկված շատ միավորներ նշանակում են ոչ միայն մարդկանց, մահկանացուների տուն կամ բնակատեղի, այլ ամենից առաջ աստվածների բնակավայր: Այս շարքից է նաև **մեհեան** բառը, որը նշանակում է հեթանոսական տաճար, կոստուն.« Մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական եւ լուսնի եւ իւրոց նախնեաց» (132): Ունենք հոմանշային շարք աստվածների բնակավայրերի՝ մեհեան, տաճար, խորան: Ստ. Մալխասյանցը մանրամասնում է, որ մեհեանն ի սկզբանե Միհրի պաշտամունքին նվիրված տաճար է նշանակել, ասորուշան, կրակատուն³⁵: Այսինքն՝ ստուգաբանորեն բառը թափանցիկ է. իրանյան աստծո անունից՝ պարսկերեն *mehyan* < **mihrakān* «Միհրի, միհրական»³⁶:

Բոլոր ժողովուրդների կրոնական պատկերացումներում երկնային, անդրշիրիմյան աշխարհում կա երանելի մի վայր, որտեղ հանգրվանում են արդար հոգիները՝ **դրախտ**: Այս բառը ևս ընդգրկել ենք «տուն, բնակավայր» հասկացույթի կազմում, քանզի այն արդար ու բարի հոգիների համար սահմանված հավիտենական կացարանն է՝ երկնային տունը: Բառի հնչյունական պատկերից արդեն ակնհայտ է իրանյան ծագումը. Գ. Ջահուկյանն այն համեմատում է միջին պարսկական *draxt* / *diraxt* ձևերի հետ, որոնք նշանակում են «ծառ», այն իմաստային ընդլայնումով դարձել է «պարտեզ», ապա նաև՝ եղև: Ստ. Մալխասյանցի բառարանում նշվում են ծառ, ծառաստան, պարտեզ նշանակությունները, իբրև եզրափակում՝ տրվում է կրոնական նշումը քրիստոնեական բացատրությամբ. «3. Ըստ

³³ Ջահուկյան Գ.Բ., նշվ. աշխ., էջ 200:

³⁴ ՆՀԲ, հ. I, էջ 972:

³⁵ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., էջ 298:

³⁶ Ջահուկյան Գ.Բ., նշվ. աշխ., էջ 521:

Աստուածաշնչի աւանդութեան՝ պտղալից պարտեզ երկրի երեսին, որտեղ Աստուած բնակեցրեց Ադամին եւ Եւային, որոնք կերակրվում էին դրախտի ծառերի պտուղներով. կոչում է նաեւ դրախտ փափկութեան: 4. Ըստ քրիստոնեական հաւատալիքի՝ երանաւետ վայր, որտեղ արդարների հոգիները մշտնջենապէս ապրին երանութեան մէջ, արքայութիւն երկնից»³⁷:

Խորենացու պատմության մէջ հանդիպում ենք դրախտ բառի յուրօրինակ հոմանիշներից մեկին՝ **բուրաստան**. առաջնային իմաստով Ստ. Մալխասյանցն առանձնացնում է հետևյալ նշանակությունը՝ «բուրաւետ ծառերի և ծաղիկների տնկարան, ծաղկոց». ապա՝ «ծաղկաւետ դաշտ» և «քաղաքի շրջակայք»³⁸: ՆՀԲ-ում այս եզրույթն ունի «արուարձան քաղաքի» և «նման դրախտի» իմաստները³⁹: Կարող ենք եզրակացնել, որ նախնական ընկալմամբ, քաղաքի շրջակայքը, արվարձանները սկզբնապէս ընկալվել են որպէս բնության գեղեցիկ անկյուններ անգամ դրախտից արտաքսվելուց հետո, որի պատճառը բարու և չարի գիտության ծառի խնձորի ճաշակելն էր, այս մեղքի շնորհիվ մարդը կարողացավ տարբերել բարին և չարը, գեղեցիկն ու այլանդակը, ուստի մահկանացուներն իրենց բնակավայրերը ճգնում էին վերածել դրախտ – բուրաստանների: Բերենք Խորենացու պատմությունից համարժեք օրինակ՝ ցույց տալով, որ այն օգտագործվում է **ծաղկոց** բառի և արբեցման հետ զուգադիր. «Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բախշեալ անցուցանէ ի սպասու ամենայն պիտոյիցն եւ յարբուցմունսս բուրաստանաց եւ ծաղկոցաց» (66): Բառի և՛ արմատը, և՛ ածանցը իրանյան աղբյուրից փոխառյալ են. Գ. Ջահուկյանն այն համեմատում է ավեստայի լեզվի *baoidi-* «բույր, անուշահոտություն» և միջին պարսկերենի *bōd-* «հոտ» նախածների հետ⁴⁰:

Դրախտի հականիշն է **դժոխքը**՝ անդրշիրիմյան աշխարհում այն վայրը, որտեղ ապրում են մեղավոր հոգիները՝ ենթարկվելով տանջանքների, ինչպէս բացատրում է Ստ. Մալխասյանը. «1.Ըստ քրիստոնեական կրոնի և շատ հին ազգերի հասկացողությամբ՝ տեղ ստորերկրեայ, որտեղ մեղավորները դատապարտվում են մշտնջենաւոր տանջանքների, գեհեն, տարտարոս»⁴¹: Դարձյալ իրանյան հին աղբյուրից ծագող փոխառյալ բառ է, որը Գ. Ջահուկյանը, հետևելով Հր. Աճառյանին, համեմատում է ավեստայի լեզվից *dažoaiva* և միջին պարսկերեն *dožax* նախատիպերի հետ՝ «դժվար, դժնի» իմաստներով⁴²: Դժոխքի իմաստով գրաբարում վկայված է «վիհ» եզրույթը. բերենք Խորենացու պատմությունից բնութագրական օրինակ. «...զայսպիսի կարծրութիւն նիւթոյ պէս պէս տաճարս եւ

³⁷ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., էջ 543:

³⁸ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., էջ 393

³⁹ ՆՀԲ, 1979, հ. 1, էջ 514:

⁴⁰ Նույն տեղում, էջ 135:

⁴¹ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., էջ 513

⁴² Ջահուկյան Գ.Բ., նշվ. աշխ., էջ 197:

սենեակս օթից եւ տունս գանձուց եւ վիհս երկարս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց» (66): ՆՀԲ-ում **վիհ**-ը բացատրվում է որպէս «խորխորատ, անդունդ, փոս, երկիր բերանաբացեալ, գերեզման, դժոխք»⁴³: Բառի ծագումը Գ. Ջահուկյանը համարում է իրանյան, բայց բուն աղբյուրը հավաստված չէ⁴⁴:

Որպէս մարդու վերջին տուն, բնակավայր՝ հայերենում կիրառվում է **գերեզման** եզրույթը: Խորենացու պատմությունից մեջբերենք Հայկի հակոտնյա Բելի գերեզմանին վերաբերող հատվածը. «Իսկ բլուրն, ուր քաջամարտկաւքն անկաւ Բել՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակք» (44-46): Բառն այստեղ հատկանվանական կիրառություն ունի. արդի արևելահայերենում այն իր իմաստը չի փոխել: Գ. Ջահուկյանը բառը ենթադրաբար է համարում իրանական փոխառություն, այն համադրում է ավեստայի *garō dθmāna* արմատի հետ, որն ունէր «գովեստի տուն», այսինքն՝ արքայություն իմաստը, և միջին պարսկերենի՝ արդեն ավելի մոտ հնչյունապատկեր ունեցող *garizmān/ garazmān* նախածնի հետ, որը նշանակում էր երկինք⁴⁵: Նախնական պատկերացումներով մարդու վերջին տունը երկինքն է՝ արքայությունը:

Տուն, բնակավայր հասկացույթի կազմում յուրահատուկ դեր ունի **ապաստան** եզրույթը, որի նախնական ձևը վերականգնվում է ՆՀԲ-ում՝ ապահովաստան, իմաստ հիմնականում պահպանվել է արդի հայերենում՝ *պատսպարան, ապավեն, ամուր, հուսալի վայր* իմաստով: Գ. Ջահուկյանը այն համարում է փոխառություն իրանյան աղբյուրից, համեմատում է միջին պարսկերեն *apastān* ձևի հետ⁴⁶:

Բնակավայր, տուն նշանակող բառերի շարքում առանձնացրել ենք նաև հունական փոխառություններ, որոնք փոքրաթիվ են՝ **պալատն, եկեղեցի, ովկիանոս, փոս**:

Պալատն. Թագավորի բնակության շքեղ շենք, ապարանք, դղյակ, փոխաբերական իմաստով՝ շքեղ պալատանման տուն՝ շենք, բնակարան: Ծագում է յն. **παλάτιον, παλάτιν** բառերից, որոնք փոխառյալ են լատիներենի **palatium** բառից:

Քրիստոնյաների կրոնական-պաշտամունքային արարողությունների շենքը, տաճարը **եկեղեցին** է: Գ. Ջահուկյանի ստուգաբանությամբ՝ հին փոխառություն է հունարենի **εκκλησια՝ ησι**-եցի անցումով, որը ժողովրդական ստուգաբանության արդյունք է:

Ջրային ընդարձակ տարածություն է **ովկիանոսը**, որը ինչպես ծով բառի դեպքում ընկալել ենք իբրև ջրային կենդանիների բնակության վայր՝ ընդգրկելով

⁴³ ՆՀԲ, հ. II, 1981, էջ 821:

⁴⁴ Ջահուկյան Գ.Բ., նշվ. աշխ., էջ 711:

⁴⁵ Նույն տեղում, էջ 157:

⁴⁶ Նույն տեղում, էջ 67:

բնակավայր, տուն իմաստային դաշտում: Մտ. Մալխասյանցի բացատրական բառարանում ովկիանոսի առաջնային իմաստը տրվում է՝ Յունաց դիցաբանության մեջ՝ ծովերի ծովերի աստուածը, Տիտաններից աւագը, որը մարմնացնում է ծովի գաղափարը: Ծագում է **Ωκεανός** «մեծ ծով, յատկապես Ատլանտեան ովկիանոսը» բառից:

Փոս. ներս ընկած տեղ է հարթ մակերևույթի վրա, գետնի մեջ փորած կամ որևէ պատճառով խոր ընկած տեղ է, զանազան նպատակներով գետնի վրա փորած երկար խրամ է, խրամաձև փորվածք¹⁰⁶: Ծագում է յն. **φόσσα** «փոս» բառից, որը փոխառյալ է լատիներենի **fossa** (> իտալ. **fossa**, ֆրանս.**fosse**) «փոս» բառից:

Բնակավայր, տուն իմաստային դաշտում ընդգրկել ենք ասորական ծագման լոկ երկու, բայց չափազանց կարևոր բառ՝ **քաղաք** և **բերդ**:

Կարևոր իմաստային միավոր է **քաղաքը**, որը խոշոր բնակավայր է, արդյունաբերական, առևտրական և մշակութային կենտրոն: Ծագումը կապվում է Ասորեստանի նշանավոր մայրաքաղաք **Kalak** բառի հետ, որը «շինուած էր Նինուէից դէպի հարաւ՝ Տիգրիսի վրայ և խալդէաց ժամանակ շատ նշանաւոր էր: Անշուշտ նախապէս հասարակ անուն էր «քաղաք» նշանակութեամբ և յետոյ մասնաւորուելով՝ յատուկ անուն դարձաւ»: Նշենք նաև, որ **քաղաք** բառը մեր իմաստային դաշտի մեծաթիվ կիրառությունն ունեցող միավորներից է:

Երկում վկայված են նաև քաղաք բառով բաղադրյալ կապակցություններ՝ **քաղաքն Բերքուրին, քաղաքն Բիւզանդիոն, քաղաքն Եդեսիայ, քաղաքն Երուանդայ, քաղաքն Մելիտինէ, քաղաքն Նիկիայցոց, քաղաքն Շամիրամայ, քաղաքն Փայտակարան** ևն:

Բերդ. ամուր պարիսպներով շրջապատված ամրոց է, որտեղ կարող են ապաստանել մարդիկ և պաշտպանվել թշնամու հարձակումներից: Ծագում է **birtu(m)** արմատից, հայերենի բոլոր շրջաններում *ամրակուտ բնակավայրի, քաղաքի* հոմանիշն է, որը նշանակում է պարսպապատված, պաշտպանունակ բնակավայր: Արդի շրջանում առավել հաճախ կիրառվում է փոխաբերական նշանակությամբ, քանի որ ժամանակակից բնակավայրերը չեն պարսպապատվում և շրջակա տարածքում չեն առանձնանում՝ ավելի սահուն ներդաշնակվելով բնական միջավայրին, հատկապես որ նոր սերնդի պատերազմներում բնակավայրերի ապրողներին պարիսպներն այլևս բավարար չեն պաշտպանելու ոչ օդային հարվածներից, ոչ հեռահար հրթիռներից:

Եզրակացություն

Հին հայերենում «տուն, բնակավայր» հասկացության միջուկային միավորները բնորոշ են գրական հայոց լեզվի զարգացման բոլոր շրջափուլերին, այսինքն՝ ընդհանուր հայկական բառեր են, որոնք գրաբարից ժառանգվել են մեր արդի գրական լեզվին և բարբառներին: Բնակավայր հասկացության բառերի մեծ մասը պարզ արմատական է՝ կենսունակ բառային կապակցություններ կազմելիս: Պարզ բառերից հետո վիճակագրորեն առավել մեծաթիվ են վերջածանցավոր բառերը, ապա՝ բարդ բառերը, բարդածանցավորները հույժ սակավաթիվ են: Նախածանցավորներ չկան:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում տուն, բնակավայր հասկացության բառերի մեծամասնությունը գրեթե չի ենթարկվել փոփոխությունների: Եղած փոփոխությունները հիմնականում վերաբերում են որոշ բառերի հիմնական գործածությունից դուրս մղվելուն, պատմաբառերի կամ հնաբանությունների վերածվելուն, իմաստի նեղացմանը: «Տուն, բնակավայր» նշանակող փոխառյալ բառերի շարքում բավական զգալի են իրանյան ծագման միավորները, որոնք հիմնականում պահլավական շրջանի փոխառություններ են՝ հետագայում լիովին հայկականացած:

Քանի որ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը հայերի ազգածագման և իբրև ժողովուրդ, պետություն կայանալու պատմության հիմնարար մատյաններից է, այստեղ վկայված են «տուն, բնակավայր» իմաստը կրող գրեթե բոլոր համագործածական եզրույթները, ինչպես բնիկ, այնպես էլ իրանական ծագման: Հին հայերենում արդեն հստակ ձևավորված է «տուն, բնակավայր» հասկացության բառ-եզրույթների իմաստային ընդհանուր բովանդակությունը: Հայոց լեզվում այս հասկացությամբ արտահայտված է բազմաթիվ միավորներով, որոնք այս երևույթի ամենատարբեր իմաստային նրբերանգներն են արտացոլում. առաջնայինը սերն է, հպարտությունը, անվտանգության զգացողությունը և ապա՝ անձնական պատասխանատվությունը հայրենի տանը ոչ միայն այս պահին ապրող հայրենակիցների, այլև հեռացած նախնիների, անցյալի ժառանգության ու, ամենակարևորը, գալիք սերունդների առջև:

Дилбарян Нарине - Заимствованные слова концепта "дом, жилище" в «Истории армян» Мовсеса Хоренаци.- В древнеармянском языке основные единицы, выражающие понятие «дом, жилище», характерны для всех этапов развития литературного армянского языка. Другими словами, это общеармянские слова, унаследованные от классического армянского языка и перешедшие в современный литературный язык и диалекты. Большинство слов, относящихся к понятию «дом, жилище», представляют собой простые корни, сохраняющие свою актуальность при

образовании осмысленных словосочетаний. После простых слов следующую наиболее статистически значимую группу составляют слова с суффиксами, за которыми следуют сложные слова. Сложные суффиксальные слова встречаются чрезвычайно редко, а приставочных слов нет. На протяжении исторического развития языка большинство слов, обозначающих «дом, жилище», мало изменились. Произошедшие изменения в основном связаны с маргинализацией отдельных слов, их трансформацией в исторические термины или архаизмы, сужением значений. Среди заимствований с индоевропейским значением «дом, жилище» особенно выделяются единицы иранского происхождения. Эти слова, заимствованные преимущественно в период Пехлеви, полностью ассимилировались в армянском языке. Греческие и сирийские заимствования очень малочисленны.

Поскольку труд Мовсеса Хоренаци «История армян» является одним из фундаментальных источников происхождения и формирования идентичности армянской нации, в нем присутствуют практически все словоупотребления со значением «дом, жилище» как коренного, так и иранского происхождения. В древнеармянском языке уже четко сформировано общее смысловое содержание словоформ понятия «дом, жилище». В армянском языке данное понятие выражено во многих единицах, которые отражают самые разнообразные смысловые оттенки этого явления: первичным из них является любовь, гордость, чувство безопасности и личной ответственности в своем доме не только за живущих в данный момент соотечественников, но и для предков, прошлого наследия и, самое главное, будущих поколений.

Ключевые слова: Мовсес Хоренаци, «История Армении», концепт «дом, жилище», мировоззрение, культурное взаимодействие, заимствования, взаимодействующие языки, семантические сдвиги.

Dilbaryan Narine- Borrowed Words for the Concept of "Home, Dwelling" in "The History of Armenians" by Movses Khorenatsi.- In Ancient Armenian, the core units expressing the concept of "home, dwelling" are characteristic of all phases of the literary Armenian language's development. In other words, these are common Armenian words inherited from Classical Armenian and passed down to modern literary language and dialects. Most words related to the concept of "home, dwelling" are simple roots that remain vital when forming meaningful word combinations. After simple words, the next most statistically significant group consists of words with suffixes, followed by compound words. Compound-suffixal words are exceedingly rare, and there are no prefixal words. Throughout the historical development of the language, the majority of words for "home, dwelling" have undergone little change. The changes that did occur mainly involve the marginalization of certain words, their transformation into historical terms or archaisms, and the narrowing of

meanings. Among the loanwords with the Indo-European meaning of "home, dwelling" units of Iranian origin are particularly notable. These words, primarily borrowed during the Pahlavi period, have been fully assimilated into Armenian. Greek and Syriac borrowings are very few.

Since Movses Khorenatsi's book "History of Armenia" is one of the fundamental sources of the origin and identity formation of the Armenian nation, there are almost all the usage terms with the meaning of "home, dwelling", both native and of Iranian origin. In Ancient Armenian, the general semantic content of the word-forms of the concept of "**home, dwelling**" is already clearly formed. In the Armenian language, this concept is expressed in many units, which reflect the most diverse semantic nuances of this phenomenon: the primary one is love, pride, a sense of security and personal responsibility in one's home not only for compatriots living at the moment, but also for departed ancestors, past heritage and, most importantly, future generations.

Keywords: Movses Khorenatsi's *History of the Armenia*, the concept of "home, dwelling," worldview, cultural interaction, cultural interaction, borrowings, interacting languages, semantic shifts.

ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՈՐՈՇ ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այվազյան Մարգիս

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
հայցորդ. sarayvaz@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-07-3-26

Բանալի բառեր. ուրարտերեն, հայերեն, հնագույն հայերեն, հայագիտություն, ստուգաբանություն, բառաքնություն, հնդեվրոպական լեզուներ:

Մեզ հասած ուրարտերեն մոտ 600 բառերի մի զգալի մասի իմաստները անհայտ են: Բառերի մի մասն էլ հայտնի են իրենց՝ ընդհանրական՝ մոտավոր իմաստներով: Իսկ բազմաթիվ թարգմանվող բառերի համար էլ մասնագիտական գրականությունում առկա են զգալի տարաձայնություններ: Կան բառեր, որոնց համար միարժեք չէ նույնիսկ դրանց ընթերցումները:

Սույն հոդվածում փորձել ենք պարզել մի շարք այդպիսի խնդրահարույց բառերի իմաստները, կատարել իմաստային ճշգրտումներ, որոշ դեպքերում նաև ճշգրտել ընթերցումները: Այս նպատակին հասնելու համար բուն ուրարտերեն նյութից բացի ակտիվորեն գործածել ենք նաև հին հայերենի, ինչպես նաև հայերենի բարբառների տվյալները: Այս մեթոդը մեզ հնարավորություն է տալիս ճշգրտել ուրարտերեն այն բառերի իմաստները, որոնց համար բուն ուրարտական տեքստերը բավարար չեն այս կամ այն բառի ճշգրիտ (նեղ) իմաստի (իմաստների) որոշման համար:

muru=muri=ahē /muro=muri=axə/ «մրուր, ծուխ, փռոչ»

Կրկնավոր բառ է՝ կազմված *muru-* արմատից և *-ahē* ածանցից: Այն մեկ անգամ՝ վկայված է Argište Ա-ի հանրահայտ Խորխորյան տարեգրության վեցերորդ սյունակի մի հատվածում, որը ստորև ներկայացնում ենք կարգավորված տառադարձությամբ՝

- (ըստ Ն.Հարությունյանի) *iu URUBi[h]u[r]ani qabqarulubi URUBihurani asunini S^{ADU}Bamni harharu murumuriahini nani pari dUTU-ŠI «երբ (ես) Բիխուրիանի (քաղաքին) տիրեցի (ծան. ըստ Բ.Դյակոնովի՝ «շրջապատեցի, պաշարեցի», Ն. Հարությունյան), Բիխուրիանի (քաղաքի) երկրամասից Բամնի (լեռը) (ես) ավերեցի murumuriahini nani մինչև արևը» [KYKH 173 VI¹⁷⁻¹⁹],*

- (ըստ Մ.Սալվինիի) *iu URUBi[h]u[r]ani qabqarulubi URUBihurani asunini KURBamni harharu murumuriahininani (ծան. հավանաբար պետք է բաժանել երկու բառի,*

1 Հավանաբար հենց այս բառն է վկայված նաև նույն տարեգրության III սյունակի վերջնամասում, որտեղ պահպանվել են հետևյալ տողերը՝ ... 67. [x x x x] a?-me-ri 'i'? [x] 68. [x x x x] 'še' mu-ur-m[u-x x] 69. [x x x x x x x x] [CTU I A 8-3 III⁶⁷⁻⁶⁹]:

Մ.Սալվինի) pari ^dUTU^{si} «երբ ես Bihurani քաղաքն պաշարեցի, Bihurani քաղաքը և մոտակա Bamni քաղաքը ես ավերեցի murumuriahⁱininani մինչև արևը» [CTU I A 8-3 VI¹⁷⁻¹⁹]:

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ տողերի ընթերցման և թարգմանության հարցում Ն.Հարությունյանի և Մ.Սալվինիի մոտ առկա են որոշ տարաձայնություններ: Սակայն երկու դեպքում էլ, անկախ այդ տարաձայնություններից, *murumuriahⁱine*-ն ակնհայտորեն ինչ-որ բան է որը *Bamne* լեռը փլուզվելիս (կամ՝ երկիրը՝ ավերվելիս) հասնում է «մինչև արև»: Այս հանգամանք մեզ հուշում է, որ այստեղ խոսքը «ծխի/փոշու/մրուրի» մասին է: Եվ իսկապես էլ, *muru*- արմատը մենք տեսնում ենք հին հայերեն (այսուհետև՝ հհայ.) *մուր*, *-ոյ* «թանձր՝ թանձրացած ծուխ, ծխի և կրակի մրուր, մուր; թանաք, մելան» բառի մեջ: Այն բնիկ բառ է և ծագում է հ.-ե. *mū-ro ձևից: *Մուր*-ից՝ հհայ.-ում ունենք նաև՝ *մրուր* (< **մուր*(n)-*մուր*(n)), *մրրուկ* (< **մուր*(n)-*մուր*(n)-*ուկ*) «նստվածք, դիրտ, տիղմ, ցեխ», «օղի պղտորություն, փոթորիկ» և *մրրիկ* (< **մուր*(n)-*մուր*(n)-*իկ*) «ծուխ, գոլորշի; ուժեղ քամի, փոթորիկ; մեզ, մշուշ, ամպ» կրկնավոր ձևերը: Եվ քանի որ ուրարտերենում, ի տարբերություն հհայ.-ի, նախաշեշտ դիրքում *ni* ձայնավորը չի սղվում⁴, իսկ բնավոր ձայնավորներն էլ դեռ պահպանվում են, ապա սպասելի կրկնավոր ձևը պետք է լիներ **muro-muro*-ի՝ զրում **muru-muru*:- Սրա միակ տարբերությունը վկայված *muru-muri*- ձևի հետ դա կրկնավոր հիմքի վերջում /i/ բնավոր ձայնավորի առկայությունն է /o/-ի փոխարեն: Բայց պետք է նկատի ունենալ, որ ուրարտերենում /o/ բնով բառերը հաճախ հանդես են գալիս հենց /i/ (բառավերջում՝ /e/) բնով, ինչպես՝ հհայ. *սուր*, *-ոյ* «սուր» - ուրարտերեն (այսուհետև՝ ուր.) *šure*, *šuri*- /*surə*, *suri*-/ «սուր, զենք», հհայ. *ծառ*, *-ոյ* «ծառ» - ուր. *šare* /*carə*/ «ծառ, այգի» և այլն: Ինչ վերաբերում *-ahē* ածանցին, ապա ակնհայտ է, որ այստեղ մենք գործ ունենք ուր. *-V-ahē* - հհայ. *-ախ*, *-ուխ*, *-ոխ*, *-եխ* ածանցի հետ: Տե՛ս. ուր. *kamn=ahē* «կանուխ», *qarm=ehe* «նվեր, ընծա», *eguru=hē/ū* «մաքուր, անարատ, անպիղծ», *baban=ahē* «լեռնային» և այլն - հհայ. խաղախ «կաշի», կամախ «նվեր, ընծա» (հմտ. ուր. *qarm=ehe* «նվեր, ընծա»), կանճոխ (կանջուխ) «կացնի կոթ», մեղմելի «նենգ», պարելի «ժայռ», կա(ն)նուխ «կանուխ» (հմտ. ուր. *kamn=ahē* «կանուխ») և այլն: Ելնելով վերոշարադրյալից առաջարկում ենք ուր.

² Մ.Սալվինին թարգմանում է «քաղաք», բայց դա անհնար է՝ քանզի արձանագրությունում *Bamne* տեղանունը բնորոշված է KUR/ŠADU որոշիչ նշանով, որը կարող է նշանակել «երկիր» կամ «լեռ», բայց ոչ երբեք «քաղաք»:

³ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Ե. 1987, էջ 139; Գ. Ջահուկյան, ՄԲ, էջ 540:

⁴ Ս.Այվազյան, Անվանական հիմքը և անշեշտ դիրքում ձայնավորների սղումը ուրարտերենում, Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2023 նոյեմբերի 2-3, էջ 47:

muru=muri=ahē բարդ (կրկնավոր) բառը թարգմանել «մրուր, մուր, ծուխ, փոշի» կամ «մրի, ծիխ, փոշու ամպ»՝ նրա մեջ տեսնելով հիայ. մուր (սեռ. մուրո-յ) բառարմատը:

սս /ow/ «ու, և»

Ուրարտերենում «և» իմաստը արտահայտող շաղկապը կանոնավոր ձևով գրվում է *eue* կամ *ewe* տեսքով, որոնք երկուսն էլ հնչունադարձվում են /ewə/ և համապատասխանում են հիայ. *ez* նույնիմաստ շաղկապին: Միննույն ժամանակ, ժայռի վրա փորագրված ուրարտական Minua արքայի մի արձանագրության մեջ առկա են հետևյալ տողերը՝

- (ըստ *Մ.Սավլինիի վանկագիր ընթերցման*) *^mMi-nu-ú-a-še a-li-e ka-am-na-a-hi a-li ^mDi-a-ú-e-hi-ni-i ANŠU.KUR.RA^{MES}-ú-ú ^{LÚ}A.SI^{MES} 'a-a-ḫa-a-ú ^{LÚ}A.SI^{MES}-āš-te ú-i ú-ni a-šá-zi-e hi-i-ni-e ši-ú-bi* «անթարգմանելի բանաձև (formula intraducibile)» [CTU A 5-318-22]:

(ըստ *Ն.Հարությունյանի վանկագիր ընթերցման*) *^mMe-nu-ú-a-še a-li-e ka-am-na-a-hi a-li ^mDi-a-ú-e-hi-ni-i ANŠU.KUR.RA^{MES} ú-ú ^{LÚ}A.SI^{MES} 'a-a-ḫa-a-ú ^{LÚ}A.SI^{MES}-āš-te ú-i ú-ni a-šá-zi-e hi-i-ni-e ši-ú-bi* «^{այբ}Minua-ն ասում է՝ ...» [CTU A 5-318-22]:

Ինչպես տեսնում ենք Ն.Հարությունյանը ի հակադրություն Մ.Սավլինիի առանձնացնում է *սս* (ú-ú) ինքնուրույն բառը: Իբրև հիմնավորում նա նշում է, որ *ANŠU.KUR.RA^{MES}* գաղափարագիր բառը ուրարտական տեքստերում երբևիցե *սս* հնչունական հավելումով հանդես չի գալիս: Բացի այդ, նա նաև նշում է, որ այս *սս* (ú-ú)-ն վկայված է նաև Կարմիր բլուրում հայտնաբերված կավե մի սալիկի վրա: Թե՛ Ն.Հարությունյանը, թե՛ Մ.Սավլինին (նաև այլ հեղինակները) բերված տողերը չեն թարգմանում՝ նշելով, որ դա դժվար է: Սակայն ինչպես արդարացիորեն նշում է Ն.Հարությունյանը՝ սույն տողերում վկայված բառերի մեծ մասի իմաստները հայտնի են: Ինչ վերաբերում է բերված տողերում *սս* (ú-ú) ինքնուրույն բառի առանձնացմանը, ապա մենք լիովին կիսում ենք Ն.Հարությունյանի կարծիքը և ինչպես կտեսնենք ներքևում դա լրացուցիչ հաստատվում է նաև հայերենի տվյալներով: Իսկ ինչ վերաբերում է բերված հատվածի թարգմանությանը, ապա այստեղ իսկապես բառերի մեծ մասի իմաստները հայտնի են: Ուստի փորձենք ներկայացնել մեզ հետաքրքրող տողերի հնարավորինս ամբողջական թարգմանությունը՝ բերելով նաև այդ տողերի կարգավորված տառադարձումը:

^mMinuaše ale kamnaḫe ale ^mDiaueḫinei ANŠU.KUR.RA^{MES} սս ^{LÚ}A.SI^{MES} wahau ^{LÚ}A.SI^{MES}-āšte uiune (կամ՝ *ui une*) *ašaze ḫine šiube* «^{այբ}Minua-ն ասում է՝ կանխավ իսկ

5 Այս մասին տե՛ս J.Sandalgian, Les inscriptions cunéiformes urartiques, Venise, 1900, p. 360; И. Дьяконов, О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах. Древний Восток, 5, Е. 1988, с. 142; Н.Арутюнян, КУКН, с. 442, Ս.Այվազյան, Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, I, Ե., 2003, էջ 18, 83-4 ծան. 15 և այլն:

6 Н.Арутюнян, КУКН, с. 79 прим. 4.

7 Н.Арутюнян, КУКН, с. 79 прим. 16.

unhu *Diaue*-ականի «ձիեր(ը)» սս «(հեծյալ) զինվորներ(ը)» *wahau* (հեծյալ) զինվորներին (կամ՝ դեպի (հեծյալ) զինվորները) *siune asaze* (տուրք (՞)) այժմ տարա):

Բերված թարգմանությունը և համատեքստը մեզ հուշում են, որ *սս* բառի առավել հավանական թարգմանությունը դա «և» շաղկապն է: Իսկ *ANŠU.KUR.RA^{MES}* սս *LÚA.SI^{MES}* դրվագը պետք է թարգմանել «ձիեր և (հեծյալ) զինվորներ (հեծյալներ)», որոնք, ըստ վերոբերյալ թարգմանության, արքան իբրև տուրք տանում է *Diaue*-ականից (իմա.՝ Տայքից կամ տայեցուց): Հաշվի առնելով այս ամենը ակնհայտ է դառնում, որ ի դեմս ուր. *սս* «և, ու»-ի մենք գործ ունենք հիայ. *ni* «և, ու» շաղկապի հետ: Այն բնիկ հայերեն բառ է և ծագում է հ.-ե. < *opi-ից, որը *epi-ի ձայնադարձն է: Այսպիսով, ստացվում է, որ ուր.-ում «և, ու» գաղափարի համար գործածված երկու ձևերն էլ, բազմիցս վկայված *eue/ewe* «և»-ը և հազվադեպ գործածվող *սս* «ու»-ն, դրանք հիայ.-ի նույն *ei* «և» և *ni* «ու» շաղկապներն են:

¹⁰*ašule* /ac=otə/ «կառավարիչ, առաջնորդ»

¹⁰*ašule* բառը ուրարտական արձանագրություններում վկայված է միայն կավե սալիկների վրա գրված ներքին պաշտոնական նամակագրությունում՝ կնիքների հատվածում: Դրանցում այն ներկայանում է իբրև անձ, որի անունից տվյալ նամակը (հրահանգը) գրված է կամ առաքվում է: 1963 թվականին Ի.Դյակոնովը իր հրատարակած «Урартские письма и документы» մենագրությունում առաջին անգամ մանրամասն անդրադարձավ կավե սալիկների վրա գրված ուրարտական պաշտոնական նամակագրությանը և փաստաթղթերին: Կարմիր բլուրում հայտնաբերած երկու այդպիսի սալիկների (իմ. 4 և 7) կնիքների հատվածում այն անձի տիտղոսը, որի անունից գրվել էին տվյալ նամակները, Ի.Դյակոնովը ընթերցեց իբրև գաղափարագիր՝ ¹⁰A.NIN-ի, որտեղ վերջի li-ն, ըստ նրա, հնչունական հավելում է: Այս ¹⁰A.NIN-ի-ն նա առաջարկեց մեկնել իբրև «թագաժառանգ», բառացի «որդի՝ թագուհու»՝ միննույն ժամանակ նշելով, որ այդպիսի գաղափարագիր և ոչ մի սեպագիր չէր գտնվում գոյություն չունի: Այս մոտեցումը նույնությամբ ընդունվեց և կրկնվեց ժամանակի որոշ այլ ուրարտագետների կողմից¹⁰: Սակայն 2000¹¹ թվականին Ու.Հելվագը անդրադառնալով այս բառի ընթերցմանը առաջ քաշեց մեկ այլ տեսակետ, համաձայն որի ¹⁰A.NIN-ի փոխարեն պետք է ընթերցել ¹⁰A.ZUM-ի: Միննույն ժամանակ Ու.Հելվագը հղում անելով Ք. Ռադների բանավոր առաջարկի վրա հնարավոր համարեց ¹⁰A.ZUM-ի փոխարեն ¹⁰a-šu-ի վանկագիր

8 Ն.Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 589, Գ.Ջահուկյան, ՍԲ, 2010, էջ 747:

9 И.Дьяконов, УПД, с. 62,79,92.

10 УКН II 456 пчт. с. 2; УКН II 462 пчт.; КУКН 393 пчт. стр. 2, КУКН 394 о.с. пчт. стр. 1; КУКН 446 пчт.; КУКН 520 пчт. стр. 1, և այլն:

11 U. Hellwag, "Sohn der Königin" ¹⁰A.NIN-ի oder "Wasserwirtschaftsminister" ¹⁰A.ZUM-ի? Überlegungen zu einem "fragwürdigen" Amt am urartäischen Königshof, Akkadica, 117, 2000, S. 20-43.

ընթերցումը¹²: 2001-ին Հելվագի տեսակետը պաշտպանեցին նաև Ա.Չիլինգիրոլլին և Մ.Սավլինին¹³: Նրանք նկատի առնելով նաև Այանցում հայտնաբերված ուրարտական նոր արձանագրությունները, որոնց կնիքների համապատասխան տեղերում NIN-ի փոխարեն հստակ երևում է ZUM/Տ նշանը, առաջարկեցին ^{LU}A.ZUM-ի վանկագիր ^{LU}ա-Տ-ի ընթերցումը՝ մեկնելով այն իբրև կառավարող արքայական տոհմի անդամ ինչ-որ պաշտոնյայի կոչում, այլ ոչ թե «թագածառանգ»¹⁴, ինչպես պնդում է Մ.Դյակոնովը: 2005 թվականին Հելվագը կրկին անդրադարձավ սույն հարցին՝ ընդունելով վանկագիր ^{LU}ա-Տ-ի ընթերցման տարբերակի հնարավորությունը առաջարկեց թարգմանել այն իբրև «կառավարական մի պաշտոնյայի կոչում»¹⁵: Ներկայումս ^{LU}ա-Տ-ի ընթերցում ստացել է լայն ընդունելություն և ընդգրկվել նաև Մ.Սավլինի կողմից հրատարակաց ուրարտական տեքստերի կորպուսում¹⁶: Մենք նույնպես պաշտպանում ենք այս տեսակետը և կարծում ենք, որ ^{LU}աՏու (կամ ^{LU}աՏule) «ինչ-որ բարձրաստիճան պաշտոնյայի տիտղոս» բառի տակ թաքնված է հին հայերենի *ած-ող-ել* «վարել, տանել, առաջնորդել» բայի հիմքը՝ «կառավարիչ, առաջնորդ» հավանական նշանակությամբ: Այն թե՛ իր իմաստով, թե՛ հնչյունական կերպարանքով ամբողջությամբ համապատասխանում է ուրարտական ^{LU}աՏule-ին և լրացուցիչ հիմնավորում է ^{LU}աՏule ընթերցման ճշմարտացիությունը:

^{LU}marda- /marda-/ «տանիքագործ (բոց.՝ հեծանի/տանիքի մարդ)» (Պ),

ari=še /a'ri=sə/ «գերաններ, գերանակապ»

Վերին Անձավի հնավայրից հայտնաբերված կավե կնքադրոշմի (բուլլայի) վրա պահպանված ուր. մի տեքստում մեկական անգամ վկայված են ^{LU}marda- և ari=še գոյականները, որոնք այլ ուր. տեքստերում չեն հանդիպում: Ներկայացնենք այդ տեքստը կարգավորված տառադարձմամբ և Մ.Սավլինի թարգմանությամբ:

LUGAL-še ale : tie ^mGuli(?)liedi ^{LU}KAD ^mWalışpiladi ^{LU}arudi ariše 5(?)-dire : gai : ^mZanuadi ^{LU}mardadi É išplip<ri>» «Արքան ասում է՝ պարոն Gulili(?)e-ին՝ դոնապանին

¹² նշվ. աշխ. S. 27 N. 39:

¹³ A.Çilingiroğlu, M.Salvini, Ten Years` Excavations in ^mRusaḫinili Eiduru-kai, Roma, 2001, pp. 23-24.

¹⁴ Տե՛ս նախորդը: ^{LU}աՏule եզրի մասին տե՛ս նաև՝ R.Dan and A.S.Bonfanti, Some remarks on the word ^{LU}աՏuli in Urartian inscriptions, N.A.B.U., 2021, № 4, pp. 263-264; M.Salvini, I.Wegner, Einführung in die urartäische Sprache, Wiesbaden, 2014, S. 108; M.Dara, Aşulis' seal impressions on the Urartian tablets and bullae, Journal of Language and Inscription, 2023, Vol 4. № 5, p. 35, և այլն:

¹⁵ U.Helweg, ^{LU}A.ZUM-li versus ^{LU}A.NIN-li: some thoughts on the owner of the so-called Prinzensiegel at Rusa II's court, Anatolian Iron Ages, 5, pp. 91-96.

¹⁶ CTU IV, Sig. 13-1 տող 2; Sig. 20-1 տող 2; Sig. 20-2a տող 2; Sig. 20-2b տող 2, Sig. 20-3 տող 2; Sig. 20-7 տող 1,2; Sig. 20-8 տող 1,2; Sig. 20-9 տող 1; Sig. 20-10 տող 1; Sig. 20-7 տող 1:

(^օ) (ն) պարոնն *Walishpila-ին, aru(di) մարդուն* (^օ) տալ (^օ)¹⁷ ... պարոնն *Zanua-ին, marda մարդուն Ishpillip տունն* [CTU CB An-11-4]:

Տեքստի վերջնամասում ունենք «^{ար}*Zanua-ին* ^{մարդ}*marda-ին* (*իմա. marda-ի մարդուն*) ^{տունն}*ishpillip*» դրվագը: Մի անգամից ուշադրություն է գրավում այստեղ վկայված ^{մարդ}*mard(a)-ի* և հհայ. *մարդ, -ոյ* «մարդ» բառերի նմանությունը: Եվ միգուցե իսկապես էլ այս ^{մարդ}*mard(a)-ն* ուր. տեքստերում բազմիցս վկայված ^{ԼՄ} «մարդ» գաղափարագիր բառի ուր. հնչյունագիր ձևն է: Սակայն մյուս կողմից էլ այս *mard(a)-ն* կարելի է համադրել հհայ. *մարդակ* «տանիքի գերան, հեծան» բառի հետ: Այդ դեպքում ^{մարդ}*marda-* պիտի բառացի նշանակի «հեծանների, տանիքի գերանների մարդ»: Այս տարբերակը մեզ առավել հավանական է թվում, քանզի տեքստում մինչ այդ հիշատակված *ari=še/ari=sə/* բառի մեջ ակնհայտորեն երևում է հհայ. *անի-ք/ս* «առաստաղ, տանիքի ստորին մաս՝ մանավանդ գերաններով» անեզական գոյականը, որը նախապես նշանակել է «գերաններ, գերանակապ», ինչպես որ ունենք *ձեղ* «ձող, գերան» - *ձեղուն* «առաստաղ»¹⁸: Իսկ ^{ԼՄ}*marda-*ից անմիջապես հետո էլ տեքստում խոսվում է ինչ-որ շինության մասին, որի առաստաղի / տանիքի վերանորոգման (կամ՝ կառուցման) առիթով էլ, ըստ երևույթին, հիշատակվում են վերոնշյալ «հեծանները, գերանները» և «հեծանի, տանիքի, առաստաղի» մարդը: Հաշվի առնելով այս ամենը տեքստը ամբողջությամբ, թերևս, պետք է թարգմանել հետևյալ կերպ՝ «*Արքան հաղորդում է՝ ասս ^{ար}Guli(?)lie-ին՝ դոնապանին* (^օ) (ն) ^{ար}*Walishpila-ին՝ առուծախի մարդուն* (^օ)¹⁹, (որ) *գերանները / հեծանները՝ 5 (?) dire : gai ^{ար}Zanua-ին՝ հեծանների մարդուն տունն Ishpillip<re?>*»:

arage /aragə/ «աննվագ, անպակաս»

Սույն բառը [*a-r*]a-ge տեսքով վկայված է դեռ 19 դարում հրատարակված «Տերտերի լիճ» կոչվող արձանագրությունում (CTU A 14-1 Ro): Սակայն, մասնագետները հիմնվելով միայն այս արձանագրության վրա [*a-r*]a-ge-ի փոխարեն սխալմամբ ընթերցում (վերականգնում) են [*te*]ra-gi/e [Hchl 121³¹; KYKH 268³¹; KYKH 391³¹ և այլն]: Ձեռքի տակ ունենալով նաև վերջերս հայտնաբերված «Հավաձորի» արձանագրությունը, որը առաջինի կրկնօրինակն է, Մ.Սալվինին տալիս է սույն բառի ճիշտ ընթերցումը՝ իմաստը թողնելով առանց պարզաբանման (CTU A

¹⁷ Այսպես՝ իբրև բայ է *ariše* բառը թարգմանում Մ.Սալվինին: Սակայն բառի ձևից ակնհայտ է, որ մենք գործ ունենք *ari-* հիմքից և *-še* ածանցից կազմված վերացական կամ հավաքական գոյականի հետ, այլ ոչ թե անհասկանալի վերջավորությամբ ինչ-որ բայական ձևի հետ:

¹⁸ Է.Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 28:

¹⁹ Մ.Սալվինին *aru-*ն թողնում է առանց թարգմանության, սակայն կարծում ենք, որ այս բառի հիմքում ընկած է ուր. *ar-* «տալ» բայը: Ըստ այդմ, *aru* գոյականը այստեղ պետք է, որ նշանակի «առևտուր, առուծախ, գնում» կամ նման մի բան, իսկ ^{ԼՄ}*aru-*ն, համապատասխանաբար, «առուծախի, գնումների մարդ»: Հմտ. նաև *aru=še* «նվեր, ընծա, բարերարություն» (KYKH, c. 476):

14-2.1d Ro): Բերենք այս երկու արձանագրությունների համապատասխան հատվածների վանկագիր ընթերցումները՝ ըստ Մ.Սավլինիի.

«Տերտերի լիճ» [CTU A 14-1Ro.61-64]	«Հավաձոր» [CTU A 14-2 1.d.27-35]
60. ...	26. ...
61. [A] ^{MES} ^{ID} A-la-i-ni-ni ši-e-du-li-[e]	27. [š]i-i-[x-x]
62. [mR]u-sa-ħi-na-i-di a-li A ^{MES}	28. [s]u-ur-tar[-x-x]
63. [^{ID}]A-la-i-ni-i ^{URU} Ṭu-uš-pa-ni-[e]	29. ši-e-du-l[i-e]
64. [a-r]a-gi ul-ħu-li-ni	30. [mR]u-sa-ħi-na-[i-di]
65. ...	31. a-li ši-x-[x-x]
	32. [s]u-ur-tar[-x-x]
	33. ^{URU} Ṭu-uš-[pa-ni-e]
	34. a-ra-g[i-i?]
	35. ul-ħu-li-[ni]
	36. ...:

Մ.Սավլինին վերոնշյալ տողերը չի թարգմանում՝ նշելով, որ հասկանալի են միայն առանձին դրվագներ (...«դեպի *Rusaħinili*» ... «ջրերը *Alaini* գետից, (քաղաք) *Tušpa*» ...)20: Ինչպես տեսնում ենք այս երկու հատվածները գրեթե նույնական են: Բացառություն է կազմում միայն՝ [A]^{MES} ^{ID}A-la-i-ni-ni / [š]i-i-[x-x] [s]u-ur-tar[-x-x] դրվագների անհամապատասխանությունը: Քանզի «Հավաձոր»-ի արձանագրության [š]i-i-[x-x] [s]u-ur-tar[-x-x] դրվագը խիստ վնասված է և այդ պատճառով՝ անհասկանալի, կենտրոնանանք միայն «Տերտերի լիճ»-ի տարբերակի վրա: Ներկայացնենք այն՝ կարգավորված և ձևաբանական (վերլուծական) տառադարձամբ՝ վնասված մասերի վերականգնման համար օգտվելով «Հավաձոր»-ի տարբերակից.

... [A]^{MES} ^{ID}Alaini=ne šiedul[e] [mR]usa=ħi=na=idi ale A^{MES} [^{ID}]Alaine=i ^{URU}Ṭušpa=n[e] arage ulħ=u=li=ne

Դրվագը գրեթե ամբողջությամբ հասկանալի է և հեշտությամբ թարգմանվում է «... ջրերը ^{գետ}Աղային²¹-ից թող արտահոսեն (՛) դեպի (քաղաք) [^{անձ}R]usa-այիններ, նաև ջրերը ^{գետ}Աղային-ի ^{քաղաք}Snuպա[x] arage թող հորդեն (առատորեն հոսեն)»: Փաստացի միակ անհասկանալի բառն այստեղ դա *arage*-ն է, որը՝ ելնելով համատեքստից պետք է, որ նշանակի «անդադար», «աննվազ», «առատ» կամ նման մի բան: Այս տեսակետից ուշագրավ է այս *arage*-ի ակնհայտ նմանությունը «Բառգիրք Հայոց»-ում տեղ գտած հիայ. *արագոյն* «անկարոտ, աննվազ»22 անակա-նի/մակբայի հետ: Չենք կարծում, որ այդ նմանությունը պատահական է, ուստի առաջարկում ենք ուր. *arage*-ը թարգմանել «առանց՝ նվազելու, պակասելու»: Նաև

20 CTU I, p. 623.

21 Խոսքը Աղիովիտ գավառի Աղի գետակի մասին է:

22 Հ.Ամայան, Բառգիրք Հայոց, Ե., 1975, էջ 35:


կարծում ենք, որ *արագոյն* բառի մեջ պետք է առանձնացնել հին հայերենի *-ոյն* մակբայակերտ ածանցը (ինչպես՝ *գիշեր-ոյն*, *իսկ-ոյն*, *ողջ-ոյն* և այլն): Այս ածանցը կազմվում է սեռական/տրական հոլովածնից՝ *-ն* հոդի հավելմամբ²³: Հաշվի առնելով այս հանգամանքը ուր. *arage*-ի փոխարեն սպասելի էր *aragu /arago/* ձևը: Սակայն պետք է նկատի առնել նաև այն փաստը, որ հին հայերենի *-n* բնի փոխարեն ուրարտերենում հաճախ հանդես է գալիս հենց *-e* (*-e/-i-*) բունը²⁴, ինչը մենք տեսնում ենք նաև այս դեպքում:

zur(-) /jur(-) «ջուր» (՞)

«Էրմանցի» [CTU A 14-1] և «Հավաձորի» [CTU A 14-2] կրկնօրինակ արձանագրություններում ունենք *[A]^{MES} ^{ID}A-la-i-ni-ni* «ջրերը գետԱղայինից» / *[š]i-i-[x-x] [s]u-ur-tar[-x-x]* «(՞)» [CTU A 14-1 Ro.61 /14-2 1.d.27-28] և *A^{M[ES]} ^[ID]A-la-i-ni-i* «ջրերը գետԱղայինի» / *ši-x-[x-x] [s]u-ur-tar[-x-x]* «(՞)» [CTU A 14-1 Ro.62-63 / 14-2 1.d.31-32] հերթագայումները (մանրամասն տե՛ս *arage* բառահոլովածը): Ինչ վերաբերում է «Էրմանցի» արձանագրության *[A]^{MES} ^{ID}A-la-i-ni-ni* (*[A]^{MES} ^{ID}Alaini=ne*) «ջրերը գետԱղայինից» և *A^{M[ES]} ^[ID]A-la-i-ni-i* (*A^{M[ES]} ^[ID]Alaine=i*) «ջրերը գետԱղայինի» դրվագներին, ապա դրանց ընթերցման և թարգմանության մեջ անհասկանալի ոչինչ չկա: Իսկ ահա «Հավաձորի» արձանագրությունում վկայված *[š]i-i-[x-x] [s]u-ur-tar[-x-x]* և *ši-x-[x-x] [s]u-ur-tar[-x-x]* դրվագները մասամբ վնասված են և ամբողջությամբ անհասկանալի: Չնայած դրան, ընդհանուր առմամբ, ակնհայտ է, որ խոսքը ոռոգման նպատակով գործածվող ջրերի մասին է: Ինչ վերաբերում նշյալ դրվագներում Մ.Սալվինիի կողմից առաջարկված ընթերցմանը, ապա այստեղ մեր ուշադրությունը գրավեց նրա կողմից *su* (𐎲𐎶𐎵) նշանի վերականգման փաստը: Այս *su*-ից արձանագրության վրա պահպանվել է միայն վերջի երկու ուղղահայաց և դեպի ձախ ուղղված երկու կարճ հորիզոնական սեպերը [𐎲𐎶𐎵]: Իսկ ահա երրորդ՝ դեպի ձախ ուղղված կարճ սեպը և նշանի սկզբի՝ դեպի աջ ուղղված հորիզոնական սեպը, ինչպես ենթադրում է Մ.Սալվինին, վնասված են: Սակայն իր իսկ կողմից հրատարակած լուսանկարում (տե՛ս նկ. 1) պարզ երևում է, որ քարի վրա այդքան տեղ չկա: Ըստ այդմ, կարծում ենք, որ այս վնասված հատվածում *su*-ի փոխարեն պետք է ընթերցել (վերականգնել) *zu* (𐎵𐎶𐎵): Այս երկու սեպանշանները նույնական են, բացառությամբ *su*-ի մեկ հավելյալ հորիզոնական սեպի, որի պատճառով՝ *zu*-ի համեմատ *su*-ն ավելի շատ տեղ է զբաղեցնում: Ըստ այդմ, *zu* ընթերցման դեպքում տեղի խնդիր չի ծագում, քանզի վնասված հատվածում պետք է վերականգնել միայն նշանի սկզբի դեպի աջ ուղղված հորիզոնական սեպը:

²³ Գ.Ջահուկյան, ՄԲ, էջ 809:

²⁴ Մ.Այվազյան, Անվանական հիմքը և անշեշտ դիրքում ձայնավորների սղումը ուրարտերենում, Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2023 նոյեմբերի 2-3, էջ 44 ծան. 7:



Նկ. 1 Հավաձորի արձանագրության 26-34 տողերի լուսանկարը (CTU III,

Եթե մեր առաջարկը իրոք ճիշտ է և *[s]u-ur-tar[-x-x]*-ի փոխարեն պետք է վերականգնել *[z]u-ur-tar[-x-x]*, ապա չի բացառվում, որ վերջինի *[z]u-ur(-)* բաղադրիչի (կամ, միգուցե, առանձին բառի) տակ պետք է տեսնել հիայ. *ջուր, ոյ* «ջուր» բառը²⁵: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ հիայ. *ջ* հնչյունը ուր. տեքստերում արտացոլվում է *z* կամ *g* նշաններով²⁶, ապա դա միանգամայն հնարավոր է: Ինչ վերաբերում է *[z]u-ur-tar[-x-x]* բառի իմաստին՝ ամբողջությամբ, ապա այս պահին դժվար է որևէ հստակ բան ասել այդ մասին, թեև ակնհայտ է, որ խոսքը ոռոգման համա-

կարգի ինչ-որ բաղադրիչի կամ նրանով հոսող ջրերի մասին է: Միգուցե այս *[z]u-ur-tar[-x-x]*-ի երկրորդ բաղադրիչի մեջ պետք է տեսնել հիայ. *տան-իլ* «կրել, փոխադրել» բայի երկրորդ՝ *տար* ձևը: Այդ դեպքում *[z]u-ur-tar[-x-x]*-ն (*[z]ur(u)*²⁷-*tar[xx]*) պետք է, որ նշանակի «ջրատար» (՛) կամ նման մի բան: Մյուս կողմից այս *-tar[xx]* բաղադրիչի մեջ հնարավոր է տեսնել ուր. *tar(a)* կամ, որ նույն է՝ *tira* «հզոր, մեծ», «շատ» ածականը: Այդ դեպքում բառն ամբողջությամբ պետք է կարելի է թարգմանել «առատաջուր», հմտ. հիայ. *շատաջուր* «ջուրը՝ առատ, առատաջուր, ջրարբի»: Ամեն դեպքում պետք է նկատի ունենալ, որ *[z]u-ur-tar[-x-x]*-ի երկրորդ բաղադրիչի ցանկացած մեկնում տեքստի այդ հատվածի վնասված լինելու պատճառով հուսալի չէ:

nikid- /nəkət-/ «նվազել, պակասել, ցամաքել» (՛)

Այս բայը ուրարտական արձանագրություններում վկայված է մի քանի անգամ: Բոլոր վկայություններում էլ այն առնչվում է զոհաբերությունների (ընծաների) կարգի հետ, որոնք, համաձայն արքայի կամքի, պետք է կատարվեն ջրերի կամ ջրանցքների *nikid-* լինելու դեպքում: Ըստ այդմ էլ, Մ.Սալվինին այն

²⁵ Անդրադառնալով A^{MEŠ} IDAlaini=ne / ši[xx] [z]urtar[xx] համապատասխանությանը Մ.Սալվինին առաջարկում է ši[xx]-ն համարել A^{MEŠ} «ջրեր» գաղափարագիր բառի հնչյունագիր տարբերակը, իսկ [z]urtar[xx]-ն (ըստ իրեն՝ [s]urtar[xx]-ն)՝ բուն ջրատարի անվանումը (M.Salvini, Le due stele di Rusa Erimenahi dal Keşif Göl, Studi Micenei ed Egeo-Anatolici, 48, Roma, 2006, p. 234, n. l ds. rr. 27/28).

²⁶ Մ.Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 118:

²⁷ VC տեսքի նշանները ուր.-ում ունեն նաև VCV ընթերցումը, ինչպես՝ Er-e-bu-né / Er-bu-né (=Ere-bu-né), ul-ú-de / ul-de (= ulu-de), uš-ú-ma-ši-né / uš-ma-ši-né (=ušu-ma-ši-né) և այլն, այս մասին տե՛ս G.Wilhelm, Urartian, in The Ancient Languages of Asia Minor, Edited by R. Woodard, Cambridge, 2008, p. 106; Մ.Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 15:

հարցականով թարգմանում է «*դուրս գալ/հորդել*» (𐎠) [CTU A 12-8¹⁷⁻²⁰, 14-1 Vo.3-6, 16-18, 14-2 Vo1-3,13-15]: Եղած վկայություններից ուշադրություն է գրավում «Հավաճորի» և «Էրմանցի (Տերտերի լճի)» արձանագրությունների հետևյալ հատվածը՝

aše A^{MEŠ} nikidule aše A^{MEŠ} ešiasīule UDU ŠE UDU 𐎠Haldie (ŠUM) «էթե ջրերը դուրս գան (հոսեն) / հորդեն (𐎠), էթե ջրերը նվազեն (𐎠)՝ պարարտ խոյ, խոյ Հալդիին (թող զոհաբերվեն)» [CTU A 14-1 Vo.16-18, 14-2 Vo13-15] (հատվածը բերված է կարգավորված տառադարձամամբ):

Համաձայն այս հատվածի Մ.Սալվինի կողմից արված թարգմանության՝ զոհաբերություն պետք է կատարվեր թե՛ ջրերի (լճից) դուրս հոսելու/հորդալու (*nikid-*), թե՛ նվազելու / ցամաքելու (*ešiasī-*) դեպքում: Կարծում ենք, որ, իսկապես, ջրերի/ջրանցքների ցամաքելու դեպքում աստվածներին ընծաներ մատուցելը կամ զոհաբերություններ անելը միանգամայն տրամաբանական է: Այս տեսակետից մեր ուշադրությունը գրավեց հին հայերեն *նկտ-ալ* (հնարավոր է նաև՝ *կտ-ալ* ընթերցումը) «նվազել, հետ մնալ» բայը²⁸, որը իր տեսքով հիշեցնում է ուր. *nikid-*: Եթե այս բայերի նմանությունը պատահական չէ, ապա «նվազել» իմաստը ուրարտերենում պետք է վերագրել *nikid-* բային, այլ ոչ թե *ešiasī-*-ին: Դա միանգամայն հնարավոր է, քանզի այս երկու բայերն էլ վկայված են համանման (միևնույն) համատեքստում և առնչվում են միևնույն երևույթին: Իսկ սրանց՝ երկուսի իմաստն էլ որոշվում է հենց համատեքստի հիմքի վրա: Ըստ այդմ, *ešiasī-* բայը պետք է, որ լինի *nikid-*-ին հոմանիշ, կամ միգուցե հականիշ՝ ինչպես որ առաջարկում է Մ.Սալվինին, բայց հակառակ հերթականությամբ:

kaq- /k'ak-/ «գետնին թափվել, անջատվել, ցիրուցան լինել»

Ի.Դյակոնովը առաջարկում է Կարմիր բլուրում հայտնաբերված Rusa Բ-ի «ստանդարտ» արձանագրությունում վկայված *kaqule* բառաձևը մեկնել իբրև գոյական՝ «քար» (𐎠) թարգմանությամբ²⁹: Ն.Հարությունյանը՝ համադրելով ... *kaqule wahuline KI^{TIM}-a quldinine* [KYKH 424³] և ... *NA₄ wahuline ... KI^{TIM}-a quldinine* [KYKH 415⁵⁻⁶] տողերը *kaqule*-ը նույնացնում է *NA₄* «քար» գաղափարագրի հետ, ըստ այդմ, *kaqule*-ի համար նա նույնպես առաջարկում է «քար» իմաստը³⁰: Մ.Սալվինին *kaqule*-ի իմաստը համարում է անհայտ՝ հնարավոր համարելով վերջինի բայ լինելը³¹: Խնդիրը պարզաբանելու համար բերենք Մ.Սալվինիի ընթերցման վրա հիմնված Rusa Բ-ի «ստանդարտ» արձանագրության համապատասխան

²⁸ Ա.Լետիքեան Գ., Սիրմեյեան Խ., Ալգերեան Մ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Բ, Վենետիկ, 1837, էջ 430:

²⁹ И.Дьяконов, Жертвоприношения в Тейшебайне: (УКН 448), Кавказско-ближневосточный сборник, 8, Тбилиси, 1988, с. 64-65, прим. 14.

³⁰ КУКН, с. 451.

³¹ M.Salvini, The inscriptions of Ayanis (Rusaḫinili eiduru=kai) cuneiform and hieroglyphic, in A.Çilingiroğlu, M.Salvini Ten Years` Excavations in "Rusaḫinili Eiduru-kai, 2001, Roma, p. 260:

ամբողջական հատվածը՝ ներկայացնելով այն՝ կարգավորված և ձևաբանական տառադարձամբ՝

aše ^oHaldie=i *É.BÁRA* *šep=u=le ag=u=le MÁŠ.TUR* ^oHaldie=e *nepse=d=u=l(i=n)e šep=urde*³² *ale ištín(i=n)e kaqule (kaq=u=le) wah=u=li=ne qjura/KITM-a quldini=ne [CTU A 12-1 II 6-8, 12-2 II 1-2]:*

Բերված հատվածը՝ չնայած որոշ անհասկանալի տեղերի ընդհանուր առմամբ հեշտությամբ թարգմանվում է՝

«երբ Հալդիի նստավայրը (տաճարը)՝ ծեփվի, ag-³³ արվի՝ ուլ Հալդիին թող մորթվի, ծեփաշաղախը (բառացի՝ ծեփ-ուրդը) իսկ/այլ (երբ) այստեղից kaqule, թող wah-արվի (հավաքվի (օ), կուտակվի (օ))՝ խոսքան հողում»:

Ընդհանուր առմամբ հատվածը համապատասխանում է ուր. տեքստերում համատարած կիրառվող «երբ/եթե այսինչ բանը արվի/լինի (բայահիմք =u=l(e) թող այնինչ բանը արվի (բայահիմք =u=l(i=n)e)» կադապարին: Ըստ այդմ, ակնհայտ է, որ *kaqule*-ը այստեղ չի կարող լինել գոյական, այլ պետք է ընկալվի իբրև պայմանական-ընձական եղանակի բայ, ճիշտ ինչպես քիչ վերևում հիշատակված նույն եղանակի *šep=u=le* և *ag=u=le* բայերը: Տողերի թարգմանությունից պարզ է դառնում նաև, որ *kaqule (kaq=u=le)*-ը վերաբերում է ծեփաշաղախին (բառացի՝ *ծեփ-ուրդ-ին*), որը պետք է խոսքան հողում *wah*-արվի (հավաքվի (օ), կուտակվի (օ), «գետեղվի» (օ))՝ եթե/երբ *kaq*- արվի/լինի: Դատելով այս ամեն ինչից թերևս խոսքը այստեղ շինարարության ընթացքում թափված՝ ավելորդ ծեփաշաղախի մասին է, որը պետք է տեղափոխվի (հավաքվի, կուտակվի, գետեղվի) ամայի վայրում (խոսքան հողում): Ըստ այդմ, *kaq*-պետք է, որ մոտավորապես նշանակի «գետնին թափվել, ցիրուցան լինել, պոկվելով թափվել, և այլն»: Նման իմաստը հաստատվում է նաև հին հայերենի տվյալներով, որտեղ ունենք *քակ-ել* «քանդել, փլուզել; բաժանել, անջատել, գատել; քայքայել, խախտել, լուծել; վերացնել, ցրել» բայը:

qis- /kis-/ «կիսել, պակասեցնել»

Rusa Բ-ի «ստանդարտ» արձանագրությունների Այանցում հայտնաբերված օրինակը բոլոր կրկնօրինակների մեջ առավել լավ պահպանվածն է և գրեթե ամբողջությամբ ընթեռնելի: Այնուամենայնիվ արձանագրության մեծ մասը մինչ օրս մնում է առանց թարգմանության: Փորձենք վերլուծել և հնարավորության դեպքում թարգմանել այդ մեծածավալ արձանագրության VIII բաժնի (սեկցիայի) առաջին տողերը: Արձանագրության հրատարակիչը՝ Մ.Սավլինին այս բաժնի

³² Šep=urde-ը կազմված է šep- (հհայ. ծեփ-) «ծեփել» արմատից և -urde (հին հայ. -ուրդ, հմտ. խառն-ել և խառն-ուրդ) ածանցից:

³³ Ուր. ag- բայի իմաստը լավ հայտնի է և նշանակում է «անցկացնել (ջրանցք), տանել (գերիներ)»: Մակայն պարզ չէ թե այստեղ այն ինչ իմաստով է հանդես գալիս:

առաջին երեք տողերի համար բերում է հետևյալ վանկագիր ընթերցումը (գրադարձությունը) և թարգմանությունը՝

1. *LUGÁL-e a-li i-si i-ku-ka-ni e-di-ni ma-nu-li me-i gi-i i-na-a-ni*

2. *ba-ú-ši-na-ni KIN i-si-ia-ni me-i gi-i še-pu-ša-ar-di-a-ni me-i pu-ḫi-a-ni*

3. *gu-ni i-e-še ti-ú-bi gu-ni za-du-ú-bi-e ...* . «ապագա արքան, ով-որ կլինի սույն տեղում չպետք է (արգելքների մի շարք), իսկապես ես ասեցի, իսկապես՝ արեցի» [CTU A 12-1 VIII₁₋₃]:

Փորձենք վերլուծել և հնարավորության դեպքում թարգմանել վերոնշյալ տողերը: 1-ին տողը սկսվում է *LUGÁL-e a-li i-si i-šu-ka-ni*³⁴ *e-di-ni ma-nu-li* հատվածով, որը գրեթե ամբողջությամբ հասկանալի է: Բերենք այն կարգավորված ձևաբանական տառադարձամբ՝ տալով նաև հնարավոր թարգմանությունը: *LUGÁL-e ale isi i=šu=ka=ne edi=ne man=u=le* «արքան մյուս (իմա.՝ հաջորդ) (ով-որ) isi սրանից հետո³⁵ լինի»: Այս հատվածում միակ անհասկանալի բառը դա isi կարճ բառն է, որը սակայն չի խանգարում հատվածի ամբողջական ըմբռնմանը: Այնուհետ ունենք *me-i gi-i i-na-a-ni* 2. *ba-ú-ši-na-ni KIN i-si-ia-ni me-i gi-i še-pu-ša-ar-di-a-ni me-i pu-ḫi-a-ni* հատվածը: Այն բաղկացած է արգելական- ըղձական եղանակի բայերով կազմված քերականորեն միատեսակ հետևյալ երեք դրվագներից՝

ա) mi gei ina=ne bauši=na=ne KIN is=ia=ne «թող ոչինչ այն (այդ) խոսքերից KIN is- չանի»

բ) mi gei šepušard=ia=ne «թող ոչինչ šepušard- չանի»

գ) mi gei puḫ=ia=ne «թող ոչինչ չփոխի³⁶»

Նախ և առաջ այստեղ անբացատրելի է մնում KIN «աշխատանք, ջանք», «հաղորդակցություն, նամակ, և այլն»³⁷, գաղափարագրի առկայությունը տվյալ համատեքստում, նամանավանդ եթե հաշվի առնենք այն փաստը, որ տվյալ նշանը ուրարտական տեքստերում գրեթե միշտ հանդես է գալիս *qi/e* հնչյունական

³⁴ Այս ցուցական դերանվան *i-šù-ka-né* (*i=šu=ka=ne*) ընթերցման համար տե՛ս Ս. Այվազյան, Ուրարտերենի ցուցական դերանունները և նրանց համադրումը հայերենին, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2006 № 2, էջ 34-35:

³⁵ *i=šù=ka=ne edi=ne* դարձվածքի նման թարգմանության համար տե՛ս Ս. Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 62:

³⁶ Հմտ. աքք. *puḫ* «փոխել, փոխանակել» և խուռ. *puḫ=ugar=i* «փոխարինել» (աքք. փոխառություն) (I. Yakubovich, Morphological Negation in Urartian, Aramazd, V-1, 2010, p. 152, n. 2): Հ.Աճառյանը հայ. փոխ-ը համարում է փոխառություն՝ անմիջապես աքքադերենից: (ՀԱԲ, IV, էջ 511): Ուրիշները ավելի հավանական են համարում խուռական (Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1961, էջ 116: Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 424 և ծան. 10) կամ ուրարտական (I. Yakubovich նշվ. աշխ. էջ 152, ծան. 2) միջնորդությամբ փոխառությունը: Եթե հայ. փոխ-ը անմիջական փոխառություն է սեմական ինչ-որ լեզվից (հավանաբար աքքադերենից), ապա այն պետք է, որ փոխառված լինի արդեն նախաուրարտական շրջանում:

³⁷ R. Borger, Mesopotamisches Zeichenlexikon, Münster, 2003, S. 429, Zeichen 815:

արժեքով: Ըստ այդմ գտնում ենք, որ առաջին դրվագը պետք է ուղղել հետևյալ կերպ՝

mi gei ina=ne bauši=na=ne qis=ia=ne «թող ոչինչ այն (այդ) խոսքերից *qis-* չանի»

Արդյունքում ստացվում է, որ վերոնշյալ երեք դրվագներում անհասկանալի բառերը դրանք *qis-* և *šepuīard-* բայերն են: Առաջինը այլուր ուրարտական արձանագրություններում վկայված չէ, իսկ *šepuīar(d)-*ը, որի իմաստը ճշգրիտ հայտնի չէ վկայված է հետևյալ տեղերում՝

aluše ine É.GAL kulie aluše harḥaršulie aluše gei inane arniušinane lakudulie aluše gei inane INIM^{MES}-ne šepuialie (< *šepuia[ru]lie-*) «ով-որ ամրոցն լքի, ով-որ քանդի, ով-որ ինչ-որ բան այդ գործերից թաքցնի, ով-որ ինչ-որ բան այդ խոսքերից *šepuia[r]-*անի» [CTU A 9-20¹⁵⁻²⁰],

LUGÁL ale isi išukane edine GAR-ue/i manule mi ine É.GAL kuldiane mi šepuīardiane mi gei inane arniušinane lakuiane «մյուս արքան *isi* սրանից հետո կառավարիչ մնա (լինի)՝ թող ամրոցը չլքի, թող *šepuīard-* չանի, ոչինչ այդ գործերից թող չթաքցնի (՛)» [CTU A 9-13²⁻⁷, 9-14¹⁻³],

mi aišei edine suṭiane mi ibiriane mi gei inane baušinane šepuīardiane «թող ոչ ինչ/ոք սրանցից այդտեղ(ից) *sut-* չարվի/չանի, *ibir-* չարվի/չանի, թող ոչինչ այդ խոսքերից *šepuīard-* չարվի / չանի» [CTU A 12-1 VII³⁻⁴, 12-4 II¹⁰⁻¹²]:

Ինչպես երևում է վերոնշյալ վկայություններից *šepuīar(d)-*ը մեկ առնչվում է արքայի կառուցած ամրոցին, մեկ՝ խոսքերին, որոնք մի դեպքում (CTU A 9-13²⁻⁷, 9-14¹⁻³, 12-1 VII³⁻⁴, 12-4 II¹⁰⁻¹²) հաջորդ արքայի/կառավարչի կողմից չպետք է *šepuīar(d)-*արվեն, իսկ մյուս դեպքում (CTU A 9-20¹⁵⁻²⁰) արքան սպառնում է աստվածային պատժով նրանց ովքեր իր գործերը կթաքցնեն կամ խոսքերը *šepuīar(d)-* կանեն: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ *šepuīar(d)-*ը պետք է մոտավորապես նշանակի «խեղաթյուրել, կեղծել» կամ «արհամարհել, մոռացության մատնել»: Ըստ այդմ էլ, պետք է ենթադրել, որ *qis-* բայը նույնպես, ընդհանուր առմամբ, պետք է նշանակի «խեղաթյուրել, կեղծել, փոխել», «արհամարհել, մոռացության մատնել» կամ նման մի բան: Այս *qis-* բայի դիմաց հայերենում ունենք *կիսել* «կիսել, պակասեցնել, նվազեցնել» բայը: Այն թե՛ իր իմաստով, թե՛ հնչյունական կերպարանքով ամբողջությամբ համաձայնվում է *qis-*ի հետ: Ըստ այդմ, մեզ հետաքրքրող տողերի համար հնարավոր է տալ հետևյալ կարգավորված ձևաբանական տառադարձումը և թարգմանությունը՝

LUGÁL-e ale isi i=šu=ka=ne edi=ne man=u=le mi gei i=na=ne bauši=na=ne qis=ia=ne mi gei šepuīard³⁸=ia=ne mi puḥ=ia=ne gune ieše ti=u=be gune zad=u=be

³⁸ Այս *šepuīard-* բայը հիշեցնում է հայերեն խոսակցական (բարբառային) շարտ-ել բային: Միգուցե իսկապես ուր. *šepuīard-*ի տակ թաքնված է շարտ-ել բայի մի հին ձև (՛)՝ «(արհամարհական) դեն նետել» իմաստով:

«արքան մյուս (իմա.՝ հաջորդ) (ով-որ) isi սրանից հետո լինի (բառացի՝ մնա) թող ինչ-որ բան այն (այդ) խոսքերից չպակասեցնի (բառացի՝ չկիսի), թող ինչ-որ բան *šepuārd-* չանի, թող չփոխի: *Gune*³⁹ եւ ասեցի, *gune*՝ արեցի»:

GUD^usulu /c^usulu-/ «ցուլ»

«Ցուլ» իմաստը ուր. սեպագիր արձանագրություններում մինչ այժմ արտացոլված էր միայն GUD գաղափարագրի տեսքով: Բայց վերջերս հայտնաբերված մի արձանագրությունում⁴⁰ կարծես թե ունեն ցուլի վանկագիր վկայություն: Տե՛ս հետևյալ տողերը՝

22. *a-še pi-li-e i-di-[x-x-x]* (կամ ... *pi-li e-i-di-[x-x-x]*)

23. *MAN-ni-ni GUD II UDU* ^{d[đir]}*x-x-x]* (հավանաբար՝ ^{d[đir]}*Hal-di-e]*) (կամ *man-ni-ni GUD ...*)

24. *UDU* ^{d[đir]}*IM GUD* ^{KUR}*Ip-[x-x-x-x]*

25. *GUD su-lu-ú(-)[x-x-x-x-x]* (կամ ^{GUD}*su-lu-ú [x-x-x-x-x] ...*)

26. ^{id}*Da-na-l[i? x-x-x-x-x]*,

հետևյալ թարգմանությամբ՝

22. էրբ ջրանցքը (e)*idi-[xxx]*

23. արքայից (՝) (կամ՝ թող լինի (՝)) ցուլ 2 խոյ ^{h[ḡ]}*xxx]* (հավանաբար՝ ^{h[ḡ]}*Հալդիին*)

24. խոյ ^{h[ḡ]}*Teišeba(-ին) ցուլ* ^{h[ḡ]}*Ip[xxxx]*

25. ցուլ *sulu-[xxxxx]* (կամ՝ ցուլ *[xxxxx]*)

26. ^{q^{tu}}*Danal[i? xxxxx]:*

Արձանագրության վնասված լինելու պատճառով ամեն ինչ չէ, որ այստեղ հասկանալի է: Փորձենք վերլուծել 25-րդ տողը, որտեղ ունենք՝ *GUD su-lu-ú(-)[x-x-x-x-x]* «ցուլ *sulu-[xxxxx]*» կամ ^{GUD}*su-lu-ú [x-x-x-x-x] ...* «^{g^u}*sulu [xxxxx]*»: Արձանագրության հրատարակիչը նախընտրում է սույն տողի ընթերցման *GUD su-lu-ú-[x-x-x-x-x]* տարբերակը, որի համար նա առաջարկում է *GUD su-lu-ú[-uš-ti-x-x]* վերականգ-

³⁹ Ի. Դյակոնովը՝ ելնելով ուրարտական տեքստերում *gu=di* «ղեպի աջ» բառի ենթադրյալ առկայությունից *gune* (ըստ իրեն՝ *gu=ne*) ձևի համար առաջարկում է ած. «աջ, ճշմարիտ, ստույգ, կանոնավոր, իսկական», մ. «իսկապես» թարգմանությունները (VPI, c. 48,88), որը կրկնում է նաև Ն. Հարությունյանը (KYKH, c. 443), բայց ավելի ուշ առաջարկում՝ *egudi badi* («՝») ընթերցումը՝ անհայտ իմաստով (Ն. Հարությունյան, Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ ուրարտական սեպագրերում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, 2004, Ե., 2004 էջ 376-380): Մ.Սավվինին նույնպես հետևում է Ի. Դյակոնովին (CTU I, pp. 440, 570, 623): Բայց ուրարտական տեքստերում *gu=di* «ղեպի աջ» ձևի առկայությունը խիստ կասկածելի է: Այս *gu=di* (*gudi*)-ի փոխարեն ավելի շուտ պետք է ընթերցել *egudi(-)badi*, որի (որոնց) իմաստը հայտնի չէ (տե՛ս վերը): Մեր կողմից *gune*-ի բոլոր վկայությունների ուսումնասիրություն մեզ բերում է այն ենթադրության, որ այն ավելի շուտ պետք է նշանակի ած. «ամբողջ, լրիվ, բովանդակ, համատարած», մբ. «ամբողջովին, լրիվ»: Ամեն դեպքում, այս պահին, դժվար է միանշանակ եզրակացություն անել այս հարցում, ուստի *gune-*ն մենք այստեղ թողնում ենք առանց թարգմանության:

⁴⁰ K. Işık, The Irrigation canal stele of the Urartian King Argišti I recently discovered in Erciş/Salmanağa, north of lake Van, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archaologie, 109, 2, 2019 pp. 204–213.

նումը՝ «ցուլ տապալեցի» թարգմանությամբ⁴¹: Բայց արձ.-ում GUD su-lu-ú-ին նախորդում է GUD II UDU [d-x-x-x] UDU dIM GUD ^{KUR}IP[xxxx] «ցուլ, 2 խոյ ղ[^hgX-ին], խոյ՝ dIM-ին (իմա.՝ ղ^hgTeišeba-ին), ցուլ ^{Երկիր}IP[xxxx]» հատվածը, որտեղ թվարկված են զոհաբերվող (նվիրաբերվող) կենդանի – զոհաբերության հասցեատեր զույգերը՝ ցուլ, 2 խոյ ղ[^hgX-ին], խոյ ղ^hgTeišeba(-ին), ցուլ ^{Երկիր}IP[xxxx]: Հետևաբար, նույն տրամաբանությամբ, սպասելի է, որ սույն հատվածի շարունակությունը պետք է լինի՝ ^{GUD}su-lu-ú [dX-ին] «ցուլ X ղիցին» կամ ^{GUD}su-lu-ú [^{KUR}X DIGIR]) «ցուլ X երկրի ղիցին/ղիցերին»: Մյուս կողմից, նշված տողի GUD su-lu-ú-[uš-ti-x-x] «ցուլ տապալեցի» ընթերցման դեպքում անհասկանալի է մնում թե ում համար է այդ ցուլը նախատեսված և դրվագը մնում է համատեքստից դուրս: Բացի այդ, պետք է նկատի ունենալ նաև այն կարևոր հանգամանքը, որ *sulu=št*- «սողալով երեսն ի վայր ընկած աղաչել» բայը (հհայ. *սող-ել*) ուր. տեքստերում «տապալել» իմաստով ոչ մի անգամ վկայված չէ, և ընդհանրապես նման համատեքստում հանդես չի գալիս⁴²: Հարկավոր է նկատի առնել նաև այն փաստը, որ ուր. արձ.-ներում կենդանիների զոհաբերությունների համար միշտ կիրառվում է *urb*- «զոհաբերել, ընծայել, բաժին հանել», իսկ ուլերի դեպքում *n=ebse=d*- «մորթել, մաս-մաս անել» բայերը՝ բաց ոչ երբեք «տապալել» կամ նման իմաստով որևէ այլ բայ: Ի նկատի առնելով վերոշարադրյալը մեզ ավելի հավանական է թվում 25-րդ տողի ^{GUD}su-lu-ú [x-x-x-x-x] ընթերցումը՝ «ցուլ [xxxxx]» թարգմանությամբ: Ըստ այդմ, պետք է արձանագրել, որ այստեղ, առաջին անգամ է, որ «ցուլ» իմաստը կրող բառը ուրարտական տեքստերում վկայված է իր հնչյունագիր տեսքով: Լրացուցիչ կերպով դա հաստատվում է նաև հին հայերենի տվյալներով, որտեղ իսկապես ունենք *ցուլ*, *-ու* «ցուլ» բառը, որը իր հնչյունական կերպարանքով ամբողջությամբ համապատասխանում է ուր. *sulu*-ին՝ /^š*sulu*/ ⁴³ հնչյունադարձամբ:

are /arə/ «կից, մոտ, միացած», «միշտ, շարունակ, անդադար»

Այս բառը ուրարտական արձանագրություններում վկայված է վաղուց, սակայն մասնագիտական գրականությունում այն որպես առանձին բառ չէր ընկալվում և իբրև կանոն կցվում էր հաջորդող բառին, մասնավորապես՝ *beri*- (*beri=d=a=be/de*) «զալ, մոտենալ; գնալ, մոտ երթալ» բային: Այսպես, Գ.Մելիքիշվիլին և Ն.Հարությունյանը *are beridabe* բառակապակցության տեղը ընթերցում են՝ *aribe eridabe*՝ *eridabe*-ի մեջ տեսնելով անանցողական բայ՝ *erid*- «զալ, հայտնվել»

41 K. Işık, The Irrigation canal stele of the Urartian King Arğišti I recently discovered in Erciř/Salmanaęa, north of lake Van, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archaologie, 109, 2, 2019, pp. 206:

42 Հին հայերենում այն նույնպես չունի նման իմաստ:

43 Հին հայերենի ց հնչյունը ուր. տեքստերում միշտ արտացոլվում է z կամ s նշաններով (Ս. Այվազյան, Ուրարտերեն-հայերեն: Բառապաշար և պատմահամեմատական քերականություն (այստեղևտև՝ Ուրարտերեն-հայերեն), Ե., 2008, էջ 30, Ս. Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 118), տվյալ դեպքում այն արտացոլված է s-ով:

իմաստով, որը, ըստ նրանց, հումանիշ է *nun-* «գալ, հայտնվել» բային⁴⁴: Մ.Սալվինին առաջարկում է *ariberid-* ձևը, որը նա թարգմանում է «մոտենալ, առաջ անցնել, հայտնվել, գալ»՝ իմաստը մոտ համարելով *nuna-* և *śia-* անանցողական բայերին⁴⁵: Մենք ժամանակին անդրադառնալով ենթադրյալ *ariberi=d-* բայաձևին առաջարկել էինք այն վերլուծել *ari/e(=)beri=d-* ձևով՝ առաջին բաղադրիչի մեջ տեսնելով հին հայերենի (*-)ար* «կից, մոտ և այլն» ածական/մակբայ/նախդիր-ը, իսկ երկրորդի՝ *բեր-եմ* «մոտ բերել» բայը⁴⁶: Այժմ, քանի որ ի հայտ են եկել *are-*ի նոր վկայություններ, կրկին անդրադառնանք այս հարցին: Բերենք, կարգավորված ձևաբանական տառադարձամաբ, բոլոր այն հատվածները որոնցում հստակ երևում է *are* բառը:

1. *are beri=d=a=be* (ըստ Մ.Սալվինիի՝ *ariberi=d=a=be*) [*k*]a=uke gunu=śi=ne «մոտ եկավ վայրը-իմ (իմ գտնվելու տեղին)՝ գորքը» [CTU A 8-1 l.d.18-19],
2. [LUGÁL ^m]Diauehe *are beri=da=be* (ըստ Մ.Սալվինիի՝ *ariberi=d=a=be*) kai=uke «արքան ^{ար}Diau(*Տիսան*)-ական մոտ եկավ վայրը-իմ (իմ գտնվելու տեղին)» [CTU A 8-7],
3. *are b[e]r[i]=da=de* (ըստ Մ.Սալվինիի՝ *ariberi=d=a=de*) kai ^{SADU}Qilaśi=ne=e ^{SADU}babane=e «մոտ գնացի (մոտեցա) տեղը/վայրը Qilaše լեռան» [CTU A 8-3 III₅],
4. *gunu=śi=ni=e are beri=d=a=de* (ըստ Մ.Սալվինիի՝ *ariberi=d=a=de*) «գորքին մոտ եկա (մոտեցա)» [CTU A 11-3₅₋₆],
5. [*a*]re ueli=d=u=ul[e] ^{SADU}babane=le DAN.NU^{MES} «մոտ/կից ueli- արեցի լեռներ հզոր/ամուր» [CTU A 14-1 Ro.34-37, 14-2 Ro33-37],
6. *pul=a=ue işi=na=ue are butai* (ըստ Մ.Սալվինիի՝ *aributai*) KASKAL *istine man=u* «հեղեղատների, işi-ների, անդադար (իրար հաջորդող) բուտայի (հունի ցամաքած տեղերի / կղզյակների) ճանապարհ էր այստեղ մնացել [CTU A 14-1 Ro.28-37, 14-2 Ro26-37]:

Առաջին չորս վկայություններում, ինչպես արդեն ասվեց, մենք գործ ունենք *are beri=d=a=de/be* «մոտ եկա/եկավ» բառակապակցության հետ⁴⁷: Հինգերորդում ակնհայտ է, որ մենք գործ ունենք նույն *are* բառով կազմված *are ueli=d=u=ule* բառակապակցության հետ, քանզի այլ տեղերում *ueli=d-* բայը առանձին բազմիցս վկայված է և լավ հայտնի է: Իսկ ինչ վերաբերում է վեցերորդ վկայությանը, ապա այդ մասին մանրամասն տե՛ս ստորև՝ *buta* բառահոդվածում:

⁴⁴ YKH, c. 389,394; KYKH, c. 435, 443.

⁴⁵ M.Salvini, Le due stele di Rusa Erimenabi dal Keşiş Göl, Studi micenei ed Egeo – Anatolici, 48, Roma, 2006, p. 79; CTU I, p. 327, 338, 348, 541.

⁴⁶ Մ.Այվազյան, Ուրարտերեն-հայերեն, Ե., 2008, էջ 44,61; Մ.Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 81: Անանցողական իմաստով ունենք բեր-իմ «գնալ, (մոտ) երթալ, շրջագայել, մոտենալ և այլն» բայը:

⁴⁷ Մ.Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 81:

ur- /ur-/ «ընդարձակել, ջրի մակերեսը բարձրացնել»
buta /buta/ «գետի հունի միջի ցամաք տեղ, կղզյակ (բուսա)»
pul- /foł-/ «հեղեղատ»

«Տերտերի լճի»⁴⁸ և «Հավաձորի» ուրարտական արձանագրությունների կրկնվող մի հատվածում [CTU A 14-1 Ro.²⁸⁻³⁷, 14-2 Ro²⁶⁻³⁷] հանդիպում ենք *urube*, *butai*, *pulaue* և *isinaue* անձանոթ բառերին, որոնք այլուր վկայված չեն: Բերենք վերոհիշյալ արձանագրությունների մեզ հետաքրքրող հատվածը՝ Մ.Սալվինիի վանկագիր ընթերցմամբ և թարգմանությամբ:

«Տերտերի լիճ»

«Հավաձոր»

- 28. ú-ru-bi i-ni šu-i-ni-i e-s[i gu-ni?]
- 29. [šú]-li ma-nu-še ú-i gi-i ab-s[i-i GÁN]
- 30. Ú.ŠE iš-ti-ni ma-nu-ri pu-la-ú-[e]
- 31. i-ši-na-ú-e a-ri bu-ta-i [KASKAL]
- 32. [i]š-ti-ni ma-nu ú-i PA⁵-e a-ga-ú-[ri]
- 33. ú-i ta-ar-ma-ni iš-ti-ni m[a-nu-ri]
- 34. [a]-ri ú-e-li-d[u-ú-li ^{SA}DUba-ba-ni-l[i]
- 35. [DA]N.NU^{MES} ú-ra-tar-bi A^{MES} iš-ti-n[i]
- 36. [p]u-la-ú-e e-`a i-ši-na-a-ú-[e]
- 37. [t]e-ru-bi ti-ni ^mRu-sa-a-i šu-e [CTU A 14-1 Ro.²⁸⁻³⁷]

- 26. [ú-r]u-bi i-ni šu-i-ni-i e-[si]
- 27. [gu-ni?] šú-ú-li ma-nu-[še⁴⁹] ú-i [gi-i]
- 28. [ab-si]-i GÁN Ú.ŠE iš-ti-ni ma-[nu-ri]
- 29. [pu-la]-ú-e i-ši-na-a-ú-[e]
- 30. [a-ri-bu]-ta-i KASKAL iš-ti-ni m[a-nu]
- 31. [ú-i] PA⁵ a-ga-ú-ri ú-i
- 32. [ta-a]r-ma-ni iš-ti-ni ma-nu-r[i]
- 33. [a-ri]-e ú-e-li-du-ú-l[i]
- 34. [^{KUR}ba-b]a-ni-li DAN.NU^{MES} ú-ra-tar-b[i]
- 35. [A^{MES} i]š-ti-ni pu-la-ú-e e-`a
- 36. [i-ši]-na-ú-e te-ru-bi ti-i-ni
- 37. [^mRu-s]a-i šu-e [CTU A 14-2 Ro²⁶⁻³⁷]:

«Փորեցի (՞) այս ծովի (գրադեցրած) տեղը, [իսկապես (՞)] ամայի (՞) էր, ոչ-ինչ՝ նույնիսկ արտ՝ հացահատիկի այստեղ չկար ճանապարհ էր այստեղ: ջրանցք չկար անցկացված, չկար աղբյուր այստեղ: Ես փակեցի (՞) հզոր լեռները ջրերը այստեղ ես դրեցի անունը՝ «Ռուսայի լիճ» (թարգմանությունը՝ ըստ Մ.Սալվինիի):

Հատվածը ներկայացնենք կարգավորված ձևաբանական տառադարձմամբ՝ որոշ շտկումներով հանդերձ:

⁴⁸ Այս արձանագրության մի մասն էլ հայտնաբերվել է Էրմանցում, որտեղից էլ ըստ երևույթին ծագում է արձանագրությունը՝ ամբողջությամբ:

⁴⁹ Մ.Սալվինիին այս կտորը ընթերցում է ma-nu ú-i: Սակայն բնագրում (լուսանկարում) nu-ի և ú-ի միջև հստակ երևում է վնասված հատված՝ բավարար ես մեկ կարճ նշանի համար: Ըստ այդմ, այստեղ պետք է ընթերցել ma-nu-[x] ú-i, իսկ ինչպես ցույց է տալիս «Տերտերի լիճ»-ի գուգահեռ տեքստի համապատասխան հատվածը՝ վնասված տեղում պետք է վերականգնել še նշանը:

ur=u=be ine şui=ne=i es[i xxx] şule man=uşe (=re_x ?) ui gei abs[e]i GÁN Ú.ŞE istine man=ure pul=a=ue işi=na=ue are butai KASKAL istine man=u ui PA₅(-e) agaure ui tarmane istine man=ur[e] [a]re uelid=u=ul[e] ^{SADU}babane=le DAN.NU^{MES} ura-TAR-be A^{MES} istine pul=a=ue ewe işi=na=ue ter=u=be ti=ne ^mRusa=i şue:

Այն սկսվում է *ur=u=be ine şui=ne=i es[i xxx]* դրվագով, որը Մ.Սավլինին թարգմանում է «*փորեցի (°) այս ծովի (զբաղեցրած) տեղը*»: Միակ կասկածելի տեղը այստեղ ուր. *ur-* բայի «փորեցի» թարգմանությունն է, որը Մ.Սավլինին ինքն էլ հարցականով է տալիս: Իրականում, ներկայումս «Տերտերի լիճ» կոչվող ջրամբարը (լճակը) կառուցված է այդտեղով հոսող գետակի (հեղեղատի) ճանապարհն ամբարտակով փակելու եղանակով⁵⁰: Ըստ այդ, մեզ առավել հավանական է թվում սույն դրվագի «ընդարձակեցի / բարձրացրեցի ծովի/լճի (զբաղեցրած) տարածք[ը, xxx]» թարգմանությունը⁵¹: Նման թարգմանությունը լրացուցիչ հաստատվում է նաև հին հայերենի տվյալներով, որտեղ ունենք *ուււ-ն-ուլ, ուււ-չ-ել* «ընդարձակվել; (ջրի) մակերեսը բարձրանալ; փքվել (փխբ. ամբարտավանել)» և այլն բայր: Ինչ վերաբերում է վնասված հատվածում *gun*⁵² մակբայի վերականգնմանը, ապա դժվար է հստակ բան ասել այդ առիթով, ուստի մենք այս հարցը առայժմ թողնում ենք բաց:

Հաջորդ *xxx] şule man=uşe (=re_x ?) ui gei abs[e]i GÁN Ú.ŞE istine man=ure* դրվագը այս կամ այն ձևով բազմիցս վկայված է ուր. տեքստերում, իսկ թարգմանությունը հիմնականում հասկանալի է: Այստեղ անսովորը դա *man=uşe* բառի (բայաձևի (°)) վկայությունն է սպասվելիք *man=u* «մնացել/թողնվել էր» բայի փոխարեն: Միգուցե բառավերջի *-şe*-ի փոխարեն պետք է կարդալ *re_x* (°)⁵³, բայց *man=ure* ընթերցումն էլ ստեղծում է որոշակի քերականական խնդիրներ: Դրվագի հաջորդ մասում միակ անհասկանալի բառն *absei*-ն է, որը մասնագիտական գրականությունում արժանացել է ոչ միարժեք մեկնաբանությունների⁵⁴: Մենք այն այստեղ չենք թարգմանի (CTU-ում թարգմանված է «նույնիսկ», տե՛ս վերևում): Իսկ ինչ վերաբերում է *şule* ածականին, որը Մ.Սավլինին հարցականով թարգմանում է

⁵⁰ Հաշվի առնելով «Տերտերի լիճ»-ի չափերը նրա փորելով կառուցված լինելու տարբերակը իսպառ պետք է բացառել:

⁵¹ Չի բացառվում, որ նախկինում այդտեղ արդեն եղել է արհեստական ջրամբար կամ բնական լճակ, որը ուրարտական արքան ամբարտակի միջոցով ընդարձակել է՝ բարձրացնելով ջրի մակարդակը:

⁵² *Gune*-ի հնարավոր իմաստի համար տե՛ս ծան. 39:

⁵³ Ուրարտական տեքստերում *şe* նշանի նման հնարավոր ընթերցման մասին տե՛ս M.Salvini, CTU I, p. 105:

⁵⁴ «Յուրաքանչյուր, ամեն մի, ցանկացած», «ընդհանրապես» (HchI, S. 172; KYKH, c. 431; M.Salvini, I.Wegner, Einführung in die urartäische Sprache, Wiesbaden, 2014, S. 107); «առաջ, նախկինում» (°) (YKH, c. 77):

«ամայի» (°), ապա մենք նախընտրում ենք «չոր, անջրդի, ցամաք» թարգմանությունը⁵⁵:

Այնուհետ՝ մեզ հետաքրքրող հատվածում ունենք *pul=a=ue işi=na=ue* (կամ՝ *işin=a=ue*) *are butai* (ըստ Մ.Սալվինիի՝ *aributai*) *KASKAL istine man=u* տողերը, որտեղ առկա են՝ *pul-*, *iş-*, *buta-* այլուր ուր. տեքստերում չհանդիպող բառերը: Քերականորեն սույն դրվագը թարգմանվում է «*pul*-ների *iş*(*n*)-ների *are buta*-ի ճանապարհ էր այստեղ մնացել»: Այս դրվագում մեր ուշադրությունը մի անգամից գրավեց ուր. *butai* անձանթ բառը, որը իր հնչյունական կերպարանքով ամբողջովին համապատասխանում է հայ. բրբ. *բուտայ* (*բուտա*) «մի սենյակի չափ տեղ», «գետի մեջ գոյացած ցամաք՝ տեղ, կղզյակ» բառին⁵⁶: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ուր. տեքստի նախորդ տողերում խոսվում էր տեղանքի հենց չոր (ամայի) լինելու մասին, կասկած չի մնում, որ այս համապատասխանությունը պատահական չէ: Ըստ այդմ, առաջարկում ենք ուր. *buta*-ն թարգմանել «գետի մեջ գոյացած՝ ցամաք տեղ, կղզյակ»: Ինչ վերաբերում է հոգ. սեռականով դրված՝ *pul-*, *iş*(*n*)- գոյականներին, ապա կասկածից դուրս է, որ վերջինները իրենց իմաստներով նույնպես պետք է կապվեն ռոռգման համակարգի կառուցման հետ: Հետաքրքիր է, որ սույն ջրամբարի և հարակից ռոռգման համակարգի կառուցման ընթացքում ուրարտական արքան օգտագործել է նաև տեղի բնական հեղեղատները: Մասնավորապես հետագայում Անգյուսներա կոչված հեղեղատը, որը ի շնորհիվ ջրամբարի լրացուցիչ ջրի վեր էր անվել փոքր գետակի և ծառայել է իբրև առու՝ ջուրը ջրամբարից (լճից) դաշտերին և այգիներին հասցնելու համար⁵⁷: Ջրանցքի համար ուրարտական տեքստերում իբրև կանոն գործածվում է *pile* եզրը, որի տակ, ըստ մեզ, թաքնված է հիայ. *հեղ* < **pel-* «հոսել» բառարմատը, հմտ. *հեղ-եղ* «ջրի հոսք», *հեղ-ում* «թափել, հոսեցնել»⁵⁸: Հաշվի առնելով դա չի բացառվում, որ ուր. *pul*-ի տակ էլ թաքնված է *հեղ*-ի *ող* < **pol-* ձայնադարձը, հմտ. հիայ. *ող-ող* «հեղեղ»: Թերևս նման մի իմաստ էլ պետք է ունենա նաև ուր. *iş*(*n*)- գոյականը:

⁵⁵ Խոսքն այստեղ հիայ. չոր «խոնավությունից զուրկ, ցամաք; չորացած; կարծր» ածականի մասին է, տե՛ս Մ.Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 106; Վ.Գայսերյան, Սեպագիր մի քանի արձանագրությունների թարգմանության մասին, Ե., ՊԲՀ, 2014, 2, էջ 154:

⁵⁶ Տե՛ս Ն.Աճառյան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 206; Մ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, III, Ե., 1944, էջ 393:

⁵⁷ Այս մասին տե՛ս Ն.Թուրջյան, Ջրօգտագործման սիստեմը Վասպուրականում, ՊԲՀ, 1967, 2-3, էջ 247:

⁵⁸ Տե՛ս Մ.Այվազյան, Ուրարտերեն-հայերեն, Ե., 2008, էջ 51,96; Մ.Այվազյան, Ուրարտերեն, Ե., 2013, էջ 100; S.Ayvazyan, Urartian-Armenian: Lexicon and Comparative-Historical Grammar. Yerevan, 2011, pp. 43,81:

Հաջորդ դրվագում ունենք *ui PA₅(-e) agaure ui tarmane istine man=ur[e]* «նչ ջրանցք (կար) անցկացված, ոչ ջրարբ⁵⁹ (՞) (կար) այստեղ թողնված (մնացած)»: Մեզ հետաքրքրող հատվածը ավարտվում է *[a]re ueli=d=u=ul[e]* ^{SADU}*babane=le DAN.NU^{MES} ura-TAR-be⁶⁰ A^{MES} istine pul=a=ue ewe işi=na=ue ter=u=be ti=ne ^mRusa=i şue* «մոտ *ueli⁶¹-արեցի լեռները հզոր (ամուր), ura-TAR-be ջրերը այստեղ՝ հեղեղատների և işi(n)-ների, դրեցի անունը Rusa-ի ծով (լիճ)»* տողերով: Ներկայացնենք հատվածն ամբողջությամբ՝

ur=u=be ine şui=ne=i es[i xxx] şule man=uşe (=re_x?) ui gei abs[e]i GÁN Ú.ŞE istine man=ure pul=a=ue işi=na=ue are butai KASKAL istine man=u ui PA₅(-e) agaure ui tarmane istine man=ur[e] [a]re uelid=u=ul[e] ^{SADU}*babane=le DAN.NU^{MES} ura-TAR-be A^{MES} istine pul=a=ue ewe işi=na=ue ter=u=be ti=ne ^mRusa=i şue* «ընդարձակեցի (բարձրացրեցի) ծովի (լիճի) (զբաղեցրած) տարածք[ը⁶², xxx] չոր էր մնացել, ոչ-ինչ *abs[e]i* արտ՝ հացահատիկի այստեղ (չկար) մնացած, հեղեղատների, işi-ների, անդադար (իրար հաջորդող) բուսայի (հունի ցամաքած կղզյակների /տեղերի) ճանապարհ էր այստեղ մնացել, ոչ ջրանցք (կար) անցկացված, ոչ ջրարբ (՞) (կար) այստեղ թողնված (մնացած): Մոտ/կից *ueli-* արեցի լեռները հզոր (ամուր), *ura-TAR-be* ջրերը այստեղ՝ հեղեղատների և *işi(n)-ների, դրեցի անունը ^{անձ}Rusa-ի ծով (լիճ)»*:
alau- /alaw-/ «երկնային հոգի/էակ/տեր» (՞)

Alau-ն երկու անգամ վկայված է Ջարդուր Բ-ի տարեգրության հետևյալ տողերում (տողերը բերում ենք ձևաբանական տառադարձմամբ՝

Ḫuti=a=de ^dḪaldie=edi EN-di ^dIM-di ^dUTU-di DIGIR^{MES}-a=šte ^{KUR}Biain=a=šte alau=i=ni=ne (այլ տեղերում՝ *alusi=ni=ne alsui=ši=ne ... «Ուխտեցի Հալդիին՝ տիրոջը, ^{դից}Teişeba-ին, ^{դից}Şiaine-ին, աստվածներին՝ ^{երկիր}Biainele-ի, alau-ի (տերունական) մեծությամբ ...» [CTU A 9-3 IV⁴⁻⁶, 44-46]:*

59 Ուր. *tarmane* գոյականը մասնագետների կողմից ստացել է տարբեր մեկնաբանություններ («աղբյուր» կամ «ջրարբ, (անասունների) ջրելատեղ» (՞) (И.Дьяконов, УПД, с. 91); «աղբյուր, ակունք» (KYKH, с. 467); «աղբյուր», «հոր» (G.Wilhelm, Urartian, in The Ancient Languages of Asia Minor, Edited by R. Woodard, Cambridge, 2008, p. 122); «ջրամբար, ավազան» (M.Payne, A.Ceylan, A New Urartian Inscription from Ağrı-Pirabat, Studi micenei ed Egeo – Anatolici, 45/2, 2003, Roma, p. 200); «(ցայտ)աղբյուր» / «ջրամբար, ավազան» (M.Salvini, Urartu. Les sources épigraphiques de la langue, Res Antiquae, VIII, 2011, pp. 294-300); և այլն), մենք այստեղ նախընտրում ենք «ջրարբ» տարբերակը:

60 Համատեքստը պահանջում է, որպեսզի այս *ura-TAR-be*-ն նշանակի «ամբարել, կուտակել» կամ լինի համատեքստին համահունչ որևէ այլ անցողական բայ: Սակայն, դատելով տեքստից կարծես թե, դա այդպես չէ:

61 *Ueli-* (*ueli=d-*) բայը ավանդաբար թարգմանվում է «(զորք) հավաքել, գումարել»: Սակայն ինչպես ցույց են տալիս սույն տեքստի *[a]re ueliduul[e]* ^{SADU}*babanele DAN.NU^{MES}* տողերը այն առնչվում է ոչ միայն զորքին, այլև լեռներին որոնք *are ueli(=)d-* են արվում հեղեղատների ջրերը ոռոգման նպատակով ամբարելու համար: Դատելով այս ամենից այս *ueli(=)d-*ն թերևս կարելի է թարգմանել՝ «շրջել (զորքը, լեռները)» (՞) կամ նման մի բան:

62 Միգուցե «եզրը, ավիր»:

Մասնագիտական գրականությունում այն որպես կանոն թարգմանվում է «տեր» (*alau=i=ni=ne alsui=ši=ne «տիրոջ/տերունական մեծությամբ»* [YKH, էջ 387; YΠΔ, էջ 87; KYKH, էջ 432; CTU 9-3 IV^{4-7, 44-47} և այլն]: «Տեր» գաղափարի համար ուր. արձանագրություններում կանոնավոր կերպով գործածվում է *aluse* եզրը, որը վերոհիշյալ տողերի կրկնօրինակ դրվագներում փոխարինում է *alau*-ին: Ըստ այդմ, պետք է ենթադրել, որ այս երկու բառերը իսկապես հոմանիշները են: Մյուս կողմից մեր ուշադրությունը գրավեց հիայ. *ալաւ-ունք* (հոգ. թիվ *ալաւ-ից*) «բազմաստեղք» բառը, որը միջին հայերենում ունի «երկնային էակներ, հոգիներ, հրեշտակներ» իմաստը⁶³: Այն թե՛ իր հնչունական կերպարանքով, թե՛ համատեքստից բխող ընդհանուր իմաստով լիովին համապատասխանում է ուր. *alau*-ին: Եթե այս համապատասխանությունը պատահական չէ, ապա *alau*-ն պետք է թարգմանել «երկնային՝ հոգի, էակ», այլ ոչ թե «տեր»: Բայց չի բացառվում նաև, որ *alau*-ն այս երկու իմաստներն էլ պարփակում է իր մեջ և նշանակում է «երկնային տեր», այլ ոչ թե ուղղակի «տեր»՝ լայն իմաստով: Թերևս պատահական չէ, որ բոլոր այն դեպքերում երբ ուր. արձանագրություններում խոսք է գնում երկրային տիրոջ մասին (օրինակ՝ ուր. արքաների), ապա առանց բացառությամբ գործածվում է միայն *aluse* եզրը:

ափս=ֆե /acu=sə/ «ծիք, ընձյուղում» (◌)

Aš(u)- հիմքից (արմատից) և *-še* ածանցից կազմված վերացական գոյական է, որը երկու անգամ վկայված է հետևյալ տողերում (տողերը բերում ենք կարգավորված տառադարձամբ)՝

^mIšpuuini=še ^mSardurehineše ^mMinuaše ^mI[š]puuinehineše inele KĀ^(MES) zaduale/zatule terune/tertu ardiše ^dUTU(-nine) ITU ašuse manuse ^dḪaldie(i) ^dIM ^dUTU DIGĪR^{MES} UKKIN^{MES} 6 UDU.MĀŠ.TUR ^dḪaldie nepsediwale «^{այր}Išpuuine-ն՝ ^{այր}Sardure-յան, ^{այր}Minua-ն՝ ^{այր}Išpuuine-յան (այս) դռներ-ն սարքեցին, դրեց(ին) կարգ ^{նից}UTU (Արեգ) ամսից (կամ՝ ամսին) ašuse manuse Հալդիի(ն), ^{նից}Tešeba-ի(ն), ^{նից}Šiuine-ի(ն), աստվածների(ն)՝ բոլոր, 6 ուլ Հալդիին թող մորթվի...» [CTU A 3-1^{1-3, 32-35}],

^mSardu[riše al]e terube ardi[še ... -n]i ašušine ziebe [xxxp]a(-)šašinaše I UDU ^d[Ḫaldie] urbuline I UDU ^m[Sardureh]inaue DIGĪR-ie «^{այր}Sardu[re-ն աս]ում է՝ դրեցի կար[գ ...] ašušine ziebe [xxxp]a(-)šašinaše, 1 խոյ [Հալդիին] թող զոհաբերվի, 1 խոյ ^{այր}[Sardur]e-այինների (թերևս խոսքը ^{այր}Sardure-այիններ քաղաքի մասին է) աստծուն» [CTU A 9-1 R0⁹⁻¹³]:

Ինչպես երևում է [CTU A 3-1^{1-3, 32-35}]-ից *ափս=ֆե*-ն առնչվում է «Արեգ» ամսին (*^dUTU(-nine) ITU*) կատարվելիք զոհաբերությունների հետ: Մասնագիտական գրականությունում *ափս=ֆե*-ը ստացել է տարբեր մեկնաբանություններ, ինչպես՝ «զոհաբերում, օծում» [Hchl:175], «տոն», «տոնակատարություն» (◌) [YKH:390;

⁶³ Ռ.Ղազարյան Հ.Ավետիսյան, Միջին հայերեն բառարան, Ե., 2009, էջ 18

УПД:87; КΥΚΗ:436-7] և այլն: Մ.Սալվինին *aşu=še*-ը չի թարգմանում [CTU A 3-1^{2,34}], իսկ *aşu=šine*-ի համար առաջարկում է «բարգավաճում» (°) ենթադրական թարգմանությունը [CTU A 9-1 Ro.10]: Միննույն ժամանակ նա չի բացատրում, որ *aşu=še*-ը կարող է կապ ունենալ ուր. տեքստերում վկայված ^{LU}*aşule* տիտղոսի հետ, որի կրող անձը, ըստ իրեն, կարող էր և ունենալ նաև պաշտամունքային գործառույթ⁶⁴: Իրականում ^{LU}*aşule* նշանակում է «կառավարիչ, առաջնորդ» և կապվում է հիայ. *ած-ող-ել* «կառավարել, առաջնորդել» բայի հետ (այս մասին տե՛ս առանձին՝ *aşule* բառահոդվածում), որի հիմքում ընկած է *ած-* բազմիմաստ բայարմատը: Ի թիվս բազմաթիվ այլ բառերի այս բայարմատից հին հայերենում ունենք նաև՝ *ած-ք* «ծիլ, ընձյուղ», «ոստ, շիվ», *ածու* «մարգ», *ածու-ատ-ել* «հողը ածու-ածու կտրատել՝ բաժանել», ինչպես նաև բրբ. *ածու-ք* «բույսի սերմերն աճեցնելու բանջարանոց, և այլն» բառերը, որոնք իմաստաբանորեն կապված են բույսերի ծլման և աճի հետ: Եթե նկատի առնենք այն փաստը, որ *aşu=še*-ն ուր. տեքստերում առնչվում է զարնան առաջին ամսվա՝ «Արեգ»-ի հետ, երբ Հայաստանում սկսվում է վեգետացիոն շրջանը և բուսականության ծիլքը, ապա չի բացառվում, որ *aşu=še* նշանակում է հենց «ծիլք, ընձյուղում» (°) և *aşuše* ու *aşule* բառերը ծագումով, բայց ոչ իմաստով, իսկապես փոխկապակցված են: Ըստ այդմ, պետք է ենթադրել, որ [CTU A 3-1^{1-3, 32-35}]-ում խոսվում է բույսերի զարնանային ծլարձակման առիթով սահմանվող գոհաբերությունների (նվիրաբերությունների) կարգի մասին:

panit=he /fan(V)θ-/ «ճանձաղ, սակավաջուր»

Այս բառը մեկ անգամ վկայված է Արծվաբերդի արձանագրության հետևյալ հատվածում (հատվածը բերում ենք կարգավորված տառադարձմամբ՝

Pile agube ^{KUR}*ebanie* ^{URU}*Alia bedine* ^d*Queraina taramana bedin[e] kuṭube pare Dainali(-)tine kamnahe panithe manu* «ջրանցք անցկացրի երկրին, *Alia* քաղաքից, *Quera* դիցի աղբյուրից հասցրեցի մինչև (գետ) *Dainali(-)tine*, (անհասկանալի մաս)» [CTU A 5-17 Ro¹⁹⁻²⁹]: (թարգմանությունը Մ.Սալվինիի)

Բերված թարգմանության մեջ Մ.Սալվինին *kamnahe panithe manu* դրվագը թողնում է բաց (առանց թարգմանության): Ի.Դյակոնովը այս դրվագի համար առաջարկում է «առաջուց (°) (այստեղ) ամայի (°) էր»⁶⁵ թարգմանությունը, որը, Ի.Դյակոնովի վրա հղումով, կրկնում է նաև Ն.Հարությունյանը [ΚΥΚΗ 75²⁷⁻²⁹]: Իրականում վերոհիշյալ հատվածում միակ անձանոթ բառը դա *panithe*-ն է, իսկ մնացածը առանց մեծ դժվարության հնարավոր է թարգմանել հետևյալ կերպ «ջրանցք անցկացրի՝ երկրին, ^{քաղաք}*Alia*-ի հետևով (հետևի կողմից), ^{դից}*Quera*-ի ջրարբների (°) հետևով (հետևի կողմից), հասցրեցի մինչև (գետ) *Dainali(-)tine*, (որը) նախկինում

⁶⁴ Տե՛ս CTU I, էջ 128, տող. 2-ի ծանոթագրություն:

⁶⁵ И.Дьяконов, УПД, с. 55, прим. 43.

panithe էր: Բերված թարգմանությունից ակնհայտ է դառնում, որ այստեղ խոսքը *Dainali(-)tine* գետի մասին է, որը մինչև իրեն ջրանցք հասցնելը (*ջրանցք անցկացրի ... հասցրեցի մինչև (գետ) Dainali(-)tine panithe* էր մնացել: Ինչից բխում է, որ *panithe* պետք է նշանակի «ծանծաղ, սակավաջուր, ցամաք» կամ նման մի բան, այլ ոչ թե «ամալի» ինչպես որ որոշ կասկածանքով ենթադրում է Ի.Դյակոնովը: Եթե դա այդպես է, ապա *panithe*-ն հիշեցնում է -h.-ե. **pent* «ոտք դնել, գնալ» բառարմատը, որի **pont* միջին ձայնադարձից ունենք հիայ. *hnin* գ. «գետի ծանծաղ տեղ», ած. «ծանծաղ, սակավաջուր» բառը: Եվ եթե նմանությունը պատահական չէ, ապա ուր. *panit*--ը պետք է, որ ծագի նույն արմատի ստորին ձայնադարձից: Իսկ *panit=he* տարբերակի առկայությունը սպասվելիք *part=he*-ի փոխարեն պայմանավորված է այն հանգամանքով, որ սեպագիր համակարգը չի կարող արտացոլել իրար հաջորդող երեք բաղաձայն հնչյուններ և ստիպված գրում ավելացվում է որևէ մի ձայնավոր, որը չի ընթերցվում: Ինչ վերաբերում է բառավերջի -*he*-ին, ապա ակնհայտ է, որ մենք այստեղ գործ ունենք ուրարտերենի լավ հայտնի -*he/-hi*-ածականակերտ մասնիկի հետ:

šale /salə/ «տարի» < h.-ե. *k'el «տաք»

Šale-ն ուր. արձանագրություններում հաճախ փոխարինվում է MU «տարի» գաղափարագրով, ուստի նրա իմաստը կասկածից դուրս է: Մասնագիտական գրականությունում, այն, որպես կանոն, նույնացվում (համապատասխանեցվում) է խուռ. *šawala* «տարի» բառի հետ⁶⁶: Միևնույն ժամանակ մեր ուշադրությունը գրավեց այս *šale*-ի և հին իրան. *sārd* «տարի», ավեստերեն *sarəθ* «տարի», օսերեն *sörd* «ամառ», պարսկերեն *sāl* «տարի», քրդերեն *sār, sāl* «տարի» և այլն իրանական ձևերի նմանությունը, որոշ դեպքերում՝ նույնությունը: Այս բոլոր իրանական ձևերը ծագում են < h.-ե. *k'el «տաք» արմատից՝ տաք → ամառ → տարի իմաստային անցումով և իրանական լեզուներին հատուկ | > r հնչյունափոխությամբ⁶⁷: Եթե ենթադրենք, որ հայերենը «տարի» իմաստի համար նույնպես կարող էր ունենալ նույն արմատից ծագող բառ⁶⁸, ապա համաձայն հայերենի օրենքների այն պետք է ունենար **uaw/η* տեսքը: Իսկ ուր. տեքստերում այս **uaw/η*-ը պետք է գրվեր *šale* կամ *sale*, ինչը որ մենք փաստացի տեսնում ենք:

Գործածված հապավումներ

ՀԱԲ Ն.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, I (1971), II (1973), III (1977), IV (1979), Երևան:

⁶⁶ N.Adontz, *Histoire d'Arménie*, Paris, 1946, p. 269; J.Friedrich, *Hethitisches Wörterbuch: Kurzgefasste kritische Sammlung der Deutungen hethitischer Wörter*, Hauptband, Heidelberg, Verlag Carl Winter 1952, S. 324; HchI, S. 200; YKH c. 406; YΠΔ, c. 91; KYKH, c. 462; G.Wilhelm, *Urartian*, in *The Ancient Languages of Asia Minor*, Edited by R. Woodard, Cambridge, 2008, p. 122 և այլն:

⁶⁷ J.Pokorny, *Indogermanisches Etymologisches Woerterbuch*, II, Bern-München.1969, S. 551-552:

⁶⁸ Հին հայերենում «տարի» գաղափարի համար գործածված է բնիկ ամ և անհայտ ծագման տարի բառերը:

- ՊԲՀ Պատմա-բանասիրական հանդես, Երևան:
- ՄԲ Գ.Ջահուկյան, *Մոնոգրաֆիանիանի քարտիանի*, 2010, Երևան:
- КУКН Арутюнян Н., *Корпус урартских клинообразных надписей*, 2001, Ереван.
- УКН Меликишвили Г., *Урартские клинообразные надписи*, 1960, Москва.
- УКН II Меликишвили Г., *Урартские клинообразные надписи*, ВДИ, 1971 №3 ст. 229-255, ВДИ, 1971 №4 ст. 267-293.
- УПД Дьяконов И. *Урартские письма и документы*, 1963, Москва-Ленинград.
- Нchl König F. *Handbuch der chaldischen Inschriften*, I-II, 1955,1957, Graz.
- СТU I-III Salvini M. *Corpus Dei Testi Urartei*, I-III, 2008, Roma.
- СТU IV Salvini M. *Corpus Dei Testi Urartei*, IV, 2012, Roma.

Ayvazyan Sargis - Some lexical observations and analysis of the Urartian language.-

Many of the approximately 600 Urartian words that have come down to us either have no translation at all or the existing translations are tentative and ambiguous. This article attempts to translate some of these words or clarify existing meanings. The translations and clarifications are made by comparing the original Urartian texts and data from the old Armenian language. This method allows for more accurate translations of these Urartian words and their etymological analysis. Some of them are presented below:

- 1) muru=muri=aḫe /muro=muri=aḫə/ "soot, smoke, dust" (Old Arm. *mur*, -oy - the same),
- 2) uu /ow/ "and" (Old Arm. *ow* - the same,
- 3) ^{LU}aṣule /ac=oṣə/ "administrator, executor" (Old Arm. *acoṣ-el* "lead, head"),
- 4) zur(-) /ṣur(-)/ "water" (?) (Old Arm. *ṣowr*, -oy - the same),
- 5) kaq- /k^cak-/ "fall to the ground, crumble" (Old Arm. *k^cak-el* "destroy; disperse"),
- 6) qis- /kis-/ "divide, reduce" (Old Arm. *kis-el* - "id"),
- 7) ^{GU}sulu(-) /c^culu(-)/ "bull " (Old Arm. *c^cowlow*, -ow - the same),
- 8) are /arə/ "contiguous, next, adjacent; adjoining; continually" (Old Arm. *y-ar* - the same),
- 9) ur- /uṛ-/ "expand, raise the surface of water" (Old Arm. *uṛ-n-owl*, *uṛ-n-owl-ṣ-el* - the same)
- 10) pul- /foṭ-/ "ravine; flow" (Old Arm. *oṭ-oṭ* < *pol - the same), etc.

Keywords: Urartian, Armenian, Old Armenian, Armenology, etymology, word analysis, Indo-European languages.

Տարցիս Այվազյան - Некоторые лексические наблюдения и этимологии урартского языка.- Многие из примерно 600 дошедших до нас урартских слов либо

не имеют перевода, либо существующие переводы носят предположительный и неоднозначный характер. В данной статье предпринята попытка перевести некоторые из этих слов или уточнить их значения. Переводы и уточнения сделаны путем сопоставления оригинальных урартских текстов и данных древнеармянского языка. Этот метод позволяет получить более точные переводы этих урартских слов и провести их этимологический анализ. Некоторые из них представлены ниже:

- 1) *migu=muḡi=aḥe* /*muḡo=muḡi=aḥə*/ “сажа, дым, пыль” (древ. арм. *muḡ*, -*ou* - то же),
- 2) *uu* /*ow*/ “и” (древ. арм. *ow* - то же),
- 3) ^u*aṣule* /*ac=otə*/ “управляющий, исполнитель” (древ. арм. *acoṭ-el* “вести, возглавить”),
- 4) *zur(-)* /*ḡur(-)*/ “вода” (?) (древ. арм. *ḡowḡ*, -*ou* - то же),
- 5) *kaq-* /*kak-*/ “падать на землю, рассыпаться” (древ. арм. *kak-el* “рушить; рассеивать”),
- 6) *qis-* /*kis-*/ “делить, уменьшать” (древ. арм. *kis-el* - то же),
- 7) ^u*sulu(-)* /*culu(-)*/ “бык” (древ. арм. *cowlow*, -*ow* - то же),
- 8) *are* /*arə*/ “близкий”, “близко”, “непрерывный, безостановочный” (древ. арм. *u-ar* - то же),
- 9) *ur-* /*ur-*/ “расширить, поднять поверхность воды” (древ. арм. *ur-n-owl*, *ur-n-owl-č-el* - то же)
- 10) *ruṭ-* /*foṭ-*/ “намыв, поток” (древ. арм. *ot-ot* < **rol* - то же), и.т.д.

Ключевые слова: Урартский, армянский, древнеармянский, арменология, этимология, анализ слов, индоевропейские языки.

ԽՆՈՒՄԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արոսյան Մարիա

ՌԴ, արտասահմանյան գրականության
համառուսաստանյան պետական գրադարան
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայցորդ
Maria.arosyan@gmail.com
DOI: 10.54503/978-9939-970-07-3-51

Բանալի բառեր. Հեշտիա, Խնուս, բարբառ, առանձնահատկություն, վիճակագրական վերլուծություն:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային և մեր հազարամյա պատմությունը, ազգի ամենակարևոր արժեքներից մեկը դա լեզուն է, որի չերևացող, սակայն կապող թելերը նորոգում, բուժում, խթանում և զարգացնում են ազգը, երկիրը: Հայոց լեզուն պատմական և տարածքային հանգամանքների բերումով բազում փորձությունների միջով է անցել, որն էլ հանգեցրել է լեզվի տարբերակների խայտաբղետությանը: Իրարից առանձնացված լինելով կենցաղով, ազդեցություններով և բարքերով՝ մեր բարբառները դրսևորել են բազմաթիվ տարբերություններ, իսկ ընդհանրությունները ինքնին հասկանալի են որպես միևնույն լեզվի տարբերակ: «Բարբառը համաժողովրդական լեզվի այն տարատեսակն է, որ խոսվում է սահմանափակ տարածքում և ունի յուրահատուկ հնչյունական կազմ, բառապաշար, քերականություն: Բարբառների առաջացման հիմնական պատճառը տվյալ լեզվով խոսող հանրության տարբեր հատվածների տարածքային, վարչաքաղաքական և տնտեսական տարանջատվածությունն է, նպաստող հանգամանք է նաև տվյալ երկրի աշխարհագրական մասնատվածությունը, այսինքն՝ բարձր լեռներով, մեծ գետերով կտրտված լինելը: Հայ բարբառագիտությունը երկարատև զարգացման ուղի է անցել, որն անգամ տեսանելի է հին հայերենյան շրջանի ու միջնադարյան մեկնիչների քերականություններում: 8-րդ դարի պատմիչ Ստեփանոս Սյունեցին իր ժամանակի համար վկայել է մեկ կենտրոնական և յոթ եզրային բարբառ՝ Չորրորդ Հայքի, Տայքի Կորճայքի, Խուրթի, Սպերի, Սյունիքի և Արցախի: Պատմական Հայաստանի տարբեր հատվածների վարչական ու տնտեսական տարանջատվածությունը մեծացավ հատկապես 13-19-րդ դարերում: Այդ ժամանակ էլ սկսեցին խորանալ հայերենի տարածքային տարբերակումները՝ բարբառները և խոսվածքները: Բարբառներ գոյացան նաև որոշ սփյուռքահասպ

1 Հ.Զաքարյան, Յու Ավետիսյան, Ռճագիտության տեքստագիտություն, Հայոց լեզվի պատմություն, Ե., 2018, էջ 165:

գաղթավայրերում: Բայց հայերենի բարբառների բուն ուսումնասիրությունն սկսվել է 19- րդ դարի վերջերից: Առաջին հայ բարբառագետներն են՝ Ա. Այսնյանը, Ք. Պատկայնանը, Լ. Մարյանցը, Գ. Ախվերդյանը և այլք: Նրանց կատարած ուսումնասիրությունները հայ բարբառագիտության զարգացման գործում արժեքավոր են, և արտացոլում են հայերենի այս կամ այն բարբառի հնչյունական, քերականական կառուցվածքի նկարագիրը:

Սակայն բարբառագիտության ձևավորման գործում մեծագույն դերը պատկանում է Հրաչյա Աճառյանին: Նա տվեց բարբառագիտության ամբողջական ուղղապատկերը իր՝ «Հայ բարբառագիտություն- ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (Երևան 1911) գրքում: Աճառյանի և մյուս բարբառագետների ուսումնասիրությունների արդյունքում ձևավորվել է արդեն դասագրքային դարձած մոտեցում, ըստ որի, հայ բարբառները բաժանվում են 4 ճյուղի՝ ում, կը, էլ, ս: Ճյուղերը զանազանվում են ըստ անկատար ներկայի ձևավորման: Ճյուղերն իրենց անունները ստացել են ըստ վերջավորությունների: Չնայած նրան, որ բարբառագիտությունը զարգացող գիտություն է (դա երևում է՝ արդի ժամանակներում տեղի ունեցող բարբառագիտությանը նվիրված գիտաժողովներում, քննարկումներում, մրցույթներում. պատճառը, ըստ էության, հասկանալի է), այնուամենայնիվ բարբառները օրեցօր հայտնվում են վտանգի եզրին, և դրա պահպանումը դառնում է մշակութային անվտանգության խնդիր: Այսօր էլ մեծածավալ աշխատանքներ են կատարվում բարբառագիտության բնագավառում: Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Կատվայանի ջանքերով ամբողջացել է և ամբողջանում է “Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր” խորագրով ուսումնասիրությունների շարքը, որոնք ներկայացվում են ՀՀ բնակավայրերում այսօր գործառող Մշո, Բայազետի ու Դիադինի բարբառները, Գանձակի միջբարբառը, Մակուի, Արծափի խոսվածքները և այլ խոսվածքներ, միջբարբառներ ու բարբառներ: Այս ուսումնասիրությունները շատ կարևոր են, հատկապես արդի ժամանակներում, քանի որ ինչպես ցույց են տալիս որոշ հետազոտություններ, բարբառները ոչ միայն ժողովրդի խոսվածքի մաս են կազմում, այլ նաև ժողովրդի մշակույթի կրողն են: Բարբառային բառերի և նեղ բարբառային դարձվածքների մեջ կարող ենք գտնել շատ արժեքավոր տեղեկություններ բարբառակիրների կենցաղի, հետաքրքրությունների, մարդկային արժեքների, պատմական դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև աշխարհի հետազոտողների ու շաղկապողների կենտրոնում գտնվող ուրարտերենը, որի շատ բառերի ու արտահայտությունների հետքերը կարող են թաքնված լինել մեր հնագույն ու բազմաթիվ գաղտնիքներ պարունակող

² Նույն տեղում:

³ Գիտական բարբառագիտության 100 -ամյակի գիտաժողովի նյութեր, Ե., 2017, էջ 5-6:

բարբառներում: Բարբառների կարևորությունը հատկապես ի հայտ է գալիս օտարերկրում բնակվող մեր հայրենակիցների համար: Ի. Ն. Գորելովը և Կ. Ֆ. Սեդովը իրենց աշխատության մեջ անդրադարձել են «էթնոս»-ներին, որոնց միավորում է հիմնականում ազգային լեզուն: Լեզուն ամենակարևոր միավորող և տվյալ էթնոսը պահպանող գործոնն է: Նրանց վարքագիծի դրսևորումները, ժամանակի ընթացքում ձուլումը՝ «հանգումը», խոսվում է Լ. Ն. Գումիլևի աշխատության մեջ: Համաձայն Գումիլևի տեսության այն էթնոսները, որոնք ունեն ընդհանուր գծեր ուրիշ ավելի մեծ էոնեսների՝ «սուպերէթնոսների» հետ, ի վերջո, միանվորվում կամ ինտեգրվում են նրանց հետ: Գումիլևը «Սուպերէոնոս» է համարվում արևմտաեվրոպական քրիստոնյա աշխարհը, մուսուլմանական սուպերէթնոսը (որը միավորում է ամբողջ մուսուլմանակն աշխարհը), ինչպես նաև ռուսական «սուպերէթնոսը»:

Ելնելով Գումիլևի տեսությունից կարող ենք ասել, որ հայոց լեզվի կրողները դասվում են փոքր էթնոսների խմբին, ու կրում են այն փոփոխությունները, որոնց մասին ասվում է իր աշխատության մեջ:

Մշո բարբառի խնուսի խոսվածքի հավաքագրման աշխատանքների ժամանակ դեռ Ջավախքի երեք գյուղերում (Հեշտիա, Ուջմանա և Թորիա), նկատվեց մի հետաքրքիր օրինաչափություն. չնայած նրան, որ երկար տարիներ՝ գրեթե 200 տարի ապրելով իրար հետ կողք կողքի Ջավախք աշխարհում, միևնույն է ամեն գյուղ պահել էր իրենց խոսվածքին հատուկ տարրերը, անգամ եթե տվյալ գյուղ եկած նոր բնակիչը ժամանակին ունեցել է ուրիշ խոսվածք, ժամանակի ընթացքում սկսում է մաքուր տիրապետել տվյալ գյուղի խոսվածքին:

Այս նույն օրինաչափությունը պահպանվում է նաև օտար երկրում՝ կոնկրետ ՌԴ - ում գաղթածների մոտ: Տան մեծերի պահանջն է եղել. «Շեմքեն ներս զրրծեկ մըր լիզվով», այսինքն լինի օտար երկրում, լինի Հայաստանում, նույնիսկ Վրաստանի Ջավախք աշխարհում, կարևոր է ընտանիքում, հարազատների հետ խոսել «մըր լիզվով»: Հարկ է նշել, որ այստեղ շատ է կարևորվում կլանային (գերդաստանային) հարաբերությունները:

Բարբառը ազգապահպանության, հայոց լեզվի պահպանության, արժեքների ճիշտ ընկալման հիմնական կարևոր տարրերից մեկն է, որի ապացուցման նպատակով կատարվել է հարցում: Հարցման համար թիրախային խումբ են հանդիսացել ռուսաստանաբնակ հայերը: Հարցմանը մասնակցել են 117 մարդ, որոնց մի մասը համարվում են Խնուսի խոսվածի կրողներ, իսկ մյուս մասը հիմնականում գրական հայերենին տիրապետող անձինք են, ովքեր մշտապես բնակությունն են հաստատել Ռուսաստանի Դաշնությունում: Հարցմանը չեն

4 Горолев И.Н., К.Ф. Седов, Основы психолингвистики, Москва Лабиринт 1997, стр. 111-112.

5 Гумилев Л.Н. Этногенез и биосфера земли. Л. 1990.

մասնակցել ՌԴ-ում դասավանդող հայոց լեզվի և գրականության ուսուցիչները, հարցման արդյունքները չխեղաթյուրելու նպատակով: Հարցման մեջ առկա էին բաց հարցեր, որոնց նպատակն էր, պարզել առանձին երևույթների հանդեպ հարցմանը մասնակցողների վերաբերմունքն ու դրսևորումները:


Հաշվի առնելով Ռուսաստանում ապրող մեր հայրենակիցների առանձնահատկությունները՝ հարցաշարը կազմվեց ռուսերենով, որը թույլ տվեց մեզ բացահայտել մեր կողմից վաղուց նկատված ու չբարձրաձայնված կասկածները, որոնց մասին կիսուսնք այսօրվա հոդվածի շրջանակներում:

Հարցաշարը կազմել է google forms հարթակի միջոցով, որը հնարավորություն տվեց ՌԴ-ի տարբեր մասերում (Մոսկվա, Կրասնոդար, Կալուգա, Սուրգուտ, Կուբան, Շախտի, Տուլա և այլն) ապրող մեր հայրենակիցներին մասնակցել հարցմանը: Հարցման պատասխանները վերլուծվել են մի շարք մեթոդներով՝

1. Կատարվել է խմբավորում մի շարք կրիտերիաներով, որոնք ներկայացված են աղյուսակներով և գրաֆիկներով:
2. SPSS վիճակագրարան փաթեթի օգնությամբ կատարվել է հարցման տվյալների կոռելացիոն և ռեգրեսիոն վերլուծություն՝ բացահայտելու դրանց միջև փոխկապվածությունը:

Հարցման մասնակիցների մեծ մասը կազմել են կանայք՝ մոտ 84.6%, իսկ տղամարդիկ՝ 15,4%-ը(գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Հարցման մասնակիցների սեռական կազմը:




Գծապատկերից երևում է, որ մասնակցության ամենաբարձր ցուցանիշներն ունեն հետևյալ տարիքային խմբերը(գծապատկեր 2).

35-ից 45-ը՝ 34.2%

15-ից 25-ը՝ 23.9%

25-ից 35-ը՝ 15.4%


Գծապատկեր 2. Հարցման մասնակիցների տարիքը



Այսինքն կարող ենք ասել, որ 73,5%-ը կազմում են երիտասարդները, ովքեր արդեն կազմել են ընտանիք և ունեն երեխաներ:

Հաջորդ հարցի միջոցով մենք պարզում են, թե մեր մասնակիցներն արդեն քանի տարի են մշտապես բնակվում ՌԴ-ում: Գրաֆիկից երևում է՝ մեծամասնությունն են կազմում ՌԴ-ում 20 տարուց ավել ապրողները, որոնք կազմում են մոտ 65%-ը և 10-ից 20 տարի ապրողները՝ 26.5%-ը, այսինքն կարող են ասել հիմնականում մասնակցել են ՌԴ գաղթածների առաջին և երկրորդ սերունդը:


Գծապատկեր 3. ՌԴ-ում ապրելու ժամանակահատվածը:



Հաջորդ հարցի միջոցով պարզեցինք հարցման մասնակիցների որ մասն է տիրապետում նշված լեզվական խմբերին.

1. Ժամանակակից հայերեն
2. Մշո բարբառի Խնուսի խոսվածք
3. Ռուսերեն
4. Այլ տարբերակ


Գծապատկեր 4. Ի՞նչ լեզուների եք տիրապետում:



Գծապատկերից երևում է հարցման մասնակիցներից 92%-ը տիրապետում է ռուսերեն լեզվին, 59,3%-ը ` արևելահայերենին` 33.1%-ը մշո բարբառի Խնուսի խոսվածքին:Պարզվեց նաև, որ հարցման մասնակիցների մեջ մեծամասնություն

են կազմում բիլիլինգվալ(երկլեզու) մասնակիցները, որոնք տիրապետում են երկու լեզուներին և հավասարապես օգտագործում են :

Գծապատկեր 5. Հայրենիքում լինելու հաճախականությունը:



Հարցաշարի հաջորդ հարցի նպատակն էր պարզել, թե ինչ հաճախականությամբ են մեր մասնակիցներն այցելում հայրենիք, տրված էին ինչպես հստակ տարբերակներ պատասխանների համար, այնպես էլ ազատ պատասխանի հնարավորություն:

Գծապատկերից պարզ երևում է՝ մեծ կշիռ են կազմում 5 տարին մեկ անգամ հայրենիք այցելողները, որոնք կազմում են 30.8%-ը, տարին մեկ կամ երկու անգամ այցելողները՝ 24.8%-ը, երկու տարին մեկ կամ երկու անգամ այցելողները՝ 17.1%-ը, անսպասելի էր, բայց ունեցանք նաև պատասխաններ, ինչպիսիք են՝ «ծնվել եմ ՌԴ-ում», «ընդհանրապես չեմ եղել», «ՌԴ-ն է իմ հայրենիքը», որոնք կազմեցին ընդհանուր հարցվածների մոտ 12%-ը, որը պատճառ հանդիսացավ մեկ ուրիշ, ավելի նեղ խմբավորման համար, որը ներկայացված է աղյուսակների տեսքով (Աղյուսակ 1,2,3), այն է. մենք խմբերը բաժանեցինք հետևյալ կերպ.

1. Ընտանիքում հաղորդակցվում են միայն ռուսերենով
2. Ընտանիքում հաղորդակցվում են հիմնականում մշո բարբառի խնուսի խոսվածքով
3. Ընտանիքում հաղորդակցվում են հիմնականում ժամանակակից հայերենով

Աղյուսակ 1

		Ընտանիքում միայն հաղորդակցվում են ռուսերենով (14%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվո ւմ են մշո բարբառի խնուսի խոսվածքով(3 9%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են ժամանակակից հայերենով(50%)
Մեռը	իզական	94%	80,4%	88%
	արական	6%	19,6%	12%
Տարիքը	Մինչև 15 տ	0%	0%	1,9%
	15 -25տ	19%	23,9%	21,2%
	25 -35տ	19%	13,0%	17,3%
	35 -45տ	13%	34,8%	36,5%
	45 -55տ	19%	15,2%	13,5%
	55 -65տ	13%	6,5%	5,8%
	65 -75տ	19%	6,5%	1,9%
	75 և ավել	0%	0%	1,9%
Արդեն քանի տարի մշտապես բնակվում ու՛մ	Մինչև 5 տ	0%	0%	0%
	5-10տ	0%	6,5%	5,8%
	10-20	12,5%	15,2%	34,6%
	20 և ավել	87,5%	78,3%	59,6%
Ինչ հաճախականությ ամբ էք այցելում հայրենիք:	Չեմ եղել	43,8%	10,9%	5,8%
	Մեկ անգամ 10- 20	6,3%	10,9%	9,6%
	5 տ. Մեկ անգամ	38%	41,3%	25,0%
	2 տարին 1կամ 2	12,5%	15,2%	25,0%
	տարին 1կամ 2	0%	21,7%	34,6%

Ըստ աղյուսկում 1-ում առկա տվյալների՝ ընտանիքում միայն ռուսերեն լեզվով հաղորդակցվողները, որոնք կազմում են ընդհանուր հարցման մասնակցողների 14%-ը: Միայն ռուսերեն հաղորդակցվողների մոտ 43,8%-ը ընդհանրապես չեն եղել հայրենիքում: Այս ցուցանիշը փոքր է բարբառով(10,9%) և ժամանակակից հայերեն (5,8%) հաղորդակցվողների մոտ: Ըստ այս խմբերի կարող ենք ասել, որ ընտանիքում միայն ռուսերեն լեզվով հաղորդակցվողներից 87,5%-ը բնակվում են ՌԴ-ում 20 տարուց ավելի, այս ցուցանիշին մոտիկ է նաև Խնուսի խոսվածքի կրողների ցուցանիշը՝ 73,8%, իսկ ժամանակակից հայերենի կրողները կազմում են 59,6%: Հարկ է նշել ևս մի փաստ, որ ընտանիքում միայն ռուսերեն հաղորդակցվողների 93,8%-ը փաստացի տիրապետում են ժամանակակից հայերենին, իսկ 18,8%-ը՝ մշո բարբառի խնուսի խոսվածքի կրողներ են:Այսինքն, կարող ենք ասել, որ բարբառակիները ավելի քիչ են օգտագործում ռուսերենը, քան ժամանակակից հայերեն իմացողները:

Աղյուսակ 2

	Ընտանիքում միայն հաղորդակցվում են ռուսերենով (14%)	Ընտանիքում հիմնականում միայն հաղորդակցվում են մշո բարբառի խնուսի խոսվածքով (39%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են ժամանակակից հայերենով (50%)	
Տիրապետում ենք հետևյալ լեզուներին:	Ժամանակակից հայերեն	93,3%	82,6%	78,0%
	Մշո բարբառի խնուսի խոսվածք	18,8%	47,8%	89,8 %
	Ռուսերեն	18,8%	76,1%	13,6%
	Այլ տարբերակ	18,8%	6,5%	10,2%

Ընտանիքում հիմնականում մշո բարբառով հաղորդակցվողների 82,6%-ը տիրապետում է ժամանակակից հայոց լեզվին, սակայն հաղորդակցվում են ընտանիքում մշո բարբառի խնուսի խոսվածքով, չնայած նրան, որ ընդամենը 47%-ն

Է համարվում մշո բարբառի խնուսի խոսվածքի կրող: Հաջորդ ցուցանիշը ապացուցում է, որ ժամանակակից հայերենը ևս մեծ դեր է խաղում բարբառների «ճնշման» գործում, չնայած նրան, որ ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենով հաղորդակցվողների 89.8%-ը տիրապետում է մշո բարբառի խնուսի խոսվածքին, միննույն է՝ ընտանիքում խոսում են ժամանակակից հայերենով (Աղյուսակ 2):

Աղյուսակ 3

		Ընտանիքում միայն հաղորդակցվում են ռուսերենով (14%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են մշո բարբառի խնուսի խոսվածքով (39%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են ժամանակակից հայերենով (50%)
Ի՞նչ լեզվով եք դուք ասում փաղաքշական արտահայտություններ:	Միայն ժամանակակից հայերենով	6,3%	10,9%	17,3%
	Միայն մշո բարբառի խնուսի խոսվածքի	18,8%	17,4%	3,8%
	Միայն ռուսերեն	43,8%	8,7%	9,6%
	Հիմնականում մշո բարբառով	25,0%	67,4%	9,6%
	Հիմնականում ժամանակակից հայերենով	31,3%	17,4%	71,2%
	Այլ տարբերակ	0%	0,0%	0,0%
Ի՞նչ լեզվով եք նախընտրում վիճել:	Միայն ժամանակակից հայերենով	0%	2,2%	9,6%
	Միայն մշո բարբառի խնուսի խոսվածքի	0%	8,7%	0,0%

	Միայն ռուսերեն	68,8%	26,1%	25,0%
	Հիմնականում մշոբարբառով	6,3%	47,8%	9,6%
	Հիմնականում ժամանակակից հայերենով	12,5%	17,4%	44,2%
	Այլ տարբերակ	12,5%	6,5%	9,6%

Հետյևալ հարցի պատասխանները մեր կարծիքով ունեն ավելի խորը ուսումնասիրման կարիք, այն հարցին. թե ինչ լեզվով եք արտաբերում փաղաքշական արտահայտությունները, մեր երեք խմբերը պատասխանեցին հետևյալ կերպ. ընտանիքում միայն ռուսերենով արտահայտվողները կազմում է մեծամասնություն՝ 43,8%, հիմնականում Խնուսի խոսվածքով արտահայտվողները՝ 67,4%-ը, իսկ ժամանակակից հայերենով արտահայտվողները՝ 71,2%-ը: Այլ պատկեր է ստացվում ոչ հարգալից արտահայտությունների օգտագործման դեպքում. այստեղ աղյուսակի տվյալերից երևում է, որ էականորեն բարձրանում է ռուսաց լեզվով արտահայտվողների քանակը, հետևաբար նվազում է հայերեն լեզվով արտահայտվողների քանակը:

Վ. Ի. Ժելվիսի աշխատության մեջ նշում է, որ ներկա ժամանակաշրջանում ռուսական մշակույթի մեջ ոչ հարգալից արտահայտությունների լայնամաշտաբ օգտագործումը «արցցեսային ինվեկտիվ» է համարում, և ավելացնում, որ ինվեկտիվ արտահայտությունները այնքան էլ ընդունված չեն կովկասյան ազգերի մոտ⁶, այդ թվում նաև հայերի մոտ: Եվ հավանաբար արտահայտվելով ինվեկտիվ (ոչ հարգալից) արտահայտությունները ոչ մայրենի լեզվով, հոգեբառերն ավելի ընդունելի է դառնում: Դա է վկայում հարցման մասնակիցների մի մասի պատասխանները, որտեղ նրանք պատասխանել էին, որ ընտանիքում ընդունված չեն ինվեկտիվ արտահայտությունները:

Այստեղ բացահայտվեց ուղիղ, թույլ, սակայն նշանակալի կապ. այսպես, ռուսերենի իմացության մակարդակի և ժամանակակից հայերենով փաղաքշական արտահայտությունների օգտագործման մեջ առկա է թույլ կապ, 95%-ով կարող ենք պնդել, որ ռուսերենի իմացության մակարդակի փոփոխությունը 9,5%-ով պայմանավորված է ժամանակակից հայերենով փաղաքշական արտահայտությունների օգտագործման հետ: Այսինքն ընտանիքում միայն ռուսերենով հաղորդակցվողների մոտ, շատ հավանական է ենթազիտակցորեն ընտրվում է գենետիկորեն հա-

⁶ Социальная психология , хрестоматия, составитель профессор К. Ф. Седов, Москва Лабиринт 2007 г. ,В.И. Жельвис «Инвективная агрессия в ряду эмотивных средств» стр. 278

րագատ լեզվով արտահայտվելու դրական վերաբերմունքը, որը ավելի ճշգրիտ ուսումնասիրության կարիք ունի:

Պիրսոնի կոռելացիայի գործակցի միջոցով բացահայտվեց ևս մեկ կարևոր կապ մշո բարբառի խնուսի խոսվածքի օգտագործման ու ժամանակակից հայերենի իմացության մեջ, կապը նշանակալի է ուղիղ և սերտ, և 95%-ով կարող ենք պնդել, որ բոլոր մյուս հավասար պայմաններում մշո բարբառի խնուսի խոսվածքի օգտագործման մակարդակի փոփոխությունը (վարիացիան), 53,3%-ով պայմանավորված է ժամանակակից հայերենի իմացության մակարդակի վարիացիայով (փոփոխությամբ): Դրան հակառակ ըստ վերլուծության տվյալների նկատում են միջին, հակադարձ կապ ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենի օգտագործման մակարդակի և ընտանիքում ժամանակակից հայերենի իմացության մակարդակի միջև, և 95%-ով կարող ենք պնդել, որ ընտանիքում ժամանակակից հայերենի օգտագործման մակարդակի փոփոխությունը (վարիացիան) 18% -ով պայմանավորված է ժամանակակից հայերենի իմացության մակարդակի վարիացիայով (փոփոխությամբ):

Աղյուսակ 4

		Ընտանիքում միայն հաղորդակցվում են ռուսերենով (14%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են մշո բարբառի խնուսի խոսվածքով (39%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են ժամանակակից հայերենով (50%)
Ընտանիքում ժամանակ անցկացնելու հաճախականիու թյունը:	Միայն ժամանակակից հայերենով	25,0%	4,3%	0%
	Ընդհանրապես ժամանակ չեն անցկացնում	0%	0%	0%

	Ամիսը անգամ	1	0%	0%	0%
	Ամիսը անգամ	2	0%	6,5%	9,6%
	Ամիսը կամ անգամ	2 3	0%	10,9%	5,8%
	Շաբաթը անգամ	1	62,5%	78,3%	84,6%
Հարազատների հետ հանդիպման հաճախականությ ունը:	Ընդհանրա պես ժամանակ չեն անցկացնու մ		0%	0%	1,9%
	Ամիսը անգամ	1	37,5%	17,4%	23,1%
	Ամիսը անգամ	2	0,0%	8,7%	5,8%
	Ամիսը կամ անգամ	2 3	6,3%	2,2%	1,9%
	Շաբաթը անգամ	1	25,0%	19,6%	32,7%
	Շաբաթը կամ անգամ	2 3	6,3%	28,3%	23,1%
	Ամեն օր		18,8%	23,9%	11,5%
Հայախոս ընկերների հետ հանդիպման հաճախականությ ունը:	Ընդհանրա պես ժամանակ չեն անցկացնու մ		0%	2,2%	9,6%
	Ամիսը անգամ	1	25,0%	13,0%	11,5%
	Ամիսը անգամ	2	0,0%	2,2%	3,8%

	անգամ			
	Ամիսը կամ անգամ	2 3		
	անգամ	6,3%	2,2%	0%
	Շաբաթը անգամ	1 25,0%		
	անգամ	25,0%	15,2%	17,3%
	Շաբաթը կամ անգամ	2 3		
	անգամ	6,3%	26,1%	25,0%
	Ամեն օր	25,0%	39,1%	32,7%

Ընտանիքի, հարազտների և հայախոս ընկերների հետ հանդիպան հաճախականությունները այս երեք խմբերի մոտ ունեն էական տարբերություններ, որը երևում է աղյուսակ 4-ում: Մշո բարբառի խնուսի խոսվածքի կրողների հանդիպումների հաճախականությունն ավելի բարձր է: Ըստ հանդիպումների հաճախականության առաջին տեղում են ընտանիքում հիմնականում մշո բարբառի խնուսի խոսվածքով հաղորդակցվողները, երկրորդ տեղում՝ ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենով հաղորդակցվողները և երրորդ տեղում՝ միայն ռուսերենով հաղորդակցվողները (Աղյուսակ 4):

Հայոց լեզվի իմացության մակարդակը պարզելու համար հարցի պատասխանի համար տրված են եղել տարբերակները(Աղյուսակ 5)՝

- Ընդհանրապես չեմ տիրապետում
- Հասկանում եմ, սակայն չեմ խոսում և գրել կարդալ չգիտեմ
- Խոսում եմ, սակայն գրել և կարդալ չգիտեմ
- Խոսում , գրում և կարդում եմ
- Կարդում եմ գրքեր հայոց լեզվով

Ըստ հարցման արդյունքների ընտանիքում հիմնականում խնուսի խոսվածքով հաղորդակցվողների մեջ չկան բացարձակ հայերեն չիմացողներ, ինչը այդպես չէ ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենով հաղորդակցվողների մոտ՝ ընդհանրապես հայերեն չիմացողները կազմում են 9.6%-ը և ընտանիքում միայն ռուսաց լեզվով հաղորդակցվողների մոտ այդ նույն ցուցանիշը կազմում է 25%: Բավականին մեծ ցուցանիշ է կազմում գրել և կարդալ չիմացողների կշիռը, ընտանիքում հիմնականում խնուսի բարբառով հաղորդակցվողների մոտ այն կազմում է 45,7%, ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենով հաղորդակցվողների մոտ 53,8%-ը, որը լուրջ մտածելու տեղիք է տալիս:

Միայն խնուսի խոսվածքով հաղորդակցվողների մեջ կար փոքրիկ, բայց կարևոր ցուցանիշ, այն է հայոց լեզվով գրքեր կարդալը, որը կազմում է 4,3% և ևս

մի ցուցանիշ, որն էականորեն բարձր էր, այն է խոսելու, գրելու և կարդալու ունակությունն է, որը կազմում է 39,1%, ինչը 5 անգամ փոքր էր ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենով հաղորդակցողների(7,7%) մոտ:

Աղյուսակ 5

		Ընտանիքում միայն հաղորդակցվում են ռուսերենով (14%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են մշո բարբառի խնուսի խոսվածքով (39%)	Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են ժամանակակից հայերենով (50%)
Հայերենի/Մշո բարբառի խնուսի խոսվածքի իմացության մակարդակը	Ընդհանրապես չեմ տիրապետում	25,0%	0%	9,6%
	Հասկանում եմ, սակայն չեմ խոսում և գրել կարդալ չգիտեմ	43,8%	10,9%	26,9%
	Խոսում եմ, սակայն գրել և կարդալ չգիտեմ	18,8%	45,7%	53,8%
	Խոսում , գրում և կարդում եմ	12,5%	39,1%	7,7%
	Կարդում եմ գրքեր հայոց լեզվով	0,0%	4,3%	0%
	Ճպրոգե	0,0%	0%	0%

Փորձեցինք գտնել այս երևույթների վրա ազդող գործոնները: Պարզվեց, որ կա միջինին մոտ համկադարձ կապ ընտանիքում ժամանակ անցկացնելու հաճախակիության և միայն ռուսաց լեզվով հաղորդակցվելու մեջ, և 95%-ով կարող ենք պնդել, որ ընտանիքում ժամանակ անցկացնելու հաճախակիության փոփոխությունը 12,25%-ով պայմանավորված է միայն ռուսաց լեզվով հաղորդակցվելու աստիճանի փոփոխությամբ:

Ուսումնասիրելով մեր՝ հարցման արդյունքում ստացված տվյալների կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև բացահայտելով հիմնական կոռելացիոն կապերը կարող են կազմել նաև ռեգրեսիոն մոդել, որը ավելի ճշգրիտ կբնութագրի մեր փոփոխականների փոխկապվածությունը: Այսինքն ունենք արդյունքային (կախյալ, էնդոգեն) փոփոխականը՝ Y-ը, որը ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերեն հաղորդակցվելու փոփոխականն է:

Քանի որ մեր վերլուծության տվյալները դիսկրետ բնույթ են կրում և ընդունում են կամ երկու (օրինակ՝ 0 և 1), վերլուծությունը կատարվել է լոգիստիկական ռեգրեսիայի միջոցով:

Լոգիստիկական ռեգրեսիան արտահայտում է վիճակագրական կապը՝ հետևյալ կախվածության տեսքով.

$$P\{Y = 1/X = (X_1 X_2 \dots X_k)\} = f(X) \dots$$

Լոգիստիկական ռեգրեսիան նկարագրում է կապը անկախ փոփոխականների և այսպես կոչված՝ “արձագանքի” միջև: Այսինքն՝ ցույց է տրվում անկախ փոփոխականների կոնկրետ ազդեցության դեպքում արդյունքային փոփոխականի 1 արժեքով նշանակված էլքի հավանականությունը.

Աղյուսակ 6

Сводка для модели

Шаг	-2 Log Правдоподобие	R квадрат Кокса и Снелла	R квадрат Нэйджелкер ка
1	93,948 ^a	,442	,589

а. Оценивание закончено на итерации номер 5, потому что оценки параметра изменились менее чем на ,001.

Աղյուսակ 6-ում ներառում է կառուցված մոդելի որակի ընդհանուր գնահատականը արտացոլող ցուցանիշները: -2 Log likelihood ճշմարտանմանության

Ֆունկցիայի լոգարիթմի կրկնապատիկն է, մինուս նշանով: Այն հանդես է գալիս որպես ճշմարտանմանության չափ: Ըստ որում, որքան փոքր է այս ցուցանիշի արժեքը, այնքան մոդելը ավելի լավ է ձևակերպված: Cox & Snell R Square և Nagelkerke R Square դետերմինացիայի կեղծ գործակիցներ են, որոնք ստացվել են ճշմարտանմանության ֆունկցիայի արժեքը միայն հաստատունի և բոլոր պարամետրերի վրա հարաբերելու միջոցով:

Աղյուսակ 7

Таблица классификации^а

Наблюденное	Предсказанное			Процент корректных
	об. и на рус.и на (литературный/ ереванский)		0	
	0	да		
Шаг 1 Ընտանիքում հիմնականում հաղորդակցվում են ժամանակակաից հայերենով:	0 да	49	9	84,5
Общий процент		11	48	81,4
				82,9

а. Разделяющее значение = ,500

Աղյուսակ 7-ը ցույց է տալիս մոդելի միջոցով կանխատեսման ճշգրտությունը: Մեր օրինակում այն կազմում է 82,9%:

Աղյուսակ 8

Переменные в уравнении

		Стд. В Ошибка	В альд	ст .св.	3 нч.	Е хр(В)
I	a ₃	1, 857	,578	1	1 01	,0 405
ag 1 ^a	a ₂	- 3,770	,926	1	1 00	,0 23
	a ₁	- 2,636	,562	2	1 00	,0 72
	Кo нстанта	3, 565	1,003	1	1 00	,0 5,356

а. Переменная(ые) включенная на шаге 1: q6_4, q7_1, q7_5.

Մոդելի բոլոր անկախ փոփոխականների պարամետրերի գնահատականները նշանակալի են:

X₁ - Փաղաքական արտահայտությունների համար հիմնականում օգտագործում է ժամանակակից հայոց լեզուն

X₂ - Փաղաքական արտահայտությունների համար միայն օգտագործում է ժամանակակից հայոց լեզուն

X₃ - հաղորդակցվում է հիմնականում մշո բարբառի խնուսի խոսվածքով

Լոգիստիկական ռեգրեսիայի պարամետրերի գնահատման արդյունքները հաշվի առնելով, կունենանք ռեգրեսիայի հետևյալ հավասարումը՝

$$Y = 3,565 - 2,636X_1 - 3,770X_2 + 1,857X_3$$

$$\ln(P/1-P) = Y$$

$$X_1 = X_2 = X_3 = 0 \text{ դեպքում, կունենանք՝ } P = 0.972:$$

Այսինքն՝ այլ հավասար պայմաններում, եթե փաղաքական արտահայտությունների համար հիմնականում չի օգտագործվում ժամանակակից հայոց լեզուն, փաղաքական արտահայտությունների համար չի օգտագործվում միայն ժամանակակից հայոց լեզուն, բայց հաղորդակցվում են հիմնականում մշո բարբառի խնուսի խոսվածքով, ապա ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենով հաղորդակցվելու հավանականությունը էականորեն բարձր է, կազմում է 97.2%, հակառակ դեպքում՝ X₁ = X₂ = X₃ = 1 դեպքում, կունենանք՝ P = 0.272, այսինքն ընտանիքում հիմնականում ժամանակակից հայերենով հաղորդակցվելու հավանականությունը կազմում է 27,2%:

Հարցման տվյալների կառուցվածքային և կոռելացիոն՝ կապերի տեսակների և սերտության աստիճանների վերլուծությունը, մեզ ցույց տվեց, որ հայոց լեզվի և հայ ընտանիքի արժեքների պահպանության և զարգացման համար շատ կարոր է բարբառի պահպանությունը, զարգացումը և բարբառով խոսելու պրոպագանդումը, քանի որ ինչպես վերևում՝ վերլուծության ժամանակ ասվեց, ժամանակակից հայերենի իմացության և բարբառի օգտագործման միջև առկա էր սերտ ուղիղ կապ, իսկ օտար երկրում բնակվող մեր հայրենակիցների համար, բարբառը կարող է հանդիսանալ ձուլման լուրջ խոչնդոտ, ինչպես նաև բարբառակիրների միայն կամ հիմնականում իրենց բարբառով հաղորդակցվելու ձգտման ավելի խորը ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ ժամանակակից հայոց լեզուն էլ ավելի ամուր և մրցունակ դարձնել, օտար երկրում ապրող ընտանիքներում առաջնային հաղորդակցման լեզու համարվելու համար:

Аросян Мария - Проявления Хнусской речи в Российской Федерации.- Структурный и статистический анализ данных опроса, видов связей и степени близости показал нам, что сохранение, развитие и распространение диалекта очень важно для сохранения и развития армянского языка и армянских ценностей. Как говорилось выше, анализ установил прочную прямую связь между знанием современного армянского языка и использованием диалекта. Для наших соотечественников, проживающих в чужой стране, диалект может стать серьезным барьером во избежание риска ассимиляции. А также более глубокое изучение стремления носителей диалекта общаться только или преимущественно на своем диалекте может стать основой для укрепления современного армянского языка, чтобы язык стал более конкурентоспособным и считался основным языком общения.

Arosyan Ключевые слова: Эштия, Хнус, диалект, особенность, статистический анализ.

Maria - Manifestations of Khanus Speech in the Russian Federation.- The structural and statistical analysis of the survey data, the types of connections and the degrees of closeness showed us that the preservation, development and dissemination of the dialect is very important for the preservation and development of the Armenian language and Armenian values. As mentioned above, during the analysis, there was a close direct connection between the knowledge of modern Armenian and the use of the dialect. For our compatriots living in a foreign country dialect can be a serious barrier to avoid the

risk of assimilation.as well as the deeper study of dialect speakers' desire to communicate only or mainly in their own dialect can be the basis for making the modern Armenian language even stronger and more competitive, so that it is considered the main language of communication for families in a foreign country.

Key words: Heshtiya, Khnus, dialect, unique, Mush, statistical analysis, connection.

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ. ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ
ԶՈՒԳԸՆԹԱՑՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆԻ ՀԵՏ

Ափոշեան Աւետիս

Մագիստրոս, ՀՀ կառավարության հանրային
կապերու եւ տեղեկատուութեան կեդրոն,
արեւմտահայերէնի թարգմանիչ
avetis.aposhyan@ysu.am
DOI: 10.54503/978-9939-970-07-3-71

Բանալի բառեր. Զուգադրական հայերէն, արեւմտահայերէն, երկճիւղ աշխարհաբար, մամուլ, աշխարհագրական անուններ, տեղանուններ:

Ա. Նախաբան

Աշխարհաբար հայոց լեզուի երկու ճիւղերը՝ **արեւելահայերէնն** ու **արեւմտահայերէնը** հանդէս կու գան ամէն մէկն իրեն յատուկ լեզուական կանոններով, որոնք մե՛րթ իրարմէ շատ կը տարբերին, մե՛րթ՝ կը նոյնանան: Լեզուաճիւղերէն իւրաքանչիւրի պատմական զարգացման ընթացքին վրայ ներգործած են հետեւեալ իրողութիւնները.

ա) դասական հայերէնը կամ գրաբարը իբրեւ հիմնաբար,

բ) անմիջական շրջակայ միջավայրի լեզուի ու լեզուամտածողութեան ազդեցութիւնը,

գ) միջազգային լեզուներու հետ յարաբերութիւնները,

դ) լեզուական ժամանակակից պահանջները:

Հակառակ անոր, որ ե՛ւ արեւելահայերէնի, ե՛ւ արեւմտահայերէնի մայր աղբիւրը գրաբարն է, սակայն ատոնք այսօր մեծ թիւով յատուկ անուններ, անանուններ թէ տեղանուններ, տարբեր տառադարձութեամբ ու հնչիւնադարձութեամբ կը գրեն:

Յատուկ անունները բաժնուած են երկու հիմնական խումբերու.

- **աշխարհագրական անուններ,**
- **անձանց անուններ:**

Սոյն յօդուածին մէջ քննութեան կ'ենթարկենք միայն առաջին խումբը՝ աշխարհագրական անուններու գրելաձեւը արեւմտահայերէնի մէջ, թէ ինչպիսի՛ն է այսօր, ինչպիսի՛ն էր անցեալին, որքանո՛վ կը տարբերի արեւելահայերէնէն, ի՛նչ են այդ տարբերութեանց, եւ հետեւաբար զուգաձեւութեանց ու բազմաձեւութեանց հիմնարար պատճառները, ի՛նչ դեր կրնայ խաղալ գրաբարը՝ մերձեցնելու եւ միօրինականացնելու զանոնք: Պիտի փորձենք պատասխանել նշեալ հարցադրումներուն:

Բ. Երկրագունդի աշխարհագրական մասերուն անունները

Եւ այսպէս՝ սկսինք ընդհանուր Երկիր մոլորակի աշխարագրութենէն. Յամարը՝ **արեւելահայերէնի** մէջ կը կոչուի **մայրցամաք** իսկ **արեւմտահայերէնի** մէջ՝ **ցամաքամաս**: Գնել արքեպիսկոպոս Ճերեճեանի «Հայոց լեզուի նոր բառարան»-ին համաձայն՝ **ՅԱՄԱՔԱՄԱՍ (գոյական)**. երկրագունդի հողային մասը կազմող հինգ բաժիններէն իւրաքանչիւրը: Ունինք հինգ ցամաքամասեր. **Եւրոպա, Ասիա, Աֆրիկէ, Ամերիկա, Ովկիանիա**: Յամաքամասերուն անուններն, իրենց հերթին, որոշակի ուղղագրական եւ հնչյունական տարբերութիւններ կը կրեն: Իսկ **մայրցամաք** արեւմտահայերէնի լեզուամտածողութեամբ կը հասկցուի անգլերէնի «Mainland»-ը, որ է երկրի մը բուն ցամաքային հատուածը՝ առանց շրջակայ կղզիներու ներառութեան³, օրինակ երբ կ'ըսենք **մայրցամաք Յունաստան**, Յունաստանին պատկանող կղզիները դուրս կը մնան շրջարկէն:

Եւ այսպէս՝ ցամաքամասերուն անունները արեւմտահայերէնը գրաբարէն ժառանգած է եղածին պէս. **Եւրոպա** «վիւն»-ով, Իսկ արեւելահայերէնի մէջ **Եվրոպա** «վել»-ով: Ասիկա արեւելահայերէնի որդեգրած ուղղագրական կանոնարկումներուն անպատեհութիւններէն մէկն է, որ խորթ ու անբացատրելի կը թուի դասական ուղղագրութիւն կիրառողին համար առ այն, որ նախ «վիւն» տառը չկայ արդի արեւելահայերէնի այբուբենին մէջ, սակայն «ել» եւ «ու» համադասական մենադիր շաղկապներուն մէջ «վիւն»-ը դարձեալ ի յայտ կու գայ, «ել»-ի պարագային ընդունուած է՝ ե՛ւ **ել** «եչ-վիւն» տարբերակով, ե՛ւ գրաբարեան ձեռագիրներու կցագիր **և** տարբերակով: Իսկ անպատեհութիւնն այն է այսեղ, որ **«ել/և»**-ը գլխագրելու ատեն կը դառնայ «եչ-վել», այսինքն՝ փաստացի փոքրատառ «վիւն»-ը կը փոխարինուի մեծատառ «վել»-ով՝ **«ԵՎ»**: Ասիկա նաեւ դուռ կը բանայ մէկ այլ սխալագրութեան. այն է, համակարգիչով գրելու ատեն, անուշադրութեան պարագային, յաճախ կը տեսնենք **«ԵՆԱՆ», «ՄԵԱՆ»**՝ կցագիր «և»-ը մեքենական համակարգը չհասկնալուն համար՝ չի կրնար գլխագրել, կամ եթէ հեղինակը «եչ-վիւն» տարբերակը գործածած է՝ **«ԵՆԵՒԱՆ», «ՄԵԻԱՆ»** ձեւերով կը գլխագրէ, ուստի եւ դասական ուղղագրութեան բնական ու բնականոն յայտածում արդի արեւելահայերէնին մէջ, ինչ որ ակնահաճոյ է արեւմտահայերէնի լեզուակիրներուն համար: Ասիկա մեր բնութագրամբ հայերէնի **արդի ուղղագրութեան ճգնաժամ** է, երբ թուային գործիքները կը գիտակցին «վիւն» փոքրագիր-«վիւն» գլխագիր իրողութիւնը, իսկ բարեփոխուած ուղղագրութեան կանոնակարգումը կը մերժէ զայն: Սոյն կանոնակարգման մանրուք մը եւս կայ. այն է, որ **«ել/և»**-ը օտար բառեր կամ բառակապակցութիւններ գրելու ատեն «եչ-վիւն» տարբերակով պէտք է գրել, օրինակ՝ **«Եվրո», «Փնդելլո»**

¹ **Սաքապետոյեան Ռուբէն**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., 2011, էջ 352:

² **Ճերեճեան Գնէլ արքեպիսկոպոս, Տօնիկեան Փարամազ եւ Տէր Խաչատուրեան Արտաշէս**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէրոյթ, 1992, էջ 997:

³ Cambridge dictionary: <https://dictionary.cambridge.org/us/dictionary/english/mainland>.

պական» եւ այլն: Ինչ կը վերաբերի *«ու»* ին, ապա այս պարագային «եւ»-ի զարտուղութիւնները չեն նկատուիր, «վին»-ը «վեւ»-ով չի փոխարինուիր, քանի որ «ու» համադասական մենադիր շաղկապը կը վերածուի «ո՛վ» հարցական դերանուն: Ուստի «ու»-ի պարագային, արդի արեւելահայերէնի սխալագրութիւնները կը սահմանափակուին հետեւեալ պատկերով. *«ՈՒՄԱՄՏՈՒ»*, երբ ողջ բառը գլխագրուած է, սակայն «վին»-ը մնացած է փոքրագիր:

Վերադառնալով մեր նախնական նիւթին, անդրադառնանք միւս ցամաքամասերու անուններուն. *Ովկիանիա-Օվկիանիա*, որ կը սերի *ովկիանոսէն*, բաղկացած է Աւստրալիայէին, Նոր Զելանտայէն, եւ խումբ մը յարակից կղզիներէ: Այս ցամաքամասի անունն գրելաձեւին մասին քննարկելու ատեն չենք կրնար անմասն մնալ «-ով» բաղադրիչով գրուող այլ անուններէն, որոնք նոյնպէս տարբերութիւն կը յառաջացնեն *արեւմտահայերէն-արեւելահայերէն* գոյգին մէջ: Ատոնք են. *Ովասիս-Օազիս*, *ովկիանոս-ովկինասոս* (նաեւ՝ Ովկեան. հնացած արեւմտահայերէն տարբերակ), *Ովսաննա-Օվսաննա*: Ցամաքամասերէն երրորդը, որ քննարկման առարկայ է *Ափրիկէ-Աֆրիկան*⁴: Այստեղ դարձեալ արեւմտահայերէնը պահպանած է գրաբարեան ձեւը, մինչդեռ արեւելահայերէնը կարքիւր զգացած է նոր տարբերակ որդեգրելու, հետեւաբար՝ աշխարհագրական անունէն կը սերի նաեւ ածականը՝ *ափրիկեան-աֆրիկյան*⁵: Յատկանշական է այստեղ նշել, որ Լեւոն Թորոսեանը իր «Ընդարձակ բառարան գերմաներէնէ հայերէն» աշխատութեան մէջ տուած է արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը զուգահեռաբար՝ գերմաներէնին դիմաց, այսպիսով յիշատակ արդարացնելով իր վերնագրին մէջ նշուած «հայերէն»-ը, այսինքն՝ ամբողջական հայերէնը իր երկու ճիւղերով:

Անցնինք Երկիր մոլորակի ովկիանոսներու անուններուն: Այսպէս՝ *արեւելահայերէն Խաղաղ օվկիանոս*, *արեւմտահայերէն՝ Խաղաղական օվկիանոս*. աշխարհի հինգ ովկիանոսներէն խոշորագոյնը, որ կը կոչուի նաեւ *մեծ օվկիանոս*: Երկրորդը՝ *Ատլանտյան օվկիանոս՝ Ատլանտեան օվկիանոս*. Երրորդայի արեւմտեան կողմը գտնուող ովկիանոսի անունն: Երրորդը՝ *Հնդկական օվկիանոս՝ Հնդկական օվկիանոս*: Չորրորդը՝ *Հարավային օվկիանոս՝ Հարավային սառուցեալ օվկիանոս*. աշխարհի մէջ կայ սառուցեալ երկու ովկիանոս՝ Հիւսիսային եւ Հարավային սառուցեալ ովկիանոս⁶: Հինգերորդը՝ *Հյուսիսային սառուցեալ օվկիանոս*

⁴ **Սաքապետոյեան Ռուբէն**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., 2011, էջ 286:

⁵ **Թորոսեան Լեւոն**, Ընդարձակ բառարան գերմաներէնէ հայերէն, Վիեննա, 2018, էջ 982:

⁶ **Սաքապետոյեան Ռ.**, էջ 51:

⁷ **Ճերէճեան Գ., Տօնիկեան Փ. եւ Տէր Խաչատուրեան Ա.**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992, էջ 807:

⁸ Նոյն տեղը, էջ 206:

⁹ **Մալխասեանց Ստեփան**, Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944, էջ 117:

¹⁰ **Ճերէճեան Գ., Տօնիկեան Փ. եւ Տէր Խաչատուրեան Ա.**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992, էջ 779:

*Հիւսիսային սառուցեալ ովկիանոս*¹¹. Ինչպէս տեսանք, վերջինիս մէջ միայն ուղղագրական է տարբերութիւնը:

Գ. Արեգակնային համակարգութեան մոլորակներուն անունները

Արեւելահայերէնի *Արեգակնային համակարգը* պարսկահայքի արեւելահայերէնի մէջ՝ կը կոչուի *Արեգակնային համակարգութիւն*¹², իսկ արեւմտահայերէնի մէջ՝ *Արեգակնային դրութիւն*. արեւին հետ ու շուրջ եղող երկնային մարմիններու ամբողջութիւն¹³: Մենք հակուած ենք գործածելու «Արեգակնային համակարգութիւն» տարբերակը որպէս ընդհանրական տարբերակ հայերէնի բոլոր վիճակներուն մէջ:

Մոլորակներուն անունները խնդիր կը յառաջացնեն երկճիւղ աշխարհաբարին մէջ: Արեւմտահայերէնը այս պարագային եւս զանոնք ժառանգած է գրաբարէն, ի տարբերութիւն արեւելահայերէնին, որ լատինական անուանումները որդեգրած է: Եւ այսպէս՝ գրաբար-արեւմտահայերէն՝ *Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երեւակ, Ուրանոս*¹⁴, *Նեպտիւն*¹⁵՝ ի դիմաց արեւելահայերէնի *Մերկուրի, Վեներա, Երկիր, Մարս, Յուպիտեր, Սատուրն, Ուրան, Նեպտուն*¹⁶:

Այստեղ փիլիսոփայելով ըսենք, որ մեր մտահոգութիւնն այս պարագային այն է, որ եթէ այս անուններն արեւելահայերէնը օտար տարբերակներէն փոխանած է, ապա տպաւորութիւն կը ստեղծուի, թէ հայութիւնը չէ ալ զբաղած տուեալ գիտութեամբ՝ տիեզերագիտութեամբ եւ չունի ազգային աւանդ ասպարեզէն ներս, այլ օտարներէն որդեգրած ու գործածութեան մէջ դրած է:

Խնդիր մը եւս, քանի որ դասական հայերէնի դարաշրջաններուն տիեզերագիտութիւնն այսքան զարգացած չէր, ուստի տիեզերքի գիտութիւնը կը սահմանափակուէր միակ կաթնածիրով՝ «կալաքսիով (Galaxy)» կամ «գալակտիկայով», որ է *Ծիր կաթինը* կամ *Կաթնածիրը*, կամ *Յարդագողի ճանապարհը*¹⁷: Իսկ հիմա տիեզերագիտութիւնը երթալով կը զարգանայ, եւ այլ կաթնածիրեր կը յայտնագործուին, ապա ինչպէ՞ս հայերէն գրել «Milky Way Galaxy and Andromeda Galaxy», «Ծիր կաթինի կաթնածիրը եւ Անտրոմետա՝ կաթնածիրը»՝ հաշուի առնելով, որ անգլերէնի մէջ «Milky Way»-ը նոյն կաթնածիրն է, «galaxias» յունարէն «կաթնային

¹¹ Նոյն տեղը:

¹² Արեգակնային համակարգութիւն, *Վարդան Իսմայիլեան*, «Ալիք» օրաթերթ, թիւ 40, 19 փետրուար 1985, էջ 7. https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Alig%20Tehran/1985/40_ocr.pdf:

¹³ *Ճէրեճեան Գ., Տօնիկեան Փ. եւ Տէր Խաչատուրեան Ա.*, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992, էջ 217:

¹⁴ Նոյն տեղը, էջ 1028, 238, 576, 1293, 793-794, 564, 604:

¹⁵ Արծիւը թառեցաւ լուսնին վրայ, *Արամ Հայկազ*, «Ազդակ» օրաթերթ, 1 օգոստոս 1969, տող 43. <https://www.aztagdaily.com/archives/448127>:

¹⁶ Վիքիպեդիա ազատ հանրագիտարան, Արեգակնային համակարգ. https://hy.wikipedia.org/wiki/Արեգակնային_համակարգ:

¹⁷ Ուիքիփետիա ազատ հանրագիտարան, Ծիր կաթին. https://hyw.wikipedia.org/wiki/Ծիր_Կաթին:

օղակ» կը նշանակէ¹⁸: Առաջարկ կայ գործածել հայերէնի մէջ գոյութիւն ունեցող «համաստեղութիւն» բառը՝ իբրեւ «galaxias»¹⁹:

Դ. Պետութիւններու, քաղաքներու զուգաձեւ անունները

Արեւմտահայերէնի մէջ պետութիւններու եւ քաղաքներու անունները ճշդիւ ուսումնասիրելու համար զանոնք կը բաժնենք հետեւեալ խումբերուն.

ա) աշխարհագրական անուններ, որոնք տառադարձուած կամ հնչիւնադարձուած են վաղ միջնադարուն՝ գրաբարեան ժամանակաշրջանին,

բ) աշխարհագրական անուններ, որոնք տառադարձուած կամ հնչիւնադարձուած են ուշ միջին եւ վաղ նոր ժամանակաշրջաններուն,

գ) աշխարհագրական անուններ, որոնք տառադարձուած կամ հնչիւնադարձուած են մեր օրերուն:

Եւ այսպէս՝ **առաջին խումբի** տեղանունները անոնք են, որոնք աւանդաբար ժառանգուած եւ անցած են արեւմտահայերէնին դասական մատենագրութենէն: Այս խումբի տեղանունները մեծաւ մասամբ աստուածաշնչեան տեղանուններն են, կամ թագաւորական ժամանակագրութեանց մէջ յիշուող տեղանունները, եւ կամ այն վայրերը, որոնք մշտապէս, առանց ընդհատումի, կապ ունեցած են արեւմտահայութեան կեանքին հետ իրենց դարաւոր պատմութեան ընթացքին: Ուստի եւ այս խումբին պատկանող յատուկ անունները կը գրուին հայերէնի եռաշարք հնչիւնային համակարգի հիման վրայ, ինչպէս եւ է գրաբարի եւ արեւելահայերէնի մէջ:

Աթենք, Աղեքսանդրիա, Ադի ծով (Մեռեալ ծով), Անտիոք, Ասիա, Ասորեստան, Ասորիք, Արարատ, Աքքադ, Բաբելոն, Բեթանիա, Բերիա, Բէթլէ, Բէթղեհեմ, Գագա, Գալիլիա, Գեթսեման, Գոմոր, Դամասկոս, Դեկապոլիս, Եգիպտոս, Եդեմ, Եթովպիա, Երիքով, Երուսաղէմ, Եփեսոս, Եփրատ, Եփրեմ (իբրեւ անձնանուն), Զաբուղոն (իբրեւ անձնանուն), Զմիւռնիա, Թեսաղոնիկէ, Իկոնիոն, Իսրայէլ, Լաւողիկիա, Լիբանան, Կանա, Կապադովկիա, Կարմիր ծով, Կափառնայում, Կեսարիա, Կիլիկիա, Կիպրոս, Կորնթոս, Կրետէ, Հելիոպոլիս, Հոռմ, Մակեդոնիա, Մանասէ (իբրեւ անձնանուն), Մելիտինէ (Մայրա կղզի), Մեծ ծով (Միջերկրական ծով), Մովսբ, Յորդանան, Յունաստան, Նեղոս, Նինուէ, Ուր, Պարսկաստան, Պափոս, Պերգամոն, Ռուբէն (իբրեւ անձնանուն), Սաբա, Սելեւկիա, Սիդոն, Սինա, Սիոն, Սիրակուսա, Սողոմ, Տարսոն, Տիգրիս, Տիրոս, Տրովադա, Փիլիպպէ, Փիլիպպեան Կեսարիա, Փունիկէ, Փունիկիա, Քաղդէա, Քանան, Քարքամիս, Փիղադէփիա»²⁰:

¹⁸ Վիքիպեդիա ազատ հանրագիտարան, Գալակտիկաներ.

<https://hy.wikipedia.org/wiki/Գալակտիկաներ>:

¹⁹ Ուիքիփետիա ազատ հանրագիտարան, Ծիր կաթին. https://hyw.wikipedia.org/wiki/Ծիր_Կաթին:

²⁰ Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Ուսումնական Աստվածաշունչ, Տեղանուններ. <https://biblesociety.am/arm/149/Տեղանուններ>:

Աստուածաշունչ մատեանին մէջ յիշուած տեղանուններէն վերը հաւաքագրած ենք այն վայրերու անունները, որոնք տակաւին գոյութիւն ունին, կամ եթէ չունին, ապա պատմահնագիտական նիւթերու մէջ յաճախ կը գործածուին: Ատոնցմէ մէկ մասին քովը փակագծերով նշած ենք, թէ տուեալ անունները իբրեւ արական անձնանուն կը գործածուին արեւմտահայերէնի մէջ ե՛ւ դասական, ե՛ւ ժամանակակից: Իսկ այս տեղանուններու գրելաձեւին ուսումնասիրումը նաեւ կարելոր է այն առումով, որ անիկա հնարաւորութիւն կու տայ նոր տեղանուններ տառադարձելու նոյն սկզբունքով: Օրինակ՝ *Փիլիպպեան Կեսարիան* ունենալով Աստուածաշունչին մէջ՝ ժամանակակից *Philippines Islands*-ը տառադարձել *Փիլիպպեան կղզիք*, Ամերիկայի *Philadelphia*-ն՝ *Փիլադելփիա՝ Տիլտելֆիա/Տիլադելֆիայի* փոխարէն: Վերջինս հին յունական անուններէն է, որ հին աշխարհին մէջ շատ տարածուած էր Փոքր Ասիոյ տարածքին, իսկ այսօր նման անունները աւելի շատ տարածում կը գտնեն Հիւսիսային Ամերիկայի մէջ:

Պատկերը հետեւեալն է. արեւմտահայերէնը պահպանած է այս անուններուն գրաբարեան ուղղագրութիւնը, գրելաձեւը, սակայն եւ ո՛չ հնչիւնաբանութիւնը: Չանոնք կը կարդայ իրեն յատուկ երկշարք համակարգով: Օրինակ՝ *Դամասկոս՝ (Tamasgos)* առանց հաշուի առնելու, որ անիկա լատինատառ *Damascus*-էն փոխառուած է, *Բէթղեհեմ՝ (Petghehem)*, որ է՝ *Bethlehem*, *Բերիա՝ (Peria)*, որ է՝ *Beroea*, *Անտիոք՝ (Andioq)*, որ է *Antioch*, *Աղեքսանդրիա՝ (Agheqsantria)*, որ է *Alexandria*, եւ այլն:

Աստուածաշնչեան անուններէն զատ, այս խումբին կը պատկանին նաեւ հին ե վաղ միջին դարաշրջաններու պետութիւններու անունները, որոնք ժառանգուած են արեւմտական մատենագրութենէն: Օրինակ՝ *Գաղղիա՝ (Qaghia)*, որ է *Gaul/Gaulois*, *Անգղիա՝ (Anqghia)*՝ *Anglia*, *Բրիտանիա՝ (Pridania)*՝ *Britannia*, *Գերմանիա՝ (Qermania)*՝ *Germania*: Ասոնք լատիներէն փոխառութիւններ են: Կան նաեւ «-ստան» բաղադրիչով կազմուած հին հայկական փոխառութիւնները. *Պարթեւստան՝ (Bartevasdan)*՝ *Parthia*, *Լեհաստան՝ (Lehasdan)*՝ *Lechitic tribes*²¹՝ *Polonia*, *Կոստանդնուպոլիս՝ (Gosdantnubolis)*՝ *Constantinople*, եւ այլն:

Անդրադատնանք երկրորդ խումբի տեղանուններուն, որոնք գլխաւորաբար Օսմանեան շրջանի փոխառութիւններ են: Այստեղ արդէն կը նկատենք արեւմտահայերէնի երկշարք հնչիւնային համակարգի հիման վրայ կատարուած փոխառութիւններ օսմաներէնէն: Օրինակ՝ *Մաճարստան (Majarsdan)*՝ «مجارستان»՝ մաճարներու երկիրը՝ Հունգարիա:

Ֆրանսա պետութեան անունը նոյնպէս այս շրջանին կը պատկանի, վասն զի մինչեւ վաղ նոր ժամանակներ օգտագործուած է կա՛մ *Գաղղիա*, կամ *Փրանկաց երկրի*, ըստ մեզ, աղաւաղեալ տարբերակը՝ *Ֆրանգաց երկիր*, որ փոխառուած է

²¹ <https://en.wikipedia.org/wiki/Lendians>.

պարսկերէնի *Ֆիանգստանէն* «فرنگستان»²², եւ ոչ գրաբարեան կանոններէն բխելով: *Տաճկաստանը (Dajgasdan)* պարսկական ծագում ունեցող բառ մըն է, որ սկզբնական շրջաններուն (վաղ միջնադար) կը գործածուէր ողջ մահմետական աշխարհին մատնանշելու, առաւելաբար արաբներուն, ետքը՝ աւելի ուշ շրջաններուն (ուշ միջնադար-վաղ նոր ժամանակներ), անիկա սկսաւ գործածուիլ օսմանցի թուրքերը մատնանշելու համար²³, եւ ասկէ բխելով ալ՝ *Տաճկաստան՝ Թուրքիա, Տաճկահայք, Տաճկահայաստան՝ Օսմանեան Հայաստան, Արեւմտեան Հայաստան, տաճկերէն՝ օսմաներէն, օսմանեան թրքերէն*²⁴:

Ստորեւ կը ներկայացնենք այս շրջանի այն տեղանունները, որոնք մանրամասն չենք քննած վերը: Այս խումբի տեղանունները արձանագրուած են Սուրբիաս Սոմալեանի բառարանին մէջ:

Arabia՝ Արաբիա, *Ararat՝* Այրարատ, *Araxes, Aras՝* Երասխ, *Armenia՝* Հայաստան, Հայք, *Baghdad՝* Բաղդատ (պէտք է ըլլար՝ Բաղդադ), *Bagrevand՝* Բագրեւանդ, *Bassora՝* Բասրա, *Bengal՝* Բենգալայ (յանձնարարելի է՝ Բենգալ), *Betlis՝* Բաղէշ (ռամկական՝ Պիթլիզ), *Bulgaria՝* Բուլղարք, *Byzantium՝* Բիզանդիոն, *Caucasus՝* Կովկաս, *Carthage՝* Կարթագինէ, *Chorasan՝* Խորասան, *Crimea՝* Խրիմ, *Curdistan՝* Քրդաստան, *Danube՝* Դանուբ, *Denmark՝* Դանիա, *Diarbek՝* Տիգրանակերտ (ռամկական՝ Տիարպէքիր, պէտք է ըլլար՝ Տիարպէքիր), *East Indies՝* Արեւելեան Հնդկիկ (Արեւելեան Հնդկաստան կոչուած են այդ շրջանի տարբեր կղզիներ, որոնք գաղութացուած էին տարբեր կայսրութիւններու կողմէ. Սպանական Արեւելեան Հնդկաստան՝ *Փիլիպպեան կղզիք*, Հոլանտական Արեւելեան Հնդկաստան՝ *Բնտոնէզիա*, Բրիտանական Արեւելեան Հնդկաստան՝ *Մալէզիա*²⁵), *Edessa՝* Եդեսիա, *Erevan՝* Երեւան, *Erzerum՝* Կարին, Թէոդոսուպոլիս, *Etchmiadzin՝* Էջմիածին, *Europe՝* Եւրոպա, *Florance՝* Փլորենտիա, *Georgia՝* Վիրք, *Great Britain՝* Բրիտանիա, *Hindustan՝* Հնդկաստան, *Holland՝* Հոլանդայ (յանձնարարելի է՝ Հոլանդա), *Hungary՝* Հունգարիա (ռամկական՝ Մաճառստան, Մաճառք), *Japon՝* Յաբոն (յանձնարարելի է՝ Յաբոն), *Ireland՝* Իռլանդա, *Ispahan՝* Ասպահան, *Italy՝* Իտալիա, *Judea՝* Հրէաստան, *Lisbon՝* Լիսբոնա, *Madagascar՝* Մադագասկար, *Madrid՝* Մադրիտ (պէտք է ըլլար Մադրիդ), *Manascrete՝* Մանազկերտ, *Marseilles՝* Մարսիլիա, *Masis՝* Մասիս, *Mauritania՝* Մարիտանիա, *Merdin՝* Մերտին, *Mesopotamia՝* Միջագետք, *Mocha՝* Մէքքայ (յանձնարարելի է՝ Մէքքա), *Moldavia՝* Մոլդաւիա, *Moravia՝* Մորաւիա, *Moscow՝* Մոսկով, *Mush՝* Մուշ, *Nackichevan՝* Նախիջեւան, *Naples՝* Նեապոլիս, *Nile՝* Նեղոս, *Nisibin՝* Մծբին, *Norway՝* Նորվեգիա, *Padua՝* Պատուայ, Պադաւիոն (յանձնարարելի է՝ Պադովա), *Palestine՝* Պաղեստին, *Paris՝* Փարէզ, Փարիս

²² <https://hy.wikipedia.org/wiki/Ֆրանգիստան>.

²³ Ստեփան Մալխասեանց, Բացատրական բառարան, 1944:

²⁴ Սոմալեան Սուրբիաս, Համառօտ բառարան յանգղիականէ ի հայ եւ ի տաճիկ, Վենետիկ, 1843, էջ 9:

²⁵ <https://www.encyclopedia.com/places/asia/southeast-asia-physical-geography/east-indies>.

(յանձնարարելի է՝ Փարիզ, որ արդեն միասնական ձեռք է), *Phrygia*՝ Փոփրիգիա, *Poland*՝ Պոլոնիա, *Lithuania*, *Pont Euxin*՝ Պոնտոս, *Portugal*՝ Լուսիտանիա, *Prussia*՝ Պրուսիա (յանձնարարելի է՝ Պրուսիա), *Rome*՝ Հռոմ (յանձնարարելի է՝ Հռոմ), *Russia*՝ Ռուսք (յանձնարարելի է՝ Ռուսիա), *Samaria*՝ Սամարիա, *Samos*՝ Սամոս, *Sardinia*՝ Սարդինիա, *Saxony*՝ Սակսոնիա, *Schiras*՝ Շիրազ, *Scotland*՝ Սկոտլանդ, *Sebaste*՝ Սեբաստիա, *Shirak*՝ Շիրակ, *Sicily*՝ Սիկիլիա, *Spain*՝ Սպանիա, *Sweden*՝ Սվեդք (յանձնարարելի է՝ Սուեդ), *Syracuse*՝ Սիրակուսա, *Taron*՝ Տարոն, *Tarson*՝ Տարսոն, *Tartary*՝ Թարթարք (յանձնարարելի է՝ Թարթարստան), *Tauris*՝ Դարեժ, *Thessaly*՝ Թեսսալիա (յանձնարարելի է՝ Թեսալիա), *Thrace*՝ Թրակիա, *Tocat*՝ Ելոկիա, *Transilvania*՝ Տրանսիլվանիա (յանձնարարելի է՝ Տրանսիլվանիա), *Trebisond*՝ Տրապիզոն, *Van*՝ Վան, *Vanant*՝ Վանանդ, *Venice*՝ Վենետիկ, *Verona*՝ Վերոնայ (յանձնարարելի է՝ Վերոնա), *Vienna*՝ Վիեննայ (յանձնարարելի է՝ Վիեննա), *Warsaw*՝ Վարսաիա, *Zealand*՝ Չելանտիա (յանձնարարելի է՝ Չելանդա)²⁶:

Երրորդ խումբի տեղանուններուն վրայ առաւելաբար պիտի ծանրանանք, որովհետեւ կարեւորագոյն խումբն է, որ նաեւ միօրինակացման եւ կանոնարկման կը կարօտի: Այստեղ առկայ անուններուն կողքին պիտի նշենք նաեւ մեր կողմէ կանոնիկ համարուող տարբերակները:

Սուրիա տեղանունը հետաքրքրական ճանապարհ մը անցած է մինչեւ հասած է իր այսօրուան վիճակին. *Ասորեստան* > *Ասորիք* > *Սիրիա*, որ տուած է *Սուրիա (արեւմտահայերէն)* եւ *Սիրիա (արեւելահայերէն)*: Պարզ է, որ գրաբարեան ժամանակաշրջանին *Ասորիք* տարբերակը տարբերակը կը գործածուէր, իսկ պատմական անցեալին (Հին աշխարհի) մասին խօսելու ատեն՝ Ասորեստան:

Հալէպ քաղաքին անունը դասական հայերէնի մէջ *Բերիա* է, սակայն անոր կիրարկումը սահմանափակուած է եկեղեցական ծիրէն ներս՝ «*Բերիոյ հայոց թեմ*», իսկ աշխարհիկ բոլոր տպագրութիւններուն մէջ կը գերիշխէ **Հալէպ** տարբերակը: Ըստ մեզ՝ այստեղ «է»-ի ստուգաբանական հիմնաւորում չկայ, ի տարբերութիւն *Երուսաղէմին*, որ *Երուսաղիմի* կամ *Սաղիմի*, *սաղիմահայ* ձեւերուն կը փոխակերպուի: **Հալէպի** պարագային ատիկա չենք տեսներ, չկայ **Հալիպի** ձեւ: Հետեւաբար ճիշդ կը համարենք զայն գրել «է»-ով՝ **Հալէպ**, ինչպէս եւ է արեւելահայերէնի մէջ: Իսկ **Հալէպի** «պ»-ն, ըստ էութեան, գրաբարեան հիմքի վրայ է, քանի որ ի տարբերութիւն նոյն երկրի այլ քաղաքներուն, ինչպէս օրինակ *Բողիպ/Բոլիք*, այս պարագային «պ» տառը «բ»-ի չի փոխուիր արեւմտահայերէնէն արեւելահայերէն անցում կատարելու ատեն: Ասիկա կը նշանակէ, թէ

²⁶ **Սօմալեան Սուրիաս**, Համառօտ բառարան յանգլիականէ ի հայ եւ ի տաճիկ, Վենետիկ, 1843, էջ 439-444:

տառադարձութեան հիմքը արաբերէնը չէ, այլ ֆրանսերէնն է: Այսինքն՝ *Alep*՝ *Հալէպ/Հալէպ*, այլապէս «حلب»՝ *Հալաբ* պիտի ըլլար արեւելահայերէն:

Ինչ կը վերաբերի *Պէրուֆին*, ապա անիկա ալ աղաւաղուած է, ըստ մեզ, քանի որ վաղ արեւմտահայերէնի մէջ գրուած է *Պէրուֆ*²⁷ ձեւով, հաշուի առնելով, որ գրաբարի մէջ «է» ձայնաւորը կը տարբերէր «ե»-էն, եւ անիկա «էյ» երկբարբառ հնչիւն ունէր²⁸: Այսպիսով «է/ե»-ի հարցը լուծուած է, սակայն ոչ «պ/բ»-ի հարցը: Եւ քանի որ պետութեան անունը պահպանուած է գրաբարեան՝ *Լիբանան* ձեւով, եւ այն չէ դարձած *Լիպան*, օրինակ, հետեւաբար ճիշդ պիտի ըլլար մայրաքաղաքը գրել *Բէրուֆ*²⁹: Այսպէս առաջարկած է նաեւ բանասիրական գիտութեանց թեկնածու, տեսաբան Լուսինէ Աւետիսեանը:

Անգլերէնէ տառադարձուող տեղանուններուն մէջ կ'առաջարկենք «ը» ձայնաւոր գործածելէն խուսափիլ, այսինքն՝ գրել ոչ թէ *Ուաշինկթըն*, այլ *Ուաշինկթոն*, ոչ թէ *Պոսթըն*, այլ *Պոսթոն* կամ *Բոստոն*: *Լոս Անճելոս* եւ ոչ *Լոս Անճելրս*: Իսկ «բ/փ», «գ/ք», «դ/թ», երկձեւութիւն ունեցող անունները գրել շնչեղ խուլ բաղաձայններով *Փարիզ*, ոչ *Բարիզ*³⁰ (այստեղ նշենք, որ ժամանակին արեւմտահայերէնը *Բարիզ* «բեն»-ով կը գրէր, սակայն վերջին տասնամեակին անիկա վերջապէս միացեալ է երկու ճիւղերուն մէջ, եւ կը գրուի «փիւր»-ով՝ *Փարիզ*), *Քալիֆորնիա*, ոչ *Գալիֆորնիա*, *Քանատա*, ոչ *Գանատա*: Վերջին երկուքը նոյնպէս միտում կայ «քէ»-ով գրելու արեւմտահայերէնի մէջ՝ հաշուի առնելով, որ «գիւմ»-ը գրաբարի ու արեւելահայերէնի մէջ «ց» հնչիւնն ունի, ուստի եւ նպատակը տարբերութեանները նուազագոյնի հասցնելն է: Իսկ «գիւմ»-ով գրելու ձեւին կառչած մնացողները, այն հաստատութիւններն են, որոնք շատոնց հաստատուած են Հիւսիսային Ամերիկա, եւ իրենց համար դժուար է, եւ նոյնիսկ անընդունելի, փոխել իրենց կազմակերպութեան անուան տառերէն մէկը: Օրինակ՝ *«Գանատայի հայոց թեմ»*, *«Գալիֆորնիա քուրիոր» թերթ*, եւ այլն:

Philadelphia անուան համար ունինք աստուածաշնչեան *Փիղաղեղփիա*, ինչ որ հիմք կու տայ մեզ գրելու նոյնաձեւ այլ անուններ եւս՝ *Կալիփորնիա*, *California*, *Սուրբ Փրանկիսկոս*, *San Francisco*, եւ այլն: Իսկ «օ»-ով վերջացող անունները գրել «ո»-ով, ինչպէս այս մասին ակնարկած էինք մեր մէկ այլ՝ «Արեւելահայերէնէն արեւմտահայերէն փոխադրելու արդի հիմնախնդիրները. քերականութիւն եւ

²⁷ Փարիզ 12 նոյեմբեր. քաղուածք, «Փարիզ» լրագիր կիսամեայ, թիւ 34, 23 նոյեմբեր 1860, էջ 1. <https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Paris1860/1860/34.pdf>:

²⁸ *Աւետիսեան Լուսինէ*, Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը, Երեւան, 2018, էջ 39:

²⁹ Նոյն տեղը, էջ 58:

³⁰ Բարիզ եւ Մոսկուա համակարծիք բոլոր հարցերուն շուրջ, «Այգ» օրաթերթ, թիւ 3738, 11 ապրիլ 1965, էջ 1. https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ayg1953/1965/3738_ocr.pdf:

Եզրութաբանութիւն» յօդուածին մէջ: Օրինակ՝ *Toronto` Թորոնթոն, Monte Carlo` Մոնթէ Բարլոն, Ohio` Օհայոյ, Orlando` Օրլանտոն/Օրլանդոն, Monaco` Մոնակոն*³¹:

New York անուան շուրջ: Այս անունը դասական պաշտօնական, արեւմտահայերէնի մէջ, առաւելապէս կղերական անձնատրութիւններու կողմէ գրուած եւ տպագրուած է *Նոր Եօրք*³² ձեւով՝ 19-րդ դարու եւ 20-րդ դարասկզբին: Մեր կարծիքով՝ ասիկա ամենէն ճիշդ տարբերակն է, որ պէտք է գործածուի այսօր, մենք զայն արդէն իսկ գործածութեան մէջ դրած ենք վերջին հնգամեայ մեր լրատուական գործունէութեան ծիրէն ներս: Իսկ բազմաձեւ տարբերակներէն է *Նիւ Եորք* ձեւը: Այս ձեւին աւելի շատ կը հանդիպինք ամերիկահայերու ձեռագիրներուն մէջ, որոնք պաշտօնական տպագրական թուղթեր չեն: Իսկ «Նիւ» ձեւը հաւանաբար յառաջացած է այն տեսակէտէն, որ «իւ» երկբարբառը «յու» հնչիւնն ունի արեւմտահայերէնի մէջ, սակայն այդպէս մտածելով «Նիւ» գրողը պահ մը չէ խորացած ու եզրակացուցած, որ այդ «յու» հնչելու կանոնը կը գործէ միայն այն ժամանակ, երբ յաջորդ տառը բաղաձայն է, ինչպէս՝ *իւր*, իսկ բառավերջին անիկա պարզ «իվ» է, ինչպէս՝ *թիւ*: Հետեւաբար Նիւ Եորք գրելով՝ շատերը «նիվ յորք» կ'արտասանեն, շատեր ալ՝ «նյու յորք»: Իսկ թէ ինչն է *Եօրք* «օ»-ով, պատճառը հետեւեալն է. Այս բառը նոյն կազմութիւնն ունի, ինչ գրաբարի մէջ *եօթն՝ եւթն*: Հետեւաբար, երբ հիմա «եւ»-ը փակ վանկի մէջ «yw» կարդալու հին երկբարբառ հնչիւնը կորսնցուցած ենք, զայն կը փոխարինենք պարզ «եօ»-ով: Գրաբարի մէջ այդպէս կարդացուած է նաեւ Եւրոպան, ոչ թէ «եվրոպա», այլ «յեթորպա/yewropa»³³:

Եւ վերջապէս՝ արեւելահայերէն-արեւմտահայերէն զոյգին միջեւ տարբեր գրուող անուններէն են. *Հասագա-Լահէ* (ասիկա *Ֆրանսերէնէն հնչիւնադարձուցած է արեւմտահայերէնը՝ La Hague` Լա Հէյ՝ Լահէ*), *Շվեյցարիա-Չուիցերիա, Նիցա-Նիս, Մարսել-Մարսէլ-Մարսիլիա, Պորտուգալիա-Փորթուկալ* (տե՛ս վերը՝ գրաբար՝ Լուսիտանիա), *Լիսաբոն-Լիզպոն, Բրազիլիա-Պրազիլ, Արգենտինա-Արժանթին*, եւ այսպէս շարունակ: *Մարոքը՝ ալ-Մադրիբ ալ-Արաբին՝* արեւմտահայերէնը

³¹ Արմենակ Եղիայեանն ու Յակոբ Չոլաքեանը ընդհանուր յայտարարի եկած են օտարամուտ բոլոր յատուկ թէ հասարակ բառերու վերջատրութեան «օ» տառը «ո»-ով փոխարինելու (զերո, Սագո): Տե՛ս՝ *Չոլաքեան Յ.*, Աւանդական ուղղագրութիւն. կանոնկարգ եւ խնդիրներ, Երեւան, 2016, էջ 71: Անի Ֆիշենկճանը, իր հերթին, որդեգրած է այս բարեփոխուած կանոնակարգը եւ զայն կիրարկած է իր աշխատութեանց մէջ, տե՛ս՝ *Տիգրան Ս., Ֆիշենկճան Ա.*, Արեւմտահայերէնի արդի վիճակը հայկական գաղթօճախներում. Արեւմտեան Եւրոպա, Երեւան, 2017, էջ 12 («Մուլիմ» բառը): Իսկ մեր համոզմամբ՝ հասարակ բառերը գրել, ինչպէս հայերէն աւանդաբար փոխառուած բառերը կը գրուին՝ փաշայ, երոյ, զերոյ: Մենք այսպէս ալ կը կիրարկենք մեր ամենօրեայ մամուլը լեզուոյն մէջ: Այս տեսութեան հետ համաձայն են նաեւ հայ դասական լեզուաբաններ Հրաչեայ Աճառեանն ու Գեորգ Ջահուկեանը: Տե՛ս՝ *Աճառեան Հր.*, Հայոց գրերը, Երեւան, 1984, էջ 570: Ե՛ւ՝ *Ջահուկեան Գ.*, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1954, էջ 238:

³² <https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Paris1860/1860/34.pdf>, էջ 2:

³³ *Աւետիսեան Լուսինէ*, Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը, Երեւան, 2018, էջ 47:

տառադարձուցած է ֆրանսերէն *Le Maroc*-էն³⁴, ինչ որ *Մորոկկո* է արեւելահայերէնի մէջ:

Ե. Եզրակացութիւն

Ցարդ արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը կը շարունակեն գրել տեղանունները իրենց ներքին կանոններուն համաձայն: Մեր տեսլականն է՝ այդ ներքին կանոնները փոխարինել հայերէնի ընդհանրական կանոններով, որոնք կը տարածուին բոլոր գրական տարբերակներուն վրայ: Իբրեւ եզրակացութիւն, կը յանգինք այն մտքին, որ այնքան ատեն, որ գրաբարին չենք ապաւինիր, աշխարհաբարի երկու ճիւղերուն միջեւ այս ճեղքուածքը դեռ պիտի շարունակէ խորանալ:

Aposhian Avedis - “Transliteration Issues of Proper Names in Western Armenian: Historical Development and Parallelism with Eastern Armenian”.- The article examines the fundamental differences between the two branches of the Modern Armenian language regarding the transcription of toponyms. While Armenian contains common place names inherited from Classical Armenian, the toponyms that are written differently in Western and Eastern Armenian languages are a result of their respective historical development processes. Western Armenian has predominantly borrowed new names from English (primarily) and French (to a lesser extent). In contrast, Eastern Armenians have mainly borrowed from the Russian language, as exemplified by cases such as “**La Hague: Lahé (WA) / Haaga (EA)**”. Additionally, we have recommended avoiding the use of the “ə” sound represented by the letter “ը” when transliterating English names. For instance, using “**Լոս Անճելոս (Los Anjelos)**” rather than **Լոս Անճելըս (Los Anjeləs)**”.

Our primary recommendations, based on theoretical foundations, are to implement standardised forms wherever possible and to reduce variations, first internally within each branch of the language, and then to work towards reconciling the differences between Western and Eastern Armenian branches.

This study presents detailed categorisations of toponyms that we have classified, which, upon careful examination, provides guidance to professionals in the field and editors in determining the appropriate writing of place names. In the future, we are planning to prepare a publication in tabular format based on this research, presenting parallel forms in Classical Armenian, Western Armenian, Eastern Armenian with classical orthography, and Eastern Armenian with modern orthography.

³⁴ <https://fr.wikipedia.org/wiki/Maroc>.

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՒՇ- ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ԲԱՐԲԱՌԱՅՄԲՈՒՄ

Բառնասյան Ջեմմա

բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. barnasyanjemma@mail.ru

DOI: 10.54503/978-9939-970-07-3-83

Բանալի բառեր. Մուշ-Տիգրանակերտ, հարավկենտրոնական բարբառախումբ, բանահյուսական պատառիկներ, նախդրիվ հայցական, Գ.Ջահուկյան, Հ.Աճառյան, հարցահարաբերական դերանուն:

Քննության առնենք արևմտյան խմբակցության բարբառների հարավկենտրոնական կամ *Մուշ-Տիգրանակերտի* բարբառախմբում առկա դերանունները՝ անդրադառնալով ինքնատիպ ձևերին ու հետաքրքիր իրողություններին: Գ. Ջահուկյանն իր բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման մեջ այս բարբառախմբում է ընդգրկել նաև Բուն Սասունի (Գելիեգուզանի) և Տավրոսիկ-Մոտկանի բարբառները:

Դերանուն խոսքի մասին նվիրված ծավալուն մենագրության մեջ Հ. Աճառյանը փաստում է, որ անձնական դերանունները բառապաշարի համահայերենյան շերտին են պատկանում, և հայոց լեզվի բոլոր փուլերում մշտապես գործառող *ես, դու, մենք, դուք* դերանուններն առկա են հայերենի բոլոր բարբառներում: Այնուամենայնիվ, կարելի է գտնել նաև յուրօրինակ, ինքնատիպ ձևեր, ինչպես, ասենք, *յէ* (առանց ս-ի) բառաձևը՝ Արդվիհի բարբառում գործառող, որը Հ.Աճառյանի կարծիքով՝ «նորօրինակ երևույթ է հայերենի բարբառներում»:

Նմանատիպ բառաձև մենք գտել ենք նաև Մշո բարբառում՝ բացառապես խոսքի շղթայում, ինչպես, ասենք՝

Հ՛ըմէն գ՛ածին, յէ լէ գ՛ածի: Յէ լէ գինսամ՝ կըլուլիգ իս էպի:

Հոգնակի առաջին դեմքի դերանունը, որ գրաբարում *մեք* էր, հետգրաբարյան հայերենում գրեթե բոլոր բարբառներում դարձել է *մենք* (ս-ի հավելումով): Հ.Աճառյանը դա բացատրում է հարասության օրենքով. «ոնգականից հետո կրկնվել է ն ձայնը՝ ճիշտ ինչպես ունենք կանաչ > կանանչ, կամուրջ > կարմուջ > կարմունջ և այլն»³: Սասունի բարբառի խոսվածքներում գործառում է հենց *մըք*-ը (մըք

¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

² Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954, էջ 59

³ 3 Նույն տեղում, էջ 58:

կրկըրըրը): Գեղիեգուզանի խոսվածքում սովորական է *ի* հենարանով ձևերի գործածությունը, ինչպես՝ *Մըկի կացիք, տուկի մացիք* (մենք գնացինք, դուք մնացիք)»:

Մշո բարբառի ուսումնասիրությանը նվիրված մենագրության մեջ կարծիք կա, որ ստացական դերանվան իմաստն այս բարբառում արտահայտվում է «*մի, ձի* բառերի և անձնական դերանունների հոգնակի տրական հոլովի օգնությամբ՝ *օղնէր մի* (իմ -մեր ոտքերը) *տընէր ձ ի* – ձեր տները, *խէլք մի* – իմ, մեր խելքը և այլն»:

Ինչպես երևում է շրջուն շարադասությամբ ոճական լրացուցիչ բաշխում ենթադրող այս կառույցներից, առաջին դեմքի դերանվան թե՛ եզակին և թե՛ հոգնակին արտահայտվում են *մեր* (տվյալ դեպքում՝ *մըր*) դերանվան վերջնահնչյունի կորստով առաջացած *մի* բառաձևով, ինչպես հետևյալ օրինակում՝ *Օղնէր մի պաղան* (իմ ոտքերը կամ մեր ոտքերը սառեցին): Նույն երևույթն առկա է Սասունի բարբառում:

Հետաքրքիր իրողություններ են ի հայտ գալիս անձնական դերանունների հոլովական համակարգը քննելիս, ինչպես, ասենք, այն, որ անձնական *ես* դերանվան հայցական հոլովածը նման է ուղղականին: Այլ խոսքով՝ առավել պարզ է և մոտ անվանական հոլովմանը: Նման փաստեր շատ կարելի է գտնել հատկապես մեր կողմից քննվող բարբառախմբում: Տիգրանակերտի բարբառով գրանցված բանահյուսական պատառիկներում կան ասվածը հաստատող օրինակներ, ինչպես. *Ըմմընէ՛ դարան, յէսի* (ինձ) *չըդարան*:

Նախդրիվ հայցականով առանձնացող բարբառներում *զ* նախդիրն առայսօր կենսունակ է: Մշո բանահյուսությունից բերենք օրինակ.

Ապօ՛, մամօ՛, կարկէք զիս,
Զ՛ ուլհագ տըղին տըվէք զիս,
Թալէ գմաքօք, գ՛ ըրգէ զիս...

Մշո բարբառում առաջին դեմքի անձնական դերանվան բացառական հոլովածը նույնպես ինքնատիպ է՝ *հ՛ իսնէ*: Ասենք՝ *Հ՛ իսնէ ի՞նձ է գ՛ ուղիս* (ինձնից ի՞նչ էս ուզում): Սասունի բարբառը նույնպես ունի համարժեք ձև՝ *իսնա*:

Հակադրվելով Ա. Այտընյանի հայտնած այն կարծիքին, թե որոշ բարբառներում անձնական դերանվան եզակի առաջին դեմքի բացառական հոլովում առկա *յիսնէ* (Մուշ) և *յիսմէ* (Պոլիս) ձևերն ակնհայտորեն հայցական հոլովից են ծագում և ոչ թե՛ տրականից, ինչպես ընդունված է կարծել՝ Հ. Աճառյանը տարակուսանք է հայտնում՝ արձանագրելով. «Ըստ այսմ՝ մնում ենք երկընտրանքի մեջ և չենք կարողանում որոշել *իզմէ, իսմէ, իսնէ* ձևերի ծագումը»:

4 Տե՛ս Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Ե., 1954, էջ 45:

5 Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 98:

6 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 77:

Մեր կարծիքով՝ խնդրո առարկա բարբառներում կիրառվող բացառական հոլովի այդ *իսնէ* և *հ'իսնէ* ինքնատիպ ձևերը հայցականից են սերում, թեև այս աշխատանքում մենք ընդամենը փաստում ենք տվյալ բարբառախմբում գործառող դերանվանական որոշ հետաքրքիր ձևերի առկայությունը՝ չանդրադառնալով դրանց ծագումնաբանությանը:

Մշո բարբառում անձնական դերանունների սեռական՝ *իւ, քու, մէր, ձ'էր* հոլովաձևերն ունեն նաև զուգաձևություններ՝ *իմուն, քումուն, մէրուն, ձ'էրուն*, որոնք ի հայտ են գալիս փոխանվանաբար հոլովվելիս: Բարբառի քննությանը նվիրված մենագրության մեջ այդ ձևերը դիտարկվում են որպէս ստացական դերանուններ:

Հարկ ենք համարում նշել, որ գրաբարյան *քո* ստացական դերանվան տրականի՝ *քում*–ի հետ աղերսն ակնհայտ է, և, ասեմք, Մշո բարբառի Մկրագոմ գյուղի խոսվածքով կարելի է ասել՝ *Իմ ու քում մը իսնէ* (մի՛ խառնիր):

Նույնպիսի օրինակ բերենք Սասունի պարերգից՝ *Ըմ յար կըց քում էլ խօրօղիգ*:

Քանի որ անձնական դերանունները անձնանիշ են և իմաստային պլանում՝ միշտ որոշյալ, ուստի և հոդառու չեն: Միայն փոխանվանական նշանակությամբ սեռականի ձևը կարող է հոդ ստանալ և իբրև անկախ, «ուղիղ» ձև՝ հոլովվել՝ *իմուն, քումուն, մէրուն, ձ'էրուն*: Բերենք օրինակ Մշո ասացվածքներից.

Խաճ իմուն է, զօրուտէն յէ՛ս գինամ:

Նույնատիպ օրինակներ կարելի է բերել նաև Սասունի բարբառով գրառված ազգագրական նյութերից. *Մէլիք գըսը. «Տավի՛տ, հէրտ իմու՛նը, թը՛ քըմունը»*:

Մեր կարծիքով՝ ինքնատիպ երևույթ է Տիգրանակերտի բարբառում եզակի երկրորդ դեմքի *թուն* դերանունը փոխանվանաբար հոլովվելիս ի հայտ եկող *քումէ* հոլովաձևը՝ *քոնը* բառիմաստով: Բարբառին նվիրված մենագրության մեջ հեղինակն ընդգծում է, որ հասկապէս անեծքներում է հանդիպում այս հոլովաձևի յուրօրինակ ու հետաքրքիր գործածություն, երբ դրվելով հետադաս՝ ստորոգյալից հետո, արտահայտում է *քո* հոլովաձևի իմաստ, ինչպէս՝ *Վիզիթ գ'օղրի քումէ* (քո վիզը կոտրվի): Մենագրության հեղինակ Անի Հանեյանը գտնում է, որ «այս երևույթը գուցե պետք է բացատրել պատմականորեն դերանվան սեռական և տրական հոլովիմաստների միասնացման, միաձուլման միտումով»¹⁰:

Կարծում ենք, որ այդ հոլովիմաստների միասնականությունը բարբառում եղել է ի սկզբանե:

7 Տե՛ս **Ս.Բաղդասարյան-Թափալցյան**, նշվ. աշխ., էջ 97:

8 Տե՛ս **Վ.Պետոյան**, նշվ. աշխ., էջ 79:

9 Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Ե., 1999, էջ 38:

10 Տե՛ս **Ա.Հանեյան**, Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978, էջ 159:

Դերանվանական հետաքրքիր ձև ենք համարում նաև ոչ օրինաչափ հնչյունափոխության ենթարկված (անճանաչելիորեն փոխված) *խըղրաց* բառաձևը (փոխադարձ դերանվան արժեքով): Մշո բարբառում *հ'իրար* (իրար) փոխադարձ դերանունը *հետ* կապով ձևի պարագա է ձևավորում՝ *հ'իրարու հետ*: Սակայն բարբառին բնորոշ է նաև *հետ* կապի նախադաս կիրառությունը (հեղ ուր մօր, հեղ մըզի), իսկ *իրար* դերանվան հետ առաջին հայացքից տարօրինակ՝ *խըղրաց* բառաբաղադրությունն է կազմում, քանի որ *հ-ի* հնչյունափոխությունը օրինաչափ չէ Մշո բարբառի համար: Թեև արժե նշել, որ այդպիսի մի բացառիկ ձև էլ գտել ենք ժամանականիշ բառերի քննություն կատարելիս: Մշո և Սասունի տարբեր խոսվածքներում գրառել ենք *լուսադեմին* կամ *վաղ առավոտյան* հասկացության իմաստով գործառող *խըլըսուն* (հետ+լուսուն) ժամանականիշ բառը: Օրինակ բերենք Մշո Բոստաքյանդ գյուղի խոսվածքով.

Հ'ինկ ու գուր ախպըրդան *խըլըսուն* հ'էլան տընէն ու *խըղրաց գածին խօղքաղ* (Բնքն ու իր եղբայրները լուսաբացին միասին (միմյանց հետ) գնացին խոտ քաղելու):

Հետաքրքիր դերանվանական ձևեր են ի հայտ գալիս նաև որոշյալ և անորոշ դերանունները քննելիս: Մշո և Սասունի խոսվածքներում գործառող *ամէգ* դերանունն առաջին հայացքից կապվում է *ամէնքը* որոշյալ դերանվան հետ: Մինչդեռ այն ուղղակի *ամեն մեկը* որոշյալ դերանունն է՝ «յուրաքանչյուրը» նշանակությամբ (բաղադրիչների կցումով և մեկ շեշտով արտասանելիս հնչյունների կորստով): Այսպես՝ *Ամէգ հավկ՝ վըր ուր էրմին* (յուրաքանչյուր հավք՝ իր երամի հետ):

Անորոշ դերանունների գործառույթին անդրադառնալիս կարելի է նշել անորոշ հոդին համարժեք *մէգ, մէ* (հետադաս կիրառելիս՝ *մը*) բառաձևերի մասին: Իբրև յուրահատկություն՝ ներկայացնենք Մշո բարբառում այդ դերանվան կրկնա-հավելման երևույթը, ինչպես՝ *Մէ կընիգ մը տէսա, մէ տըղէ մէ կար հէղ՝ մազեր հուստըզուգ*:

Կամ, ասենք, Ալաշկերտի խոսվածքով բերվող այս ասացվածքում՝ *Մէգ մէ մէզու անուն իղա՝ յա դ'ուռնա, յա հ'էրտիգ*¹¹:

Հր. Աճառյանի վկայությամբ՝ աշխարհի շատ լեզուներում սովորական է *մարդ* բառին անորոշ դերանվան իմաստ վերագրելը: Դա բնորոշ է նաև հայերենին¹²: Անորոշության իմաստն առավել խտանում է *մառտումուռտ* բառաբաղադրության մեջ, որ գործածական է Մշո բարբառում, ինչպես՝ *Օր գ'իկէր, մառտումուռտ չըտէսա՞վ ըզքըզի*¹³:

11 Տե՛ս Բ. Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 158:

12 Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ.2, էջ 415:

13 Տե՛ս Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Ե., 1972, էջ 93:

Հարցահարաբերական դերանվան արժեքով Մշո բարբառում գործառող *դ'որ* ձևն ակներևաբար *ընդ* նախդրի և *որ* հարցական դերանվան կցումով է առաջացել՝ (ընդ+որ): Առաջին վանկի անկումով առաջացած բառաձև է՝ օրինաչափորեն հնչյունափոխված:

Գործողության ուղղություն ցույց տվող այս դերանունն առկա է Մշո, Սասունի խոսվածքներում, ինչպես նաև արևելյան խմբակցության մի շարք բարբառներում (Բայազետի, Ջուղայի և այլն):

Մուշ-Սասուն բարբառախմբում *ո՞ր* հարցական դերանունից են սերում՝ *օրի՞* (Սասուն), *հ'օրի՞* (Մուշ) բառաձևերը: Բերենք մեկ օրինակ Տարոն-Տուրուբերանի ազգագրական գոտին ընդգրկող ժողովրդական հեքիաթներից.

«Օրբմ *հ'օրի՞* չըս էրտա օլըրդի ըզքու էրգիր՝ տեսնաս *ի՞մալ* է , *ի՞մալ* չէ, *վօ՞ր* *ըզվի՞ր* վըրեն գօր կենե» (մի օր ինչու՞ չես գնում քո երկրում շրջելու, որ տեսնես՝ ինչպե՞ս է, ինչպե՞ս չէ, ո՞վ է ում ճնշում)¹⁴:

Նույն այս օրինակում առկա է Մշո բարբառի դերանվանական համակարգում գործառող հարցահարաբերական *ուլ* դերանվան ուղղական հոլովի ինքնատիպ մի ձև՝ *վօր*: Այսպես՝ *Վօ՞ր էգալ ձ'ըր տուն*:

Ըստ Հր. Աճառյանի՝ «*Ո՞* և *ո՞վ* միևնույն բառերն են. բուն ձևն է՝ *ո*, *որ* և սկզբում բնականաբար *ո* ընդհանուր գործածությունն ունեն, հետո՝ ձայնավորի մոտ պատահած ժամանակ, ներդաշնակության համար (հորանջից խուսափելու նպատակով) ավելացավ *վ* բաղաձայն, իսկ *ո* մնաց բաղաձայնի մոտ»¹⁵: Ապա ավելացնում է, որ Մշո և Բայազետի բարբառները «կորցրել են նաև *ուլ*-ը և ունեն միայն *վօր*»¹⁶:

Սասունի բարբառում օրինաչափ է *վըր* բառաձևը՝ *Վը՞ր ը գըսը* (ո՞վ է ասում): Նշենք նաև այն հանգամանքը, որ հարցական *վօ՞ր* դերանվան հոգնակին բացակայում է Մշո և Սասունի բարբառներում, իսկ այդ իմաստն արտահայտելուն օգնում է հոգնակի թվով ստորոգյալը, ինչպես՝

Վը՞ր էգան ծըր դուն (Ովքե՞ր եկան ծեր տուն):

Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի դերանվանական համակարգում առկա հետաքրքիր իրողությունների փնտրտուքը ևս մեկ անգամ հաստատում է նշանավոր բարբառագետ Ա.Ղարիբյանի այն կարծիքը, որ «շատ հաճախ դերանուններն են բարբառների հարևան լինելու հանգամանքը պարզելու հայտանիշը»¹⁷:

Ուսումնասիրության առարկա դարձնելով հայերենի բարբառների դերանվանական համակարգը՝ իմաստագործառական քննության ենք առել բարբառագի-

¹⁴ Տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 13, Ե., 1985, էջ 258:

¹⁵ **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., հ. 2, էջ 389:

¹⁶ Նույն տեղում, էջ 394:

¹⁷ **Ա.Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 144:

տական մենագրություններից, հայ ժողովրդական բանահյուսությունից և քարտեզագրման նպատակով հայերենի բարբառների տարբեր խոսվածքների գրանցումներից դուրս գրված համապատասխան իրողություններ: Նմանատիպ քննությունը տարբեր բարբառներում ու խոսվածքներում առկա ընդհանուր կամ միայն տվյալ տարածքի բարբառներին հատուկ իրողություններ գտնելու, համեմատելու հնարավորություն է ընձեռում:

Барнасян Джемма – Местоимение в Муш-Тигранакертской группе диалектов. – В работе рассмотрены местоимения юго-центральной или Муш-Тигранакертской группы диалектов Западной группировки с учетом своеобразия форм. Результат исследования вновь подтверждает мнение выдающегося диалектолога А.Гарибяна о том, что очень часто местоимения являются показателем, позволяющим установить соседство диалектов.

Barnasyan Jemma – The Pronoun in Mush-Tigranakert Dialect Groups. – In the paper studied the pronouns south-central or Mush-Tigranakert dialect group of Western grouping taking into account the singularity of forms. The result of the study again confirms the opinion of famous dialectologist A.Gharibyan that very often the pronouns are the indication of clarifying the circumstance of dialects being neighbors to each other.

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ԳՐԱԲԱՐՅԱՆ
ՆԱԽԴՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ
ԱՐԵԻԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԲՆԱԳՐՈՒՄ

Բարսեղյան Վարդուհի

ԵՊՀ ասպիրանտ

varduhy.barseghyan@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-07-3-89

Բանալի բառեր. Արիստակես Լաստիվերցի, գրաբար, նախդրային կառույցներ, թարգմանություն, արևելահայերեն:

Միջնադարյան հայ մատենագրության նշանավոր դեմքերից մեկը՝ Արիստակես Լաստիվերցին, ապրել և ստեղծագործել է տասնմեկերորդ դարում: Նրա կարևորագույն աշխատություններից «Պատմութիւն»-ը նկարագրում է 988-1074 թթ. դեպքերը՝ Բագրատունյաց թագավորության անկումը, սելջուկների Հայաստան ներխուժումը և նրանց ասպատակությունների ժամանակագրությունը: Երկը վերնագրված է «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ վարդապետի վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեւք են»: Աշխատանքը մեզ է հասել գրեթե ամբողջովին՝ տասնյակ ձեռագրերի շնորհիվ: «Պատմութիւն»-ն ունի նախերգանք, 25 գլուխ և վերջաբան («Բան յիշատակարանի»): Յուրաքանչյուր գլուխը նվիրված է ինքնուրույն մի առանձին դրվագի: 1971 թ. վաստակաշատ լեզվաբան, գրաբարագետ Վազգեն Գևորգյանը կատարել է աշխատության արևելահայերեն թարգմանությունը՝ վենետիկյան 1844 թ. և երևանյան 1968 թ. Հրատարակությունների հիման վրա:

Այս հոդվածում զուգադրահամեմատական մեթոդի կիրառմամբ քննել ենք Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն» երկի գրաբար բնագրի նախդրային կառույցների առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց՝ արևելահայերեն թարգմանության յուրահատկությունները:

Նախդիրները նյութական իմաստից զուրկ չթեքվող բառեր են, որոնք արտահայտում են քերականական իմաստ և նյութական իմաստ արտահայտող բառի հետ միասին ձևավորում է նախադասության մեկ ստորադաս անդամ: Գրաբարում նախդիրները լայն կիրառություն և տարածում ունեն: Գրաբարյան հոլովածները իրենց արտահայտած հիմնական իմաստներից բացի ունեն նաև զուգահեռ իմաստներ, որոնք սահմանափակ են և չեն արտահայտում առարկաների միջև եղած բոլոր հարաբերություններն ու կապերը: Իսկ այդ հարաբերու-

¹ Խաչատրյան Գ., Գրաբար, Ե., 2014, էջ 314:

թյունները կարող են արտահատվել ոչ միայն հոլովակերտմամբ, այլև նախդիրների կիրառմամբ: Գրաբարի նախդիրները վեցն են՝ *առ, գ, ընդ, ըստ, ի (յ), ց*

Ձ, ց և ի (յ) նախդիրները մասամբ կորցրել են իրենց բառային անկախությունը, իսկ մյուսները իմաստավորվում են կապակցությունների մեջ՝ կիրառվելով միայն թեք հոլովների հետ՝ նախադաս դիրքով:

Այժմ անցնենք նախդիր առ նախդիր Արիստակես Լաստիվերցու բնագրի գրաբար և արդի արևելահայերեն բնագրերի քննությանը:

Գրաբարյան **առ** նախդիրը կիրառվում է տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ, երբեմն նաև ի նախդրի հետ միաժամանակ: Տրականի հետ գործածվելիս արտահայտում է բազմազան իմաստներ, ինչպես՝ *գործողության տեղը, մոտ լինելը, ուղևորումը*՝ «իսկ զՍմբատ կալեալ տարան առ Գեորգի, զոր հրամայեաց ունել ի պահեստի»՝ «իսկ Սմբատին տարան Գեորգի մոտ, որը հրամայեց նրան պահել հսկողության տակ», «առաքէր առ նմա դեսպանս եւ քաղցրական բանիւք գրէր առ նա»՝ «դեսպաններ ուղարկեց նրա մոտ եւ քաղցր խոսքերով գրեց նրան»:

Հայցական հոլովի հետ այս նախդիրն արտահայտում է.

1. *դեպի, մոտ իմաստները*: Նախդիր կրող բառը ցույց է տալիս այն անձը, առարկան, տեղը, որին ուղղված է գործողությունը, որտեղ կամ որի մոտ կատարվում է գործողությունը՝ «եւ այս յոլովակի լինի առ նոսա»՝ «եւ խեցիներ հաճախ են պատահում նրանց մոտ»: «Վասն որոյ երթեալ ի քաղաքն Թեսաղոնիկեցոց առ կին մի կախարդ»՝ «որա համար նա գնում էր Թեսաղոնիկե քաղաքը, մի կախարդ կնոջ մոտ»:

2. *նպատակ և պատճառ*, որոնք արդի արևելահայերենում թարգմանվում են նպատակով, պատճառով բառերով: «Մինչ զի զգիւղս եւ զագարակս առ բարի նախանձ քահեալ առնէին բնակութիւն կրաւնաւորաց»՝ «մինչ իսկ գյուղերն ու ագարակները, բարի նախանձից մղված, կրոնավորների պես էին բնակվում»: «Եւ զմեծամեծ խոզեանն եղեալ ի գիրկսն առ ի նախատինս մեզ»՝ «ու մեծամեծ խոզեր դրեցին զրկները՝ մեզ նախատելու եւ խայտառակելու համար»:

3. *Տրական հոլովի իմաստ*՝ «Եւ առ արս քաղաքին եւ առ զաւրս խրախոյս տուեալ ասէ»՝ «իսկ քաղաքի մարդկանց ու զորքերին խրախուսելով՝ ասում էր»: «Սմին նման եւ առաքեալն գրէ առ Եբրայեցիսն»՝ «սրա նման եւ առաքյալն է գրում եբրայեցիներին»: «Հարցանէր թէ զինչ է այն անհատ աղաղակն, եւ ուսանէր ի զիտնոցն, թե առ աստուած աղաղակեն»՝ «հարցնում է, թե այդ ի՞նչ անվերջ աղաղակ է, իսկ իմացողները պատասխանում էին, թե Աստծուն են դիմում»:

4. *Վերաբերության իմաստ*՝ «զոր եւ ի հնոցին առ մանկունսն տեսանեմք լեալ»՝ «այդ տեսնում ենք կատարված հնոցում՝ մանուկների հանդեպ»,

Առ նախդիրը գործիական հոլովի հետ արտահայտում է.

1. *տեղ, գործողության շրջակայք*: «Իսկ թագավորն իբրեւ լուաւ, առ ետեղեան չէած ինչ նմա պատուհաս»՝ «թագավորը երբ այս լսեց, տեղում ոչ մի պատիժ չտվեց նրան»:

2. *Ժամանակ*: Որպէս կանոն գործիականով դրվում են ածականները և կամ անձնանիշ գոյականները: «Որպէս ի հինսն առ Բարսղի»՝ «ինչպէս պատմում են հնում, Բարսեղի ժամանակ»:

Առ նախդրով ստեղծվում են նաև դարձվածային արտահայտություններ, որոնք բավականին տարածված են՝ «զի ոտն առ ոտին եղեւ ճշմարիտ մարգարէութիւն խաւարումն նորա»՝ «Կամաց-կամաց ճշմարիտ մարգարէություն դարձավ արեգակի խավարումը»: «Եւ որ ի յամբոցին իշխանն էր՝ դիպաւ ժամու մնացեալ, ի թիւրիլ ասպարին եւ նա զփողիցն հարեալ նետիւ՝ առ ժամայն սատակեաց»՝ «ամբոցի իշխանը, որ հարմար միջոցի էր սպասում, երբ մի կողմ ծովեց վահանը, նետով խփելով նրա կոկորդին՝ տեղնուտեղը սատկացրեց»: Բերված բնագրային նախադասություններից և դրանց թարգմանություններից երևում է, որ բնագրում առ նախդրի կիրառությունները ունեն դեպի, տեղ, մոտ, ժամանակ իմաստները: Երկի աշխարհաբար թարգմանության մեջ այս նախդրի արտահայտած իմաստները թարգմանիչը ստանում է հիմնականում մոտ կապի միջոցով կապական կառույցի ստեղծմամբ՝ պահպանելով դեպի, մոտ իմաստները, ժամանակի իմաստն արտահայտում է ժամանակ կապի միջոցով, իսկ տեղի իմաստն արտահայտելու համար օգտագործում է տեղի մակբայներ, օրինակ՝ տեղնուտեղը:

Զ նախդիրը գործածվում է հայցական, տրական, բացառական և գործիական հոլովների հետ: Նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է հայցական հոլովի իմաստ՝ «Քանզի առատաձեռն էր եւ զանձիք հարուստ, բազում զաւրս ժողովեաց իւր»՝ «քանի որ առատաձեռն էր եւ զանձերով հարուստ, իր համար շատ զորքեր հավաքեց»: *Զ* նախդիրը բացառական հոլովի հետ ձևավորում է գրաբարյան պատմական և պարառական հոլովները: Պատմական հոլովը աշխարհաբար թարգմանվում է սեռական հոլովով և *մասին* կապով կամ միայն բացառական հոլովով՝ «իսկ զերիցանց եւ զկրանաւորաց ո՞ր լսելիք տանին գնորանշան չարիսն»՝ «իսկ երեցների ու կրոնավորների կրած չտեսնված չարչարանքները ո՞ր լսելիքը կարող էտանել»:

Զ նախդիրը գործիական հոլովի հետ արտահայտում է անուղղակի խնդիր, որն աշխարհաբար է թարգմանվում տարբեր հոլովաձեւերով՝ «առեալ զշիշն ի ձեռն եւ հարեալ զձեռամբն, եբեկ զշիշն»՝ «շիշը վերցնելով ձեռքը, ձեռով խփելով կոտրեց»:

Ընդ նախդիրը գործածվում է հայցական, սեռական-տրական, բացառական եւ գործիական հոլովների հետ: Պետք է նկատել, որ նախդիրը հայցական հոլովի հետ կարող է արտահայտել հետևյալ իմաստները՝

1. *անուղղակի խնդիր*: «Բայց ո՛չ գիտեմ որպիսի՛ արհնակաւ անց ընդ նոսա այս ամենայն»՝ «Բայց չգիտեմ, թե այս բոլորը ինչի համար պատահեց նրանց:

2. *միասնության գաղափար*: «Յետ որոյ եկեալ ճակատեցան ընդ միմեանս երկիցս»՝ «նրանք գալով սկսեցին պատերազմել. երկու անգամ ճակատամարտեցին միմյանց դեմ»:

3. *տեղ, որտեղ կատարվում է գործողությունը*: «Որք խոյզ արկեալ ընդ ամենայն սահմանսն՝ զանկելոցն զգլուխսն առաջի թագաւորին բերելով՝ ի մի վայր հավաքէին»՝ «նրանք ամենուրեք որոնելով՝ սպանվածների գլուխները բերեցին թագաւորի առաջ եւ հավաքեցին մի տեղ»:

Ընդ նախդիրը տրական հոլովի հետ արտահայտում է.

1. *միասնության գաղափար*: «Ի գլուխ լերինն բարձրացեալ նախամարգարէին կաճառակից գոլով՝ միշտ ընդ Աստուծոյ խաւսին»՝ «սարի գլուխը բարձրացած նախամարգարէին դասակից դառնալով՝ սրանք միշտ խոսում էին Աստծու հետ»: «Ընդ ամենայնսն ընկալաւ ոգի զաւրութեան եւ մարգարէութեան»՝ «օծման հետ ստացավ մարգարեական ոգի ու գործություն»: «Քանզի եւ զԱնանիա զերեց եղբայրն Խաչկայ յառաջ տարաւ ընդ իւր ներքինի ոմն»՝ «մինչ այս նաեւ Խաչիկի ավագ եղբորը՝ Անանիային էր իր հետ այնտեղ տարել մի ներքինի»:

2. *Վրա իմաստ*՝ «եկ զարմացի՛ր ընդ սուլտանայ անմտութիւնն եւ ընդ Աստուծոյ բազմապատիկ իմաստութիւնն»՝ «եկ զարմացի՛ր Սուլթանի անմտության եւ Աստծու բազմապատիկ իմաստության վրա»:

Ընդ նախդիրը գործիական հոլովի հետ արտահայտում է՝

1. *միջոց, շնորհիվ իմաստները*՝ «...զայն եւ ընդ գրով արկանել չէ ոք բաւական»՝ «ոչ ոք չի կարող նկարագրել»: Սույն դեպքում կարծում ենք, որ ամբողջական իմաստն արտահայտելու համար թարգմանիչը պետք է ավելացներ նաև գրով բառը:

2. *տակ, ներքո իմաստը*՝ «ծածկեցին ընդ ջրովն մինչեւ վճարեցաւ ի կենաց»՝ «ընկղմեցին ջրի տակ եւ պահեցին մինչեւ մեռավ»:

Ընդ նախդիրը ձեւավորում է նաև կցական կառույցներ՝ հանդես գալով որպես մակբայ՝ «եւ ընդ առաջ ընթանան նմա ազատագունդ զարքն Տայոց»՝ «Տայքի ազատագունդ զորքը դիմավորեց նրան»:

Երկի գրաբար բնագրում հանդիպում է նաև *հուպ ընդ հուպ* դարձվածը՝ «եւ ապա հուպ ընդ հուպ զՄիխայիլս զայս յառաջ ածեալ թագաւորեցուցանէ», որը արևելահայերեն բնագրում թարգմանվում է *հետզհետ*՝ «ապա հետզհետե այս Միխայելին առաջ քաշելով՝ թագաւորեցնում է»:

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, *ընդ* նախդրով արտահայտությունները մեծամասամբ արտահայտում են ուղղություն, տեղ, միջոց իմաստները,

հիմնականում թարգմանվում են կապակցություններով, երբեմն՝ հոլովական ձևերով:

Ըստ նախդիրը գործածվում է տրական, բացառական հոլովների հետ: Ըստ նախդիրը տրական հոլովի հետ կարող է գործածվել՝

1. *գործիականի իմաստով*՝ «եւ այնքան բռնացաւ ի վերայ ըստ ուժոյն քաջութեան»՝ «եւ իր ուժով ու քաջությամբ այնքան բռնացավ նրանց վրա»:

2. *Համաձայն, նման իմաստներով*՝ «գայս առնէ ըստ իւր խորին իմաստութեանն»՝ «նա այս կատարեց ըստ իր խորին իմաստության»: «Ձոր ըստ յունական լեզուին պառեկիմանոս անուանեն»՝ «որին հունարեն լեզվով պառեկիմանոս են անվանում»:

Ըստ նախդիրը բացառական հոլովի հետ արտահայտում է հաջորդականության գաղափար՝ «արդ, զի՛նչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել»՝ «այժմ ի՛նչ կարիք կա ինձ մեկառմեկ գրի առնել քրիստոնյաների անկասելի կործանումը»: «Երկիւղ սոցա տազնապեսցուք ար ըստ արե՛»՝ «օրըստօրե պիտի տազնապենք սրանց երկյուղով»:

Արդի արևելահայերենում նախդիրներից ամենակենսունակը եղավ *ըստ* նախդիրը, որը տրականի հետ շարունակում է կազմել գործունակ կառույց՝ ինչ-որ բանի, հիմունքի իմաստով: Սույն երկի աշխարհաբար թարգմանության մեջ ևս նկատում ենք, որ ըստ նախդրով կապակցությունները թարգմանված են հիմնականում հիմունքի իմաստով:

Ի նախդիրը գործածվում է հայցական, տրական և բացառական հոլովների հետ: Նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է.

1. *շարժման ուղղություն*: «Իսկ Ատոմ՝ որդին Սենեքերիմայ առեալ գնա յերաշխիս, ած ի քաղաքն իւր՝ ի Սեբաստապոլիս»՝ «իսկ Սենեքերիմի որդի Ատոմը երաշխավորությամբ վերցնելով նրան՝ բերեց իր Սեբաստապոլիս քաղաքը»: Բերված օրինակում առկա է նաև ի+հայցական կառույց՝ *գործիական հոլովի իմաստով՝ յերաշխիս // երաշխավորությամբ*:

2. *Ժամանակ*՝ «զոր ասեն ի հինսն շինեալ Սամփսոնի»՝ «ասում են, որ այն հնում կառուցել է Սամփսոնը»:

3. *Նպատակի գաղափար*՝ «ոչ եւս ի ներումն եւ յողորմութիւն, այլ ի հատուցումն ատելեաց»՝ «ատելիներին դեռեւս ներել, գթալ չի ուզում, այլ՝ պատուհասել»:

4. *Տրականի իմաստ*՝ «բայց նա ոչ եկն ի զղջումն»՝ «բայց նա չզղջաց»:

Ի նախդրի կիրառությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեծաթիվ են անորոշ դերբայով կառույցները՝ ժամանակի իմաստով՝ «իսկ ի գալ մեծի տանին իջեալ անչափ բազմութեամբ ի յորդախաղաց ջուրն»՝ «տոնի օրը մեծ բազմությամբ գնալով դեպի այն հորդահոս ջուրը,..., կատարվեց օրվա խորհուրդը: «Մեք ի հոլանիլ բարկութեանն եւ ի բորբոքիլ հրատին եւ ի շարժիլ եղեռնաւոր

չարեացն, ահիւ ահաբեկ եղեալ՝ յոյժ գոռոյի հարեալ զարհուրեցաք՝ «մենք բարկությունը հրահրելուց, կրակը բորբոքելուց եւ եղեռնալի աղետները մեզ վրա շարժելուց հետո սաստիկ ահաբեկված ու դողահար զարհուրեցինք»: «Եւ ի գալ միւսում ամին ժողովեցան»՝ «իսկ հաջորդ տարվա սկզբում ... ժողովեցին»:

Ի նախդիրը միշտ հանդես է գալիս բացառական հոլովի կազմության մեջ: Առանց այս նախդիրի չկա բացառական հոլով: Բացառականի հետ գործածվելիս կարող է արտահայտել տեղ, հաճախ նաև ժամանակ՝ «նոյնպէս եւ ի Պարսից եկեալ զարքն ոչ թէ աւարաւ յագենային, այլ անյագ քաղց մերոյ սատակմանն ունէին»՝ «այդպէս էլ Պարսկաստանից եկած գորքերը ոչ թէ հագենում էին ավարով, այլ մեր բնաջնջման անհագուրդ քաղցն ունէին»:

Ի նախդրով ևս կազմվում են դարձվածային արտահայտություններ՝ «բառնալ ի կենաց»՝ վախճանվել, «եւ ես տաց, ասէ, առանց պատերազմի զքաղաքս ի ձեռս նորա»՝ «իսկ ես, -ասում է, - առանց պատերազմի կհանձնեմ նրան իմ այս քաղաքը»: «Զի զմանս ի նոցանէ, որք ի բուռն անկանէին, սրամահ առնէին»՝ «նրանցից ոմանց, որոնց ձեռք էին գցում, սրամահ էին անում»: «Որ մինչեւ ի բուռն եկեալ էր չորացավ»՝ «որը դեռ ձեռք չդիպած չորացավ»:

Ի նախդրով կազմվում են նաև մի շարք մակբայներ՝ «եկեալ ի վերայ քաղաքին՝ խրամատեցին զպարիսպ նորա եւ մտեալ ի ներքս՝ բազում կոտորուածս առնէին»՝ «եւ հարձակվելով քաղաքի վրա՝ պարիսպը քանդեցին ու ներս մտնելով կոտորեցին շատերին»: «Զոր յառաջին թագաւորացն Հայոց ամբարեալ էր ի սպաս պիտոյից տաճարին Տեառն»՝ «որը ամբարել էին հայոց առաջին թագավորները ի սպաս տիրոջ տաճարի կարիքների», «եւ յայնմ արեւ եւ այսր նուաճեցաւ քաղաքն ի ձեռն Հոռոմաց»՝ «այն օրվանից մինչեւ այժմ Ուռհա քաղաքն ընկավ Հոռոմոց ձեռքը»:

Հաճախ այս նախդիրը օգտագործվում է յ-ի հետ՝ կրկնադիր՝ «...ի վերայ պարսպաց նորա կարգելով զառ ի յինքենէ ձեռնադրեալսն»՝ «իր կողմից ձեռնադրված արթուն պահապաններ կանգնեցնելով պարիսպների վրա»: «Եւ ի յերկարել ինդրոյս այսորիկ...»՝ այս ինդիրը երկարաձգվեց: «Ոմանք ի յանկելոցն զքարի հարեալ սատակէին»՝ «նրանցից ոմանք, խփվելով քարի, սպանվել էին»: «Վասն որոյ փախստական եղեալ ի յայգիսն»՝ «դրա համար էլ փախչելով ընկնում էին այգիները»:

Գրաբարում **Յ** նախդիրը, որպես կանոն, գործածվում է միայն հայցական հոլովի հետ և կարող է արտահայտել մինչև մի տեղ, մի ժամանակ, մի աստիճան գաղափար, ինչպես նաև տրականի իմաստ: Լաստիվերցու «Պատմութիւն» երկում այս նախդրով վկայված կապակցություններ չեն գտնվել: Սա կարող է պայմանավորված լինել գրաբարի այս շրջանում **ց** նախդրի գործածությունից աստիճանաբար դուրս մղվելու հետ:

Գրաբարյան վերոնշյալ նախդրային կառույցների ուսումնասիրությունը վկայում է, որ նախդրավոր կապակցությունների իմաստները արևելահայերենում թարգմանվել են հոլովական վերջավորությունների և կապական կառույցների միջոցով՝ պահպանելով նախդրավոր կառույցների իմաստային բազմազանությունը, գրաբարի քերականության նրբիմաստները:

Барсегян Вардуи – Перевод предложных конструкций из древнего труда Аристака Ластивертци «История» на современный армянский язык.- Аристаке Ластивертци был средневековым армянским историком и хронистом. Его наиболее значительный вклад в историографию — это его произведение «История», которое описывает отношения Багратидской Армении с Византийской империей и Грузией, а также разрушительные вторжения сельджуков в 11 веке и преследование христиан сельджуками.

Изучение предложных конструкций в Грабаре показывает, что значения предложных фраз в современном армянском языке были переведены через склонительные окончания и соединительные структуры, что эффективно сохраняет семантическое богатство предложных фраз и нюансы древнеармянской грамматики.

Ключевые слова: Аристаке Ластивертси, Грабар, предложных конструкций, перевод, современный армянский язык.

Barseghyan Varduhi – The Translation of the Prepositional Phrases of Aristakes Lastivertsi's "History" Ancient Work in Modern Armenian. - Aristakes Lastivertsi was a medieval Armenian historian and chronicler. His most significant contribution to historiography was his work "History," which chronicles the relations between Bagratid Armenia, the Byzantine Empire, and Georgia, as well as the devastating Seljuk invasions of the 11th century and the persecution of Christians by the Seljuks.

The study of Grabar prepositional structures shows that the meanings of prepositional phrases in Modern Armenian were translated through declensional endings and conjunctive structures, effectively preserving the semantic richness of prepositional phrases and the nuances of Ancient Armenian grammar.

Keywords: Aristakes Lastivertsi, Grabar, prepositional phrases, translation, Modern Armenian.

НАДПИСИ НА ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ В СИСТЕМЕ ОРНАМЕНТАЛЬНОГО ДЕКОРА ХАЧКАРОВ

Вичкаева Анна Викторовна,

Российская Федерация, МГАХИ им. В.И. Сурикова,

ведущий специалист по сопровождению ЭИОС,

anna_mordvinceva@mail.ru

DOI: 10.54503/978-9939-970-07-3-96

Ключевые слова: хачкар, орнаментальный декор, резьба по камню, текст на древнеармянском языке, искусство Армении, христианское искусство, памятные надписи.

Традиция установки каменных памятных знаков на территории Армянского нагорья уходит своими корнями в исторический период за несколько тысячелетий до нашей эры. Первыми примерами каменного строительства данного типа являются так называемые вишапакары, которые возводились на этих территориях на протяжении II тысячелетия до н.э. Являясь языческими символами, эти памятники обозначали территорию земли, обжитой человеком, указывали на водные источники, пригодные для питья и орошения и тем самым несущие жизнь, украшались соответствующей символикой – изображениями рыб, драконов, головы овна, птиц и т. д.¹

Следующим шагом в развитии искусства каменных стел стали каменные памятники периода Урарту (I тыс. до н. э.). Представляющие собой прямоугольные памятники, они содержат тексты, написанные урартской клинописью, которые расшифровываются, как описание исторических деяний правителей и заметных деятелей того времени. Обычно они освещают факты основания крепостей, строительства дворцов и храмов.

Как повествует Мовсес Хоренаци, еще в дохристианский период при царе Великой Армении Арташесе I в качестве межевых камней возводились каменные стелы по конструкции похожие на более позднее явление - хачкары. Они представляли собой каменные столбики, установленные на заглубленные в землю квадратные каменные основания — предшественники позднейших стилобатов².

После принятия Христианства на территории Армении, следующем этапе эволюции каменных памятных знаков становятся стелы с изображениями святых таких, как например стела из Талина с изображением Богоматери (VII в.),

¹ Нерсисян Л.Р. Хачкары и их смысловые элементы / Л.Р. Нерсисян. // Молодой ученый. – 2019. - № 20. – С. 531-533.

² Мовсес Хоренаци. История Армении. М., Книга по требованию, 2022. С. 405.

погребальные парные стелы из Одзуна (IV – V в.)³ с вырезанными на них образами святых и сложными орнаментами.

По мере распространения Христианского вероучения, в мотивах памятного знака всё чаще встречается изображение креста. Вначале это каменный блок, часто неправильной формы, с простым изображением креста, или вишапакар, который покрывают крестами, стирая следы языческой символики. Затем это так называемый Крылатый Крест, символ Христианства⁴. В дальнейшем (примерно с IX в.) хачкар принимает, совершенно вытесняя форму стелы⁵, тот вид, в котором мы привыкли наблюдать его по настоящее время: каменная плита на стилобате, несколько позже с карнизом, лицевая сторона, сходная по форме с порталом храма⁶, несет на себе изображение креста, христианской символики и, по мере развития камнерезного мастерства, всё более усложняющийся декоративный узор.

Своим повсеместным распространением крестные камни обязаны огромному полю их применения в культуре армянского народа. Известно, что хачкары устанавливались по целому ряду событий частного («в многоденствие»), политического (успешная защита родной земли от вражеского войска, победа в битве), культурного (заложение храма, строительство моста, основание населенного пункта и пр.), хозяйственного (межевой знак) характера, как символ надежды на исполнение земных целей, на вечное спасение и пр. Использовался он и как украшение погребения.⁷ Встречаются хачкары, встроенные в кладку храмовых стен (церкви монастыря Гегард (Айриванк)), а отдельно стоящие памятники зачастую становились святынями (так называемый «сурб» - святыня). Можно увидеть хачкары, стоящие у родников. В таком случае, это место так же является святым.

Художественное убранство хачкаров богато и разнообразно. Оно не повторяется от памятника к памятнику, более того, различается в произведениях и одного мастера. Однако декоративную составляющую можно разделить по некоторым типам иконографии. Самые известные из них – орнамент с поднимающимися от основания креста полумальметами, формы которых постепенно усложняются, причудливо переплетаются и в более поздних памятниках оканчиваются молитвенно воздетыми руками, удерживающими также по кресту.

Вторая известная иконография – тип изображения, когда в нижней части композиции расположена, в позднейших памятниках, богато орнаментированная,

3 Буниатов И.Г., Яралов Ю.С. Архитектура Армении. М., Государственное издательство архитектуры и градостроительства, 1950. С. 19.

4 Якобсон А.Л. Хачкары. Ереван, Айастан, 1986. С. 14.

5 Степанян Н.С. Искусство Армении. М., Советский художник, 1989. С. 45.

6 Якобсон А.Л. Хачкары. Ереван, Айастан, 1986. С. С. 53.

7 Степанян Н.С. Искусство Армении. М., Советский художник, 1989. С. 45.

розетка, символизирующая собой так называемое «зерно» или же «Земную твердь» из которых и произрастает крест.

Так называемая иконография «Голгофа» представляет собой изображение основания креста, стоящим на стилизованном изображении одноименной горы, представляющим в данном случае равнобокую ступенчатую пирамиду.

Самой редкой иконографией является так называемый «Аменапркич» («Всеспаситель»), где изображение креста дополняется сценой распятия, зачастую с окружающими главным изображением фигурами святых, а на хачкаре Айрапета и Ребекки XVII века (нынешнее местонахождение – монастырь Севанаванк) центральная часть окружена изображениями событий из Евангелия (в данном примере – Богоматерь с младенцем Иисусом, Сошествие во Ад). Подобные хачкары считались исцеляющими все болезни, спасающими от всех невзгод.

Крест на каменном монументе, выступая в роли посредника между человеком и Богом, символизирует собой связь нижней части – земной человеческой жизни со скорбями и страстями и верхней -небесной, святой.

Орнаментальное убранство крестных камней очень богато символикой. Так, кроме евангельских символов (солнца и луны, изображения евангелистов и святых) мы встречаем образы, напоминающие нам о том, что крест в композиции хачкара символизирует Древо Жизни: из него произрастают грозди винограда, плоды граната. Встречаются изображения птиц (души праведников), животных, а на памятниках из Арцаха (Нагорного Карабах) изображения людей в бытовых сценах охоты, войны, пира.⁸

По мере развития камнерезного мастерства эволюционирует и фоновый орнамент произведений. Если на ранних хачкарах плоскость, не занятая изображениями, несущими смысловую нагрузку, оставалась кладкой и чистой, то со временем мастера начали украшать ее постепенно усложняющимися декоративными линиями, узорами. Таким образом, мы встречаем памятники, где пространство, помимо центрального креста, заполнено изображением множества крестиков меньшего размера. А в период наивысшего расцвета данной ветви искусства, наблюдаем уже максимально усложненные узоры, словно начертанные одной линией, напоминающие многослойное кружево⁹ (хачкары мастера Момика, монастырь Нораванк - конец XIII века, мастера Погоса, монастырь Гошаванк - 1291 г.)

После периода максимального развития искусства создания хачкаров в XII-XIV вв., начинается постепенный упадок мастерства, связанный со сложностями,

8 Петросян Г.Л. Хачкары / Армяне. М., Наука, 2012. С. 501.

9 Степанян Н.С. Искусство Армении. М., Советский художник, 1989. С. 50.

возникшими на историческом пути армянского народа, в частности с окончательной утратой Арменией государственности. Общий упадок хозяйственной деятельности и культуры приводит к тому, что хачкар постепенно становится только мемориальным памятником, упрощается его исполнение.¹⁰

Важной частью орнамента монумента является текст на древнеармянском языке (грабар). Зачастую, это посвятельная надпись, из которой мы узнаем во имя какого святого, во здравие кого, с какой просьбой к Богу, или в ознаменование какого события возведен конкретный хачкар. Так же из надписей читатель понимает, кто был инициатором возведения памятника, имя мастера и дату его создания. Таким образом они помогают исследователю точнее датировать монумент, относить его к творчеству конкретного мастера или конкретной школы

Подробные надписи об этом часто располагались на передней или задней части хачкара (монастырь Ахпат, «Всеспаситель», 1273 г.) реже на боковых сторонах (он же). В данном примере очень хорошо отражена специфика нанесения текста на древнеармянском языке на каменную поверхность. Так, текст представляет собой богатый, сходный с ажурной вязью узор, ни в чем не уступающий декоративности и сложности исполнения основного орнамента.

Важно упомянуть, что содержательными, с упоминанием исторических событий были не только тексты на хачкарах, но и так называемые «строительные надписи» на стенах храмов, которые спустя столетия читаются, как каменные летописи. Из них можно почерпнуть информацию по чьей инициативе, на чьи средства, по какой причине, во имя какого святого, какими мастерами и когда был возведен тот или иной храм. Так же стены армянских церквей покрыты большим количеством памятных надписей, отражающими политические решения и исторические события того времени.

Отдельно следует упомянуть так называемые благотворительные надписи. Однако многие благотворители хотели, чтобы о них молились, но хотели остаться анонимными, поэтому такие тексты зачастую не содержат имен. Кроме надписей на стенах мы находим небольшие кресты во имя благотворителей, которые достаточно сложно исполнены, похожи на крестные символы на хачкарах, но имеют меньший размер и отсутствие декоративного фона.

Надгробные хачкары несли на себе информацию о почившем, но не только в виде текста, зачастую умерший изображался за привычным ему при жизни занятием или с атрибутами своего ремесла. Большое распространение такая практика получила в памятниках Арцаха (Нагорного Карабаха).

¹⁰ Якобсон А.Л. Хачкары. Ереван, Айастан, 1986. С. 62.

На лицевой стороне крестных камней часто располагается традиционное в иконографии сокращение «ՅՄԲՄ Է ՄԴԱԾ», что читаем как «Иисус Христос Есть Господь Бог». Один из примеров – хачкар из монастыря Ованнованк с Головой Адама. В верхней части над крестом выбито «ՅՄԲՄ» («Иисус Христос»). По сторонам от Головы Адама изображены буквы «Ա» и «Գ» - указание зрителю, что речь идет об «Ադամի գլուխը».

Те же четыре буквы («ՅՄԲՄ») расположены сразу над нимбом распятого Христа в иконографии хачкара «Всеспаситель» из монастыря Ахпат. Сам памятник покрыт с обратной стороны и по боковым граням объемным содержательным текстом.

Подводя итог сказанному, отмечу, что армянский хачкар – уникальное культурное наследие Армении, имеющее очень давнюю историю, трудоемкое и выразительное произведение искусства, несущие на себе след истории и развития армянского народа на протяжении тысячелетий. В иконографии памятника используется огромное количество декоративных элементов, наделенных богатым символическим смыслом: геометрических, растительных, зоо- и антропоморфных. Огромную роль в декоре крестного камня играет текст, который с появлением армянского алфавита широко применяется в каменном зодчестве и позволяет исследователям находить важные подробности исторического пути и культурного развития Армении.

Vichkaeva Anna -Inscriptions in the ancient Armenian language in the system of ornamental decor of khachkars.- The article provides background information on the origin, evolution and development of a unique example of stone carving art – the Armenian khachkar, examines the types of iconography, features of decorative ornamentation of works of art, the most and least common types of composition. The role of texts in ancient Armenian in the artistic decoration of monuments is mentioned, and a parallel is drawn with the application of texts to architectural monuments.

Keywords: khachkar, ornamental decor, stone carving, text in ancient Armenian, Armenian art, Christian art, memorial inscriptions.

Վիչկանա Աննա- Հին հայերեն գրված խաչքարերը դեկորատիվ ձևավորման համակարգում.- Հոդվածում բերվում են ներածական տեղեկություններ քարի փորագրության արվեստի եզակի օրինակի՝ հայկական խաչքարի առաջացման, էվոլյուցիայի և զարգացման վերաբերյալ, ուսումնասիրվում են պատկերագրության տեսակները, արվեստի գործերի դեկորատիվ զարդանախշերի

առանձնահատկությունները, ամենաշատ և քիչ տարածված տեսակները: Հոդվածում նշվում է հին հայերենում տեքստերի դերը հուշարձանների հարդարման գործում, զուգահեռներ են տարվում ճարտարապետական հուշարձանների տեքստերի օգտագործման հետ:

Բանալի բառեր. խաչքար, դեկորատիվ ձևավորում, փորագրություն, հին հայերենով գրված տեքստեր, հայկական մշակույթ, քրիստոնեական մշակույթ, տապանաքարերի գրություններ:

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՀԱԿ ՁՈՐՈՓՈՐԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Գրիգորյան Սուսաննա

Բանասիրական գիտությունների թեկնածու
susannagrigoryan@ysu.am

Պարոնյան Նաիրա

Բանասիրական գիտությունների թեկնածու
ԵՊՀ հայոց լեզվի պատմության և
ընդհանուր լեզվաբանության ամբիոն
nairaparonyan@ysu.am

DOI: 10.54503/978-9939-970-07-3-102

Բանալի բառեր. նորակազմություն, ներլեզվական, ածանցում, բարդություն, բառակազմություն, դավանաբանական, խոսքիմասային պատկանելություն, բառակազմական կադապար:

Սահակ Ձորոփորեցին ծնվել է Գուգարաց նահանգի Ձորոփոր գավառի Արքունաշեն գյուղում: Ծննդյան թվականն անհայտ է, մահացել է 703 թվականին: Նա աշակերտել է Թեոդորոս Քոթենավորին: Կաթողիկոսական աթոռը զբաղեցրել է 677- 703 թթ.: Ս. Ձորոփորեցին գահակալել է արաբաբյուզանդական բախումների ծանր ժամանակներում: Հայրենասեր կաթողիկոսն այս շրջանում մտահոգվել է իր երկրի ու ժողովրդի ճակատագրով, պաշտպանել նրա կենսական շահերը: Եվ այդ պատճառով էլ Հուստինիանոս Բ-ի հայկական արշավանքից հետո մի քանի տարով Կ. Պոլիս պատանդ է տարվել՝ հայ եկեղեցուն և իրեն՝ կաթողիկոսին, քաղկեդոնականություն պարտադրելու նպատակով: Հուստինիանոսի գահընկեցությունից հետո Ս. Ձորոփորեցին վերադարձել է հայրենիք և շարունակել գահակալությունը: 702 թ. նա շրթայակապ Դամասկոս է ուղարկվել Աբդալլահ արաբ ոստիկանի հրամանով: Իսկ երբ ապստամբ հայ իշխանները 703 թ. ջարդել են Աբդալլահի ջոկատը, Ս. Ձորոփորեցին մեկնել է Խառան՝ կանխելու զորավար Մուհամմադ Օլբայի պատժիչ արշավանքը դեպի Հայաստան: Մեծ զայրույթով ու հսկայական բանակով դեպի Հայաստան արշավող արաբ զորավարն անշնչացած կաթողիկոսի ձեռքից վերցրել է նախօրոք պատրաստված աղերսագիրն ու մեղմացած ետ դարձել¹:

Ձորոփորեցու անունով հայտնի են եկեղեցական կանոններ, շարականներ, մեկ թուղթ և մեկ ճառ: Սույն հոդվածում մենք անդրադարձել ենք Ձորոփորեցու ճառում («Յարմաւենեացն ար, որ է Ղոգումեան») և կանոններում («Կանոնք վերջնոյ Սահակայ կաթողիկոսի») տեղ գտած նորակազմություններին, դրանց

¹ Տե՛ս Ն. Թահմիզյան, Սահակ Ձորոփորեցին և Խաչի ու Եկեղեցու շարականները, «Էջմիածին», 1980, ԺԱ, էջ 37:

բառակազմական կաղապարների գործառնական հնարավորություններին, կազմության եղանակներին: Նրա երկերից քաղված բառերից հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք արձանագրված չեն գրաբարյան բառարաններում կամ վկայված են որպես հեղինակային առաջին օրինակ: Ըստ անհրաժեշտության դիմելով հայերենի բառակազմական գործող օրինաչափություններին՝ Ս. Չորոփորեցին ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ՝ դրանով իսկ հարստացնելով ոչ միայն իր երկերի, այլև մեր լեզվի բառային կազմը: Հետևապես նրա կանոններն ու ճառերը արժեքավոր են ոչ միայն դավանաբանական տեսանկյունից, այլ նաև բանասիրական:

Սույն հետազոտությունը կատարելիս մենք օգտվել ենք վերոնշյալ գործերի՝ «Մատենագիրք Հայոց»-ում ներկայացված բնագրից²: Առանձնահատուկ են այստեղ գործածված նորաբառերն իրենց բազմազան դրսևորումներով և խորիմաստ բաղադրություններով, որոնք պայմանավորում են խոսքի մեջ ճիշտ բառընտրությունն ու բառագործածությունը: Ըստ մեր հաշվումների՝ Ս. Չորոփորեցու գործերում տեղ են գտել մոտ յոթանասուն նոր բառեր՝ ի համեմատություն գրաբարի հայտնի բառարանների³: Մեր ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նորակազմությունների առյուծի բաժինն այն բառերն ու բառաձևերն են, որոնք վերոնշյալ բառարաններից մեկում արձանագրված են որպես Չորոփորեցի հեղինակի կողմից առաջին անգամ գործածվող⁴: Նշված նորակազմությունների մեծ մասն արձանագրված է ՆՀԲ-ում: Բերենք օրինակներ. **հոգենուագ՝ հոգու ներշնչանքով նվազվող**. «... ըստ **հոգենուագ** երաժշտապետին Դալթայ, էլանէ ի գործ իւր եւ ի վաստակս ձեռաց իւրոց» (1287): **Բազմանուագ՝ ներդաշնակ, ծովածին՝ ծովից ծնված**. «Եւ **ծովածին** կենասերք **երամակողղղի** լսելով **երամապետիցն**, ի ձմեռնային եւ ի միջնաշխարհի կայարանացն **երամախմբեալք՝ ի մերոյին** ժամանելով գետին, լրացուցանեն գերկիր եւ զջուրս եւ **բազմանուագ** ձայնիւք զգանազանութիւն **երազաձեւ**

² Տե՛ս Մատենագիրք Հայոց, Ե. հատոր, Է. դար, Անթիլիաս- Լիբանան, 2005, էջ 1287-1292 :

³ Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, 1979 (այսուհետ՝ ՆՀԲ): Մ. Աւգերեան, Գր. Ճելալեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետ՝ ԱԲ): Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Ե., 2000 (այսուհետ՝ ԳԲ): Լ. Յովհաննիսեան, Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր, Ե., 2010 (այսուհետ՝ ՉԲ): Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Նորայայտ բառեր գրաբարում, Ե., 2007 (այսուհետ՝ ՆԲԳ): Լ. Խաչատրեան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003 (այսուհետ՝ ԳԲԲ):

⁴ Վ. Համբարձումյանը, ուսումնասիրելով Ս. Չորոփորեցու երկերի բառապաշարը, առանձնացրել է բազմաթիվ նորաբառեր, որոնք օգտագործել է հեղինակն իր լեզվում: Մակայն իր ուսումնասիրության շրջանակում նորաբառերի բառակազմությանը նա ուշադրություն չի դարձրել: Մեր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են ևս քսան նոր բառեր մեր կողմից, որոնք լրացնում են նախորդ ցանկը: Մենք մանրամասն ուսումնասիրել ենք դրանք՝ ներկայացնելով նաև բնագրային համապատասխան օրինակներ, ինչը նոր լույս է սփռում Ս. Չորոփորեցու լեզվական հարստության և ստեղծագործական մտածողության վրա (տե՛ս Վ. Համբարձումյան, Սահակ Չորոփորեցի կաթողիկոսի երկերի բառապաշարը, Էջմիածին, 2021, հ. Է, էջ 121-130):

տեսակաց ...»⁵ (1287): *Անառագաստ՝ անսրող, սերկեան՝ այսօր, այսօրվա*. «Իսկ մեծն մարգարեից Ջաքարիաս բացափայլ եւ *անառագաստ գսերկեան* արարչաբար հրաշագործութիւն փողեալ ճառեաց...» (1290): *Համախնդրութիւն՝* խնդակցություն. «...եւ հասարակաց *համախնդրեամբ* լծորդելով առաքելական գրոց ի *տիեզերատաւնակ* աուրս համաշխարհական խմբեալ բարեբանումն»(1288): ԱՁ-ում արձանագրված բառերը սակավաթիվ են, և մենք հստակորեն չենք կարող պնդել, որ դրանք առաջին անգամ գործածված են Ս. Չորոփորեցու կողմից, քանի որ, ինչպես հայտնի է, սույն բառարանում բացակայում են բնագրային վկայությունները: Բերենք օրինակներ՝ *երկնաբիր՝ բյուրավոր*. «...բերկրաբերձ եւ սուկալի բոլոր բանակաց *երկնաբիրաց* փառաբանողաց պանծացուցանելի» (1287): Երկու նորակազմ բառ արձանագրված են Հ. Ավետիսյանի և Ռ. Ղազարյանի «Նորայայտ բառեր գրաբարում» բառարանում. *երաժշտականել՝ երաժշտի նման քաղցր երգել*. «...*երաժշտականեալ* փողեն զաուրս վայելչութիւն» (1287): *Պանծացուցանելի՝ փառաբանման արժանի*. «...բերկրաբերձ եւ սուկալի բոլոր բանակաց երկնաբիրաց փառաբանողաց *պանծացուցանելի*» (1287): *Շնորհաբարձ՝* շնորհքով բարձրացած. «... եւ *շնորհաբարձ* բախտին վերամբարձան քան զմարդկային բնութիւնս...»(1288): *Հոլել՝* ժողովել. «...Եւ գազանացն եւ էրեոցն քառահետեւ շարժմունք, *հոլեալք* եւ երամացեալք՝ ի չարից եւ յանտառաց նորածին ծաղկանց ճոխացուցանեն զորովայնս...» (1287): *Աստուածախոստ՝ ուխտադիր*. «...եւ զիր ճշմարիտ արարչական անուն հրամայեաց *աստուածախոստ* բարեբանել ճշմարտափառութեամբ» (1291): *Նորունի՝ նոր ձևով*. «Իսկ ածել զկենդանիսն եւ զյաւանակ *նորունի*՝ զնորայաւատիցն, որ ի Հրէից եւ ի հեթանոսաց ժողովրդենէ ասէ...» (1291):

Ս. Չորոփորեցու կողմից շրջանառության մեջ են դրված հայերենի բառաբարդման և ածանցման անսպառ հնարավորությունները՝ կազմելու համար այնպիսի նորաբառեր, որոնց մեծ մասը կարող է հաստատել իր իրավունքը՝ որպես մեր լեզվին ոչ օտար, օրինաչափ և նպատակային: Դրանք ստեղծվել են ներլեզվական օրինաչափությունների պահպանումով, ունեն հստակ նշանակություն, բարեհունչ են, չեն հակասում հայերենի բառակազմության օրինաչափություններին և հնարավոր է՝ ձեռք բերեն գործածության ավելի լայն շրջանակ:

⁵ Սա այն եզակի նախադասություններից է, որտեղ հեղինակը գործածում է յոթ նորաբառեր, որոնցից ծովածին-ն ու բազմանուագ-ը մեր բառացանկից է, իսկ երամակուղղի, երամապետ, երամախմբեալ, մերոյին, երագաձեւ բառերը՝ Վ. Համբարձումյանի բառացանկից: Վերջինները նախադասություններում բերված են թեք, բայց ոչ մզացված ձևով:

⁶ ԱՁ-ում այս բառն արձանագրված է հենց «երկնաբիր բանակ» կապակցությամբ, որից հասկանալի է դառնում, որ վկայված է Ս. Չորոփորեցու երկից:

⁷ Այս բառն արձանագրված չէ ո՛չ ՆՀԲ-ում, ո՛չ ԱՁ-ում, ո՛չ ԳԲ-ում, ո՛չ ՆԲԳ -ում, ո՛չ ՉԲ -ում և ո՛չ էլ ԳԲԲ -ում:

Բաղադրյալ բառերը ներկայացրել ենք երկու տիպով՝ հոդակապով և անհոդակապ բարդություններ, որոնցից հաճախված է առաջինը, իսկ անհոդակապ բարդությունները փոքրաթիվ են:

Կրկնությունից խուսափելու համար դրանք խմբավորել ենք ըստ բարդությունների բաղադրիչների խոսքիմասային արտահայտության՝ ա) **գոյական+ գոյական**՝ *երագաձեւ* (1287), *հոգենուազ* (1287), բ) **գոյական + բայ**՝ *առագաստափար* (1287), *աստուածախոստ* (1290), *բազմանուազ* (1287), *լծորդածին* (1289), *ծովածին* (1287), *շնորհաբարձ* (1288), *ոլորտածաւալ* (1287), *տիեզերագով* (1290), գ) **գոյական + ածական**՝ *երկնաբիր* (1287), դ) **ածական + գոյական**՝ *բազմանուազ* (1287), *հասարակահոլով* (1287), ե) **ածական + ածական**՝ *բարեբանակից* (1288), *բերկրաբերձ* (1287), *մաքրափայլ* (1287), *մակբայ + գոյական*՝ *յաւետաձեւ* (1287), *թվական + գոյական*՝ *քառահետեւ* (1287):

Նորակազմ բառերի մէջ ըստ խոսքիմասային պատկանելութեան գերակշռում են ածականները՝ *երկնաբիր*՝ *բյուրավոր* (1287), *անբուժական*՝ *անբժշկելի* (1290), *աստուածախոստ*՝ *ուխտադիր* (1291), *անառագաստ*՝ *անսքող* (1290), *ծովածին*՝ *ծովից ծնված* (1287), *հոգենուազ*՝ *հոգու ներշնչումով նվազվող* (1287), *նախապատմելի*՝ *գերադասելի* (1288), *նորունի*՝ *նոր* (1291), *շնորհաբարձ*՝ *շնորհքով բարձրացած* (1288) *վարսաւոր*՝ *առատավարս* (1290) և այլն: Քանակով զիջում են գոյականները՝ *համախնդրին*՝ *խնդակցութիւն*, (1288) *երամակուղիդ*՝ *երամակի առաջնորդ* (1287), *երամապետ*՝ *պարագլուխ* (1287), եւ բայերը՝ *երաժշտականել*՝ *երաժշտի նման քաղցր երգել* (1287), *լրացուցանել*՝ 1. *լրացնել, լցնել*, 2. *հազեցնել* (1287), *համատնօրինել*՝ *ուրիշի նման տնօրինել* (1289), *հոլել*՝ *ժողովել* (1287), *հոլաթեւել*՝ *թեւերը տարածել* (1287), *հրաշացուցանել*՝ *հիացնել* (1287), *նմանաբերել*՝ *օրինակել* (1290), *նկարակերտել*՝ *գունավորել, զարդանկարել* (1287):

Ինչպէս հայտնի է, գրաբարի բառակազմության երկրորդ եղանակն ածանցումն է, որի հիմնական կաղապարը մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթի, այսինքն՝ ածանցի բաղադրությունն է: Ս. Չորովորեցին գործածում է ինչպէս նախածանցներ, այնպէս էլ վերջածանցներ, որոնցով կազմված նորաբանություններում մեծանում է ածանցի հատկանշային իմաստը: Քանակով խիստ զիջում են նախածանցավոր նորակազմությունները, որոնցից են՝ *ան*՝ *անառագաստ* (1290), *անբուժական* (1289), *համ*՝ *համագոյապէս* (1287), *համախնդրին* (1288), *համատնօրինել* (1290), *նախ*՝ *նախագուշակել* (1292), *նախաճառել* (1290), *նախապատմելի* (1288): Վերջածանցավոր նորակազմ բառերի մէջ առանձնանում են հետևյալ ածանցները՝ *-արար*՝ *աստուածարանարար* (1287), *բժշկապետարար* (1291), *գործակցարար* (1292), *մարգարէարար* (1292), *որդէգրարար* (1290), *-ական*՝ *բարեխառնական* (1287), *հողագործական* (1287), *սերմանական* (1287), *-աւոր*՝ *վարսաւոր* (1290), *-եալ*՝ *երամախմբեալ* (1287), *սաւառնագարդեալ* (1287), *-եան*՝

սերկեան (1288), -ի՝ պանծացուցանելի (1287), -**ութիւն՝** բարեբանակցութիւն (1287), ճշմարտափաստութիւն (1291), մարմնաւորութիւն (1292), մեծափաստութիւն (1287), սգաւորութիւն (1287), սրակնութիւն (1288), սրամահութիւն (1288), տիեզերապետութիւն (1289), -**ունի՝** նորունի (1290):

Ս. Չորոփորեցու երկում մեծաբանակ են նաև բարդածանցավոր նորաբաները, որոնք ունեն *արմատ+արմատ+վերջածանց* կաղապարը. **աստուածաբանաբար** (1288), **բարեբանակցութիւն** (1287), **բարեխառնական** (1287), **գործակցաբար** (1292), **երամախմբեալ** (1287), **տնկածոյ** (1287), **պտղածնող** (1287), **հողագործական** (1287), **ճշմարտափաստութիւն** (1290), **նաւուղղակ** (1287), **մեծափաստութիւն** (1287), **տիեզերաստօնակ** (1288), **տիեզերապետութիւն** (1289), **սրամահութիւն** (1288):

Սյսիպիսով, Ս. Չորոփորեցու «Յարմաւենեացն ար, որ է Ղոգոմեան» ճանի և կանոնների քննությունը ցույց տվեց, որ նա, օգտագործելով հայերենի բառակազմական բոլոր միջոցները, ստեղծել է մոտ յոթանասուն նորաբաներ, որոնցով համալրել ու հարստացրել է հայերենի բառապաշարը:

Сусанна Григорян, Наира Паронян.- Неологизмы в сочинениях Саака Дзоропореци.- Саак Дзоропореци развивал широкую летописную деятельность. Он сочинял тирады, богословские труды. Его сочинения представляют особый интерес в языковом значении. Эти сочинения отличаются своими теологическими, художественными достоинствами. Представляемая статья посвящена изучению более 70 слов, которые не имеются в больших толковых словарях древнеармянского языка. Автор мастерски использовал весь богатый лексический состав нашего языка, а также, по мере необходимости, словообразовательные возможности армянского языка, создавая новые слова, обогащая тем самым язык собственныѳ произведений и состав литературного языка. Очень немногочисленны префиксально – суффиксальные неологизмы, которые в основном, благозвучны и образованы соответственно законам и закономерностям словообразовательной традиции армянского языка.

Ключевые слова: неологизм, внутрилингвистический, существительное, деривация, сложное слово, словообразование, профессиональность, частеречная принадлежность, словообразовательный модель.

Susanna Grigoryan, Naira Paronyan.- Neologisms in Sahak Dzoroporetsi's works .- Sahak Dzoroporetsi had a great role in the literary history of the Armenian church. He wrote tirades and theological works. Sahak Dzoroporetsi's works are of special interest from the linguistic point of view. These works are unique in their theological, literary merits. The present article is devoted to the study of more than 70 words, which are not present in the voluminous dictionaries of Old Armenian. The author masterly used the whole rich vocabulary of our language, he also made use of the

opportunities of Armenian word-formation, creating new words and word-combinations and did it in such a way that he could enrich not only the language of his works, but also our literary language. There are few prefixal - suffixal neologisms which are in general euphonious and are formed according to the rules and regularities of the tradition of the Armenian word-formation.

Key words: neologism, intralinguistic, noun, derivation, compound, word-formation, denominational, part of speech belonging, word-formation pattern.

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ
ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ» ԱՄԱՌԱՆ ՀՏՏՈՐԻ «ՆՈՐԻՆ ՔԱՐՈԶ ՎԱՍՆ
ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ ՕՐԷՆՍ» ԳԼՈՒԽՆԵՐՈՒՄ

Գրիգորյան Սուսաննա

բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող
Susanna7494@gmail.com
DOI: 10.54503/978-9939-970-07-3-108

Բանալի բառեր. Յանձնառական օրենքներ, արգելական օրենքներ, քաղաքացիական օրենքներից, սուտ վկայություն, անիրաւ սպանություններ, ձիագող, հարկաւորություն:

Մինչ 14-15-րդ դարերը, այսինքն մինչ Գրիգոր Տաթևացու ապրած ժամանակաշրջանը և մասնավորապես մինչ նրա «Գիրք քարոզութեան» Ամառան և Ձմեռան հատորները գրելը, «Կանոնագիրք Հայոց»-ը 57 (54) գլուխներում արդեն իսկ հավաքել և խստագույն հետևողականությամբ կանոնակարգել էր **Առաքելական, տիեզերական երեք ժողովների՝** (Նիկիոյ, Եփեսոսի, Կ.Պոլսի), **Սուրբ հայրերի** (Բարսեղ Կեսարացի, Եփրեմ Խորի Ասորի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Մակար Երուսաղեմցի, Եպիփան Կիպրացի), ապա՝ Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև, Հովհան Մանդակունի, Շահապիվանի, Աղուանից Վաչագան թագավորի **և այլոց կողմից հաստատված կանոնները**, որոնք ներառում էին հոգևոր և հասարակակն կյանքի գրեթե բոլոր ոլորտները, որոնց պահպանության երաշխավորները և՛ եկեղեցին էր, և՛ պետությունը: Ընդ որում յուրաքանչյուր կանոն մի քանի նախադասությամբ մի ամբողջ ոլորտ էր համակարգում, որոնք համալրվում էին խիստ զգուշությամբ, իսկ եկեղեցական արարողակարգերի առումով՝ մնում գրեթե անփոփոխ: Այսպես օրինակ, «Կանոնք առաքելականք»-ը, ինչով սկսում է Կանոնագիրքը, կարգ է սահմանել, որ եկեղեցում բեմում ընթերցվեն Հին և Նոր կտակարանները, մարգարեների, առաքյալների գործերը. «Կարգեցին առաքեալք և եղին հաստատութեամբ, թե՛ յեկեղեցուջ գիրք ընթերցցեն **Հին կտակարանք, օրենք և Մարգարեք և Նոր կտակարանք**, որ լինիցին վասն կենարար չարչարանաց Փրկչին մերոյ Քրիստոսի և **գործք և խօսք աւետարանչացն քարոզութեան** վասն բանին ճշմարտութեան և վարդապետութեան աշակերտացն Փրկչին, **և ո՛չ աւելի քան զայս՝ մի ընթերցցի ի բեմի**», որ մինչ օրս չի փոխվել և հաստատապես գործում է Հայոց եկեղեցում:

Դարերի միջով անընդհատ փոխանցվել են նաև Նիկիական կանոնները՝ ուրացողի, մեղանչողի, յափշտակողի, հերձվածողի, քահանայի վերաբերյալ: Նույն

¹ Կանոնագիրք Հայոց, աշխ-մբ Վ.Հակոբյանի, Ե., 1964, էջ 46:

հետևողականությամբ փոխանցվել են նաև բարոյական նորմերը, որոնց մասին Սահակ Պարթևի կանոնների ԺԲ կետում կարդում ենք. «Եղիցի մեզ ամենեցուն խոյս տալ և փախչել ի չարէն և արդարութեան լինել հետամուտ յամենայն ժամ ի հաճոյս Աստծոյ ծախել զկեանսն մեր, զի անձանց և այլոց բազմաց լինիմք առիթ փրկութեան և բաւական եղիցուք համարձակելով ասել. «Ահաւասիկ ես և մանկունք իմ, գոր ետ ինձ Աստուած»:

Եվ պատահական չէ, որ Գրիգոր Լուսավորչի («Կանոնք Գրիգոր Լուսավորչի») 30 կանոններից 20-րդը, որը գրում է. «ո՛չ հրամայեն կանոնք անապատականաց մկրտութիւն առնել և օրէնս տալ ժողովրդեան կամ պսակ դնել, զի այս գործ առաջնորդաց է» դարձել է Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի «Վասն քահանայութեան» երեք գլուխների հիմնակետերից մեկը:

Հետևաբար, ինչպես արդեն կայացած իրականություն էին քրիստոնեությունը և նրա դավանաբանական սկզբունքները, այդպես էլ մեծապես մշակված էին հասարակության համար վարքագծի կանոններ:

Սակայն ի՞նչ չափով էին դրանք գործում հասարակության մեջ: Արդյո՞ք կային խնդիրներ դրանց ներդրման ճանապարհին: Կային իհարկե, որոնց մասին վկայում են բազմաթիվ արգելական բնույթի դրույթների առկայությունը Կանոնագրքում, հետագայում նաև ֆիզիկական պատժամիջոցների ավելացումը: Սակայն սրանք բավարար չէին. անհրաժեշտ էր նաև խոսել ժողովրդի լեզվով, և այդ կանոնները դարձնել ցանկալի և կատարման ենթակա: Եվ այդ միջոցը ժամանակաշրջանի համար կենդանի քարոզն էր, իսկ Գրիգոր Տաթևացին իր օրերում մնում էր իբրև չգերազանցված քարոզիչ: Սա էր «Գիրք քարոզութեան» Ամառան և Ձմեռան հատորները գրելու անհրաժեշտության և դրանք գրելու նպատակի բացատրությունը:

Քարոզգրքերի Ամառան հատորը Հայոց եկեղեցու ամառային ժամանակաշրջանի տաղավար տօների վերլուծությունն է՝ քարոզների տեսքով, իսկ Ձմեռան հատորը՝ ձմեռային ժամանակաշրջանի, այսինքն սրանք Հայոց եկեղեցու բոլոր տաղավար տօների համապարփակ մեկնություն են, որ ի սկզբանե կարդացվել են իբրև քարոզներ, ապա հեղինակի կողմից գրի առնվել: Հայոց եկեղեցու տաղավար տօների քարոզների գիրքը հեղինակը սակայն սկսում է «Նորին քարոզ վասն տասնաբանեան օրէնս» խորագրից և առաջին երեք գլխում կատարում Տասնաբանեան օրէնքի վերլուծություն, որը և միջնադարյան բոլոր իրավական փաստաթղթերի հիմքում է, այդ թվում նաև՝ Հայոց կանոնագրքի: Սրանով հեղինակը անուղղակիորեն հուշում է, որ հիրավի **ինքը քարոզգրքով կամուրջ է գցում Տասնաբանեան օրէնքների կամ Սուրբ գրքի պատվիրանների, Հայոց կանոնագրքի և**

² Նույն տեղում, էջ 375:

³ Նույն տեղում, էջ 247:

հասարակության միջև: Այսինքն սա մի փորձ էր ժողովրդի սեփականությունը դարձնելու հայրերի ստեղծածը, որի համար, արդեն դժվար էր սեպել կանոնագրքի հանձնարարականները: Այս առումով, տասնյակ իրավական հասկացությունները, որոնք տեղ են գտել «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի «Նորին քարոզ վասն տասնաբանեան օրէնս» միայն երեք գլխում, գործածված են իրավական հասկացության բոլոր չափանիշներով: Այսինքն՝ շարադրանքի էջերում դրանք տրվում են նախ բառարանային բացատրությամբ և հասկացության վերլուծությամբ: Ասենք, վերլուծելով «մի՛ սպանիր» պատվիրանը՝ հեղինակը նախ բերում է «սպանել» բառի ընդհանրական բացատրությունը («իսկ [մարդասպանը] մահուան և ոչ գոյութեան փոխեց (մարդու կեանքը)», այսուհետ թարգմ.՝ Ս. Գրիգորյանի), ապա բերում սպանության դրդապատճառները, որոնք ըստ հեղինակի երեքն են, ատելությունը, վրեժխնդրությունը և ազահությունը, հետո անցնում սպանության տեսակների և ծանր հետևանքների նկարագրությանը:

«Եւ որ ասում է «մի՛ սպանիր», [դրանով] արգելում է բոլոր **անիրավ սպանությունները**: Իսկ անիրավ սպանությունները երեք տեսակ են: Առաջինը, որ սպանում է առանց **մեղքի [ատկայության]**, որը մահվան արժանի չէր: Երրորդ, որ սպանում է այնպիսի մարդու, որը իշխանություն չունի, օրինակ, **օրենքի սպասավորը**: Երրորդ, եթե իշխանավորի է սպանում, սակայն ոչ թէ **վրեժխնդիր լինելով** Աստծոյ օրենքներին, այլ **հիվանդագին դրդապատճառով**, որ անիրավ սպանություն է, իսկ [սպանողը] **արյունապարտ** է: Եւ միայն սրանք չեն մարդասպանության տեսակները, այլև մարդասպանություն են համարվում հետևյալ արարքները: Նախ, որ տեսնում է մեկին ծայրահեղ աղքատության մեջ, կամ հոգևոր և մարմնավոր մեծ նեղության մեջ, սակայն զանց է առնում և չի օգնում, մարդասպան է, որովհետև ընկերոջը բարություն չարեց: Երկրորդը, որ չարացած՝ մտքում ատում է ընկերոջը [դարձյալ] մարդասպան է, ըստ այնմ, որ ասվում է. «ով ատում է իր եղբորը, մարդասպան է»: Երրորդը, ով բամբասում է բերանով կամ չարախոսում, կամ մատնում՝ [դարձյալ] մարդասպան է, և թագավորը կամ իշխանը դահիճներին հրաման են տալիս քարկոծել կամ **խեղդամահ անել**: Նույնպէս և նրանք, որ մատնությամբ սպանել են տալիս, **կամ իշխում ինչքը**, քանի որ ինչքը մարդու արյուն-քրտինքով է ժողովված...: Կամ երբ **խլում են ունեցվածքը**, սովից մեռնում են: **Սրանք էլ հայնտապէս մարդասպան են**: Չորրորդ, և նրանք, ովքեր գործով չար օրինակ են դառնում այլոց համար և կորստյան պատճառ՝ մեղքի մեջ թաղվելով կամ փափկանալով, կամ էլ՝ խաբելով, [դարձյալ] մարդասպան են համարւում»:

⁴ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 20:

⁵ Նույն տեղում, էջ 21:

Նկատենք, որ միայն այս հատվածում գործածված են տասնյակից ավել իրավական հասկացություններ:

Առանձին խոսում է ինքնասպանության մասին, որ «ավելի մեծ մեղք է, քանի ուրիշի սպանությունը [որովհետև]՝ կենդանի մնալով, հետո կարող էր ապաշխարությամբ արդարանալ Երկրորդ, որ ուրիշին է սպանում, դառնում է նրա թշնամին ու հակառակորդը, իսկ ինքնասպանը Աստծոյ հակառակորդն է [դառնում], քանի որ Աստծունն է մարմինը կապելը և արձակելը»⁶:

Երկրորդ քայլով հեղինակը փորձում է Տասնաբանյանի պատվիրանները և Կանոնագրքի կանոնները տեղայնացնել հասարական կյանքում՝ դրա առավելագույնս կողմերի ներառումով, մի բան, որ դարձյալ հավաստում է, որ քարոզգրքերն ընդհանրապես և գրքի առաջին երեք գլուխները մասնավորապես տասնաբանյան օրենքներին և Կանոնագրքին հասարակական հնչեղություն հաղորդելն էր:

Բերենք Տասնաբանյայի յոթերորդ պատուիրանի հեղինակի մեկնաբանությունը. «Մի՛ շնացիր» - Տասնաբանեայի եօթերորդ նախադասությունը, որ ասում է. «Մի՛ շնացիր», սա ինչ-որ փոքր **զանցանք չէ**, այլ մահու չափ մեղքերից մեկը՝ բղջախոհությունը, որ մարմնի վավաշոտ չարչարումն է՝ առաջ եկած պիղծ ցանկությունից, որ օրենքն այժմ **արգելում է՝** ասելով «Մի՛ շնացիր», որովհետև սրանից բազմաթիվ մարմնական վնասներ են առաջ գալիս: Նախ առաջին՝ թուլացնում է հոգու պնդությունը, և ամեն գործում մարդուն դարձնում ծուլ և անարի: Երկրորդ՝ պղծում է մարմինը, ըստ առաքյալի՝ «ով պոռնկանում է, մեղանչում է մարմնով»: Երրորդ՝ հիմարեցնում է միտքը և դարձնում վայրենաբարո, ինչպես հարբեցողը, այդպես էլ՝ շնացողը...: Հինգերորդ, **կուսապղծություն** է, որ ապականում է կույսին: Վեցերորդը, Աստծո նվիրելաների սրբապղծությունը, որով կորցնում են ողջախոհությունը, նրանք, ովքեր իրենց Աստծուն են նուիրել, ինչպես կրոնավորները, ապաշխարողները և այլն, և որքան բարձր է աստիճանը, այնքան ծանրագույն է մեղքը: Յոթերորդը, ազգապղծությունն է՝ թե արյունակցական, թե՛ խնամիական, և թե՛ հոգևոր: Ութերորդ շնությունը սրտի՝ աչքի մեղանչելն է, ականջի և լեզվի միջոցով թյուրելը և զարշանալը աղտեղության մեջ»⁷:

Նկատենք, որ հեղինակն առանձնակի խստությամբ է խոսում նաև հոգևոր դասի մասին, որի մեղքը բնութագրում է որպես «ծանրագույն»:

Հաջորդ պատվիրանների մեկնությունը շարունակվում է նույն ոգով. մի կողմից իրավական հասկացության ամրագրում, մյուս կողմից մատչելի բացատրություններ և օրինակներ, որոնք անշուշտ պետք է հետաքրքրեին ունկնդրին: Ասենք, չորրորդ պատվիրանի մասին խոսելիս՝ «**Պատուի՛ր շարաթ օրը**», հեղինակը նախ հիշեցնում է, որ Տասնաբանյանը գրվել է Հին օրենքում, ուստի պատվիրանի

⁶ Նույն տեղում, էջ 20:

⁷ Նույն տեղում, էջ 23:

շաբաթը Նորում փոխարինվել է կիրակիով: Իսկ հանձնարարականի պատճառներից մեկը հեղինակը բացատրում է իսրայելցի ժողովրդի դաժանությամբ. «Իսրայելացիները դաժան և անողորմ էին, որի պատճառով կարգադրեց հանգստանալ, որպեսզի ծառան, աղախինը, վարձկանը, եզր, էշը և ամեն ինչ, որ աշխատում են, հանգիստ առնեն... գոնե մեկ օրը դադարեն և տեսնեն [Աստծոյ] արարչագործությունները՝ ի փառս Աստծո, ընկալեն Արարչին և գոհանալով օրհնեն Արարչին բոլորի»⁸:

Իսկ ընդհանրապես պատվիրանի անհրաժեշտությունը բացատրում է՝ շեշտը դնելով օրենքի հետապնդող նպատակի՝ **կարգավորման անհրաժեշտության վրա**, որ հանգիստ առնեն և՛ աշխատավորը, և՛ հողը, և՛ բանող կենդանին:

Եվ քանի որ այս առաջին հինգ օրենքները ընդհանրական բնույթ են կրում և հանձնարարականներով ավելի մոտ են պատվիրաններին («Ես եմ Տեր Աստված քո, և քեզ կուռքեր մի՛ պատրաստի, և թող չլինեն այլ աստվածներ, բացի ինձանից». «Քեզ կուռքեր մի՛ սարքիր և ո՛չ երկնքի և երկրի նմանությամբ». «Աստծո անունն անտեղի մի՛ տուր». «Չորրորդը, որ ասում է «պատվի՛ր շաբաթ օրը». Օրենքի հինգերորդ խօսքը. «Պատուի՛ր հորդ ու մորդ»), որոնց առանցքային գաղափարները աստվածասիրությունն ու մարդասիրությունն են, ուստի հեղինակը առաջին հինգ օրենքի վերլուծությունը կատարում է՝ սկսելով Աստծուց, ավարտելով ծնօղներով, քանի որ ըստ նրա ծնօղները զուսակի համար երկրորդ աստված են կոչվում և աստուածասիրությունն էլ, մարդասիրությունն է ծնողով են սովորում, որովհետև ըստ հեղինակի՝ ով սիրում է ծնողին, սիրում է Աստծուն և բոլոր մարդկանց, իսկ որ չի սիրում ծնողին, ապերախտ է առ Աստուած և ստող մարդուն»⁹:

Տասնաբանեանի առաջին հինգ օրենքները հեղինակը բնութագրում է որպես «յանձնառական օրենքներ»¹⁰: Իրավական հասկացությունների լայն շրջանառությունը սկսվում է հաջորդ հինգ՝ արգելական օրենքների քննության ժամանակ, ինչու՞ արգելական, որովհետև՝ («Մի՛ սպանիր, մի՛ շնացիր, մի՛ գողացիր, սուս վկայութիւն մի՛ տուր, աչք մի՛ դիր եղբորդ ինչքին և ընկերոջդ կնոջը») հինգ օրենքներն էլ ձևակերպված են «մի՛» արգելական մասնիկով և արգելում են կատարել այդ գործողությունները:

Այստեղ հեղինակը մի հետաքրքիր դիտարկում ունի, որը վերաբերում է ոչ միայն իր ժամանակակիցներին. նա հարց է տալիս, թե ինչու՞ օրենսդիրը ընդհանրական օրենքների ժամանակ [եզակիով] իբրև մեկ հոգու հետ է խոսում և ոչ հոգնակիով: Ըստ հեղինակի պատճառն այն է, որ յուրաքանչյուր ոք իրեն [վերա-

⁸ Նույն տեղում, էջ 17:

⁹ Նույն տեղում, էջ 18:

¹⁰ Նույն տեղում, էջ 20:

բերելի] համարի օրենքը և իրեն հասցեագրված համարի խրատը և չծուլանա՝ անուշադրության մատնելով իբրև բազումներին ուղղված խոսք: Եւ դարձյալ, ըստ նրա օրենքի մէկ պահողը Աստծո համար պատվական է, քան ամբողջ աշխարհը»¹¹:

Նկատենք, որ աշխարհի բոլոր օրենսգրքերը շարադրվում են եզակի դեմքով և Տաթևացու կողմից դեռ 14-15-րդ դարերում օրենքի եզակիով շարադրելու բացատրությունը այժմեական է այսօր էլ:

Մեկ այլ դեպքում հերթական պատվիրանի մեկնության ընդհանրացման ժամանակ հեղինակը և՛ նորակազմություն է գործածում, և՛ ընդհանրացմանը տալիս թևավոր խոսքի բնույթ. «ձուի գողն էլ, ձիագողն էլ նույնն են»:

«Մի՛ գողացիր». այս խրատը օգուտ և օգտակար է կյանքի [ճանապարհին], որ փոքրուց պետք է դաստիարակել և արգելել երեխաներին՝ գողություն չանել, որովհետև թույլատրված փոքր գողությունը ձգտում է մեծագույնին, քանի որ սովորության ուժը ըստ իմաստունի գորեղ է բնությունից: Շատ հաճախ սովորությունը գերակայում է բնությանը, և ինչպես բնությամբ է քնելն, ուտելը, ծարաւելը, այդպես էլ դառնում է գողությունը: Եւ փոքր գողությունները մեծի չվերածվեն, ինչպես Տերն է խրատում. «փոքրի մեջ հաւատարիմը մեծի մեջ էլ հավատարիմ է, փոքրի մեջ անիրավը՝ և մեծի»: Այս պատճառով է, որ մարդիկ ասում են ձուի գողն էլ, ձիագողն էլ նույնն են, որ հավասարապես գող կոչվեն, ուրիշներինը գողացող և ազահ»¹²:

Հեղինակը անդրադառնում է նաև այս ոլորտի քաղաքացիական օրենքներին¹³, որոնց մեջ նաև տալիս է նաև ժամանակի ֆիզիկական պատիժների նկարագրությունը. «իսկ քաղաքացիական օրենքներից հայտնի են, ովքեր առ ու վաճառքի մէջ են չարաշահում՝ [ենթարկվում են] տուգանքի, ծեծի, նախատինքի և սպանության, իսկ հարամին ու աւազակին սպանում են: Կտրում են գողի ձախ ոտքը և աջ ձեռքը, որպեսզի այլևս չգողացան: Իսկ եթե կրկնվում է, կախում են երկճղի երկաթից, որպեսզի ծածուկ գողացածը բարձր տեղից բացահայտ երևա բոլորին: Իսկ ավազակն էլ [դատապարտվում է] սպանության որպես հայտնի թալանօղ: Կրում են աջ ձեռքը, որ այլևս չգողանա, կտրում են ձախ ոտքը, որպեսզի աջով այլևս դեպի աջ քայլի ընկերների հետ, իսկ տաղավարների գողերին՝ տուգանք և ամոթանք»¹⁴:

Հեղինակն այստեղ ունի նաև ստուգաբանություն. «կողբակ» (կրպակ) բառը ստուգաբանում է իբրև «գողի բակ», որոնք նույնպես գողանում են, խաբում և թալանում:

¹¹ Նույն տեղում,, էջ 20:

¹² Նույն տեղում,, էջ 25:

¹³ Նույն տեղում,, էջ 26:

¹⁴ Նույն տեղում,, էջ 26:

Քննում է նաև այն դեպքերը, որոնք պատճառահետևանքային կապով բացատրվում են և չպետք է դիտարկվեն իբրև գողություն, այսինքն այստեղ ըստ էության գործ ունենք մեղմացուցիչ հանգամանքների հետ. «Երեք դեպք կա, երբ գողությունը անպատժելի է: Առաջինը, երբ մոլեգնածից գողանում են սուրը, որ չվնասի ո՛չ իրեն, ո՛չ ուրիշի. սա զգուշություն է և ո՛չ գողություն: Մյուսը, երբ անչափ մերձ ի մահ քաղցած է և ուտելիք է գողանում, որ կերակրվի. սա էլ հարկավորություն է և ո՛չ գողություն: Եւ [երրորդը], որ հրամանով է լինում, ինչպես իսրայելցիները եգիպտացիների անոթներն առան և չվերադարձրեցին, որովհետև աղյուսագործութեան վարձը նրանց մոտ էր մնացել, ուստի Աստված հրամայեց պայմանավորվածությունը չպահել իբրև փոխհատուցում»¹⁵: Ապա շարունակում է. «Սրան հակառակ է, եթե մեկը ասի, այսինչ մարդը [անարդարացիորեն] վնաս տվեց ինձ, ես էլ նրանից գողանամ, արդա՞ր եմ: Ասենք, որ չի կարելի: Որովհետև նա կդատվի գրկողների հետ, իսկ դու՝ գողերի»¹⁶:

Հեղինակը առանձնակի խստությամբ է խոսում սուտ վկայության մասին. «սուտը պատճառ և գլխավորողն է բոլոր մեղքերի, ուստի ճշմարտությունը գլխավորողն ու պատճառն է բոլոր բարիքների: Դարձյալ սուտը սատանան է, որովհետև առաջինը նա Աստծո մասին սուտ խոսեց, թե՛ «աստված ասաց բոլոր պտուղներից մի՛ կերեք»: Սուտ վկան դատապարտված է բազում և խիստ պատիժների, եթե [անգամ] խաբվում է բարեկամի կողմից, չիմանալով հանգամանքները՝ սուտ վկայություն տալիս, և կամ՝ եթե գիտի ճիշտը, սակայն ակնկալիքներով սուտ վկայություն է տալիս: Նախ՝ որ մեծագույն վնասարարություն է եղծել ճշմարտությունը և հակառակվել նրանց, ինչպես խավարն է լույսի հակառակը, չարը՝ բարու, ոչ էությունը՝ էության, այսինքն սուտը ոչ ինչ է, չար և խավար, որ առաջ է գալիս խավարյալ մտքից և հակառակն է ճշմարտության: Իսկ ի՞նչ է ճշմարտությունը: Առաջին նրա գովաբանությունն այն է, որ ճշմարտությունը բոլոր առաքինությունների արեգակն ու լույսն է, որովհետև բոլոր առաքինի գործերը ճշմարտությամբ են լուսավորված, [այնպես], ինչպես արեգակն է լուսավորում զգայական արարածներին և աչքերին է [լույս տալիս]»¹⁷:

Հեղինակը ընդհանրացնում է. չզբաղվել հերձուածախոսությամբ, բանասարկություն չանել, չդավել, աղմուկ չբարձրացնել, չմատնել, չանարգել, չհայհոյել, չանիծել, հիշոցներ չտալ և այլք, որ սրանց նման են: «Իսկ եթե հայհոյում է մեկին երես կամ բերան, ապա քրիստոնյայի երեսը Քրիստոսն է, իսկ բերանները [մեր]՝ Քրիստոսի գերեզման, այլն քրիստոնյայի գերեզմանը և ոսկորները օձված նշխարներ են՝ կնքված սուրբ մյուռոնով, իսկ գերեզմանը կնքված է խաչով և ավետարանով, [ահա

¹⁵ Նույն տեղում,, էջ 27:

¹⁶ Նույնը:

¹⁷ Նույն տեղում, էջ 30:

թե] ինչն է անարգում [հայհոյատուն]: Ուստի [սա] ծանրագույն և աններելի է, քան մնացած բոլոր մեղքերը»¹⁸:

Տասնաբանյանի մեկնության աւարտին հեղինակը հիշեցնում է, որ Մովսեսը «պատուիրեց տասնաբանյան գրել և ձեռքին կրել, ինչպես մատանին և աչքի առաջ ունենալ, անընդհատ խօսել դրանցից՝ տանը նստած, թե՛ ճանապարհ գնալիս, քնելիս և հառնելիս: Գրել նաև տան շեմին, որ ել ու մուտ անելիս՝ ընթերցեն առնվազն հինգը՝ մի՛ սպանիր, մի՛ գողացիր և այլն...», ուրեմն որքան առավել ևս քրիստոնյաներն են պարտավոր օրինապահ լինել¹⁹:

Եզրակացություն - Այսպիսով, հոդվածում քննության ենք ենթարկել Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի «Նորին քարոզ վասն տասնաբանեան օրէնս» գլուխներում» տասնաբանյան օրենքի մեկնության մեջ կիրառած իրավական հասկացությունները: Քննությունը իրականացրել ենք հետևյալ իմաստային դաշտերով. 1. **ընդհանուր իրավական հասկացություններ** (օրինակ՝ օրէնսդիր, օրէնք, պատուիրան, դատաստան, քաղաքացիական օրէնքներ, մեղք, արդարանալ, դատապարտել,); 2. **հանցագործություններ, պատիժներ** (օրինակ՝ անկարգութիւն, խրատ, զանցանք, պատիժ, տուգանք, խլել ունեցուածքը, խեղդամահ անել, մահու չափ մեղք, քարկոծել, չարաշահել, սուտ վկայելը, մարդասպանութիւն, սպանութիւն, ինքնասպանութիւն, կուսապղծութիւն, վրէժխնդրութիւն, ծեծ, կտրել գողի ձախ ոտքը և աջ ձեռքը, կախել երկճղի երկաթից, փոխհատուցում). 3. **անձինք** (օրինակ՝ յանցաւոր, սպանող, դահիճ, արհեստագործ, պատժի կրօններ, գող), որոնց զգալի մասը հայերենի բառապաշարի համագործածական բառերի շարքում է և հիմնականում ներկայացված է գրաբարի բառազանձն արտահայտող բառարաններում:

Ամփոփում – Գրիգոր Տաթևացու քարոզգրքերը մեզ են ներկայանում շուրջ հազար տարվա ընթացքում ստեղծված հոգևոր արժեքների հասարակական կյանքում խորապես սերմանելու նպատակով գրված աշխատություններ, որոնք, մինչև գրի առնելը նախ կենդանի քարոզվել են ժողովրդին, իսկ բերված մի քանի տասնյակ հասկացությունները լինելով բառապաշարի համագործածական բառերի շերտում՝ «Վասն տասնաբանեան օրէնս» գլխում գործածվել են իբրև իրավական հասկացություններ:

Susanna Grigoryan - Legal concepts in the chapter “Ten Commandments” in the Summer volume in the “Book of Sermons” by Grigor Taevatsi. - The “Books of Sermons” of Grigor Tatevatsi, written with the aim of introducing spiritual values into public life, before being written down, were first preached live to the people, and in the chapter

¹⁸ Նույնը:

¹⁹ Նույն տեղում, էջ 38:

"Ten Commandments" dozens of concepts given, being in the layer of commonly used words, were used as legal ones and are used according to all the norms of a legal concept.

Key words: Prescriptive laws, Prohibitory laws, Civil laws, Perjury, Wrongful murder, Horse thief, Necessity.

Сусанна Григорян- Исследования новых правовых концепций литературного наследия Григора Татеваци. - Рассмотрение правовых понятий литературного наследия Григора Татеваци интересно само по себе, но крайне интересны новые слова, использованные автором в этой области, особенно в юридическом смысле, то есть в данном случае еще и в смысле восприятия тонкостей этих терминах современника. Иногда они содержат историческую информацию, как в случае со словом «гитвор» "githwor" - виновный, преступник).

Ключевые слова: предписывающие законы, запретительные законы, гражданские законы, лжесвидетельство, неправомерное убийство, конокрад, необходимость.

ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇՈՂ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ
ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Զաքարյան Հովհաննես

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ, «Տաթն» ԳԿՀ, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար,
hovzakaryan@yahoo.com

DOI: 10.54503/978-9939-970-07-3-117

Բանալի բառեր. հայոց լեզու, հ.-ե. նախալեզու, ձայնդարձ, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, ածանց:

Նախաբան

Հոդվածը նվիրված է հ.-ե. *(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» պարզական արմատից անմիջականորեն սերված մի շարք այնպիսի բառերի կամ արմատների ստուգաբանությանը կամ վերջինիս ճշգրտմանը, որոնք գրային հայերենում սկսվում են *վ-*, *ու-*, *(յ/հ)ալ-* կամ *ել-* հնչյուն(ներ)ով և այս կամ այն չափով առնչվում են տարածաժամանակային «հեռու – մոտիկ», «վեր-վար», «վաղ-ուշ» կամ «սկիզբ-վերջ» իմաստի հետ:

Ինչպես հայտնի է, հ.-ե. *u (*w) ձայնորդը հայերենում բառամիջում և բառավերջում վերածվել է առավելապես *վ/լ*, *զ* կամ *ու* հնչյունի (*diw- >տիւ, *awed- >աւետ, *g^wow- >կով, *owi-pa- >հովիւ, *g^wowio- >կոզի, *rew- >արեգ, *bhut- >բութ, *tu >դու նն):

Ինչ վերաբերում է բառասկզբին, ապա հայերենագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ այդ դիրքում հ.-ե. *u- ձայնորդը վերածվել է միայն *զ*-ի կամ *ու*-ի (չկա բացատրություն, թե ինչու չէր կարող վերածվել *վ*-ի), իսկ *վ*-ով սկսվող հայերեն բառերը իբր փոխառություն են մեծ մասամբ իրանական աղբյուրներից:

Կասկածի ենթարկելով կարծրատիպի վերածված այդ կարծիքը՝ առաջադրել ենք այն վարկածը, որ *վ* սկզբնահնչյունով հայերեն բառերի մեծագույն մասի հայերեն հնագույն ձևերում այդ *վ*-ն եղել է ոչ թե սկզբնահնչյուն, այլ հաջորդել է հետագայում ընկած թույլ սկզբնաձայնավորին կամ սահող *s-ին, այսինքն՝ իրականում եղել է բառամիջյան *u ձայնորդ, որի զարգացման օրինաչափ արդյունքներից մեկն է *վ/լ*-ն: Այս վարկածը հիմնավորող մի շարք ստուգաբանություններ արդեն ներկայացրել ենք մեր մի քանի հոդվածներում: Սույն հոդվածում

1 Տե՛ս Ն. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հհ. 1-7, Ե., 1952-2005 (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 6, էջ 488-494:

2 Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Ե., 1940, էջ 318, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987 (այսուհետև՝ ՀԼՊ), էջ 557-558:

3 Ն. Զաքարյան, Հայերենի վ- սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մասին.- «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ (գիտական հոդվածների ժողովածու) (իսր.՝ Վ.

անդրադարձել ենք հ.-ե. *(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» արմատից անմիջականորեն սերված հայերեն մի քանի բառերի, որոնց թվում կան գրային հայերենում *վ*-ով սկսվող ձևեր:

Հ.-ե. *(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» պարզական արմատի տարալեզու ածանցյալների մի խումբ ստուգաբանված է և տեղ է գտել հանրահայտ բառարաններում: Դրանց թվում կան մի քանի հայերեն բառեր (տե՛ս ստորև): Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ կան նույնարմատ չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված հայերեն ևս մի շարք բառեր, որոնց հայտնաբերումն ու ստուգաբանությունը կամ դրա ճշգրտումը կարևոր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Հ.-ե. *(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» պարզական արմատը գիտական աղբյուրներում ներկայացված է տարբերակներով՝ № 130. *au-3 (ալս); ալս- «-ից, հեռու, վեր», № 2064. *ūd- «դեպի վեր, հեռու, դուրս», № 2067, *upér, *upéris- «վրա, վեր», № 2068, *upo, *up, *eup, *(e)up-s- «տակ, տակից» (Պոկ.), *au- «-ից, հեռու», *ūd- «վրա, վեր», *wers- «վեր(և), վերին», *upo- «վերև, վեր» (Նիկ.), *ūd- «դուրս, դրսի, արտաքին, վեր, հեռու»⁵, *uer- «բարձրանալ»⁶, *au- «ցած, հեռու»⁷ և այլն:

Այս և այլ աղբյուրներում առկա են հ.-ե. նշված արմատից սերված հայ. *աւղոց* (*օղոց*) «հեռու, դուրս, արտաքս, ի բաց» <*au-lo- <*au- «ցած, հեռու» (ՀՄԲ, 102), *աւցտել* (*աւձտել, օցտել*) «1. շեղել, հեռացնել, 2. պառակտել, 3. բաժանել, զատել» <*au- «ցած, հեռու» + *sk'id- < *ghu- <ցտել «կտրել, ճեղքել» (ՀՄԲ, 104-105):

Նկատի ունենալով (*ա/է*)ւ – *վ* – *ու* լծորդությունը՝ առաջարկում ենք նույն արմատից բխեցնել նաև **օտար, եւ, վտարել, վանել, վանդել, վոնդել, վարատել, վայր,**

Կատվալյան», Ե., 2019, էջ 34-45, Հ. Չաքարյան, Վ. սկզբնահնչյունով հայերեն մի քանի բառերի հնդեվրոպական ծագման մասին.- «Լեզու և խոսք» էլեկտրոնային հանդես, թիվ 1 (խմբ.՝ Վ. Կատվալյան), Ե., 2021, էջ 114-129.- https://as.sci.am/docs.php?file_id=74, Հ. Չաքարյան, Հ.-ե.*(a)u(e)- «սիրել, ուզել, օգնել» արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն, «Ջահուկյանական ընթերցումներ», 1-2 (17-18), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, (290 էջ), էջ 215-226, ևն:

⁴ J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 1959.- <http://dnghu.org/indoeuropean.html> (այսուհետև՝ Պոկ.), S. Nikolaev, Database of Indo-European etymology.- [http://starling.rinet.ru/cgi-in/response.cgi?root=config&morpho=0&basename=\(data\)ie/piet&first](http://starling.rinet.ru/cgi-in/response.cgi?root=config&morpho=0&basename=(data)ie/piet&first) (այսուհետև՝ Նիկ.):

⁵ Տե՛ս Wiktionary.- https://en.wiktionary.org/wiki/Proto-Indo-European_ūd-

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, էջ 539-540, գեր:

⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010 (այսուհետև՝ ՀՄԲ), էջ 102, 104-105:

⁸ Օղոց, օցտել բառերը Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող (ՀՄԲ, 4, 613, 612):

վեր, վերջ, ուրջ, աւարտ, յաւ «վերջ», հաւ «սկիզբ», աւագակ, աւան «կողոպտիչ», աւար, աւել, նուագ, աւագ, հաւ «պապ», վէս, վսեր, վսե(ա)մ, վեստ, վեհ, նուաստ, վարագոյր, վրան, ուշ, վաղ, վախճան, վռագ, յաւէտ, յաւէ(ր)ժ, հուպ և այլ բառեր, որոնք պարունակում են տարածաժամանակային «հեռու – մոտիկ», «վեր, վար», «վաղ, ուշ» կամ «սկիզբ-վերջ» իմաստային բաղադրիչը:

Քննարկվող հայերեն բառերի շարքում կան հոմանիշներ (*աւտար – եւ, վանել – վանդել – վոնդել – վտարել – վարատել – օցտել, աւարտ – յաւ «վերջ» – ուրջ – վերջ – վախճան, աւագակ – աւան «կողոպտիչ», վտարել «հափշտակել» – աւարել, վէս – վսեմ – վեհ, յաւէտ – յաւէրժ*) և հականիշներ (*վայր – վեր, յաւ «վերջ» – հաւ «սկիզբ», վէս – նուաստ, վաղ – ուշ, աւել – նուագ* ևն), որոնց միջև փորձել ենք գտնել նաև ծագումնաբանական կապեր, մինչդեռ դրանք մինչ այժմ բխեցվել են հաճախ միանգամայն տարբեր աղբյուրներից:

Բառերի միջև ծագումնաբանական կապեր հաստատելիս կարևոր փաստարկ է նաև այն, որ ժամանականիշ, տարածանիշ (և ոչ միայն) բառերը հակված են ներհականչության, այսինքն՝ զուգահեռաբար ունենում են իրար հակառակ իմաստներ (օրինակ՝ *առաջ, հետ(ո), շուտ*), և քննարկվող հ.-ե. *(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» արմատի դեպքում էլ առկա է ներհականչության դրսևորումը:

Հերթականությամբ անդրադառնանք նշված բառերին:

Աւտար (օտար) «դրսից, դրսեցի, եկվոր, այլտեղացի, ոչ բնիկ, պանդուխտ, հյուր, խորթ, ուրիշ, տարաշխարհիկ» (որից՝ *օտարել* «1. իրենից հեռացնել, վանել, 2. սեփականությունը տիրոջից վերցնել, պետականացնել») բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ *awtar (նախաիրան. *abitara-, հմմտ. ավեստ. aiwitara «ոչ տեղացի») ձևից (ՀՄԲ, 4, 615): Գ. Ջահուկյանը կրկնել է նույնը (ՀՄԲ, 103), ՎԲԱ-ն՝ ևս: Այնուհանդերձ, նկատի ունենալով իմաստային և ձևային նմանությունը անգլ. out «դուրս» (<*úđ- «վեր, հեռու, դուրս»), շուտլ. oot, out, գերմ. aus, դան. ud, ude «դուրս, հեռու» (ՎԲԱ, out), հ.հնդկ. úđ-, út- «վեր-, արտ-» (Պոկ., № 1064. úđ-), հ.հնդկ. áva «հեռու», լիտվ., լատվ. au- «դուրս, հեռու» (Պոկ., № 130. au-3 (aue); uẽ-) և այլ բառերին, առաջարկում ենք վերջիններին համարմատ համարել հայ. այս բառը՝ *աւտար* <*auđ-āro- <*(a)u-d- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանական բանաձևով, որում *d-ն աճական է (*-ero/-āro >-ար ածանցի համար հմմտ. *արդ-ար, հարմ-ար, մոլ-ար, երկ-ար, դալ-ար, գալ-ար* և այլն (տե՛ս ՀՄԲ, 800)): Իմաստային կառուցվածքի համար հմմտ. *դրսեցի*, անգլ. stranger, extraneous, exotic, ֆր. étranger, լատ. extrāneus, գերմ. ausländisch, դան. udenlandsk հոմանիշները, որոնց կազմի մեջ կա «դուրս» իմաստով բաղադրիչ:⁹

⁹ Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք նաև գոթ. út (նախդիր) «դուրս», գոթ. ūta, հ.իսլ. ūti, անգլ.-սաքս. ūte, հ.բ.գերմ. ūze «դրսում, դրսից»; գոթ. ūtana, հ.բ.գերմ. ūzana, ն.բ.գերմ. außen; հ.իսլ.

Եւ «օտար» (որից՝ *ելազգած, էլակոչ*) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 2, 74, ՀՄԲ, 229): Իմաստով և ձևով նախորդ բառի հետ կապելով՝ առաջարկում ենք *ել* <*eǵ- <*(e)ǵ- <*(a)ǵ(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանական բանաձևը, որում *eǵ-ն հ.-ե. *(a)ǵ(e)- արմատի ձայնդարձային տարբերակներից մեկն է:

Վտարել «1. դուրս անել, վոնդել, հեռու վանել, քշել, հեռացնել, տարագրել, արտաքսել, աքսորել, 2. հափշտակել» բառը Հ. Աճառյանը, ըստ Տերվիշյանի և այլոց, համարել է փոխառություն պահլ. vitar «այն կողմ անցնել», հ.պարսկ. vitar «վրայից անցնել» (<vi- + tar «անցնել») կազմությունից (ՀԱԲ, 4, 351-352): Գ. Ջահուկյանը կրկնել է նույնը (ՀՄԲ, 714): Սակայն այս ստուգաբանությունը իմաստային անհամապատասխանության նկատառումով մերժված է Հ. Հյուբշմանի կողմից (տե՛ս ՀԱԲ, նույն տեղում): Հաշվի առնելով այս տարաձայնությունը և հատկապես *աւտար – վտար* հիմքերի թե՛ իմաստային, թե՛ ձևային համընկնումը՝ առաջարկում ենք *վտարել* <*վիտար-ել <*(a)ǵēd-āro- <*(a)ǵe-d- <*(a)ǵ(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *d-ն աճական է (*-ero/-āro > -ար ածանցի համար տե՛ս վերը՝ *աւտար* բառի առիթով):¹⁰ Թերևս այս բառի ածանցյալ պիտի համարել *վտարանջել* «հպատակությունից հեռանալ, ապստամբել» բառը¹¹, որը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 352), իսկ Գ. Ջահուկյանը համարել է փոխառություն իրանական աղբյուրից, «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ (ՀՄԲ, 715): *Վտարել* բառի իմաստների կապակցությամբ պիտի նկատել, որ տեղի է ունեցել իմաստի շրջում («վանել, իրենից հեռացնել» > «հափշտակել, յուրացնել, իրենով անել»)՝ առաջ բերելով ներհականշություն, ինչը տեսնում ենք նաև վերոհիշյալ *օտարել* բառի դեպքում («իրենից հեռացնել» > «տիրոջից վերցնել»):

Վանել «հեռացնել, հալածել, վտարել, վոնդել, դուրս քշել, դեն մղել, հաղթահարել» բառը Հ. Աճառյանը, ըստ Հյուբշմանի, համարել է փոխառություն պահլ. vānītan «նվաճել, զավթել, ընկճել» բառի արմատից, որը բխեցվում է հ.-ե. *ven-/*von-

ūtar, անգլ.-սաքս. ūter, հ.սաքս. ūtar, հ.բ.գերմ. ūzar «բացի, առանց, դուրս», անգլ.-սաքս. ūter-ra «արտաքինը» (Պոկ., № 2064, *ǔd-), հ.պրուս. au- «հեռու, անջատ» (Նիկ., *au-) և այլն:

¹⁰ Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդկ. áva (նախածանց) «զատ, հեռու», ավեստ., հ.պարսկ. ava (նախածանց) «ներքեւ, հեռու», լատ. au- «հեռու», հ.պրուս., լիտվ., լատվ. au- «դուրս, հեռու», գոթ. auþja-, auþida «հեռանալով» (*«մեկուսի»), հ.իռլ. ūathad «մեկուսացում», գերմ. wes- «դեպի», հ.բ.գերմ. westar, ն.բ.գերմ. westwärts «դեպի արևմուտք» (Պոկ., № 130, *au-3 (aǵe); ǵē-), իւեթ. awan «հաջորդ, բացի; ամբողջովին հեռու», լատ. ab, հուն. ἀπό «-ից», հ.իռլ. ó, úa «-ից, հեռու» (Նիկ., *au-), ռուս. в3- «դուրս, հեռու» (նախածանց), հ.սկանդ. út; ór, շվեդ. ut, դան. ud, հ.անգլ. út, անգլ. out, հ.սաքս. üt, մ.հոլանդ. uut, ūte, հոլանդ. uit, մ.ս.գերմ. üt, հ.բ.գերմ. ūz, ur-, ar-, ir-, մ.բ.գերմ. ūz; ur-, er- «դուրս», գերմ. aus; aussen, ausser «դուրս; դրսում; բացառությամբ», ur-, er- «դուրս» (Նիկ., *ǔd-):

¹¹ Այս -անջ/-ինջ/-ունջ ածանցի համար հմմտ. դոդ-անջ, կապ-անջ, խրիս-ինջ, եղ-ինջ, կոդ-ինջ, խիս-ունջ, 22-ունջ, մրմ-ունջ, տրտ-ունջ և այլն:

«1. ջանալ, աշխատել, 2. ձեռք բերել, նվաճել, 3. սիրել, ցանկալ» նախաձևից (որից՝ հայ. *գուն* «ջանք»), բայց նաև նկատել է, որ Հ. Հյուբշմանը հնարավոր է համարել այս բառի բնիկ հայերեն լինելը (ՀՄԲ, 4, 302): Գ. Ջահուկյանը համարել է փոխառություն իրանական մեկ այլ աղբյուրից՝ համեմատելով հ.պարսկ. *van-* «նետել, ցրել» արմատի հետ (ՀՄԲ, 703): ՎԲԱ-ն կրկնել է Հ. Աճառյանին: Նկատի ունենալով այս տարածայնությունները և ներկայացված իմաստային անցումների ոչ բավարար համոզիչ լինելը, ինչպես նաև վերոհիշյալ *օտար, վտարել, աւղոց, աւցոնել* բառերի հետ իմաստային կապը՝ առաջարկում ենք այս բառի բնիկ հայերեն ծագման նոր վարկած՝ *վան-ել* <*(a)uθ-n- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում *n-ն աճական է:

Վանդել «հեռացնել, հալածել, վանել, հաղթահարել» բառը Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող՝ զգուշացնելով, որ կապ չունի պահլ. *vānītan* (> *վանել*) բառի հետ (ՀՄԲ, 4, 304): Գ. Ջահուկյանը նախապես բխեցրել է հ.-ե. **uēn-* «խփել, վիրավորել» արմատից¹², սակայն հետագայում, հակառակ Հ. Աճառյանի զգուշացման, համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ համեմատելով *vānītan* «նվաճել, ընկճել» բառի հետ (ՀՄԲ, 711), որից Հ. Աճառյանը փոխառյալ է համարել *վանել* բառը (տե՛ս վերը), ինչի հետ համաձայն չէ ինքը՝ Գ. Ջահուկյանը (տե՛ս վերը): ՎԲԱ-ն այս բառը համարել է անհայտ ծագման: Յ. Պոկոռնին *վանդել* բառը՝ «ավերել, ոչնչացնել» իմաստով, անմիջականորեն բխեցրել է հ.-ե. **uēn-* «զարնել, խոցել, վիրավորել» (հմմտ. նախագերմ. **woundō-* «վերք») նախաձևից (Պոկ. № 2070): Սակայն Պոկոռնիի այս կարծիքը *վ-* սկզբնահնչյունի ծագմանն առնչվող նախապաշարման պատճառով հետագայում մերժվել է (տե՛ս ՀՄԲ, 4, 304, ՀՄԲ, 711 և ուրիշներ¹³): Պոկոռնիի այս կարծիքը կարելի է ընդունել վերապահությամբ: Ինդիրն այն է, որ այս բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը դիտարկել են որպես բազմիմաստ՝ «1. վանել, հալածել, 2. ավերել, ոչնչացնել, 3. հիվանդանալ, ցավով բռնվել», «Հայկազյան բառարանն» էլ տալիս է «1. պատել, պաշարել, կաշկանդել (վանդակով), 2. հաղթահարել, 3. վտանգել, տկարացնել, հիվանդացնել» իմաստները¹⁴: Այս իրավիճակում թերևս պետք է ընդունել եռակի համանունություն՝ ա. *վանդել* «վանել, հալածել, հաղթահարել», բ. *վանդել* «պատել, պաշարել, կաշկանդել (վանդակով)» և գ. *վանդել* «1. ավերել, ոչնչացնել, 2. հիվանդանալ, ցավով բռնվել»: Յ. Պոկոռնին նկատի ունի այս համանուններից 3-րդը: Իսկ տվյալ դեպքում գործ ունենք 1-ին համանունի հետ: Նկատի ունենալով

¹² Տե՛ս Գ. Джаукян Г., Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967 (այսուհետև՝ Ջահ.-1967), էջ 265:

¹³ Տե՛ս նաև Н. Martirosyan, Etymological dictionary of the Armenian inherited lexicon, Brill, 2008 (այսուհետև՝ Մարտ.), էջ 592:

¹⁴ Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837 (այսուհետև՝ ՆՀԲ):

այս իրարամերժ տարաձայնությունները՝ առաջարկում ենք այս բառի բնիկ հայերեն ծագման նոր վարկած՝ *վանդ-ել* «վանել, հալածել, հաղթահարել» <*(a)u̯-nti- <*(a)u̯(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով (-nti >-(w)նդ/-(h)նդ/-(n)նդ ածանցի համար հմմտ. *են-անդ, արգ-անդ, վարս-անդ, կալ-անդ, հիվ-անդ, շո-ինդ, փոխ-ինդ, ծն-ունդ, սեր-ունդ, ել-ունդ, սն-ունդ, մկ-ունդ* և այլն (տե՛ս ՀՄԲ, 797)):

Վոնդել (վոնտել) «վանել, հեռացնել, դուրս անել, քշել, վտարել» (որից՝ բրբռ. *վոնդկել* «շարտել, նետել»¹⁵) բառը¹⁶ Հ. Աճառյանը համարել է փոխառություն պարսկ. *rāndan* «վանել, վտարել, քշել» հոմանիշից, մասնավորապես *bāz rāndan* «հետ վանել» բառակապակցության ժողովրդախոսակցական *vá randān* տարբերակից (ՀՄԲ, 4, 632-633): Գ. Ջահուկյանն այս բառը համարել է անհայտ ծագման (ՀՄԲ, 713): Նկատի ունենալով այս տարաձայնությունները՝ առաջարկում ենք այս բառի բնիկ հայերեն ծագման վարկած՝ *վոնդ-ել* <*վիոնդ- <*վիրունդ- <*(a)u̯ērō-nti- <*(a)u̯ē-r- <*(a)u̯(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ»: Այս բանաձևում *r-ն ածանց է՝ ռնգայինից առաջ *n*-ի վերածված (-nti >-(n)նդ ածանցի մասին տե՛ս վերը՝ *վանդել* բառի առիթով):

Վարատել «1. տեղահանել, քշել, 2. ցրել, ցրուցան անել, 3. ջոկել, որոշել, 4. քարշ տալ» (որից՝ *վարատական* «տեղահանված, գաղթական, թափառական») բառը¹⁷ Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող (ՀՄԲ, 4, 316): Գ. Ջահուկյանը նախապես կասկածով կապել է հ.-ե. *uer- «հեռու, ընդարձակ» արմատին (Ջահ.-1967, 265), այնուհետև Ս. Մալխասյանից հետևողությամբ հնարավոր է համարել **վայր+ատ+ել* «տեղա+հան+ել» կազմությունը՝ *վայր* «տեղ» և *(h)ատ* «կտոր, մաս» արմատներից (ՀՄԲ, 706)՝ *վայր*-ը համարելով անհայտ ծագման (ՀՄԲ, 703) (կառուցվածքի համար հմմտ. *տարատել* «բաժանել», *ծայրատել*, *մանրատել*, *մասնատել* և այլն): Բավական համոզիչ համարելով այս վերջին մեկնությունը՝ համենայն դեպս առաջարկում ենք ստուգաբանական ևս մի վարկած (կապելով վերոհիշյալ *վոնդել* բառի հետ)՝ *վարատ-ել* <*(a)u̯ər-ad- <*(a)u̯ē-r- <*(a)u̯(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում *r-ն աճական է, *-ad >-ատ-ը՝ ածանց (որի համար հմմտ. *հաստ-ատ, արմ-ատ, աղք-ատ, փին-ատ, պատ-ատ-ուկ, խանդ-ատ-ատ-ել, պաղ-ատ-ել* և այլն (տե՛ս ՀՄԲ, 800)):

Վայր (վար, վեր) «1. դուրս, բացաստան, 2. տեղ, տեղանք, 3. ցած, ներքև, տակը, 4. պահ, փոքր ժամանակ» (որից՝ *վայրի, վայրկեան, վերան* «վայրենի, վայրի

¹⁵ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012 (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 2, էջ 90:

¹⁶ Այս բառն ունի բարբառային համանուններ՝ *վոնդել* «շաղախվել, վարակվել» (Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945 (այսուհետև՝ Մալխ.), հ. 4, էջ 353), *վոնդել* (վոնտել) «1. մեկի վարքով՝ կյանքով հետաքրքրվել, 2. հաշվի առնել այն, ինչ վիրավորական է իր համար» (ՀԼԲԲ, 2, 90), *վոնտել* (ոնտել, ըոնտոնալ, հերնտի) «1. գեղեցկանալ, 2. առողջանալ» (ՀԼԲԲ, 2, 90, Ե, 235-236):

¹⁷ Քիչ հավանական է թվում այս բառի կապը *վայրավատ(ն)ել* «իզուր վատնել, փչացնել, ծախսել, ցրիվ տալ» բառի հետ (Մալխ., 4, 297, 308, ՀՄԲ, 4, 316):

գագան»¹⁸, *վայրել* «1. թափել, շաղ տալ, 2. ցրվել, ցնդել», *վեր ընկնել* «վայր ընկնել») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 300-301): Գ. Ջահուկյանը նախ բխեցրել է հ.-ե. **yer-* «հեռու, ընդարձակ» արմատից (Ջահ.-1967, 265), այնուհետև հրաժարվել է այդ տեսակետից և գրել. «Ծագումն անհայտ է (իրանական¹⁹)» (ՀԱԲ, 703): ՎԲԱ-ն նույնպես համարել է անհայտ ծագման: Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք *վայր* <*(a)*yəi-r-* <*(a)*y(e)-* «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը (որում **r-*ն աճական է):¹⁹

Վեր «վրա, բարձր, ավելի» բառը (որից՝ *վեր(ա)-* «նորից, կրկին» նախածանցը, *վերստին* «նորից, դարձյալ», *վերանայ* «1. համբառնալ, բարձրվել, 2. Վերջանալ», *վրայ* <*վերայ* «1. վերնակողմ, երես, 2. վերևում, երեսին»), որ *վայր* բառի հականիշն է, Հ. Աճառյանը, ըստ Պեդերսենի և Մեյերի, համարել է բնիկ հայերեն բառ՝ հ.-ե. **uper-* «վեր, վրա» նախածանցից (**uper-* >**ուեր* >վեր) (ՀԱԲ, 4, 329-331): Գ. Ջահուկյանը նախապես, ըստ Հյուբշմանի, բխեցրել է հ.-ե. **yer-* «բարձունք, վերև» արմատից՝ Հ. Աճառյանի կարծիքը համարելով հնչյունապես խոցելի (Ջահ.-1967, 267), սակայն հետագայում այնուհանդերձ ընդունել է Հ. Աճառյանի կարծիքը (ՀԱԲ, 709): ՎԲԱ-ն ևս համաձայն է Հ. Աճառյանին: Յ. Պոկոռնին հավանական է համարել *ի վեր* <**uper-* «վեր, վրա» ստուգաբանությունը (Պոկ., № 2067. **upér-*, **upéri-*): Սակայն հայերենի *վ* սկզբնահնչյունի մեր առաջարկած բանաձևով ավելի հարմար ու անառարկելի է *վեր* <*(a)*yə-r-* <*(a)*y(e)-* «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը (որում **r-*ն աճական է):²⁰ Կարևոր փաստարկ է նաև *վայր* և *վեր* նույնարմատ բառերի հականիշությունը (այդ մասին տե՛ս նաև վերը):

Վերջ «1. ավարտ, վախճան, 2. ծայր, եզր, 3. հետո, ետքը» բառը Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող (ՀԱԲ, 4, 332): Գ. Ջահուկյանը նախապես բխեցրել է հ.-ե. **yer-* «բարձունք, վերև» արմատից (Ջահ.-1967, 267), այնուհետև, համարելով հանդերձ բնիկ հնդեվրոպական, նշել է, որ «բուն ձևը չի վերականգնված»: Նա հարցի լուծմանը առավել մոտ է համարել Գ. Կլինգենշմիտին, որ վերականգնել է **uperio-* նախածանցը (ՀԱԲ, 709): Տարածայնությունները նկատի ունենալով և *վ-* սկզբնահնչյունի ծագման մեր առաջարկած բանաձևի համաձայն՝ առաջարկում ենք *վերջ* <*(a)*yə-r-ջ* <*(a)*y(e)-* «վեր, վար, դուրս, հեռու, մոտ»

¹⁸ Տե՛ս ՀԼԲԲ, 2, 55: Դրա համանուններն են՝ վերան «վե՛րման, ո՛ր կողմ», վերան «ավերակ, ամայի» (նույն տեղում):

¹⁹ Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդկ. *áva* (նախածանց) «ներքև, -ից, վայր, ցած», *ávāra-* «ստորադաս», ավեստ. *aorā* «դեպի ներքև, ցած, վայր», ավեստ. *avarə*, հ.հնդ. *avár*; *aváh* (*avás*) «ներքև», *avastād* «ստորև» (Պոկ., № 130, **au-3* (*ayē*); *yē-*), գոթ. *auþeis* «ամայի, վայրի» (**au-tjos* «հեռավոր») (Նիկ., **au-*):

²⁰ Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդկ. *úd-*, *út-*, ավեստ. *us-*, *uz-* (>**uds-*) (նախդիր) «վեր, վրա», հ.հնդկ., *uccá*, ավեստ. *usča* (նախդիր) «վերևում; վերև», լիտվ. *už-* (նախդիր) «վեր-», լատվ. *uz*, *ūz* «դեպի վեր» (Պոկ., № 2064, **ūd-*), հուն. *av-*, իլիր. *au-* «վրա» (Պոկ., № 130, **au-3* (*ayē*); *yē-*), հ.պարսկ. *us-* «վերև, դուրս», լատ. *ūsque* «նորից ու նորից» (Նիկ., **ūd-*), նախահնդիրան. **utčáh* «վեր, վերևում» (ՎԲԱ, հ.-ե. **úd-*):

ստուգաբանությունը: Այս բանաձևում *r-ն՝ հ.-ե., ջ-ն՝ հետնախալեզվյան աճականներ են:²¹

Ուրջ «վերջ» բառը Հ. Աճառյանը համարել է անստույգ, գուցեն սխալ գրչություն և չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 618): Գ. Ջահուկյանը ևս չի ստուգաբանել, բայց գրել է. «Կապ չունի՞ վերջ բառի հետ» (ՀՄԲ, 754): Այս կապի մասին նա ակնարկել է ավելի վաղ (Ջահ.-1967, 264): Այս դիտարկումը միանգամայն արդարացի է ու հիմնավոր: Հետևաբար առաջարկում ենք *ուրջ* <*ուր-ջ <*ur- <*u(e)-r- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *r-ն՝ հ.-ե., իսկ ջ-ն՝ հետնախալեզվյան աճականներ են: Հ.-ե. բառասկզբի *u-ն, հայտնվելով բաղաձայնից առաջ, օրինաչափորեն դարձել է *ու* (հմմտ. *ուս* «սովորել», *ուղկան*, *ունկն*, *ունայն*, *ուղի*՝ ըստ ՀՄԲ-ի):

Աւարտ «1. վերջ, վախճան, 2. ծայր, եզր» բառը Հ. Աճառյանը, ըստ Սալեմանի, համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ *avart ձևից՝ որպես փաստարկ բերելով մանիք. *anāvard* «անվերջ, անվախճան, հավիտյան» բառը (ՀԱԲ, 1, 356): Գ. Ջահուկյանը համամիտ է նրան (ՀՄԲ, 99): Սակայն Հ. Աճառյանը նույն տեղում գրել է. «Պատահական նմանություն ունի սանս. *avarati* «աւարտ, վերջ»» բառին: Եթե նույնիմաստ գրեթե նույն ձևը կա միմյանց ցեղակից հայերենում, սանսկրիտում և իրանական որևէ լեզվում, ապա պետք է ոչ թե կամայական հարաբերություններ վերագրել դրանց, այլ նախ և առաջ ենթադրել, որ դրանք քույր ձևեր են՝ ինքնուրույնաբար ծագած հ.-ե. միևնույն արմատից: Հակառակ դեպքում եթե որևէ երկուսի համար ենթադրվում է պատահական համընկնում, ապա նույնը կարելի է պնդել ցանկացած զույգի համար: Ուստի իրավունք ունենք հայերենի համար առաջադրելու հ.-ե. ինքնուրույն ծագման վարկած՝ *աւարտ* <*auər-d- <*auə-r- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում *r-ն և *d-ն աճականներ են: Այստեղ հ.-ե. *u-ն միջձայնավորային դիրքում օրինաչափորեն դարձել է հայ. *ւ* (հմմտ. *աւիշ*, *հաւառի* «գետառ», *աւետ*՝ ըստ ՀՄԲ-ի): Ակնհայտ է նաև վերոհիշյալ *վերջ*, *ուրջ* և ներքոհիշյալ *յաւ*, *յաւակն* «վերջ» բառերի հետ թե՛ իմաստային, թե՛ ձևային մերձավորությունը:

Յաւ «1. վերջ, ծայր, 2. բավ» (որից՝ *անյաւ* «անվերջ, անծայր, անբաւ», *յաւակն* «ավարտ, հանգ, վերջ», *յաւակն գալ*, *յաւակնիլ* «տնել, բավել, հասնել», *յաւակն-ոտ* «հանդուգն, մեծամիտ», *յաւակնել* «հանդգնել, ձգտել, ժպրհել») արմատը Հ. Աճառյանը բխեցրել է հ.-ե. *pau- «ծայր» նախաձևից (ՀԱԲ, 3, 390, *յաւ*, *յաւակն*): Գ. Ջահուկյանը *յաւ* բառը նախընտրել է բխեցնել հ.-ե. *paus- «թողնել, բաց թողնել» նախաձևից (ՀՄԲ, 549): Կարծում ենք՝ հնչյունապես ավելի համոզիչ կլինի, եթե

²¹ Աճականների համար տե՛ս ԼՔՀԼ, 3, 62-64:

առաջարկենք **juu** <*j-uu* <*(h)ayē- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանական բանաձևը, որում *j*-ն նախահավելված է:²²

Հաւ «սկիզբ, ծայր» (որից՝ *hauul* «սկիզբ, սկզբնապատճառ, հեղինակ, դրդիչ, *hauinon* «անվան տոնախմբություն» (Մալխ., 3, 86)) արմատը ևս Հ. Աճառյանը բխեցրել է հ.-ե. *pau- «ծայր» նախաձևից (ՀՄԲ, 3, 67): Գ. Ջահուկյանը նախընտրել է բխեցնել հ.-ե. *paus- «թողնել, բաց թողնել» նախաձևից (ՀՄԲ, 453): Դարձյալ կարծում ենք՝ հնչյունապես ավելի համոզիչ կլինի, եթե առաջարկենք **hau** <*(h)ayē- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *h*-ն նախահավելված է (հմմտ. նաև *hau* «թռչուն», *hau* «պապ» համանունները): Այս դեպքում ևս առկա է ներհականչության երևույթը՝ *hau* «սկիզբ» և *juu* «վերջ» (հայերենին բնորոշ *h* – *j* անցումով, հմմտ. *հինգ* – *յիսուն*, *հայր* – *յորայ*, *հետ* – *յետ* ևն):²³

Աւազակ «հափշտակիչ, ելուզակ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 1, 351-352): Գ. Ջահուկյանը, ըստ Գ. Ասատրյանի, համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ ենթադրյալ *āwāzāk (*ā-wāz-āka) «տանող, փախցնող» ձևից (ՀՄԲ, 98): ՎԲԱ-ն, հիշելով այս վարկածը, անստույգ է համարել ենթադրյալ սկզբնաձևը: Նկատի ունենալով տարաձայնություններն ու վերապահումները և վերոհիշյալ *վտարել* բառի «հափշտակել» իմաստի հետ կապը՝ առաջարկում ենք *աւազակ* <աւազ-ակ <*ayə-gʰ- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *gʰ-ն աճական է, *-ակ*-ը՝ ածանց: Իմաստային անցման տրամաբանությունն այն է, որ հափշտակությունը՝ կողոպուտը, մի բանի բռնի օտարումը, հեռացումը, խլումն է ինչ-որ մեկից, իսկ «հեռացում՝ օտարում» իմաստային բաղադրիչը բնորոշ է վերոհիշյալ *օտար*, *ել*, *վանել*, *վանդել*, *վռնդել*, *վարատել* բառերին:

Աւան «կողոպուտիչ, հափշտակիչ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 1, 354): Գ. Ջահուկյանը գրել է. «Կապ ունի՞ արդյոք հ.-ե. *au- արմատի հետ, որ ցույց է տալիս հեռացում, անջատում» (ՀՄԲ, 99): Կարծում ենք՝ կապ ունի: Ուստի նկատի ունենալով իմաստային կապը վերոհիշյալ *վտարել*, *աւազակ* և այլ բառերի հետ՝ առաջարկում ենք *աւան* <*ayə-n- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը (որում *n-ն աճական է):

Աւար «կողոպուտ, թալան» բառը Հ. Աճառյանը, ըստ Հյուբշմանի, համարել է փոխառություն պահլ. *āvār «կողոպուտ» ենթադրյալ ձևից (հմմտ. բելուջ, աֆղ. āvār) (ՀՄԲ, 1, 355-356): Գ. Ջահուկյանը համաձայն է այս կարծիքին (ՀՄԲ, 99): ՎԲԱ-ն ևս համարել է իրանական փոխառություն: Սակայն նկատի ունենալով իմաստային

²² Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ ավեստ. *ustəma*- «ծայրահեղ, վերջին», հուն. ὕστατος «վերջին» (Պոլ., № 2064, *ūd-), լիտվ. *viršū-s* «գագաթ, եզր», լատվ. *viršus*, *virss*, *virsa* «ծառի գագաթ» (Նիկ. *wers-) և այլն:

²³ Յաւ – հաւ լծորդության և *j* – *h* հնչյունական անցման (հմմտ. *հետ* – *յետ*, *հատ* – *յատ*, *հեղ* – *յեղ*, *հաղ* – *յաղ* և այլն) մասին տե՛ս Ջահ.-1967, 311:

կապը վերոհիշյալ *վտարել, աւագակ, աւան* և այլ բառերի հետ՝ նախընտրում ենք հայերեն և իրանական բառերը դիտարկել որպես համանուններ (գուցե նույնարմատ գուգաբանություններ) և առաջարկում ենք հայերեն տարբերակի հ.-ե. ինքնուրույն ծագման վարկած՝ աւար <*aṷə-ro- <*(a)ṷ(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանական բանաձևով, որում *ro-ն ածանց է:

Աւել (աւիլ) «1. վրադիր, 2. շատ, կարի, 3. լրացուցիչ» (որից՝ **աւելի** «առավել չափով», **յաւելել** «լրացնել, շատացնել») բառը Հ. Աճառյանը հուն. *ὀφέλλω* «մեծացնել, շատացնել» բառի հետ միասին բխեցրել է հ.-ե. *obhel- «1. ավել, մաքրել, 2. բազմապատկել» արմատից՝ որպես հայ-հունական գուգաբանություն՝ չնայած «ձայնական անկանոնությանը» (ՀՄԲ, 1, 356-357): Սրա հետ համաձայն են Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 100) և Յ. Պոկոռնին (Պոկ., № 1400, *obhel- «1. ավել, մաքրել, 2. բազմապատկել»): ՎԲԱ-ն ևս համաձայն է՝ հ.-ե. արմատի համար ենթադրելով *h₂bʰel- տարբերակը: Վերապահումով ընդունված այս վերականգնման փոխարեն, կարծում ենք, ավելի հարմար է **աւել** <*aṷe-l- <*(a)ṷ(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը:²⁴ Այս բանաձևում *l-ն աճական է:²⁵ Հուն. *ὀφέλλω* ձևը օրինաչափորեն կարող է ծագած լինել նույն *aṷe-l- <*(a)ṷ(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» արմատից (հունարենի համար *ṷ > f համապատասխանության մասին տե՛ս ԼԲՀԼ, 487-488): Ինչ վերաբերում է **ավել** «ավլիչ» համանուն բառին, ապա Հ. Աճառյանը հուն. *ὀφέλλω* «ավլել» բառի հետ միասին բխեցրել է հ.-ե. համանուն *obhel- «ավլել, մաքրել, սրբել» արմատից՝ որպես հայ-հունական գուգաբանություն՝ չնայած հնչյունական նույն անկանոնությանը (ՀՄԲ, 1, 357-358): Սրա հետ համաձայն է Գ. Ջահուկյանը՝ թեև առանձին գլխաբառերով ներկայացնելով, սակայն փաստորեն նույնացնելով Հ. Աճառյանի ներկայացրած համանունները (ՀՄԲ, 100-101): Յ. Պոկոռնին ընդհանրապես նույնացրել է դրանք մեկ գլխաբառի մեջ (Պոկ., նույն տեղում): Կարծում ենք՝ ճիշտ է Հ. Աճառյանը, որ չի նույնացրել համանունները: Սակայն **ավել** «ավլիչ» և հուն. *ὀφέλλω* «ավլել» բառերը, կարծում ենք, պետք է կապել ռուս. **веник «ավլիչ», веннок «պսակ», венец «թագ», вить «հյուսել»** բառերի հետ՝ բխեցնելով հ.-ե. *weh₁y- <*wei- <*(a)ṷ(e)- «ոլորել, քամել, հյուսել» արմատից (հմմտ. ՎԲԱ, **веник, ՎԲՈ, вить**):

²⁴ Այլալեզու նույնարմատ իմաստային գուգահեռներից՝ հմմտ. անգլ. **over «1. վերջ, ավարտ, 2. վեր, վրա, 3. ավելցուկ, վրադիր, հավելավճար»** <*upér- «վեր» (ՎԲԱ), **высь «բարձունք»** <*upso- «վրա», **верх «վրա, վերև»** <*wers- «վեր, վերիս» (ՎԲՈ):

²⁵ Գ. Ջահուկյանը բիայն. (ուրարտ.) *abili-* «ավելի, շատ, մեծ» արմատը համարել է փոխառություն հայերենից (ՀՄԲ, 100-101): Այս առիթով պետք է հիշել, որ հ.-ե. *ṷ ձայնորդը հայերենում (և այլ լեզուներում) կարող է վերածվել նաև **բ**-ի (հմմտ. **բաղձ-ալ** <*ṷel-d- <*(a)ṷel «ցանկանալ, ընտրել» (Ջահ.-1967, 267)): Հետևաբար կարելի է ենթադրել, որ վաղնջահայերենում եղել է ***աբելի** «ավելի» տարբերակ, որի արտացոլումն է սեպագիր արձանագրություններից հայտնի *abili-* բառը:

Նուազ «1. սակավ, քիչ, պակաս, 2. նիհար» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 468): Գ. Ջահուկյանը համարել է փոխառությունն իրանական ենթադրյալ *ni-vaz ձևից (համեմատելով ավ. ni-vaza «նվազում» բառի հետ) (ՀՄԲ, 573, ՀԼՊ, 537): ՎԲԱ-ն համարել է անհայտ ծագման: Որպես **աւել** բառի հականիշ՝ առաջարկում ենք **նուազ** <*նի-նուազ <*ni-նազհ- <*նազ-գհ- <*(a)ն(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *ցհ-ն աճական է: *Նի- <*ni- <*neyə «ներքև, ցած» նշանակությամբ նախածանցի համար հմմտ. ն-իւթ <*նի+հիւթ, ն-կուղ, ն-շող, ն-շոյլ, ն-այել <*նի+հայել, ն-եցուկ <*նի+յեց+ուկ<յենուկ, նստակ <*նի+յստակ, նի-ստ <*նի+սիտ, նուազել <*նի-ուազ-ել «ավազի տակ թաղել՝ ծածկել՝ թաքցնել» (ՀՄԲ, 3, 434, ՀԼՊ, 245) և այլն²⁶:

Աւազ «1. մեծ, 2. երևելի, պատվական, 3. բարձր, գլխավոր, պետ, առաջին» (որից՝ **աւազոյթ** «ծերություն») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 1, 350-351): Գ. Ջահուկյանը գրել է. «Ծագումն անհայտ է: ենթաշերտային բա՛ռ» (ՀՄԲ, 98): Օլսենը կապել է իրան. *ā-βaya- ենթադրյալ ձևին՝ դա նույնացնելով սանսկրիտ ā-bhaga «հարգված» ձևին (< նախահնդիրան. *b^hagás-) (Օլսեն, 300): ՎԲԱ-ն չի ընդունել այս կարծիքը՝ բառի ծագումը համարելով անստույգ: Վերոհիշյալ **աւարտ**, **աւազակ**, **աւտար** և այլ բառերի հետ ձևային, իսկ ներքոհիշյալ **վէս**, **վսեմ**, **վեհ** բառերի հետ իմաստային ընդհանրությունից ելնելով՝ առաջարկում ենք **աւազ** <*աւազ-ց^{wh}h- *(a)ն(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *ց^{wh}h-ն աճական է:

Հաւ «պապ, մեծ հայր» բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, բխեցրել է հ.-ե. *աւո- «մոր կողմից պապ» արմատից (ՀՄԲ, 3, 66-67): Համակարծիք է Յ. Պոկոնին (№ 147. *աւո-s- «պապ»): Գ. Ջահուկյանը նախաձևը ներկայացրել է *hauo-s «պապ» ձևով (ՀՄԲ, 453), իսկ ՎԲԱ-ն՝ *h₂éwh₂os «պապ» ձևով: Կարծում ենք՝ այս բառը **հաւ** «սկիզբ» (<*(h)աւե- <*(a)ն(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ») բառի իմաստային մի զարգացումն է (պապը՝ մեծ հայրը՝ որպես ընտանիքի սկիզբ): Հետևաբար **հաւ** «պապ» բառի համար առաջարկում ենք ստուգաբանական նույն բանաձևը, ինչ **հաւ** «սկիզբ»-ի համար:²⁷

Վէս «1. հպարտ, գոռոզ, մեծամիտ, ամբարտավան, հանդուգն, 2. վեհ, սիգապանծ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 4, 336): Գ. Ջահուկյանը համարել է փոխառությունն իրանական աղբյուրից՝ համեմատելով ավեստ. vaesaka ձևի հետ (ՀՄԲ, 710): Առաջարկում ենք բնիկ հ.-ե. ծագման վարկած՝ **վէս** <*(a)նե-կ՝-

²⁶ Նի- <*ni- <*neyə- «ներքև, ցած, վայր» նախածանցը պահպանվել է նաև հին հունարենում, սլավոնական, գերմանական, հնդիրանական լեզուներում (Նիկ., *neyə-):

²⁷ Այլալեզու գուգահեռներից են՝ լատ. avus «պապ, նախնիներ», авиа «տատ», avitus «պապական, ցեղական», avunculus «մորեղբայր», аво «տատ», հ.սկանդ. afi «պապ», ai «պապի պապ», հ.իռլ. (h)áue, մ.իռլ. ó(a), úa «թոռ», լիտվ. avynas, հ.պրուս. awis, անգլ.-սաքս. eam, հ.ֆրիզ. em, հ.բ.գերմ. oheim «քեռի» և այլն (Պոկ., № 147. *աւո-s-):

<*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում k'-ն աճական է:²⁸ Իմաստով այս բառի հետ է կապվում **յաւակն-ոտ** «հանդուգն, մեծամիտ» բառը, որ համարվում է **յաւ** «վերջ, ծայր» արմատի ածանցյալ (տե՛ս վերը՝ **յաւ** բառի առիթով):

Վսեր (վսերհ) «հանդուգն» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 349): Գ. Ջահուկյանը գրել է. «Թերևս փոխառությունն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հավաստված» (ՀԱԲ, 714): **Վէս** բառի հետ իմաստային և ձևային կապը հիմք է տալիս առաջարկելու **վսեր** <*(a)u-եր <*(a)uē-k' - <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը, որում k'-ն աճական է, **-եր-ը**՝ ածանց (հմմտ. *աղանդ-եր, ան-եր, ճենճ-եր* և այլն): *Վսերհ* տարբերակի **հ** վերջնահնչյունը հավանաբար համաբանական հավելում է *խորհ, խոնարհ, աշխարհ, ճանապարհ, նիրհ, շնորհ, սկիհ, դժգոհ, գրոհ, զոհ, հրդեհ, պատեհ, զոեհ, սեպուհ, սրահ, վստահ, գրահ, ազահ* և այլ բառերի ազդեցությամբ, ինչպես արդի խոսակցական հայերենում հանդիպող *նշխարհ, նշտարհ, կոցարհ, աշխարհաբարհ, ոչխարհ, ապաշխարհել, արհավիրհք, ժխորհ* և այլ կեղծ գրական ձևերը):

Վսեամ (վսեմ, վսամ) «վեհ, բարձր, գերագույն» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 348-349): Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական աղբյուր՝ առանց որևէ սկզբնաձև մատնանշելու (ՀԱԲ, 714): Կարելի է առաջարկել **վսեամ** <*(a)u-եամ <*(a)uē-k' - <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *k'-ն աճական է (**-եմ/-ամ/-եամ** ածանցի համար հմմտ. *խոհ-եմ, համ-եմ, թառ-ամ, խար-ամ, այծ-(ե)ամ(ն), եղ-(ե)ամ(ն)* ևն):

Վեստ (վեստ) «ազնվական, ազնվատոհմ, ազատ, իշխան» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 329): Գ. Ջահուկյանը կասկածով համարել է փոխառությունն իրանական աղբյուրից՝ հարցականով համեմատելով ավեստ. vihišhta «լավագույն» բառի հետ (ՀԱԲ, 709): Համոզիչ փաստարկ, կարելի է ասել, չկա: Ուստի առաջարկում ենք **վեստ** <*(a)uē-sti- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում **-ստ-ն հ.-ե. *-sti ածանցն է**²⁹:

Վեհ «1. բարձր, վերին, վսեմ, պատվականագույն, 2. (փխբ.) երկնային էակ, աստված» բառը Հ. Աճառյանը, ըստ Հյուբշմանի, համարել է փոխառությունն պահլ. vēh- «լավ, լավագույն» (հ.-ե. <*(a)uēsu- «լավ») ձևից (ՀԱԲ, 4, 327-328): Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին (ՀԱԲ, 709): ՎԲԱ-ն դուրս է բերել մ.պարսկ. vyh (veh) «լավ, լավագույն» ձևից: Կարծեք համոզիչ է: Սակայն Գ. Ջահուկյանը ավելի վաղ նկատել է *վեհ* – *վեր* լծորդության հնարավորությունը (Ջահ.-1967, 127): Դրանից բացի՝ նկատի ունենալով վերոհիշյալ *վեր, վեստ, վես, վսեմ* բառերի իմաստային և

²⁸ Այլալեզու զուգահեռներից են՝ ռուս. высь «բարձունք», հ.իռլ. úas «վերևում», հուն. ὕψι «վերևում, դեպի վեր»:

²⁹ Այդ *-sti (*es+ti) վերջածանցը, հայերենում կորցնելով վերջնածայնավորը և ձուլվելով արմատի հիմքային **ա/ե/ի/ու** ձայնավորին, ներկայումս ընկալվում է որպես **-աստ/-եստ/-խստ/-ուստ** վերջածանց:

ձևային նմանությունը՝ առաջարկում ենք ստուգաբանական նոր վարկած՝ վեհ <*(a)uē-g^wh- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում g^wh-ն աճական է:³⁰

Նուաստ «ցած, խոնարհ, հասարակ, ստոր, անարգ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 469): Գ. Ջահուկյանը, հետևելով Բեյլիին, համարել է փոխառություն իրանական ենթադրյալ *nivast ձևից (ՀՄԲ, 573): **Վեստ** բառի հետ ձևային նմանությունը և իմաստային հակադրությունը հուշում են դրանց նույնարմատությունը: Ուստի առաջարկում ենք **նուաստ** <*(a)uē-ni- <*(a)uē-sti- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում **-ստ-ն հ.-ե.** *sti **վերջածանցն է (տե՛ս վերը՝ վեստ բառի առիթով), իսկ *նի-ն՝ նախածանց** (տե՛ս վերը՝ **նուագ** բառի առիթով):

Վարագոյր «կախովի ծածկոց» (որից՝ **վարագուրել** «ծածկել») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 314, ՀՄԲ, 706): ՆՀԲ-ն ենթադրել է «ի վայր ագուցեալ» ներքին ձևը, որից բխում է *վար-ագ-ոյր* բառակազմական բանաձևը, որում **վար-ը** վերոհիշյալ **վայր** «ցած» (<*(a)uēi-r-) արմատն է, *r-ն աճական է, **ագ-ը** (<*ou- (ՀՄԲ, 20)) «հագնել» իմաստով արմատն է (որից՝ **ագուցել** «կապել, ամրացնել»), **-ոյր-ը** գոյականակերտ վերջածանց է (հմմտ. *կափ-ոյր, պար-ոյր, շար-ոյր, հաստ-ոյր, կահ-ոյր, խար-ոյր* (ՀՄԲ, 809)): Փաստորեն սա բարդ ածանցավոր բառ է: Այս ստուգաբանությունը հաստատվում է այլալեզու նույնիմաստ զուգահեռներով. ռուս. *завеска* < *за-навес-ка* < *на-вес* «վրան կախված» < *вѣснть/вѣсѣть* «կախ(վ)ել, կախ ընկնել» (ՎԲԱ), անգլ. **hanging** «վարագոյր» < **hang-ing** «կախված»: Ի դեպ, բարբառներում կա նաև վարարքու ձևը, որտեղ, ըստ երևույթին, **ագ-** բաղադրիչի փոխարեն առկա է **արք-** (< **արկ-**) արմատը, իսկ **-ոյր-ի** փոխարեն՝ **-ու** ածանցը: Սա իր կառուցվածքով հիշեցնում է ոսկեդարյան վերարկու բառը:

Վրան «1. թաղիքե ծածկ, 2. կիսածածկ, շվաքարան, 3. (փխբ.) երկնականար» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 352): Գ. Ջահուկյանը, հետևելով Բենվենիստին, համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ համեմատելով մ.պարթ. *wd'n* ձևի հետ (ՀՄԲ, 715): ՆՀԲ-ն ենթադրել է «ի վայր արկեալն» ներքին ձևը: Ելնելով թե՛ ձևից, թե՛ իմաստից՝ առաջարկում ենք այս բառը կապել վերոհիշյալ **վեր (վերայ)** արմատի նախաձևի հետ՝ **վրան** <*(a)uē-r- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում *r-ն աճական է (**-ան** ածանցի համար հմմտ. *զլ-ան, կայ-ան, օրր-ան, կապ-ան, տապ-ան, շրջ-ան, խոտ-ան, խար-ան, շար-ան, պար-ան, հոր-ան* և այլն (տե՛ս նաև ՀՄԲ, 796)): **Վեր** «վրա»

³⁰ Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդ. *uttamā-* «բարձրագույն, զերագույն, լավագույն», *ucca-* «բարձր» (*ud-k^we) (Պոկ., № 2064, *ūd-), **նախահնդիրան.** *ut^wtamás «ամենավերին, բարձրագույն» (ՎԲԱ, հ.-ե. *ūd-):

արմատի հետ կապը («ի վերայ ծածկեալ՝ ձգեալ» բնիմաստով) հաստատվում է այլալեզու նույնիմաստ զուգահեռներով. **լեհ. namiot «վրան»** < նախապլավ. *наметъ (ՎԲԱ) < на-метъ «վրան գցած» (հմմտ. ռուս. метать «նետել, գցել, շաղ տալ»), ռուս. навес «կիսածածկ, շվաքարան» (ՎԲՌ) < на-вес «վրան կախված» < **вэсить/висэть «կախ(վ)ել, կախ ընկնել»:**

Ուշ «1. անագան, 2. հետո, 3. ժամկետից դուրս» բառը Հ. Աճառյանը նույնացրել է **ուշ(ք)** «միտք, խելք, բանականություն» բառին՝ ըստ Հյուբշմանի համարելով փոխառություն իրան. *uš «հասկացողություն, խելք, միտք» ձևից (հմմտ. ավեստ. *ušī, մ.պարսկ. (h)oš, պարսկ. hōš են), որ համարմատ է ռուս. уш «ականջներ», հայ. **ունկն** «ականջ» բառերին (ՀԱԲ, 4, 605-606): Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 750-751) և ՎԲԱ-ն համաձայն են նրա հետ: ՎԲԱ-ն «անագան» իմաստը համարել է «ուշադիր» իմաստի զարգացում, որ համոզիչ չէ: Բացի այդ, քանի որ **ուշ** բառի «անագան» իմաստը իրանական լեզուներից չէ, այլ հայերենին է բնորոշ, հետևաբար պետք է ենթադրել, որ առկա է ոչ թե իմաստային անցում և բազմիմաստություն, այլ համանունություն, ուստի **ուշ** «անագան» բառի համար առաջարկում ենք նոր ստուգաբանություն՝ **ուշ** <*uk'w- <*u(e)-k'w- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում k'w-ն աճական է: Այսինքն՝ տեղի է ունեցել անցում տարածական հատկանիշից ժամանակայինին (հմմտ. մի շարք բառեր տարբեր լեզուներում, որ բազմիմաստությամբ համատեղում են տարածական և ժամանակային բնութագրերը, ինչպես հայ. *առաջ, հետո, ետ, ի վեր, մոտ, դեմ, սկիզբ, վերջ, ընթացք, միջոց, շարունակ, առնվազն, առավել, փոքր-ինչ, քիչ, շատ, սակավ, շուրջ* են):³¹

Վաղ «1. շուտ, կանուխ, 2. նախապես, նախօրոք, 3. առաջուց, սովորականից առաջ, ժամանակից շուտ, 4. հին, անցյալ, 5. շուտով, առաջիկայում» (որից՝ **վաղուց** «1. հնում, շատ ժամանակ առաջ, 2. հնուց, շատոնց, տարիներ ի վեր», **վաղնջեան** < *վաղ-անջ-եան, **վաղնջական** «շատ հին, անցած-գնացած», **վաղեմի** <*վաղ-ամ-ի «շատ տարիների, հնօրյա, հնադարյան», **վաղորդայն** «վաղ առավոտ», **վաղնօրու** «այս առավոտ», **վաղնցե** «վաղն առավոտ», **վաղը, վաղի** «էզուց, հաջորդ օրը», **վաղանդ** «վաղը չէ մյուս օրը», **վաղվաղել** «շտապել, երագել, վռագել, աճապարել», **վաղվաղ(ակի)** «վռագ, շտապ, փութով, փութանակի, իսկույն, տեղնուտեղը», **վաղվաղուկ** «1. վռագկոտ, 2. տարածամ, 3. դյուրափոփոխ, հեղհեղուկ, 4. շտապ-շտապ»)»³² բառը Հ. Աճառյանը նույնացրել է վրաց. **խվալ (խվալա, խվալե, խուալ,**

³¹ Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդկ. úd-, út-, ավեստ. us-, uz- (>*uds-) (նախդիր) «դուրս, հետո», հուն. ὕστος «ուշ, վերջին, ամենաուշ», ὕστερος «ավելի ուշ» (Պոկ., № 2064, *ũd-), լիտվ. aulinkui «հետագա, ավելի ուշ» (Նիկ., *au-), կիպր. hústero- «ավելի ուշ», hústato- «հետո» (Նիկ., *ũd-), հ.հուն. ὕστος «ամենաուշ, ամենավերջին», լատ. usque «մինչև» (ՎԲԱ, հ.-ե. *ũd-): Իմաստային անցման համար հմմտ. նաև ռուս. поздний < նախապլավ. *pozdy- <*h.-ե. *pos- «մոտ, շուրջը, կողքին, հետ, հետո» (ՎԲՌ, поздний):

³² Թերևս այս բառի ածանցյալ է նաև **վաղանջել** «երկար մնալ» բառը, որը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 298, ՀՄԲ, 702): Պետք է կարծել, որ առկա է վաղ-անջ-ել

խուվայ) «վաղը, էգուց» բառին և ենթադրել փոխառություն մի երրորդ աղբյուրից (ՀԱԲ, 4, 297): Գ. Ջահուկյանը համաձայն է այս կարծիքին՝ ենթադրելով, որ այդ ընդհանուր աղբյուրը գուցե ուրարտերենն է (ՀԱԲ, 702):³³ Նկատի ունենալով, որ ժամանականիշ, տարածանիշ (և ոչ միայն) բառերը հակված են ներհականչության, այսինքն՝ զուգահեռաբար ունենում են իրար հակառակ իմաստներ (տե՛ս նաև վերը), և այս բառի դեպքում էլ տեսնելով ներհականչության դրսևորումներ (*վաղ-ուց — վաղ-ը*), ենթադրում ենք, որ դա ծագել է հ.-ե. նույն արմատից, ինչ դրա հականիշ **ուշ** բառը, այսինքն՝ առաջարկում ենք **վաղ** <*(a)uə-/- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *l-ն աճական է: Ինչ վերաբերում է վրացերեն **խվալ** բառի հետ կապին, ապա կարելի է ենթադրել հետևյալը: Հ.-ե. *(a)uə-/- արմատը կարող էր օրինաչափորեն ունենալ նաև *h₂auə-/- տարբերակը (հմմտ. **հաւառի** «գետառ, մայր գետ» <*h₂auər-s- «ջուր, գետ»), որից ծագած ***հաւալ**- ձևից **h/խ** անցմամբ և առաջին վանկի ձայնավորի սղմամբ կարող էր առաջ գալ հայ. ***խուալ/խվալ** հնագույն բարբառային ձևը՝ սկզբնաղբյուր ծառայելով վրացերենի համար:

Վախճան (վաղճան, վաղջան) «1. վերջ, ավարտ, 2. մահ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 4, 295, ՀԱԲ, 701): Վերոհիշյալ ներհականչության սկզբունքի հիման վրա այս բառը պետք է կապել նախորդ՝ **վաղ** բառի հետ, և առավել հին պիտի համարել **վաղջան** տարբերակը: Այդ դեպքում կարելի է առաջարկել **վախճան** <*(a)uə-/- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *l-ն՝ հ.-ե., **ջ**-ն հետնախալեզվյան աճական են, **-ան**-ը ածանց է (դրա մասին տե՛ս **վերը**՝ վրան բառի առիթով):

Վռագ «շուտ, շտապ, արագ, հապշտապ, հապճեպ, իսկույն, անմիջապես» (ՀԼԲԲ, 9, 87) բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 348): Գ. Ջահուկյանը նախապես բխեցրել է հ.-ե. *uer- «ոլորել, ծռել» արմատից (Ջահ.-1967, 268), այնուհետև համարել է անհայտ ծագման (ՀԱԲ, 713): Պետք է կարծել, որ սա ածանցավոր բառ է՝ *վռ-ազ* (**-ազ/-եզ/-իզ/-ոզ/-ուզ** ածանցի համար հմմտ. *կռճղ-եզ, բզ-եզ, խլ-եզ, մող-եզ, կոր-իզ, խոր-իզ, գոռ-ոզ, տկլ-ոզ, տոռ-ուզ, գոռ-ուզ, պլ-ուզ* ևն): Այս կարծիքն են հաստատում **վռ-** արմատից ածանցված **վռավոռ** «շուտով» կրկնավորը (ՀԼԲԲ, 9, 88), **վորվեզ** (*վռ-ա-վազ) «արագորեն, շտապով» (ՀԼԲԲ, 9, 89), **վռիշման** (վռ-իշման³⁴) «փութանակի, աճապարանքով» (ՀԼԲԲ, 9, 90) բարբառային բառերը: Նկատի

կազմությունը, որտեղ արմատը **վաղ** բառն է, **-անջ**-ը ածանց է (**-անջ/-ինջ/-ունջ** ածանցի համար հմմտ. *դող-անջ, կապ-անջ, խրխ-ինջ, եղ-ինջ, կող-ինջ, խխ-ունջ, շշ-ունջ, մրմ-ունջ, տրտ-ունջ*):

³³ Նախապես Գ. Ջահուկյանը փորձել է **վաղ**, **վաղնջական** (<***վաղինջ**-) բառը կապել հ.-ե. *kuel- «հեռավոր» արմատի հետ, իսկ **վաղանջեմ** բառը՝ *kuel(ə)- «պտտվել, լինել, ապրել» արմատի հետ (Ջահ.-1967, 126-127):

³⁴ Այս **-իշ/աշ/ոշ/ուշ/եշ** ածանցի համար հմմտ. *թավ-իշ, վոռ-իշ «լափ», թթվ-աշ, մատղ-աշ, խարոյ-աշ, վոռ-աշ «լափ», դանդալ-ոշ, լմփ-ոշ, թլ-ոշ, տկոռ-ոշ, փոթ-ոշ, բրդ-ոշ, փմփ-ուշ, մեղ-ուշ,*

ունենալով, որ **վռազ** «շուտ, շտապ» բառը ուշ «անագան» բառի մասնակի հականիշն է նույն տրամաբանությամբ, ինչ **վաղ** բառի դեպքում, առաջարկում ենք **վռ-ազ** <*(a)uē-r-s- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *r-ն և *s-ն աճականներ են: Կարելի է ենթադրել, որ **վռ(ազ)-** «արագ, շտապ» հիմքի փոխաբերական իմաստներով են կազմված **վռզքիթ** «դուրս ցցված քիթ» (Մալխ., 4, 352, ՀԱԲ, 4, 348), **վռզող (վռզել)** «հանդուգն, ստամբակ» (Մալխ., 4, 352, ՀԱԲ, 4, 348)³⁵, **վռալ** «պարծենալ, գլուխ գովել» (ՀԼԲԲ, 2, 87), **վռան** «պարծենկոտ, գլուխգովան, սնապարծ» (Մալխ., 4, 352), **վռակ** «փոփոխամիտ» (ՀԼԲԲ, 2, 88), **վռիկ, վռոշ, վռիշ** «խյուս, լափ, ապուր (հասարակ և արագ եփվող)» (ՀԼԲԲ, 2, 90) բառերը:³⁶

Յաւէտ «1. (ընդ)միշտ, հանապազ, անվերջ, հարատև, շարունակ, հավերժ, 2. ավելի, կարի, 3. առավել ևս» (որից՝ **յաւիտեան** «մշտնջենական, ընդմիշտ, հավերժ») բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառությունն պահլ. *yāvēt* հոմանիշ ձևից (ՀԱԲ, 3, 392): Գ. Ջահուկյանը համակարծիք է (ՀՄԲ, 550): Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ այս բառը միանգամայն օրինաչափորեն կարող է անմիջականորեն բխեցվել հ.-ե. նախալեզվից, առաջարկում ենք բնիկ ծագման վարկած՝ **յաւէտ** <*(h)auēi-d- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում *d-ն աճական է, *h-ն՝ նախահավելված: Առկա է հայերենին բնորոշ **h – j** անցում (տե՛ս վերը՝ **հաւ** «սկիզբ, ծայր» բառի առիթով):

Յաւէ(ր)ժ «1. (ընդ)միշտ, անվերջ, շարունակ, հավետ, մշտնջենապես, անփոփոխ, 2. ավելի, շատ» բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառությունն պահլ. ենթադրյալ **yāvēž* հոմանիշ ձևից (ՀԱԲ, 3, 391-392): Գ. Ջահուկյանը համակարծիք է (ՀՄԲ, 550): Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ այս բառը միանգամայն օրինաչափորեն կարող է անմիջականորեն բխեցվել հ.-ե. նախալեզվից, առաջարկում ենք բնիկ ծագման վարկած՝ **յաւէժ** <*(h)auēi-gʷh- <*(a)u(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» բանաձևով, որում *gʷh-ն աճական է, *h -ն՝ նախահավելված (**h – j** անցման մասին տե՛ս **հաւ** «սկիզբ, ծայր» բառի առիթով):

Յաւէրժ տարբերակի **ր**-ն ներդաշնակային հավելատարր է:

Հուսյ «1. մոտ, մերձ, կողքին, քովը, 2. անմիջապես, շուտ» արմատը Հ. Աճառյանը, ըստ Տերվիշյանի, Բուզեի, Մեյեի, համարել է բնիկ հայերեն՝ հ.-ե. *sub- «տակ» <*(eks+*upo- ստուգաբանությամբ (ՀԱԲ, 3, 124): **Վեր** արմատի ստուգաբանության առիթով նա տվել է *upo- > **հուսյ** բանաձևը (ՀԱԲ, 4, 330): Գ. Ջահուկյանը միացրել է

իեն-եշ, բղ-եշ «գեր» են, իսկ **-ման** ածանցի համար հմմտ. թաթ-ման, լ-ման «ի լի, ամբողջ», վեր-ման «ո՞ր կողմ», կեռ-ման, ել-ման, լալ-ման են:

³⁵ Գ. Ջահուկյանը **վռզող** բառը սկզբնապես կապել է հ.-ե. *uer- «ոլորել, ծռել» արմատին (Ջահ.-1967, 268), այնուհետև համարել է անհայտ ծագման (ՀՄԲ, 713):

³⁶ **Վռ-** հիմքը բարբառներում ունի համանուններ, որոնք **վառ-** «այրել» (**վռթիկ** «դյուրաբորբոք», **վռթոց** «կրակի բռնկվելու ձայն», **վռթկել** «խանդավառվել») և **ռռ-** «հետույք» (**վռլվեռ անել** «հետ-հետ գնալ, նահանջել», **վռռաութ** «ռռատք», **վռակալ** «ռռակալ, ամենավերջինը, հետին ծայրը») արմատների հնչունափոխված տարբերակներ են (տե՛ս ՀԼԲԲ, 2, 88-89):

համանուն **հուպ** «սեղմում» (<*սb- «սեղմել, ճնշել») արմատին՝ ենթադրելով դրանց նույնություն կամ բաղարկություն (ՀՄԲ, 468):³⁷ Այս տարածայնությունները նկատի ունենալով՝ կարծում ենք՝ արժե վերանայել այս արմատի ստուգաբանությունը, և առաջարկում ենք **հուպ** <*հսb- <*(h)ս-b- <*(a)ս(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ», բանաձևը որում *b-ն աճական է: Իմաստային անցումը դարձյալ հականշության հիման վրա է (հմմտ. «հեռու» իմաստային բաղադրիչը պարունակող վերոհիշյալ **վտարել, վանել, վանդել, վռնդել, օտար** բառերը):³⁸

Եզրակացություն

Այսպիսով ներկայացրինք հայերեն մի շարք բառեր (**օտար, եւ, վտարել, վանել, վանդել, վռնդել, վարատել, վայր, վեր, վերջ, ուրջ, աւարտ, յաւ** «վերջ», **հաւ** «սկիզբ», **աւազակ, աւան** «կողոպտիչ», **աւար, աւել, նուազ, աւագ, հաւ** «պապ», **վէս, վսեր, վսե(ա)մ, վեստ, վեհ, նուաստ, վարագոյր, վրան, ուշ, վաղ, վախճան, վռագ, յաւէտ, յաւէ(ր)ժ, հուպ**), որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ վիճարկելի ստուգաբանությամբ, կա՛մ փոխառություն այլ լեզվից:

Ձևով և իմաստով առնչվող այս բառերի համար, որ մինչ այժմ դուրս էին բերվում հաճախ միանգամայն տարբեր աղբյուրներից ու սկզբնաձևերից, հնչունային, ձևային և իմաստային համակարգված վերլուծությունների հիման վրա առաջարկվել են ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք ծագումնաբանորեն կապված են իրար և անմիջականորեն սերված են հ.-ե. *(a)ս(e)- «վեր, վար, դուրս, հեռու, մոտ» արմատից, այսինքն՝ բնիկ հայերեն բառեր են:

Կարևոր փաստարկ է այն, որ հ.-ե. նշված արմատից սերված հայերեն բառերը հաճախ կազմում են հոմանիշային շարքեր (*աւտար – եւ, վանել – վանդել – վռնդել – վտարել – վարատել – օցտել, աւարտ – յաւ «վերջ» – ուրջ – վերջ – վախճան, աւազակ – աւան «կողոպտիչ», վտարել «հափշտակել» – աւարել, վէս – վսեմ – վեհ, յաւէտ – յաւէրժ*) կամ հականիշային զույգեր (*վայր – վեր, յաւ «վերջ» – հաւ «սկիզբ», վէս – նուաստ, վաղ – ուշ, աւել – նուազ*), որոնք առնչվում են իմաստային հանրային կապերով: Դրանց միջև փաստորեն տեսել ենք նաև ձևային-ծագումնաբանական ընդհանրություն՝ հիմնավորելով դա ներքին ու արտաքին համեմատություններով և ստուգաբանական բանաձումներով:

Հատկանշական է, որ հողվածում որպես հ.-ե. ծագման բնիկ հայերեն բառեր ներկայացվածներից մի քանիսը *վ* սկզբնահնչունով են (*վտարել, վանել, վանդել, վռնդել, վարատել, վայր, վեր, վերջ, վէս, վսեր, վսեմ, վեհ, վեստ, վարագոյր, վրան,*

³⁷ Գ. Ջահուկյանը նախապես հնարավոր է համարել նաև **հուպ** «մոտ» <*սb- <supo-/*subo- «տակ» կապը (Ջահ.-1967, 85):

³⁸ Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ ռուս. у «մոտ» (նախդիր) (Նիկ., *au-), լիտվ. zu- «դեպի» (Պոկ., № 2064, *ũd-):

վաղ, վախճան, վնագ), և այդ հանգամանքը մեկնաբանված ու հիմնավորված է որպես օրինաչափ երևույթ, այլ ոչ թե շեղում:

Zakaryan Hovhannes – Etymology of Several Armenian Words Meaning Space-Time Relationships. – The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies of words that all come from the PIE root *(a)u(e)- «up, down, out, far, near»: աւտար <*aṷd-āro- <*(a)u-d- <*(a)u(e)- «up, down, out, far, near», վտար-ել «kick out» <*վիտար-ել <*(a)uēd-āro- <*(a)uē-d-, վան-ել «drive away» <*(a)uə-n-, վայր «1. out, 2. place, 3. down, 4. moment» <*(a)uəi-r-, վեր «up» <*(a)uē-r-, աւարտ «end» <*aṷr-d- <*aṷr-, աւազակ «robber» <աւազ-ակ <*aṷg-h-, աւար «robbery» <*aṷ-ro-, աւել «more» <*aṷ-l-, նւազ «1. less, 2. thin» <*նի-նւազ <*ni-ṷg-h- <*uə-g-h-, աւազ «senior» <*aṷ-g^wh-, վէտ «lofty, upstage, haughty» <*(a)uē-k'-, նւաշտ «humble» <*նի-նւաշտ <*ni-ṷast- <*uə-sti-, ուշ «late» <*uk'w- <*u(e)-k'w-, վաղ «early» <*(a)uə-l-, վախճան «end» <*վաղ-ջ-ան <*(a)uə-l-, յաւէտ «forever» <*(h)auēi-d-, հուշ «near, soon» <*hṷb- <*(h)u-b- etc.

Key words: Armenian, Proto-Indo-European, vowel gradation, root variants, initial sound, determinative, affix.

Закарян Оганес – Этимология некоторых армянских слов, обозначающих пространственно-временные отношения. – В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии слов, которые все происходят от ПИЕ корня *(a)u(e)- «вверх, вниз, наружу, далеко, близко»: օտար «чужак» <աւտար <*aṷd-āro- <*(a)u-d- <*(a)u(e)- «вверх, вниз, наружу, далеко, близко», վտար-ել «выгнать» <*վիտար-ել <*(a)uēd-āro- <*(a)uē-d-, վան-ել «отогнать» <*(a)uə-n-, վայր «1. наружу, 2. место, 3. вниз, 4. момент» <*(a)uəi-r-, վեր «вверх» <*(a)uē-r-, աւարտ «конец» <*aṷr-d- <*aṷr-, աւազակ «разбойник» <աւազ-ակ <*aṷg-h-, աւար «грабёж» <*aṷ-ro-, աւել «более» <*aṷ-l-, նւազ «1. меньше, 2. худой» <*նի-նւազ <*ni-ṷg-h- <*uə-g-h-, աւազ «старший» <*aṷ-g^wh-, վէտ «высокомерный» <*(a)uē-k'-, նւաշտ «униженный» <*նի-նւաշտ <*ni-ṷast- <*uə-sti-, ուշ «поздно» <*uk'w- <*u(e)-k'w-, վաղ «рано» <*(a)uə-l-, վախճան «конец» <*վաղ-ջ-ան <*(a)uə-l-, յաւէտ «навсегда» <*(h)auēi-d-, հուշ «близко, скоро» <*hṷb- <*(h)u-b- и т. д.

Ключевые слова: армянский язык, праиндоевропейский язык, чередование, корневые варианты, начальный звук, детерминатив, аффикс.

**ԲԱՌԱԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ Ա. ԱՄԱՄԻԱՑՈՒ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Թաղևոսյան Հասմիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ լեզվի Հ. Աճառյանի անվան ինստիտուտ,
ավագ գիտաշխատող.
hasmikadevosyan333@gmail.com
DOI: 10.54503/978-9939-970-07-3-135

Բանալի բառեր. միջնադարյան բժշկարան, Ամիրդովլաթ Ամասիացի, միջին հայերեն, բառակապակցական տերմին, դեղաբանական բառ, բուսանուն, համադրական բառ

Միջնադարյան բժշկարաններում փոխառյալ և նորաստեղծ *բառ-տերմինների* կողքին զգալի թիվ են կազմում նաև կայուն *բառակապակցություններով արտահայտված բաղադրյալ տերմինները*: Վերջիններս, թեև տերմինի հասկացության իմաստն արտահայտում են նկարագրորեն, սակայն կարևորվում են օտար տերմինի հայերեն համարժեքը տալու տեսանկյունից, բացի այդ՝ դրանք մատնացույց են անում նաև հայկական բժշկական տերմինների կազմավորման ուղին՝ մասնավորապես բառակապակցությունից անցումը իսկական բարդության, ինչպես օրինակ՝ աղվեսի ցավ-աղվեսացավ, *արծվու ճանկ-արծվաճանկ, ըղտու փուշ – ուտափուշ, ծովու խոտ- ծովախոտ*, կատվի խոտ – *կատվախոտ, հացի դեղ-հացադեղ ճակատին* ոսկր - ճակատոսկր, *մկան ականջ-մկնականջ, ողնաշարի ուղեղ – ողնուղեղ, ստամոքսի բերան- ստամոքսաբերան և այլն*:

Միջնադարյան բժշկարաններում կիրառված բառակապակցական տերմիններից շատերը թեև չամրագրվեցին իբրև բժշկական տերմիններ, բայց երևույթի բացատրությամբ իրենց հերթին նպաստեցին հետագայում տվյալ հասկացություններին համարժեք տերմին ստեղծելու գործին²: Այս տեսանկյունից արժեքավոր կարող է լինել նաև միջին հայերենի շրջանում կիրառված բառակապակցական տերմինների լեզվական քննությունը:

Միջին հայերենի երկրորդ շրջանում՝ 15-րդ դարում, բառակապակցական տերմինների առատ կիրառությամբ հատկապես առանձնանում են հայ մեծ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու երկու տպագիր բժշկական աշխատությունները՝

¹ Տե՛ս Ս. Վարդանյան, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 2000, էջ 180:

² Հերացու և Աբուսայիդի կիրառած բառակապակցական տերմինների մասին տե՛ս Հ. Թաղևոսյան, Կազմախոսական նորաստեղծ բժշկական տերմինները 12-րդ դարի բժշկարաններում (Մ. Հերացի, Աբուսայիդ), «Հայագիտության հարցեր», N 3 (12), Ե., 2017, էջ 132-141:

«Օգուտ բժշկութեան»³ (1466-1469) բժշկարանը և «Անգիտաց անպէտ»⁴ (1478-1482) բժշկական բառարանը, որտեղ հեղինակը տվել է հին և միջնադարյան բժշկագիտությանը հայտնի գրեթե բոլոր բուսական, կենդանական և հանքային ծագում ունեցող 3754 անուն դեղանյութերի նկարագիրը, նրանց տարբեր զուգորդումների, բուժման միջոցների պատրաստման եղանակներն ու օգտագործման ձևերը, անդրադարձել է նաև՝ հանքային ջրերով բուժման, նույնիսկ՝ տեղային անզգայնացման հարցերին:

«Օգուտ բժշկութեան»-ը, մյուս բժշկարաններից տարբերվելով իր լայն ընդգրկվածությամբ, զգալի թվով նոր կազմախոսական, բժշկական բառերի ու բուսանունների աղբյուր է: Իսկ «Անգիտաց անպէտ» բժշկական բառարանը, ինչպես Հ. Ամալյանն է նշում. «Իր ծավալով և գիտական արժեքով խոշորագույն երևույթ է ոչ միայն հայ, այլև ընդհանրապես միջնադարի բժշկական գրականության մեջ»:⁵ Դեղաբանական բառերը Ամասիացին ներկայացնում է օտար, հիմնականում արաբերեն գլխաբառերով, այնուհետև տալիս է տվյալ բույսի կամ դեղանվան հայերեն, հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, պարսկերեն ու թուրքերեն տարբերակները:

Հոդվածում անդրադառնում ենք Ա. Ամասիացու բժշկարաններում վկայված բուսանուն մատնանշող հայերենակազմ այն բառակապկցություններին (դրանք բազմաթիվ են), որոնք չեն կիրառվել ավելի վաղ ստեղծված բժշկարաններում (ՄՀԲ-ում բերվում են Ամասիացու վկայմամբ), կամ հանդիպում են համադրական ձևով: Ուշագրավ է, որ Ամասիացին, չնայած մինչ այդ գործածվող համադրական ձևերին, հաճախ նախապատվությունը տվել է բառակապակցական ձևերին՝ այդպիսով փորձելով ոչ միայն ավելի մատչելի ներկայացնել այս կամ այն բույսի իր բացատրությունները, այլև տալ օտար բուսանուն-տերմինի հայերեն համարժեքը: Հաճախ նա դա արել է օտար (հիմնականում արաբերեն, պարսկերեն կամ թուրքերեն) բառը բառացի թարգմանելու ճանապարհով:

Հին և միջնադարյան բժշկարաններում որպես դեղանյութեր հիմնականում հիշատակվել են բույսերը: Բուսանունները միջնադարում արաբերենից թարգմանված աշխատություններում դիտվել են որպես բժշկական տերմիններ և քանի որ «...օտար բնագրերում հանդիպող դեղանունների զգալի մասի համար համարժեք բառեր չկային՝ համապատասխան բույսերի Հայաստանում չլինելու պատճառով, կամ եթե կային առանձին տեղերում, թերևս անձանոթ էին հայ թարգմանիչներին:

³ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան (այսուհետև՝ փակագծերում ՕԲ), Ե., 1940:

⁴ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց Անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, (այսուհետև՝ փակագծերում ԱԱ), Վիեննա, 1926:

⁵ Տե՛ս Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, Ե., 1971, էջ 14:

⁶ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009:

Ուստի բույսերի անունները մեզ մոտ պարզապես փոխ էին առնվում, իսկ մայրենի լեզվում եղած բուսանուններից գործածվում էին ամենուրեք միայն հայտնի անունները, ինչպես՝ ցորեն, եղեգ, եղինջ, նուշ, ոսպ, խոաղոդ, նուռ, խնձոր, տանձ, վարդ, ձնձաղիկ, կորեկ և այլն»։ Ահա թե ինչու միջնադարյան բժշկական տերմինաբանության մեջ փոխառյալ տերմինները մեծ մասամբ դեղաբանությանն են վերաբերում, մասնավորապես դեղաբույսերին»։ Այս առումով անգնատատելի է Ամասիացու կատարած աշխատանքը. փորձել է տալ փոխառյալ բուսանունների՝ մինչ իր ժամանակը կիրառված ու չկիրառված հայերեն համարժեքները։ Ամասիացու գործածած բառակապակցական բուսանունները (քննվել է 200 տերմին) հիմնականում երկբաղբիջ են՝ կազմված որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ։

Ա. **Հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ կազմված բուսանունները** ներկայացնում ենք երեք խմբով.

1. **Կենդանիների անուններով բաղադրված բուսանուններ**, որոնք կիրառվածների մեջ զգալի թիվ (կեսից ավելին) են կազմում։ Վերջիններս կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

ա. *կենդանանուն + կազմախոսական՝ աչք, ականջ, ազի, գլուխ, ոտք, ճանկ, լեզու և այլ գոյականներով ձևավորված բուսանուններ, որոնց* հիմքում ընկած է տվյալ բույսի և *կենդանու մարմնամասի* նմանությունը, *ինչպես՝ ազրավի ոտք // ճանկ* – խաչածաղկավոր բույս, ազրավաթաթ, (ԱԱ 29,165), *աղվեսի ձուք* «խոլորձ» (ԱԱ 44), *առջու աչք* (ԱԱ 394, չկա ՄՀԲ), *արջու ականջ* «գարնանածաղիկ բույս» (ԱԱ 71, չկա ՄՀԲ), *արծվու ճանկ* «բազմոտիկազգի բույս, արծվապտեր» (ԱԱ 90, 533), *դիւու ձար* «դիվաձար, ձարխոտ», (ՕԲ 281, ԱԱ 121), *եզի աչք* «եզնակն» (ԱԱ 32, 455), *եզին ազի* «խոնդատ» (ԱԱ 133), *ըղտու լեզու* «եղեսպակ» (ԱԱ 36), *լապրստրկի ականջ* «շնալեզու» (ԱԱԱԱ 31), *կատուի ճանկ* «գորտնուկազգի բույս, հրանունկ» (ԱԱ 593): *կովու աչք* «սալոր» (ԱԱ 394), *կորու ազի* «թիթեռնածաղկավոր բույս, կարիճատուտ» (ԱԱ 148, չկա ՄՀԲ), *հորթու քիթ* «խլածաղկազգի բույս, շանբերան, եղանցռուկ» (ԱԱ 59), *ձագու լեզու* (ՕԲ 403, ԱԱ 41, 198) // *ճնճղկի լեզու* «հացի ծառի սերմ» (ԱԱ 198), *ձիու ազի* «ձիաձետ» (ԱԱ 277) *մկան ականջ* «անմոռուկ, մկնականջ» (ԱԱ 30), *շան ազի* «հացազգի բույս. շնագի» (ԱԱ 439), *շան լեզու* «գաղտրիկազգի բույս, շնալեզու. (ԱԱ 198), *պախրու ազի* «խոնդատ, եզան ազի» (ԱԱ 483), *պախրու ականջ* «եզան լեզվի մի տեսակ» (ԱԱ 198, չկա ՄՀԲ), *սագու ոտք* «սագաթաթ, սագախոտ, թելուկ» (ԱԱ 496, չկա ՄՀԲ), *փեղի ականջ* «բեզունազգի բույս, փղականջ» (ԱԱ 203), *օձի գլուխ* «իժախոտ» (ԱԱ 41, 69):

⁷ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007, էջ 91:

⁸ Նշվ. աշխ. էջ 92:

բ. *կենդանանուն+բուսանուն կապակցությամբ ձևավորված բուսանուններ*, որոնց հիմքում ընկած է տվյալ բույսերի՝ իրենց օգտակար կամ վնասակար հատկանիշներով այս կամ այն կենդանուն նման լինելու կամ տվյալ կենդանու սիրելին լինելու հանգամանքը. այդպիսիք են՝ *արջու ընկույզ* «փսխրնկույզ, ործրնկույզ, ճարճրուկ» (ԱԱ 75), *արջու խաղող* «հավամրգազգի բույս, արջախաղող» (ԱԱ 383), *առջի վարդ* «քաջվարդ» (ԱԱ 70), *ըղտու խնձոր* «երնջան» (ԱԱ 304, չկա ՄՀԲ), *ըղտու փուշ* «ուղտափուշ», (ԱԱ 438), *իշու խիար* «կատաղի վարունգ» (ԱԱ 54), *իշու մատղ* «կաթնբեկ» (ԱԱ 173), *իշու վարդ* «եզնակն» *telekia* (ԱԱ 545), *խոզի ծաղիկ* (ԱԱ 341, չկա ՄՀԲ), *խոզի փուշ* «թիրթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույս՝ «խոզափուշ» (ԱԱ 54), *ծիծոնկի խոտ // ծիծոնկի դեղ* «կանթեղախոտը» (ՕԲ 5, ԱԱ 396), *կաքավու արօտ* «գառնադմակիկ» (ԱԱ 233), *ձկան ածուենի* «ջրոսպ, գորտնբուղ» (ԱԱ 278), *մկան սոխ* «շուշանազգի բույս՝ մկնասոխ, բծիծ» (ԱԱ 582), *շան գանձապիլ* «մատիտեղազգի բույս՝ հովվի բիր» (ԱԱ 138), *շան մանուշակ* «վայրի մանուշակ» (ԱԱ 416) բուսանունները:

Այս խմբում ուշագրավ են *այգու գայլ* կամ *այգու գայլխոտ* բուսանունները, (քշուշ, արաբ. *kušut*) (ԱԱ 599), որոնք Ամասիացին գործածում է հենց «գայլխոտ» իմաստով:

գ. *Բույսեր, որոնք կիրառվում են տվյալ կենդանուն վնասելու կամ ոչնչացնելու նպատակով* և անվանումը հուշում է այդ մասին. *գայլ ըսպաննող* «շուշանազգի բույս. կեղծ դանձլամեր» // սպիտակ խարբախ (ԱԱ 211), *լուի դեղ* (թույն իմաստով) «լվադեղ» (ԱԱ 294, չկա ՄՀԲ), *ձկան մահարար* «խլածաղկազգի բույս, խորնդատ» (ԱԱ 277) կամ *ձկան սպաննող* (ԱԱ 347). *ձուկ հարբեցնող* «լուսնասերմնի (ԱԱ 348), *մեղուին սպանող* «հարսնամատազգի բույս, կոկոռ, նունուֆար» (ԱԱ 284), *շուն սպանող* «շնամեռուկ, շան մահարար» (ԱԱ 224):

Այս խմբում ընդգրկել ենք նաև օձի ծառ, սրան հոմանիշ *օձի սխտոր* «բոգ» (ԱԱ 97) և *օձի փայտ* «օձափայտ» (ԱԱ 390) բուսանունները. տվյալ բույսերը կիրառվում են օձին վնասելու և նրա գործողությունները կանխելու համար:

Նշվածներից թերևս կարելի է առանձնացնել *կատղած շան դեղ* եռաբաղադրիչ բուսանունը, որը կիրառվել է վառվռուկ բուսանվան համար՝ իբրև արաբերեն *հաշիշ ըլ քալպ -ի* հայերեն թարգմանություն (ԱԱ 26). դեղաբույսը կիրառվում է ոչ թե շան, այլ շան կծածից տուժած մարդու համար:

Կենդանանուններով բաղադրված բուսանունների պարագայում պետք է նկատենք, որ միևնույն բույսը երբեմն կարող է արտահայտվել տարբեր կենդանանուններով: Այդպես են ներկայացնում նաև Հայբուսակը⁹, Միջին հայերենի բառա-

⁹ Ղ. Ալիշան, Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն, Վենետիկ-Ս. Ղազար, 1895

րանը, Բուսանունների բառարանը¹⁰: Այսպես օրինակ՝ *ձիաձետ* բույսի համար գործածվում են *դիվու ձար*, *ձիու ազի*, իսկ *խոնդատի* համար՝ *եզան ազի*, *պախրու ազի*, *ձկան մահարար* կամ *ձկան սպանող*, եզնակնի համար՝ *եզին աչք*, *իշու վարդ*, *շնալեզվի* համար՝ *շան լեզու*, *լսպստակի ականջ* (գառնալեզու) և այլն: Այստեղ դեր է խաղացել միևնույն բուսանունը տարբեր լեզուներից թարգմանելու հանգամանքը: Ամասիացին օտար բուսանունները ներկայացնելիս նշում է, թե որ լեզվից է թարգմանել: Ալիշանը առանձին բառահոդվածներում անդրադառնում է այդ պատճառով առաջացած շփոթին:

2. **ընդհանրական բույս մատնանշող խոտ, տակ, ծաղիկ, ծառ, դեղ, փայտ գոյականներով բաղադրված բուսանուններ.** *ասիկու խոտ* «եղինջազգի բույս. կովինչ» (ԱՄ 255, 69), *երընձայի տակ* «ջնդիանայ, բոգ» (ԱՄ 132), *ընկան խոտ* «բարդածաղկավոր բույս, ճուռակախոտ» (ԱՄ 150), *ծովի խոտ* «ծովասեգ» (ԱՄ 231), *կելինճիկի ծաղիկ* (թրք.geleincik) «ինքնացան կակաչ» (ԱՄ 178), *կտրկոյ տակ* «աղուեսաձուգ» (ԱՄ 236), *հազի դեղ* «տատրակ» (ԱՄ 613), *հացի դեղ / հաց ուզոյ* «հովանոցավոր բույս, հացադեղ» (ԱՄ 402), *հացի փայտ* «ձիթենազգի ծառ, հացենի» (ԱՄ 198), *հովվի գավազան* «մատիտեղ» (ԱՄ 276) (ՄՀՋՄ¹¹-ում՝ հովուի բիր) // *հովիւի փոյ* «հովվափոյ» (ԱՄ 263), *ձենաստաղոյ տակ* «վարդազգի բույս, երեսնակ» (ԱՄ 278), *մեռնի ծառ* «բալասանածառ» (ԱՄ 104), *ունձի խոտ* «գորտնուկազգի բույս» (ԱՄ 205), *փայլանտուզի խոտ* «էշի փայլանի մեջ լցվող խոտ» (ՕԲ 226) և այլն:

Այս խմբում առանձնացրել ենք եռաբաղադրիչ 4 բուսանուն, որոնք, ամենայն հավանականությամբ՝ նկատի ունենալով վերջիններիս բուժական գորույթունը, իմաստունների անվամբ են կոչված. *Աղէկսանդր թագավորին ծառ* (ԱՄ 507, չկա ՄՀԲ), *Սողոմոն իմաստնաց ծառ* բուսանունները կիրառվել են արաբերեն միևնույն *եսպրուհ* «մորմազգի բույս, մանրագոր» (ԱՄ 506) բույսի համար, *Սուրբ Գրիգորի ծառ* «շրթնածաղկավոր բույս, խնկողկուզակ» (ԱՄ 540), *Դավիթ մարգարեի մեղր* «բուսական խեժ» (ԱՄ 35):

3. **Կոնկրետ բույերի ենթատեսակներ նշանակող բուսանուններ**, որոնք ձևավորվել են տեղ ցույց տվող գոյական + բուսատեսակ բաղադրիչներով. *ածուենոյ եղրդակ* «եղերդ սովորական» (ԱՄ 218), *ածուոյի հումագ* «մատիտեղազգի բույս՝ ավելուկ սովորական» (ԱՄ 243), *ածուոց քարոս* «հովանոցավոր բույս, կարոս մշակովի» (ԱՄ 471), *գետնի աստղ* «տորոնազգի միամյա կամ բազմամյա բույս՝ գետնաստղ» (ԱՄ 114), *գետնի քահան* «անանուխ, դադձ» (ԱՄ 114), *գետնի խնծոր* «երիցուկ, պապունաճ» (ԱՄ 102), *գետնի ձար* «բազմոտիկազգի բույս՝ դիվաձար»

¹⁰ Ռ. Ղազարյան, Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառակրան, Ե., 1981:

¹¹ Մ. Հերացի, Ջերմանց միաթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 45:

(*adiantum* ԱԱ 114) **գետնի փիճի** «շրթնածաղկավոր բույս՝ լերդախոտ» (ԱԱ 594), **գողեց ճանկ** «աղավնիճազգի թուփ՝ արքահամամածառ» (ԱԱ 116), **գորտընբուրթ ծովի** «կարապածաղիկ» (ԱԱ 116), **լեռան գինձ** «վայրի համեմ» (ԱԱ 546), **լեռան թուզ** (ԱԱ 213, չկա ՄՀԲ), **լեռան սագապ** «հվնբ. վայրի սագապ», (ԱԱ 516, չկա ՄՀԲ), **լեռան քաքանած** «վայրի հարսնախոտ՝ ֆիզալիս» (ԱԱ 294, չկա ՄՀԲ), **ծովու ժանկ** «թելուկազգի բույս. թալ» (ԱԱ 373), **ծերոց գավազան մեծ** «կուսածաղիկ» (ԱԱ 308), **ծերոց դաղձ** «դիվասանդ» (ԱԱ 358), **ծովու խաշխաշ** «թխակակաչ» (ԱԱ 214), **կոկճայ ծառի** «փոկածաղկազգի բույս՝ ճագում» (ԱԱ 235), **ջրի գորտնբուրդ** «ջրոսպ փոքր» (ԱԱ 505), **ջրի դաղձ** «ջրանանուխ» (ԱԱ 245), **ջրի չքնտուր** «շերեփուկախոտ» (ԱԱ 320), **ջրի պղպեղ** «ջրապղպեղ» (ԱԱ 618), **ջրի քարոս** «ջրակարոս» (ԱԱ 308), **ջրհորի գինձ** «դիվածար» (ԱԱ 486), **տրախտի հալիլայ //տրախտի տաղ** «*մելիազգի բույս թունավոր կեռասանման պտուղներով՝ ազատրախտ*» (ԱԱ 77):

Բ. Որոշիչ-որոշյալ հարաբերությամբ կիրառված բուսանունները ըստ բուսատեսակի հիմնական տարբերակիչ հատկանիշի կարելի է դասակարգել 3 հիմնական խմբերի.

1. **գունային հատկանիշով բնորոշվող բուսատեսակի անվանումներ. դեղին ծաղիկ** «ձագախոտ» (ԱԱ 94), **դեղին սուսան** «գեղորաշուշան» (ԱԱ 29), **կարիք մամիսա** «թխակակաչ» (ԱԱ 90), **կարմիր սուսամ** «կարմիր քնջուրթ» (ԱԱ 571), **կարմիր տակ** «ճակնդեղ» (ԱԱ 254), **կարմրուկ ցորեն** «հաճար» (ԱԱ 220), **սպիտակ այգի** «դդմազգի բույս, լոշտակ սպիտակ (ԱԱ 608), **սպիտակ խարդալ** (ԱԱ 328) // **սպիտակ մանանեխ // մանանեխ** «խաչածաղկավոր բույս՝ մանանեխ սպիտակ» (ԱԱ 75, 167), **սպիտակ հարֆ** (ԱԱ 204, չկա ՄՀԲ), **սպիտակ դուստ // սպիտակ սուսանի տակ** (ԱԱ 77, չկա ՄՀԲ), **սպիտակ սուսան** (ԱԱ 377, 726 չկա ՄՀԲ), **սպիտակ վրացի կոճ** «շուշանազգի բույս՝ կեղծ դանձլամեր» (ԱԱ 212), **սպիտակ տուղտ** «իշակաթնուկազգի բույս՝ կմշտրուկ, հալպուպ (ԱԱ 248), **սպիտակ պահման** «ճումճում» (ԱԱ 198, չկա ՄՀԲ), **սպիտակ պղպեղ** (ԱԱ 418, չկա ՄՀԲ), **սեւ այգի** «դդմազգի բույս, լոշտակ երկտուն» (ԱԱ 608), **սեւ գնդիկ** «արջոնդեղ, սոնիճ» (ԱԱ 240), **սեւ չաման** (ԱԱ 527), **սպիտակ մարմահուզ** (ԱԱ 351, չկա ՄՀԲ), **սպիտակ մարվ** (ԱԱ 138, չկա ՄՀԲ), **սպիտակ մագարիոն** (ԱԱ 346, չկա ՄՀԲ):

2. **տարածքային հատկանիշով (կոնկրետ վայրում աճող) բնորոշվող բուսատեսակի անվանումներ. հնդի կանափ** (ԱԱ 295) «շնամեռուկազգի բույս, շնամեռուկ, հնդկականեփ», **հնդի չաման**

(ԱԱ 272) «*մելիազգի բույս. արջոնդեղ, սև գնդիկ, սոնիճ*», **հնտի ֆնդուխ** «արմավենազգիների ազգին պատկանող արեկնի ծառի պտուղը, փուփիլե», **հնդի ֆնտուխ** (ԱԱ 85), **հոռմի սպանախ** (ԱԱ 289) // **հոռմցի սպանախ** թելուկազգի բույս, թալ» (ԱԱ 467), **հոռմցի ըոզիան** «հովանոցավոր բույս, անխոն» (ԱԱ 62), **հոռմցի ընկուզ** «ընկուզ, արքայակաղին» (ԱԱ 98), **հոռմցի ձուրթ** «աղտորազգի բույս, մագ-

տաքե» (ԱԱ 353), *հոռնցի չաման* «թիթեռնաձաղկավոր բույս՝ հոռոմ-չաման» (ԱԱ 590), *հոռնցի սնպուլ* «հացազգի բույս, փայլասենի» (ԱԱ 276 հոռոմ սնպուլ ԳՎ 192), *հոռնցի տաստի* «սրոհունդ, արևքունրիկ» (ԱԱ 268), *հոռնցի ցորեն* «կարմրավուն ցորեն» (ԱԱ 220), *դպտի բակլա* «հարսնամատաղզիների նտանիքի բույս, լոտոս» (ԱԱ 322), *սարվ թուրքիստանի* «հովանոցավոր բույս, անճիտան, զարնապ» (ԱԱ 492, չկա ՄՀԲ), *օշինտր հոռոնցի* «բարդաձաղկավոր բազմամյա բույս, ափսինթ» (ԱԱ 519):

Այս խմբում ենք դրել նաև *վայրի* ածականով ձևավորված բուսանունները, որոնք որոշիչ-որոշյալ հարաբերությամբ ձևավորված բուսանունների գերակշիռ մասն են կազմում (54 բառակապակցություն). *վայրի ազարիոն* «դիվաճանկ» (ԱԱ 312), *վայրի ազոխ* «թանձրատերևազգի բույս, թանթոնիկ» (ԱԱ 64), *վայրի անուխ* «վայրի անանուխ» (ՕԲ 421), *վայրի գինձ* «վայրի համեմ» (ԱԱ 453), *վայրի եղերդակ* «խիժաճարճատուկ», (ԱԱ 218), *վայրի խաշխաշ* «պապլաս» (ԱԱ 446), *վայրի հազար* «եղերդ» (ԱԱ 271), *վայրի նտան ծաղիկ* «ճուլինար» (ԱԱ 334), *վայրի պատնջան* (ԱԱ 392), *վայրի սազապ* «սպանդ» (ԱԱ 146), *վայրի սխտոր* «լերդախոտ» (ԱԱ 83), *վայրի ստեպդին* «գազար» (ԱԱ 312), *վայրի տուղտ* «բաղրջուկ» (ԱԱ 385), *վայրի տունկ* «վայրի խաղող» (ԱԱ 78), *վայրի տուղտ* «բաղրջուկ» (ԱԱ 385), *վայրի քանկար* «արտիճուկի» (ԱԱ 270), *վայրի քարալիայ* «դաշտակոտեմ» (ԱԱ 314), *վայրի ֆուրանաձ* «լերդախոտ լեռնային» (ԱԱ 282) և այլն:

Սկստենք, որ միևնույն բուսատեսակը հանդիպում է ն՝ արաբերեն և՝ հայերեն տարբերակներով, ինպես՝ *վայրի սիլխ* (ԱԱ 266)-*վայրի ճակնդեղ* (ԱԱ 459), *վայրի քասնի* (ԱԱ 216)- *վայրի եղրդակ* (ԱԱ 218), *վայրի խաթմի* (ԱԱ 385)- *վայրի տուղտ* (ԱԱԱԱ 385) և այլն:

3. Որակային հատկանիշով բնորոշվող բուսանուններ.

գիշահոտ վարդ // հոտվարդ «*վարդազգի բույս. Անդուն*» (ԱԱ 56) *զրևանդ բուր* «զրվանդազգի բույս՝ երկար զրևանդ» (ՕԲ 278, ԱԱ 316) (ԱԱ 294), *լեղի կալզուպան* «գաղտրիկազգիների ընտանիքին պատկանող բույս՝ շիխիար» շնկիար (ԱԱ 432, չկա ՄՀԲ), *կոկոռ ծաղիկ* «նիլուֆա». (ԱԱ 235), *կոճ պղպեղ* «իմբիր» (ԱԱԱԱ 138), *յերկան զրեւանդ* «զրվանդազգի բույս, զրվանդ, սղանգ» (ՕԲ 368, ԱԱ 86), *յերկան պղպեղ* «մորմազգի բույս, սև պղպեղ» (ԱԱ 118), *շաւառ եղեզն* «նվիկազգի բույս, խնկեղեզ» (ԱԱ 291), *շուշան ծաղիկ* «հարսնամատ սպիտակ» (ԱԱ 437), *ոսկի եղեզ* «գնարբուկազգի բույս, տմնտաշ, ոսկեղեզ» (ԱԱ 202):

Այս խմբում առանձնացրել ենք նաև դարձվածքային արժեք ունեցող 5 ուշագրավ բառակապակցական հետևյալ բուսանունները.

անիճած ծաղիկ «երեսնակ» (ԱԱ 62), *յիմար թուզ* «ժանտաթուզ» (ԱԱ 326), *շնահաւոր խոտ* «աղավնիճ» (բարեգուշակ, հաջողակ ԱԱ 30),

պտուկ կոտրուկ «կուժկոտրուկ» (ՄՄ 425), *տղա ձգող* «գաղտրիկազգի բույս՝ իշհոտոս» (ՄՄ 84):

Ամփոփելով կարող ենք ասել, որ Ամասիացու բժշկարաններում կիրառված մոտ 200 բառակապակցական բուսանունները կարևորվում են օտար տերմինների հայերեն համարժեքը ներկայացնելու, ինչպես նաև՝ միջին հայերենի լեզվափոխում բժշկական տերմինաբանության զարգացումը մատնանշելու առումով: Քննված բառակապակցական բուսանունների մոտ 10%-ը տեղ չի գտել ՄՀԲ-ում, իսկ առավել գործածականների մի մասը արդի հայերենի բառապաշարում ամրագրվել է համադրական բարդության ձևով, ինչպես՝ *ազոավաճանկ, արծվաճանկ, արջընկույզ, գետնախնձոր, լվադեղ, խոզափուշ, ծիծեռնախոտ, ծովախոտ, կատվաճանկ, կոճապղպեղ, հացադեղ, ձագալեզու, ձիագի, հացադեղ, հովվափող, մկնականջ, մկնասոխի, շնագի, շնալեզու, պտուկկոտրուկ, ջրակարոս, ջրապղպեղ, ուղտափուշ, օձախոտոր* և այլն:

Татевосян Асмик - Использование названия растений, выраженные словосочетаниями в медицинских книгах А. Амасиаци. - В статье рассматриваются названия растений, образованные словосочетанием, которые использовались в двух печатных медицинских трудах великого армянского врача 15-ого века Амирдовлата Амасиаци. Эти труды - лечебник "Полезьа медицины" (1466-1469) и словарь лекарственных веществ "Неужное для неучей" (1478-1482), где автор дал описание практически всех лекарственных веществ, известных античной и средневековой медицине (растительного, животного, минерального происхождения). В результате исследования выяснилось, что названия растений в основном двухкомпонентны, состоят из определяемо-определенной и атрибут-определенной связи. Эти словосочетания выражают значение термина описательно, но важны с точки зрения представления армянских эквивалентов иностранных терминов, а также указания на развитие медицинской терминологии в период среднеармянского языка. Около 10% исследованных названий растений не были включены в "Словарь среднеармянского языка". Только часть из наиболее употребляемых названий закрепились в современной армянской лексике в виде сложного синтетического слова.

Ключевые слова: средневековая медицинская книга, Амирдовлат Амасиаци, среднеармянский язык, фармакологическое слово, термин-словосочетание, название растения, сложное синтетическое слово.

Tadevosyan Hasmik - Use of the phrasal plant names in the Amasiacis' Medical Books. - The article examines the plants names formed by the phrases (200 phrase), which were used in two printed medical works of the 15th century's great Armenian physician Amirdovlat Amasiatsi. These works are the medical book "The Benefits of Medicine" (1466-1469) and medical dictionary "Useless for the ignorant " (1478-1482), where the author gave

a description of almost all medicinal substances known to ancient and medieval medicine (of plant, animal and mineral origin). The study shows, that plant names are mainly two-component, consisting of a definable-definite and an attribute-determined connection. These word combinations express the meaning of the term descriptively, but are important from the point of view of the representation of Armenian equivalents of foreign terms, as well as indication of the development of medical terminology during the period of the Middle Armenian language. About 10% of the studied plant names were not included in the "Dictionary of the Middle Armenian Language". Only part of the most commonly used names were fixed in the modern Armenian lexicon in the form of a synthetic word.

Keywords: Medieval medical book, Amirdovlat Amasiaci, Middle Armenian language, Pharmacological word, Term-phrase, Plant name, Compound word.

ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ XIV ԴԱՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Խաչատրյան Վալենտին

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ,

ավագ գիտաշխատող

valentin.khachatryan81@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-07-3-144

Բանալի բառեր. փոխառություն, միջինհայերենյան, օտար բառեր, տարաշխարհիկ բառեր, բարբառային բառեր, երկ, իմաստային խումբ:

Նախաբան: Միջինհայերենյան շրջանի գրավոր աղբյուրներում հաճախ գործածվել են բառեր, որոնք գրաբարյան լեզվափոփոխ պատկանող երկերում չեն վկայվել: Այդ բառերն, ինչպես և պարզվում է, մեծ մասամբ տարբեր լեզուներից, ենթադրաբար հետագա դարերում, փոխառված բառեր են: Կան ենթաշերտային կամ անհայտ ծագման բառեր ևս:

Խնդրո առարկա բառերը կա՛մ նոր հասկացություններ արտահայտող օտար բառեր են, կա՛մ այնպիսիք են, որոնց համարժեքները կան հայերենում, ուստի և գործածվել են վերջիններիս զուգահեռ: Մի առանձին խումբ էլ կազմում են տարաշխարհիկ (էկզոտիկ) բառերը¹, որոնք վերաբերում են տարբեր ազգերի ու ժողովուրդների մշակութային կյանքին: Ինչպես նկատում է Ֆ. Խլղաթյանը, «դրանց շարքին են պատկանում «օտար դրամական միավորներ, զանազան ազգային տիտղոսներ, կոչումներ... պետական հաստատություններ անվանող բառեր»:

Միջինհայերենյան փոխառյալ բառապաշարն առանձնակի խորությամբ քննված է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ հատորում³, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» Ա հատորում⁴, Ռ. Ղազարյանի «Միջին գրական հայերենի բառապաշարը» աշխատության⁵ էջերում, ինչպես նաև արձանագրված է «Հայերեն արմատական բառարանում»⁶ և հատկապես «Միջին հայերենի բառարանում»⁷, սակայն տարբեր երկերում դեռ կարելի է գտնել նշված աշխատություններից դուրս մնացած բառեր ու բառատարբերակներ, դրանց իմաստային նոր դրսևորումներ:

¹ Այդ բառերը հայ լեզվաբանության մեջ հայտնի են նաև «հատկական փոխառություններ» տերմինով:

² Տե՛ս Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, Ե., 2009, էջ 192:

³ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Հայպետհրատ, Ե., 1951, էջ 169-324:

⁴ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա հատոր, Ե., 1972, էջ 187-246:

⁵ Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 88-158:

⁶ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Ե., 1926 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁷ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009 (այսուհետև՝ ՄՀԲ):

Մոտավոր տվյալներով՝ XIV դարի հեղինակները հետևյալներն են, որոնց ավանդած երկերի շրջանակում էլ կատարվել է խնդրո առարկա փոխառյալ բառապաշարի ուսումնասիրությունը. Առաքել Սյունեցի (1350-1425)⁸, Գրիգոր Խլաթեցի (1349-1425)⁹, Գրիգոր Տաթևացի (1346-1409)¹⁰, Մատթեոս Ջուղայեցի (1350-1411)¹¹, Հովհան Որոտնեցի (1315-1386)¹², Վարդան Բարձրաբերդցի (1260-1326)¹³, Խաչատուր Կեչառեցի (1260-1331)¹⁴, Կոստանդին Երզնկացի (1270-1356)¹⁵, Հովհաննես Թլկուրանցի (14-15 դդ.)¹⁶: Ջգալի թվով միջինհայերենյան փոխառություններ վկայվել են ձեռագրերի՝ XIV դարի հիշատակարաններում, որոնց առանձին հոդվածով ենք անդրադարձել¹⁷, ուստի և այդ բառերը չենք ընդգրկում սույն հոդվածում:

Միջինհայերենյան փոխառությունները XIV դարի երկերում: Նախ պետք է նշենք, որ խնդրո առարկա բառապաշարի հիմնական մասը ակնհայտորեն ժողովրդական փոխառություն է՝ մեծ մասամբ գործածված Կոստանդին Երզնկացու և Հովհաննես Թլկուրանցու տաղերում: Կան քիչ թվով գրական փոխառություններ ևս, որոնք հիմնականում վկայվել են Գրիգոր Տաթևացու աշխատություններում: Փոխառությունները հատկապես արևելյան լեզուներից են՝ արաբերենից, պարսկերենից և թուրքերենից¹⁸: Շատ բառեր միաժամանակ հատուկ են եղել հիշյալ երեք լեզուներին էլ, ինչպես և կփաստենք ստորև ներկայացվող օրինակներով: XIV դարի երկերում արձանագրվել են նաև քիչ թվով հունարեն, ապա և հատուկենտ ասորերեն, վրացերեն և այլ լեզուներից փոխառված բառեր: Դիտարկվող փոխառյալ բառապաշարի զգալի մասը, ինչպես և կարելի է նկատել, փոխանցվել է արդի բարբառային-խոսակցական հայերենին, մի շարք բառեր էլ գրական հայերենի բառապաշարի մաս են կազմում: Սույն հոդվածում մեր բուն նպատակն է այդ բառերն ըստ իմաստային խմբերի դասակարգելն ու ներկայացնելը: Այսպես.

⁸ Ա. Սյունեցի, 1. Առաքել Սինեցի և իր քերթուածները, Վենետիկ, 1914 (այսուհետև՝ ԱՍ), 2. Ադամազիրք, Վենետիկ, 1907 (այսուհետև՝ ԱՍԱ), 3. Դրախտագիրք, Վենետիկ, 1956 (այսուհետև՝ ԱՍԴ):

⁹ Գ. Խլաթեցի, Յիշատակարան աղետից, Վաղարշապատ, 1897 (այսուհետև՝ ԳԽՅ):

¹⁰ Գ. Տաթևացի, 1. Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1829 (այսուհետև՝ ԳՏԳՀ), 2. Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, ՌՃՂ (այսուհետև՝ ԳՏԳՔԱ), 3. Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, ՌՃՁ (այսուհետև՝ ԳՏԳՔԶ):

¹¹ Մ. Ջուղայեցի, Քարոզգիրք. բառերը քաղել ենք ՄՀԲ-ից, որն էլ իր հերթին՝ Մաշտոցի անվ. մատենադարանի թիվ 6607 ձեռագրից (այսուհետև՝ ՄՁԲ):

¹² Յ. Որոտնեցի, Վերլուծութիւն ստորոգութեանց Արիստոտելի, Ե., 1956 (այսուհետև՝ ՅՈՎ):

¹³ Վ. Բարձրաբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861 (այսուհետև՝ ՎՊՏ):

¹⁴ Խ. Կեչառեցի, Տաղեր, Ե., 1988 (այսուհետև՝ ԽԿ):

¹⁵ Կ. Երզնկացի, Տաղեր, Ե., 1962 (այսուհետև՝ ԿԵ):

¹⁶ Հ. Թլկուրանցի, Տաղեր, Ե., 1960 (այսուհետև՝ ՀԹ):

¹⁷ Տե՛ս Վ. Խաչատրյան, Օտար բառերի գործածությունը ձեռագրերի 14-րդ դարի հիշատակարաններում, ՀԱՊՀ Լրաբեր (գիտական հոդվածների ժողովածու), մաս III, «Ճարտարագետ», Երևան, 2019, էջ 759-769:

¹⁸ Այսուհետև՝ արաբերեն՝ ա., պարսկերեն՝ պ., թուրքերեն՝ թ.:

Պետական-վարչական կյանք, դատաիրավական համակարգ, պաշտոն և տիտղոս. *ասախ* (թթր. yasaq, պ. yasağ «օրենք. արգելում, արգելելը») «օրենք» - *ասախ* առնել «արգելել» - Ասախ արար *խուբլ* և հրաման ոչ կորուսել զամենեսեան (ԳԽՅ, 18), *բրինձ* (ֆր. prince) «իշխան. Իշխանորդի. թագաժառանգ» - Ջի դուստր էր բրնձին Անտաքու (ՎՊՏ, 172), *գունահ* (պ. gonāh, guna) «մեղք, հանցանք», որից և՛ *գունահքար* (պ. gonāhkar) «մեղավոր, հանցավոր (անձ/») - Ասցի. ես *գունահքար*, դու թագաւոր, քեզիկ մեղայ (ԿԵ, 189), *էլթիար* (ա. iqtiyar) «իրավունք, իրավասություն, իշխանություն» - Գլուխք բերին շատոնց, անուն եղել իր *էլթիար* (ԿԵ, 200), *հուբլ* // *խուբլ* (ա. hukm, պ. hokm, թ. hūkm, hūküm) «հրաման, վճիռ» - Այսօր եմ *հուբլով* իշխան (ԿԵ, 154), Ասախ արար *խուբլ* և հրաման ոչ կորուսել զամենեսեան (ԳԽՅ, 18), *խաֆսա* (թ. kafes) «բանտ» - ի խաֆսա ածել «ծուղակի մեջ գցել, որոգայթ լարել, դավ նյութել» - Որ զիս ի խաֆսա ածեր, կու խոցէ, զինչ օձ թինաւոր (ԽԿ, 182), *դատի* (ա. qādi) «1. դատավոր, 2. իշխան, կառավարիչ» - Թէ այսօր ծեծեց իմ հայր *դատին* (ՀԹ, 228), *դաւլ* (ա., թ. qavl, պ. ḡovl) «խոստում, ուխտ, պայման» - *Ջղաւլն* և զերդումն իւրեանց փոխեցին (ՀԹ, 146), *աթապէկ* (չաղաթ., թ. atabeg) «տիտղոս, որ շնորհվել է սելջուկյան ամիրայությունների կառավարիչներին և գորահրամանատարներին» - Յորում ժամանակի էր և Ելտկուզ *աթապէկ* (ՎՊՏ, 162), *խալեֆայ* // *խալիֆայ* (ա. xalifa) «խալիֆ, ամիրապետ» - Ել համբաւ զնմանէ ուժգին մինչև խալեֆայն երկուցեալ առաքէ նմա ընծայս (ՎՊՏ, 127), Առնու ընդ ձեռամբ և յղէ առ *Խալիֆայն* (ՎՊՏ, 130), *խարաճ* (ա., պ. xaraj) «հարկ, տուրք» - Ի նոյն ամի Սարգիս ոմն Խաչենեցի կայր ի Գանձակ և առնոյր խարաճ (ՎՊՏ, 173), *խուռութայ* (թթր. qurultay, ḡuriltay) «համաժողով» - Եւ կոչէին զաւուրսն զայնոսիկ *խուռութայ*՝ իբր խորհրդատօնս (ՎՊՏ, 204), *կատապան* (<հուն. katepānō) «կառավարիչ, կուսակալ, իշխան, քաղաքապետ» (ՎՊՏ, 133), *նօմոս* (հուն. νόμος) «օրենք, կարգ, կանոն» - Նախ կրթիլ և վարժիլ ուսմամբ զգիր դատաստանացն և զկանոնացն և զնօմոսացն թագաւորաց և զՄովսէսին (ԳՏԳՔԱ, 459), *շահնայ* (պ. şahna, sehne «ոստիկան, ոստիկանապետ») «վարչական և հարկահավաք պաշտոնյա» - Աղբօրս ասեն քաղքի շահնայ (ՀԹ, 229), *բէկ* // *պէկ* (պ. bāk, թ. Beg, bey) «1. կալվածատերերի, իշխանավորների կամ բարձրաստիճան պաշտոնյաների տիտղոս, 2. անձնանունների հետ գործածվում է տեր, իշխան նշանակությամբ» - Ընդ մեռանել Ուսուֆ *բէկին*՝ զօրք Չաղաթին եկին հասին (ԳԽՅ, 16), Տուղրիլ պէկ, որ էառ զիշխանութիւն սուլտանութեան (ՎՊՏ, 130), *էլչի* // *ելչի* (թ. elçi) «պատգամաւոր, դեսպան, սուրհանդակ» - Յորժամ որ *էլչիքն* եկին ու ջողապ բերին արքային (ԽԿ, 174), *խան* (պ. xān) «թաթար մոնղոլների արքաների, իշխանների, կառավարիչների տիտղոսը կրող անձը» - Բարձր է նստեր զերդ *խան* (ԿԵ, 154), *քալամաչի* (թթր. kälimäçi < ա. kälime, պ. kaleme «բառ, խոսք») «թարգման, թարգմանիչ» - Ջի վարդապետն որ *քալամաչով* քարոզէ՝ չէ այնպէս քաղցր որպէս իւր բերանովն

(ԳՏԳՔԶ, 44), Լեզուն ի յաղօթսն՝ նման է *ելչւոյ*, կամ *քալամաշոյ*, բայց յորժամ յիշոց և հայհոյութիւն տայ, զիս ըդ կարէ աղօթել (ԳՏԳՔԱ, 225) և այլն:

Ռազմական բառապաշար, զենք ու զրահ. բալաթիկին (հուն. a'pelatiki, պ. balātingin) «մահակ, գավազան» - Վարդապետք ասեն թէ զանազան է *սլեհն* և վասն այլոց զինուց՝ մէկ ձեռն բաւական է զի զթուրն և *զքալաթիկինն*՝ ի մէկ ձեռն կարէ բանեցուցանել (ԳՏԳՔԶ, 128), **խսար** (ա. hisār) «1. պաշարում, 2. բերդ» - Ձամս մետասան տուեալ *խսար* ի վերայ նորա թագաւորին Երուսաղէմի (ՎՊՏ, 151), **սլեհ** (ա. silāh, պ. selah) «զենք» - Առնու ի տեառնէն Գուրգանայ չորս հարիւր հազար դահեկան և սլեհս (ՎՊՏ, 128) **ճօշան** (ա., պ. յաւšān) «զրահ, լանջապանակ» - Յորժամ ճօշանդ հագնէիր՝ թուրքն ի յահեղ դառնար մոխիր (ՀԹ, 197) և այլն:

Անձ, հասարակություն, տարբեր զբաղմունքներ և արհեստներ արտահայտող անձնանուններ. աշըխ (ա. ašq) «սիրահար. գուսան» - Երթաս անգուման նստիս, Չի զիտե՞ս քո *աշըխ* եմ ես (ԿԵ, 160), **մտրուպ** (ա. mutrib, պ. motreb) «նվազածու. երգիչ» - Մտրուպ դու սազէ՛ զչաշթայն: Մտրուպ բլբուլնի շատ կան (ԿԵ, 156-157), **հարիֆ** (ա. ḥarīf) «1. ընկեր» - Բայց դահրի, քեզ չէ հարիֆ (ԿԵ, 186), **դաւատ** (ա. qavvad) «կավատութեամբ զբաղվող, կավատ» - Ի մեր միջիս՝ ինքն է *դաւատ* (ԿԵ, 184), **խաթուն** (թթր. xatun) «կին, տիկին, տիրուհի» - Ետ սպանանել զաւագ կինն իւր զԳոհար *խաթունն* (ՎՊՏ, 155), **մուղին** (ա. muiddin) «հավատացյալների աղոթքի կանչող մահմեդական կրոնավոր, մուեդդին» - Եւ *մուղին* կոչեն զձայնողն, որ է «հաւատադիր» (ՎՊՏ, 92), **մուղրի** (ա. muğri, պ. moğri «Ղուրան կարդացող») «մահմեդական կրոնավոր» - Եդեալ ի դագաղս՝ բառնայր ի յուս *մուղրեաց* (ՎՊՏ, 166), **մունէդիկ // մունէտիկ** (ա. munādi, պ. monadi) «ի լուր ամենքի մի բան բարձր ձայնով հայտարարող՝ ազդարարող» - *Մունէդիկն* ի մէջ անցաւ, ազդ առնէր զօրացն անմոլար (ԽԿ, 187), Դենն պատուական իրս ի բարձր տեղուոց և *մունէտիկն* կանչէ (ԳՏԳՔԶ, 327), **կոնտդ** (<պ. kond) «անդամալուծ» - Պարտ է առաւել *կոնտդին* ողորմիլ (ԳՏԳՔԱ, 593), **նալպանդ** (պ. nā'l-bānd) «պայտար, դարբին» - Չորօրինակ գեր ձիոյ՝ բնեռն տայ թաքուն նալպանտն և կակդացուցանէ զնա (ԳՏԳՔԶ, 343), **ճոն** (ա. juna) «կաշազոր» - Չոր և արարին ի ձեռն սրբոյն Բարսիլ՝ մականուն ճոն կոչեցելոյ (ՎՊՏ, 96), Ողորմեա ստացողի սորա Կիրակոս ճոնի և իւրոցն ամենայն (ԺԴ, 361), **եար // իար** (պ. yar) «սիրուհի, սիրեցյալ, սիրված անձ» - Իմ *եարն* երկու դուռ ունէր՝ մէկն գաղտ ու մէկն ալանի (ՀԹ, 291), Ինձ սուտ *եար*, սիրտն հեռի և է ի գատ (ԿԵ, 184), Ոչ ունիմ ես օգնական յոյս ապաւեն ինձ կամ *իար* (ԿԵ, 192), Քեզ վայել է ծառայ խպթի, պուլղար, չարքազ, հոռոմ լաչին (ՀԹ, 136), **սոյաճի** (թ. boyacı) «ներկարար» - Պոյաճուն կարասն աւիրի (ՀԹ, 221), **բիճ** (թ. pič) «1. ապօրինի զավակ, ապօրինածին, պոռնկորդի» - Չհաւատամ ես թէ ի *բիճն* նմանի (ԿԵ, 218), **գիժ** (պ. gī) «խենթ, իւելագար /անձ/» - Այլ ի վերայ այսոր, հիւանդն և *գիժն*, որ մտօքն է մոլի, և մեղօք հիւանդ, չէ ընդունելի (ԳՏԳՇ, 371), **ջալատ** (ա. jallād) «դահիճ,

փխբ.՝ անգութ մարդասպան» - Իր լեզուովն քաղցր շաքար ու սրտովն է զերդ *զջալատ* (ԿԵ, 185), *ջամլիաթ* (ա. jamā'at, պ. jāma'āt կամ jām'iyāt) «1. բնակչություն, հասարակություն, մարդիկ, 2. ամբոխ, բազմություն» - Նստեալ է սաղի սա ի մեծ ջամլիաթ (ԿԵ, 210), *ջուլհակ* (պ. julāhāk, julah) «մանածագործ, ոստայնագործ» - Մինն զհիւսն, դարբին, ջուլհակ և այլն (ԳՏԳՔԱ, 454), *սառաֆ* (ա. šarrāf) «դրամափոխ, լումայափոխ սեղանավոր» - Թէ սառաֆ կամ վաճառական բանայ զգանձս իւր (ԳՏԳՔԱ, 320), *ֆարաշ* (պ. fārraš) «սպասավոր, ծառա» - Որպէս *ֆարաշ*՝ անկողին և տեղի նմա պատրաստէ (ԳՏԳՔԶ, 45) և այլն:

Տիգրիկական աշխարհ, բնություն՝ ալամ (ա., պ. ālam, թ. alem) «աշխարհ, երկիր, տիեզերք» - Եւ տայ նմա *ալամ* և ընծայք (ՎՊՏ, 130), *բահար* (պ. bahār) «գարուն» - Գարուն է հաս ու նոր *բահար* (ԿԵ, 117), Գէնայ *բահար* այլի *բահար*, այլի կուտան սիրոյ խաբար (ՀԹ, 157), *բաղչայ // պաղչայ* (պ., թ. bağče) «1. փոքր այգի, պարտեզ, 2. խաղողի այգի» - Ծաղկունքն գան և ժողվին ի բուրաստանք և ի *բաղչանին* (ԿԵ, 119), Չծոցդ բանաս ի մէջ *պաղչին* (ՀԹ, 135), Ծոցդ է բաղչայ վարդով լի (ՀԹ, 158), *չօլ* (թ. čöl) «վայրի՝ ամայի՝ անբնակ տեղ, անապատ» - Չերկիրս ամէն *չօլ* արարին (ԳԽՅ, 5), *կլիմ* (հուն. klima) «կլիմայական գոտի» - Եւ որպէս ասէն իմաստունք՝ չորեքտասանք *կլիմ* է աշխարհս, այսինքն՝ բաժինս (ՎՊՏ, 5), *մերայ* (ա., թ. mera, mer'a) «մարգագետին» - Եւ այլք ասէն թէ՛ բազում աղբիւրք բխեն ի ծովն. որպէս *մերայի* ջուրն, և փոխեն զծովն ի դառն (ԳՏԳՀ, 208) և այլն:

Արեգակնային համակարգ , աստղագիտություն. շամս (ա., պ. šams) «արև, արեգակ», *դամար* (ա. qamar, պ. ġāmār) «լուսին» - *Շամս* ու *դամար* իմ թաճս դու (ԿԵ, 125), (ՀԹ, 157), *պատր* (ա. badr, bedr, պ. bādr) «լիալուսին, լրիվ լուսին, լուսնի լրում» - Քո տեսովդ ես դու լուսին *պատրի* թամամ (ԿԵ, 166), *մուշտարի // մուշտարի* (ա. muštari) «Լուսնթագ մոլորակը, Յուպիտեր» - Երրորդ լեարդն է, աղբիւր արեանն. տաք է և զէճ՝ ունելով զբնութին *մուշտարոյն* (ԳՏԳՀ, 241), *զօհալ* (ա., պ. zohal) «Երևակ մոլորակը, Սատուրն» - Կոյսն ընդ ձկանն *Չօհալին*, կշիռն ընդ ջրիսն *Մուշտարին* (ԱՍ, 179), Աստղն *զօհալ* և *մուշտարի*, շամս ու դամար իմ թաճս դու (ԿԵ, 139), *զօհրայ* (ա., պ. zohre) «Արուսյակ մոլորակը, Վեներա», *օտարիտ* (ա. 'uṯārid) «Փայլածու մոլորակը» - Աղեղնավորն՝ խոյն *Չօհրային*, ցուլն և եկաւորն *Օտարիտին* (ԱՍ, 179), *զանասպ* (ա. zanab) «վիշապ համաստեղության պոչը», *ռաստ* «վիշապ համաստեղության գլուխը» - Եւ անդ դիպին թանձր ամպքն կոչեցեալ *ռաստ* և կամ *զանասպ* (ՎՊՏ, 180):

Բժշկություն, հիվանդություն, կազմախոսական բառեր. հաքիմ // հէքիմ (ա. hakim, պ. hakim, թ. hekim) «բժիշկ» - Քաղեն զիս և տանին, շաքրով խառնեն այն *հաքրմնին* (ԿԵ, 114), Քո սիրոյդ հիւանդ եմ ես *հէքիմ* և ճարակ դու ես (ԿԵ, 160), *մաճուն // մայջուն* (ա., պ. mā'jun) «զանազան դեղերի բաղադրություն՝ պատրաստված մեղրով կամ շաքարով, դեղախյուս» - Որք կամին զմարմնոյ առողջութին

պահել, երթան ի բաղանիս՝ ազգի ազգի *մաճուն* առնուն և օճանին (ԳՏԳՔԱ, 191), *Մայջուն* եղայ ու վարդէջուր (ԿԵ, 123), *ճլէք* (վր. člelk'i) «թոքախտ» - ի ճլէլս ձգել «թոքախտի ենթարկել» - Վեցերորդ՝ զմարդ ի ճլէլս ձգէ և վատ առողջ պահէ (ԳՏԳՔԱ, 264), *պալղամ // պլղամ* (ա., պ. balğam) «լորձ, մաղձ, խուխ» - Որպէս ջերմն, ցուրտն, սպիտակն, որ ի *պլղամէն* լինի քաղցրն (ՅՈՎ, 280), Յորժամ *պալղամն* շատանայ ի մարդն, մազն նօսրանայ (ԳՏԳՀ, 240), *թուխմայ* (ա. tuxma, պ. toxme) «ստամոքսի խցանում, դժվարամարսություն» - Արդ որկրամոլութիւն երկու կերպիւ ասի. նախ՝ ուտելով, որ կոչի *թուխմա* (ԳՏԳՔԱ, 265), *թրիաղ* (հուն. t'eriaké) «հակաթույն, դեղթափ» - *Թրիաղն* յօձնէ լինի, գոր սպանանեն և յայլ դեղս խառնեն (ԳՏԳՔԶ, 520), *մաճաս* (ա. majassa) «1. զարկ, պուլս, 2. բազկերակ, ճաճանչային զարկերակ» - Աղօթքն նման է մաճասին՝ որ է ի բազուկն, որ չափ մաճասն կուտայ՝ նշան է թէ կենդանի է մարդն (ԳՏԳՔԶ, 361), *ճիկար* (պ. jēgār, թ. ciger) «յարդ» - Իմ *ճիկարս* քապապ հերիք, արունս թող գինի լինայ (ՀԹ, 217) և այլն:

Բուսանուններ, ծառ ու ծաղիկներ. *ըռահան* (ա. rayhan) «ռեհան» - Մուրտն, շուշան ու բրաբիոն և *ըռահանն* են խիստ սիրուն (ԿԵ, 136), *նարգէզ // նարգիզ // նարկիզ* (պ. nārges, nārjes) – Եւ ծաղիկ *նարգէզ*, որ զգոյնն պահէ հանապազ զմիշտ կուսին ցուցեալ (ԳՏԳՔԱ, 515), Չինարն ու նունուֆարն, *նարգիզ* ծաղիկն խայտազոյն (ԿԵ, 136), Յըրկէ, ձենէ զոսսան ծաղիկն և հետ նորա *զնարկիզնին* (ԿԵ, 139), *նունուֆար // նոնօֆար* (ա. nūnūfar, պ. nūnufār, nūlufār.) «ջրաշուշան», *չինար* (պ. čenar, թ. činar) «1. սոսի արևելյան, 2. անորոշ տեսակի անուշահոտ ծաղիկ» (ԿԵ, 136) – Չինարն ու *նունուֆարն*, նարգիզ ծաղիկն խայտազոյն (ԿԵ, 136), Շուշան, ըռեհան ու մանուշակ, ու *նոնօֆար*, և ի ծոցն վարդ (ՀԹ, 129), Այն *նարկիզն* հոտն բուրեաց (ՀԹ, 166), *խաշխաշ* (պ. xašxaš) «կակաչ քնաբեր» - *Խաշխաշն* թագ պաճուճեցաւ (ՀԹ, 166), *կուլ // կիւլ* (պ. gul, gol, թ. gūl) «վարդ» - Ինձ մի՛ մեղադրեր, է՛, շահ, է՛ սուլթան, թէ սիրեմ զքեզ, է՛ կուլի տաստան (ՀԹ, 115), *բրաբիոն* (հուն. brabeion) «շքանարգիզազգիների ընտանիքին պատկանող բույս՝ խիստ հոտավետ սպիտակ ծաղիկներով» - Մուրտն, շուշան ու *բրաբիոն* և *ըռահանն* են խիստ սիրուն (ԿԵ, 136), *հինայ* (ա. hinnā) «արենախոտազգիների ընտանիքին պատկանող բույս. հինա» - Դարձար զարիւնս վաթեցիր և ի ոտվնիդ դրիր *հինայ* (ՀԹ, 217), *նշար* (<պ. naštar) «սոճազգիների ընտանիքին պատկանող մշտադալար ծառ. եղևնի» - Կանաչ մնայ քան զնշարին (ՀԹ, 121) և այլն:

Պտուղներ. *կաստանայ* (հուն. ka'stanon) «շագանակենու պտուղը, շագանակ», *յունայ* (ա. 'unnāb, պ. onnab) «հունապի ծառի պտուղը, ունաբ» - Ընկուզն, յունապն ու *կաստանան* (ՀԹ, 167), *միշմիշ* (ա., թ. mišmiš) «ծիրան» - *Միշմիշն* ի ծառն դեղնեցան (ՀԹ, 167), *շամամ* (ա. šammam) «փոքր և կլոր սեխ» - Կլափդ է ինձոր, ծծերդ է *շամամ* (ՀԹ, 155):

Կենդանանուններ. թուրակ (պ. totak) «արևադարձային անտառային թռչուն» - Բերանդ շաքրով ի լի, *թուրակ* լեզու ես (ՀԹ, 144), *խնտուզ // խնդուզ* (ա. *qunduz*, պ. *ğondoz* «սամույր») 1. կուղբ, ջրշուն – Երկակենցադք են կոկորդիլոսք և խնտուզք (Երզն. քեր., ՆՀԲ), *կալարիս* (հուն. *xaradriós*) «քարադր» - Դարձեալ *կալարիս* հաւ` հայելով ի հիւանդն, առնու յինքն զցաւս նորա և բարձրանայ ի ծառն և փոխանակ հիւանդին մեռանի (ԳՏԳՔԶ, 298), *դուրի* (ա., պ. *ğomri*) «տատրակ» - Ղումրին երգէ մեծ եղանակ (ԿԵ, 136), Այ իմ *դուրի*` ես ինչ լինիմ, երբ այս խոցոյս դեղն է դիժար (ՀԹ, 132), *բեհեմուլթ* (հին եբր. *bəhēmōṯ*) «գետածի» - *Լնիաթանաւ* (Աստվածաշնչյան հրեշ) որ ի ջուրս, և *բեհեմուլթան* որ ի ցամաքային անապատս (ՎՊՏ, 6):

Ունեցվածք, գանձ, հարստություն, դրամական միավոր, առևտրային հարաբերություն. խազինայ (ա. *xazina*, պ. *xazine*) «գանձ. հարստություն» - Ես եմ աման հողէ և ի յիս լցած կայ *խազինայ* (ԿԵ, 188), *դիլայ // խիլայ* (ասոր. *xila*) «պարգև, ընծա. իբրև նվեր տրվող զգեստ, խալաթ» – Շնորհէ դու այս գերոյս մասն ու բաժին ինձ և *դիլայ* (ԿԵ, 189), *դուլլաթ* (ա. *dawlat*) «հարստություն. հզորություն. բարիք, ունեցվածք» - Առնու շատ *դուլլաթ*, թէ հզոր է անյաղթ (ԿԵ, 211), *զան* (պ. *zār, zār*) «ոսկի» – Ունէր թաճ ակամբք ու իր կար թախթ ի *զան* (ԿԵ, 211), *ճուհար* (ա., պ. *javvar, javhār*) «գոհար» - Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրութ, տպազիոն ակն ու ճուհար (ՀԹ, 131), *մալ* (ա., պ., թ. *mal*) «հարստություն, ունեցվածք, կայք, ապրանք» - Թէ ես գանձուց տէր և մալի (ԿԵ, 207), Մեր հալալ մալովն առաք (ԺԴ, 95), *մահաք* (ա. *mahakk*, պ. *māhākk*, թ. *mehenk*) «փորձաքար, որով որոշում են ազնիվ մետաղների գտությունը» - Դու ընդէ՞ր մօտ ի *մահաքն* յայտնի լինիս պարզ երեսով: Կամ *մահաքին* համար ի յերկու գոյն ինքն բացուի (ԿԵ, 174, 197), *խարճ* (ա., պ. *xārj*) «ծախս, ծախքի փող» - Որպէս ի մարմնաւոր հարսանիսս ծախն և *խարճն* ի հոր տանէն լինի (ԳՏԳՔԶ, 660), *բալիշ* (մոնղ. *bališ*, պրսկ. *baleš*) «դրամական միավոր` 75 դինարի արժողության» - Ունէր ի ձեռին *բալիշ* մի (ՎՊՏ, 208), *թուման* (պ. *tūmān*) «պարսկական դրամական միավոր, որ հավասար է 10000 արծաթ կամ ոսկի դինարի, 2. տասը հազար» - Կալոց է դեռ այլ ևս երեսուն և եօթն *թումանս*, որ է *թումանն* տասն հազար (ՎՊՏ, 209) և այլն:

Կենցաղային իրեր նշանակող բառեր. թաս (ա., պ., թ. *tas*) «1. բաժակ, 2. կոնք, լազան» – Հերթով առնուն զսաթրինճն և ձգեն ի *թասն* (ԳՏԳՔԱ, 634), *խօն* (պ. *xōn*, *xān*) «խոնչա, սեղան» - Իրենց փռեն գեղեցիկ *խօն* (ԿԵ, 121), *կթխայ* (ասոր. *gəṯxa*) «թաս, բաժակ, ըմպանակ» - Ու խմեցաք ի մի *կթխայ* (ՀԹ, 217), Սաղի, լից ո տուր *զկթղայն* (ԿԵ, 155), *մուշարուպայ* (ա., պ. *māšrābe*, հոզն. *māšareb*, թ. *mašraba*) «զավաթ, ջրաման» - Զիս է՞ր աճէք ի կուժ կալիս, կամ ի պղնձի *մուշարուպանիս*

(ՏԵՎ, 229ա)¹⁹, **խարբայ** (ասոր. 'arbālā) «քարմաղ» - Իսկ **խարբայն** Բ ցորեան ի միասին ոչ թողոյ (ՄՁՔ, 451ա), **շիշայ** (պ. թ. šišē «սպակի, շիշ») «շիշ, սրվակ» - Եւ զիս լնուն ի շիշանին (ԿԵ, 144) և այլն:

Երաժշտական գործիքներ. **նաֆիր** (պ. nāfir) «պղնձե գալարափող», **պուկ** (ա. būq, պ. buḡ) «եղջերափող, շեփոք» - Հարին զփող պատերազմին, **զպուկն** ու **զնաֆիրն** զգաւ հարկան (ՀԹ, 200), **չաշթայ** (պ. šāšta, թ. čašta) «երաժշտական վեցլարյա գործիք» - Մըտրուպ դու սազէ՛ **զչաշթայն** (ԿԵ, 156) և այլն:

Հագուստ, կտորեղեն. **ասյրիշմ** // **ասյրշում** (պ. abrišum) «մետաքս» - Ուրբերորդ՝ զի լուանալ տա զգլուխն, և կոկել զմորուսն, և ազանիլ **բէհէզու** և ծիրանիս, և քաշած **ասյրիշմով** ձեռաց սրբիչ (ՄՁՔ, 57ա), **աստան** (պ. astār) գ. 1. շորի կտոր, լաթ, 2. զգեստի տակի կողմից կարված կտորը - Ով թէ որպիսի ատելի է հանդերձս այս աստուծոյ, երեսն և **աստանն** վատ, վասն զի կրկին է (ԳՏԳՔԱ, 471), **ասլասս** // **աթլասս** (ա. āṭlas) «մետաքսյա նուրբ գործվածք՝ կտոր՝ զգեստ» - Հագաւ **զաթլասն** և **զխրմզին** (ԿԵ, 140), Հագաւ **զատլասն** ու իւրմզին (ԿԵ, 146), Վարդի նման գունով **աթլասս** հագել ես (ՀԹ, 225), **դաստանիչ** (պ. dāstarče) «սկիհի ծածկոց» - Այլև տայ զիշխանութեան կնիք՝ տալով եպիսկոպոսին զսկին դատարկ և զմաղմայն ի **դաստանչաց** ասելով (ԳՏԳՔԱ, 180), **կասայ** (ա., պ. qabā) «1. հոգևորականի զգեստ, պարեգոտ, 2. ընդհանրապէս՝ կանանց երկար զգեստ» - Ու էհան զկանայ **կասայն**՝ հագաւ **զաթլասն** և **զխրմզին** (ԿԵ, 140), **դումաշ** // **կումաշ** (ա. gumāš) «մետաքսե նուրբ կտավ՝ գործվածք, կերպաս» - Շատ զանազան **դումաշ** կայ անդ (ԱՍԴ, 86), **Ղումաշ** ես խազնի, քանի գովեմ զքեզ (ՀԹ, 151), Զինչ լաւ **կումաշ** կայր՝ քաղեցին (ԱՍԴ, 87), **մանդիլ** (ա., պ. māndil) «գլխաշոր, վարշամակ» - Եւ բացեալ զմանդիլն ցուցանէր (ԽԿ, 194), **ջուպայ** (ա. jubbā, պ. jobbe) «արևելյան տարազի երկար և լայն վերնագգես. խալաթ», **վալայ** (պ. valāh) «1. մի տեսակ բրդե կտոր, 2. կոշտ ու կոպիտ մազե ներքնագգեստ» - Հագեր **վալայ**, վրան **ջուպայ** (ՀԹ, 227) և այլն:

Վերացական գոյականներ. **գուման** (պ. gumān) «1. կարծիք, 2. հույս, ապավեն, 3. կասկած, տարակույս» - Տամ քեզ հէնց աւետիս, որ քեզ **գուման** չէր (ԱՍԱ, 247), **բասար** (ա. basar «աչք, տեսողություն») «խելք, միտք, բանականություն» - Զինչ որ մեզ իւելք կայ և **բասար** (ԿԵ, 132), **րամ** (<ա. ram) «հմայություն, կախարհություն» - Եւ բացեալ զգրեանս աստեղաց և **րամի** սոյնպէս ասացին (ԽԿ, 190-191), **լուրֆ** // **լուրվ** (ա. luṭf) «բարեհաճություն, ողորմածություն, սիրալիրություն, բարերարություն, շնորհ» - Զոր **լուրվի** կամ գայ շահի հետ քեզ կենայ զօրն ի մուրատ (ԿԵ, 186), Զերայ ի լրբէն չելնէ **լուրֆ** ու քարամ (ԿԵ, 218), **խայալ** (ա. xayal, պ. xiyal)

¹⁹ Տերտեր Երևանցի (XIV դարի բանաստեղծ), Վիճաբանութիւն խաղողի, գինույ և իմաստասիրի (Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 5847 ձեռագիր)՝ ըստ ՄՀԲ-ի:

«երևակայություն, ցնորք, պատրանք, տեսիլք, ուրվական» - Երազ է խաբող և *խայլալ* անցաւոր (ԿԵ, 210), Սպիտակ ճակատ ու սև աչեր, *լուրթ* ու քարամով լուսերես (ՀԹ, 126), *խապար* (ա. xabar) «լուր, տեղեկություն» - Թէ ի սրտէ ինձ տայ խապար (ԿԵ, 193), ՋՎահրատ Շիրինին զխապարն ես ո՞նց տամ (ՀԹ, 154), *հաղիղաթ* (ա. hāqiqāt) «ճշմարտություն, իսկություն, էություն» - *Հաղիղաթ* և անմահութեանդ է նա տես, ով որ ունի քո սիրուդ իրք մի նշան (ԿԵ, 167), *հաճաթ* (ա., պ. hojjāt) «1. ապացույց, փաստարկ, 2. պատրվակ, պատճառ» - Թէ հազար խիստ է սիրուն՝ թէզ բաժնելու խնդրէ *հաճաթ* (ԿԵ, 186), *հասրաթ* (ա. hasrat, պ. hāsrat, թ. hasret) «կարոտ, փափագ, իղձ, տենչանք, տրտմություն» - *Հասրաթ* ունիմ ի յիմ սրտիս (ԺԴ, 307), Ու ամէն հաւ սէր ունի ու շատ *հասրաթ* ի յիր սրտին (ԿԵ, 138), *էլամ* (ա., թ. elem) «վիշտ, տխրություն» - Ջինչ որ ի յիմ սրտիս կայր *էլամ* ու դուսայ գնաց այսօր յինէն, և ես դուրացայ (ԽԿ, 137), *դուսայ* (ա., թ. qussa, պ. gösse) «տրտմություն, տխրություն, մտատանջություն, թախիծ, վիշտ, ցավ, հոգս» - Եւ յերակ զօրն ի *դուսայ* հոգօք մաշեմ զիս անդադար (ԿԵ, 192), Է՞ր կու մաշիս զօրն ի *դուսատ* (ԿԵ, 186), *դիմաթ* (պ. ğimāt, ğeymāt) «զին, արժեք, հարգ» - Եւ անգէտ խօսքն ի յանգէտ մարդիքն ի մօտ է *դիմաթով* (ԿԵ, 170), *դալատ* // *դադատ* (ա., պ., թ. ğalat) «սխալ, ախալմունք» - Բայց մին *դալատ* կայ քեզ (ԽԿ, 186), Ջերայ չունիս իսկի *դալատ* (ՀԹ, 128), Նա թըլի իմ հոգոյ խօսքն ի յիր սրտին ջումլայ *դադատ* (ԿԵ, 185), *դիպն* // *խիպն* «ամոթ, պատկառանք, ամոթխածություն» - Երբ որ քո գերիդ տեսնուս, շատ *դիպն* ու նամուս առնուս (ԿԵ, 162), *մալամաթ* (պ. mālamāt) «կշտամբանք, պարսավանք, հանդիմանություն» - շինել մալամաթ «կշտամբել, պարսավել» - Շինէ մալամաթ, հանէ յարևէն (ՀԹ, 154), *մահանայ* (ա., թ. mehane) «պառճառ, պատրվակ, շարժառիթ» - Ի գատ ընկաք օտարացաք, չարկամն եղև մեզ մահանայ (ՀԹ, 218), *խասիաթ* (ա. xāṣṣiyat) «բնական հատկություն, բնավորություն, բնույթ, առանձնահատկություն, որպիսություն» - Այլ աղէկ ճօհարի գիտող է այն մարդն՝ որ զոսկին և զարծաթն լաւ ընտրէ և զ*խասիաթ* պատուական ակին և մարգարտին ճանաչէ (ԳՏԳՔԱ, 38), *թտպիր* (ա. tedbir, պ. tādbir) «1. խորհուրդ, 2. ճար, միջոց, հնար, 3. բուժում» - Եկայք որ առնենք *թտպիր* (ԽԿ, 187), *դավլ* // *դավ* (ա., թ. qavl, պ. ğovl) «խոստում, ուխտ, պայման» - Ջինչ *դավլ* և երդումն ուտէ ոչ զմինն ի հուն չի հանէ (ԽԿ, 159), *Ղալ* եղեալ մնին, յետ հարցման բանին (ԱՍ, 18), Ջղաւն և զերդումն իւրեանց փոխեցին (ՀԹ, 146), *շաղաւաթ* (ա. šaḡqiyat) «գուրթ, կարեկցանք, հոգատարություն» - Ոչ սէր, ոչ գուրթ, ու ոչ շաղաւաթ, ամէն կու ատեն զքեզ (ԱՍԴ, 117), *շառ* (ա., պ. šarr, šarr) «չարիք, չարություն, վնաս» - Աստուած փրկէ կնկան շառէ (ՀԹ, 188), *դազայ* (ա. qaza) «աղետ, փորձանք, դժբախտություն, չարիք, պատուհաս» - Ոհ, զայն *դազայն* զոր արարին արանց, կանանց և ընդ մանկտին (ԳԽՅ, 13) և այլն:

Ածականներ. բարասպար (պ. bār-a-bār) «հավասար» - Աւաղ և հօր արքայ, որ քաջանց էիր *բարասպար* (ԽԿ, 181), **բէշքմար** (պ. bi-šomar) «անթիվ, անհամար, անհաշիվ» - Ունին զանձ անթիւ ու հեծել *բէշքմար* (ԿԵ, 211), **բէսիֆար** (պ., ա. bī-sifat) «տգեղ, տձև, անկերպարան» - Ջի սուրաթէ են *բէսիֆար*, կան կենդանի ու չեն հոգով (ԿԵ, 169), **բէվայֆայ** (պ., ա. bī-vāfa) «անհավատարիմ, անվստահելի, երդմնազանց, նենգ» - Իմ աղրարն է *բէվայֆայ*, որ ինք չունի իսկի հաւատ (ԿԵ, 184), **բէտար** (պ. bidar) «արթուն, զգաստ, աշալուրջ» - Յերակ արթուն կացիր, ի յաշխարհիս բէտար կացիր (ԿԵ, 198), **բիմար** (պ. bīmār) «հիւանդ» - Եւ ի ներքև ցաւով կան ի լի և են *բիմար* (ԿԵ, 210), **գանգալի** (պ. gāngāl) «կատակաբան, զվարճախոս» - Սրտով իխստ ուրախ ու խօսօք *գանգալի* (ԿԵ, 212), **գանախ** (պ. zanax) «դատարկախոս, դատարկաբան» - Նա սրտովն *գանախ* է, ծաղր ու կատակ (ԿԵ, 217/), **թամամ** (ա. tamām) «լրիվ, ամբողջ, կատարյալ» - Լուսին սուրաթով լուս ես, *պատրես* ու թամամ ելնես (ԿԵ, 160), **թուրուշ** (պ. turš, turuš) «դառնացած, նեղացած» - Ջինչ սիրտ նեղած կայ և *թուրուշ* առ քեզ ունիս յուրախութեան (ԿԵ, 132), **լատիֆ** (ա., պ. latīf) «մեղմ, նուրբ, քնքուշ, հաճելի, վայելուչ» - Դու աճապ քաղցր ու *լատիֆ* ես խօսելով որ զշաքար ի քո շրթանցդ կու ծախես (ԿԵ, 167), **խալաս** (ա. xalās, xāles) «մաքուր, զուտ, անխառն, իսկական, բնական» - Երբ չունիս *խալաս* ոսկի, զի ես պղինձ օժած ոսկով (ԿԵ, 174), **խամ** (պ. xam) «հասարակ» - Որ նման խամ ապիկու յաժան ձգեն անգին ջօհար (ԿԵ, 201), **խիկար** (ա. hīqar) «խելոք, իմաստուն» - Մի՛ հաւատալ ամեն մարդոյ, թէ զիրենք ցուցնեն քեզ *խիկար* (ԿԵ, 199), Տուր դու ինձի իրատ, դու իխստ *խիկար* ես (ՀԹ, 147), **խումար** (ա. xumār) «հարբած, գինով» - Ես վանց քո սիրոյդ համար իս եմ և եղեալ *խումար* (ԿԵ, 159), «անուշ նայվածքով, քնքշանվաղ» (աչքերի մասին) - Աչերդ է ծովեր, *խումար* ու *մէստան* (ՀԹ, 153), **խուպ** (պ. xub) «զեղեցիկ, սիրուն» - Արեկ, արեկ իմ *խուպ* սուրաթ (ՀԹ, 119), **հայրան** (ա. hayran, պ. heyran) «զարմացած, ապշած, շփոթված, մոլորված» - Առջև աչերուս քայլես, ես իս ու *հայրան*՝ հետ քեզ (ԿԵ, 160), **հաքր** (ա., թ. haqir) «անարգ, արհամարհված, արգահատելի, ողորմելի» - Որ չիինիս *հաքր* աստենիս որ չարնէ զօրն զքեզ մաղատ (ԿԵ, 186) + *հաքր* ընգել «անարգվել, արհամարհվել. ստորանալ, նվաստանալ» - Մէջ անգիտաց հաքր եմ ընգել (ԿԵ, 122), **դաֆիլ** (ա. ḡafil, պ. ḡafel) «1. ա. անհոգ, անհոգս, անտարբեր» - Է՞ր *դաֆիլ* կաս յաշխարհիս (ԿԵ, 193), **դալպ** (ա. qalb, պ. ḡalb) «կեղծած, կեղծ, խարդախած» - Եւ այս որպէս *դալպ* դրամ էր (ԳՏԳՔԶ, 724), Կամ մաղրիպի ոսկին որ մահաքովըն *դալպ* լինի (ԿԵ, 196), Կամենաս *դալպի* գուգել, զայն՝ որ ընդրած էր մահաքով (ԿԵ, 174), **խարճի** (ա., պ. xārji) «2. էժան, էժանագին. սովորական, հասարակ» - Հինգերորդ՝ զի գոր ինչ պատուական իրս ունենայ, յամուր տեղոջ պահէ և թէ այլ *խարճի* իրսն տանի գողն, թող տանի (ԳՏԳՔԶ, 297), **խօշ** (պ. xoš) «լավ, հաճելի, դուրեկան» - Ջիրար սիրենք *խօշ* կու լինի (ՀԹ, 227), **մազատ** (ա. muzadd)

«հակառակ, ներհակ» - Ջհամբերելն ի հետ պահե զերդ հրեղէն թուր մի փոլատ, որ չիհնիս հաքր աստենիս, որ չարնէ զօրն զքեզ մագաստ (ԿԵ, 186), *մաղրիպի* (ա., պ. māğribi, māğrebi) «մավրիտանական» - Կամ մաղրիպի ոսկին որ մահաքովն դալպ լինի (ԿԵ, 196), *մաստան // մէստան* (<պ. māst «հարբած») «հարբած, գինով» - Մեճլիս զուգեմ ի սայրան, բլպուլն է ներս ի մաստան (ԿԵ, 155), Աչերդ է ծովեր, խումար ու մէստան (ՀԹ, 153), *մուխտալ* (ա. muxtal, պ. moxtall) «հուզված, վրդովված» - Մուխտալ գերիվարդ քոյ վախեցաւ, կանգնիլ չի կարէ (ԽԿ, 176), *մուհալի* (ա., պ. moğoli) «մոնղոլական, փիւք. նշաձև» - Մէկ մի հեծեր պօզ պէտաւի, եկաւ անցաւ քաջ, մուհալի աչեր ունէր (ՀԹ, 226), *նախշիդէուար* (պ. nāğš-i-devar) «շվարած, զարմացած, շփոթված» - Մուրաթ են բէսիֆաթ և յանդիման նախշիդէուար (ԿԵ, 201), *նախշինիգար* (պ. nāğš-i-nigār) «նախշանկար, նախշերով նկարված» - Այն որ տուն ունէր զարդարած և տաճար շինած ամենն ոսկուով ու նախշինիգար (ԿԵ, 211), *նախու* (պ. naçi) «բամբակից պատրաստված, բամբակէ» - Ոսկի և արծաթն ի կեր ժանկին, նախու քիմհայն ի կեր ցեցին (ՅԹՏ, 5), *նաղտ* (ա. naqd, պ. nāğd) «կանխիկ, առձեռն, առկա» - Է անմիտ, երբ դու չունիս քեզիկ բաժին իրք նաղրտով (ԿԵ, 173), *մէշում* (ա. maš'ūm, պ. māšum, թ. mešum) «1. Վատ, վատթար, 2. չարաբաստիկ, չարաղետ, չարագուշակ» - *Մէշում* քթէթ կարեմ քեզ իսիստ գէշ և իսիստ փոքրիկ: Աստուած երբ լսէ, մէշում արքայունն զաստուած յերկնից յերկիրս բերէ չբերէ՝ ասացէք (ՎՊՏ, 207, 208), *շօր* (պ. šur) «աղի, շոռ, աղահամ» - Նոյնպէս և Քրիստոս տայ քրիստոնէից կերակուր շօր (ԳՏԳՔԶ, 92), *պէհիսապ* (պ. bi-hesab) «անթիվ, անհամար» - Դու սուլթան ես պէհիսապ շատ ծառանով (ԿԵ, 166), *ռօշան* (պ. roušan) «պարզ, հստակ, ջինջ» - Որժամ խմեմ զլի շիշան նռան զունով զգինին *ռօշան* (ԿԵ, 165) և այլն:

Այլ խոսքի մասեր. *մակբայ՝ ալանի* (ա. ʿalani) մ. «1. հայտնի՝ բացահայտ կերպով, հայտնապէս, հրապարակորեն» - Յերակ է միտքն ի չընալ գաղտ և *ալանի* (ԿԵ, 217), նաև որպէս ածական՝ «2. բաց, ազատ, հայտնի, ոչ գաղտնի» - Իմ եարն երկու դուռ ունէր՝ մէկն գաղտ ու մէկն *ալանի* (ՀԹ, 291), *բէխապար* (պրսկ. bi-xābār) «անտեղյակ, անիրագել, առանց գիտության» - Հասեալ են ի դուռն ի մահուն *բէխապար* (ԿԵ, 210), *բրիշակ* (պ., թ. perišan) «1. մ. վշտացած, դառնացած. տխուր, տրտում, 2. գ. ավերակ՝ ավերված տուն» - Որ զաստենիս դու սիրեցիր, զանդէն թողեր ես *բրիշակ* (ՀԹ, 26), *գէնայ* (թ. gene) մ. «դարձյալ, կրկին, նորից, վերստին» - *Գէնայ* բահա ր, այլի բահա ր, այլի կուտան սիրոյ խաբար (ՀԹ, 157), *կամկար* (պ. gāmgār) մ. «հանգիստ, կամաց, հանդարտ, զգույշ» - Եւ անհոգ ի ժուռ զաս *կամկար* (ԿԵ, 193), *զէր ու զապար* (պ. zir-va-zābār) «վարուվեր, վերուվար. դետուղեն» - Շուտով յայն փառացն եղեն *զէր ու զապար* (ԿԵ, 211), *թէզ* (պ. tiz, թ. tez) «շուտ, շտապ, իսկույ» - Ով ինդրէ *թէզ* գտանել, զպարզեքն՝ առնու առաւօտուն (ԿԵ, 125), որից և՛ *թէզ մի* – Ոնց որ տեսան զվարդն պայծառ, ծաղկունքն առին *թէզ մի* աւար

(ԿԵ 120), **թըւաքար** (ա., թ. tafakkur, tefekkür) «մտախոհ, մտատանջ» – «Քանի՞ կենաս դուն **թըւաքար**» (ԿԵ, 193), **ղաֆիլ** (ա. ğafil, պ. ğafel) «2. հանկարծ, հանկարծակի» – Եւ **ղաֆիլ** հանց հասանէ վերայ մարդուն՝ որ չկայ ճար (ԿԵ, 193), **կապ**՝ **ղատար** (թ. kadar<ա.) «չափ, քան, այն չափով՝ քանակով՝ մեծությամբ» - Ձեզ ի՞նչ **ղատար** ես դիմանամ (ՀԹ, 142), **չաղկապ**՝ **զերայ** // **զերայ** (պ. zira) «որովհետև, քանի որ, բայց» - **Չերայ** չունիս իսկի դալատ (ՀԹ, 128), Բան գեղեցիկ կամիմ շինել, զերայ հաւսար սիրտս ի հաւան: Չերա քո տեսդ է դամար (ԿԵ, 131, 159), **վերաբերական**՝ **աճապ** (ա. 'ajab) «արդյոք» - Դու **աճապ** քաղցր ու լատի՞ք ես խօսելով, որ զշաքար ի քո շրթանցդ կու ծախես (ԿԵ, 167), **մակար** (պ. māgār) «մի՞ թե, գուցե, ուր էր թե» - **Մակար** չէաք ծնեալ յաշխարհի (ԽԿ, 133):

Փոխառությունների գործածությունը որպես բառակազմական բաղադրիչ. հատկապես մեծ թիվ են կազմում օտար արմատներից բայական վերջավորությունների միջոցով և բայերի հարադրությամբ կազմված համադրական և հարադրական բայերը: Այսպես. **համադրական բայեր**՝ **բարիշեղ** (<թուրք. barış «հաշտություն, խաղաղություն») «հաշտվել» - Բայց ինքնեանց ոչ **բարիշեղին**, այլ մին զմիւսն փախուցին (ԳԽՅ, 19), **զախմել** (<պ. zāxm «1. հարված, 2. խոցվածք, վերք») «խոցել, վիրավորել» - Գաղտուկ նետերով **զախմես** (ԿԵ, 177), **խսարեղ** (<ա. hisār «պաշարում») «պաշարել» - Տասնուհինգ ամ **խսարեղին** (ԳԽՅ, 11), **ղահրիլ** (<ա., թ. qahr «վիրավորանք») «խոռվել, վիրավորվել, վիրավորանք կրել» - Բայց **ղահրիլ**, քեզ չէ՛ հարիֆ, է՛ Կոստանդին, ունկայ ի գատ (ԿԵ, 187), **պատրեղ** (<ա., պ. badr «լիալուսին») «լրել, բոլորել» - Լուսին սուրաթով լուս ես, **պատրես** ու թամամ ելնես (ԿԵ, 160), **հարադրավոր բայեր**՝ **ղալ** առնել (<ա., թ. qavl, պ. ğovl «խոստում, ուխտ, պայման») «խոստանալ, ուխտել» - Նախ աչքն սրտին երեք իր դալ առնէ (ԳՏԳԶՁ, 308), **մասխարայ** առնել (<ա. masxara «ծաղր՝ ծիծաղ առաջացնող, ծիծաղաշարժ, ծաղրածու») «ծաղրել, խաղք անել» - **Մասխարայ** և ծաղր առնեն զմարդիկ (ԳՏԳԶՁ, 724) և այլն:

Ածանցավոր բառեր՝ անասախ (<ան և թթր. yasaq «օրենք», թ. yasak «արգելված») «անօրեն, անիրավ» - Չար, անզգամ մարդիկ էին, և **անասախ** ազգ թուրքմանին (ԳԽՅ, 16), **անգուման** (<ան և պ. gumān) «անկասկած. անակնկալ, անսպասելի. անհույս» - Գայ վարդն գաղտ ու **անգուման**: Երթաս **անգուման** նստիս (ԿԵ, 119, 160), **անմրաթ** (<ան և ա. mūrūvvet «մեծահոգություն, մարդասիրություն») «անագորույն, անգութ» - Ձի անողորմ էր և անիրաւ, **անմրաթ** և **անշաղաւաթ** (ԳԽՅ, 17), **անշաղաւաթ** (<ան և ա., պ. šāğavāt) «անսիրտ, անխիղճ, դաժան», **անշարմ** (<ան և պ. šārm «ամօթ, խայտառակություն») «անպատկառ, անամոթ» - Անահ, և **անշարմ** և անամօթ, **անշաղաւաթ** և անսէր և անգութ (ԱՄ, 231), **անդալատ** (<ա., պ., թ. ğalat «սխալ, ախալմունք») - Ոչ օտար մարդն ի հետ քեզ մէկ դառնայ հանց **անդալատ** (ԿԵ, 186), **ժղլանք** (ա. šugl «զբաղմունք») «զբաղմունք, հաճելի գործ» - Յայս տեղս ոչ

գործ կայ ու ոչ *ժղլանք*, կամ բանաստեղ մեզ (ԱՍԴ, 143), *ղօշոտութիւն* (<պ. xoš «լավ, հաճելի, դուրեկան») «բավականություն, հաճույք» - Այլ մարդիկ վասն *ղօշոտութեան* և հեշտութեան իւրեանց գտին զնուսա ի վայելչութիւն անձանց (ԳՏԳՔԱ, 258), *ղաւլիկ* (<ա., թ. qavl, պ. ğovl «խոստում, ուխտ, պայման») - *Ղաւլիկ* հետ ինձ արիք ու մոռացեալ ես (ՀԹ, 224) և այլն:

Բարդ բառեր՝ *ասղասերես* (<ա. āsras «մետաքսյա նուրբ գործվածք՝ կտոր՝ զգեստ») - Զարքայն չիշխեմ յիշել զվրացի՝ *զասղասերեսն* զԴեմետրէի (ԽԿ, 131), ***խարարաբեր*** (<ա. xabar) - Նա զՂազարոս խնդրեաց՝ ղրկել *խարարաբեր* ձեզ (ԱՍԴ, 146), ***ճոթճոթ*** (<թթ. jot) մ. «ծայրը ծայրին» - Այլն կազմեն փայտեայ անօթ իբրև զկարաս, *ճոթճոթ* յիրեար ձգած և փայտեայ պընջանով պնդած, որ զինչ ի ներս լնուն՝ պահէ (ԳՏԳՔԶ, 730):

Որոշ օրինակներ վկայում են կրկնակ փոխառության մասին²⁰: Ըստ ՀԱԲ-ի՝ *թագ* բառը փոխառոյալ է իրանական tāy ձևից, որը կա արաբերենում tāj ձևով, քրդերենում և թուրքերենում՝ taj ձևով: Սակայն Խաչատուր Կեչառեցին և Կոստանդին Երզնկացին գրաբարյան շրջանում լայն տարածում ունեցող նշված բառը գործածել են փոխատու լեզվի հնչյունական տարբերակով. *թագ* // *թաճ* (պ. tač) «թագ» - Առնում *զթաջն* ու *զթաղթն քո* (ԽԿ, 174), Թէ աղքատ իր հանդիպի, կամ թագաւոր ոսկի *թաճով* (ԿԵ, 173): Այդպիսի վառ օրինակներ են նաև հետևյալները՝ ***նիգար*** (պիլ. nikār, պ. nīgār, թ. nigār) «պատկեր, նկար, փխբ. գեղեցկուհի» - Է՛ գեղեցիկ կերպիւ սուրաթ, որ է ստեղծած նախշ ու *նիգար* (ՀԹ, 159), ***նիջան*** (պիլ., պ. nišān) «նշան, նշանակ» - Յուցնէ մեզ սիրու դուռն ու տայ շատ *նիջան*: Կոստանդ, ի խոր ծածկեալ է բան, զայս որ առ մեզ տըւեր *նիջան* (ԿԵ, 210, 123):

Կարծում ենք, որ հետևյալ բառն էլ վկայում է վաղ փոխառության մասին, քանի դեռ հայերենում չկար *ֆ* հնչյույթը. ***զօրհան*** // (ա. za'farān, պ. zā'fāran) «Հիրիկազգիների բույս, քրքում» - Սագի է մեզի *զօրհան* (ԿԵ 157), սակայն հետագայում նաև գործածվել ու տարածվել է կրկնակի փոխառությամբ *զաֆրան* տարբերակը²¹:

Գրավոր աղբյուրներում, մասնավորապես XIV դարի երկերում կարելի է նկատել նաև դեռևս չբառարանագրված օտար ծագման բառեր ու բառատարբերակներ: Շատ բառեր էլ ստուգաբանված չեն կամ ոչ ստույգ բացատրություններով են: Նման հարցերին անդրադառնալու ենք առանձին հոդվածով:

Եզրակացություններ: Դիտարկված օտարամուտ բառերը, բառարանային տվյալների համաձայն, գերակշիռ մասով միջինհայերենյան շրջանի համար եզակի վկայություններ են: Մի մասն էլ բառարաններում տրված է հետագա դարերի գործերի բնագրային վկայություններով, չնայած որ, ինչպես և պարզվում է, մինչ

²⁰ Այս մասին տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 90:

²¹ Տե՛ս ՄՀԲ:

այդ վկայված են եղել XIV դարի երկերում: Բառարանային եզակի վկայություններով բառերից շատերը եթե ոչ նշված ժամանակաշրջանում, ապա արդի բարբառային հայերենում լայն գործածություն ունեն, ուստի և, ըստ հարկի, արձանագրված են «Հայոց լեզվի բարբառային բառարանում»²²: Մի շարք օրինակներ առանձնակի հարազատությամբ ոչ միայն գործածվում են արդի ժողովրդախոսակցական լեզվում, այլև գրական հայերենի բառապաշարի մաս են կազմում:

Այսպիսի ուսումնասիրությունների բուն նպատակն է բացահայտել նախորդ լեզվափոփոխում հայերեն մուտք գործած օտար բառերն իրենց ողջ քանակով, հնչյունական և իմաստային դրսևորումներով, ապա և հետամուտ լինել դրանց հետագա զարգացումներին, նկատել աղերսներն ու առնչությունները հայերենի բոլոր դրսևորումներին, այդ թվում և՛ բարբառային հայերենին, և այդպիսով կատարել որոշ ճշգրտումներ:

Хачатрян Валентин - Резюме использование в среднеармянских заимствований произведениях XIV века.- В статье рассматриваются заимствования из среднеармянского периода, зафиксированные в армянских произведениях XIV века. Данные слова были классифицированы и представлены по семантическим группам.

Ключевые слова: заимствование, среднеармянский язык, иноязычные слова, экзотические слова, диалектные слова, произведение, семантическая группа.

Khachatryan Valentin - The Use of Middle Armenian Borrowings in Works of the XIV Century.- The article examines borrowings from the Middle Armenian period recorded in Armenian works of the 14th century. These words were classified and presented by semantic groups.

Keywords: borrowing, Middle Armenian, foreign words, exotic words, dialect words, work, semantic group.

²² Հայոց լեզվի բարբառային բառարան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2001-2012:

ՀԱՅԵՐԷՆԷ ԱՆԳԼԵՐԷՆ ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Խայիկեան Զեփիւն

ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ,

կրտսեր գիտաշխատող

zepurtamerian@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-07-3-158

Բանալի բառեր. արեւմտահայերէն, անգլերէն, զրուցատրութիւն, գործնական դասագիրք, օտար լեզու, բառապաշար

Ներածութիւն

Զրուցատրութիւնները որեւէ օտար լեզուի ուսուցման համար մեծ կարեւորութիւն ունեցող գործնական դասագիրքեր¹ են: Հայերէն բառարաններու մէջ *զրուցատրութիւն* բառի տարբեր իմաստներ կը գտնենք: *Զրուցատրութիւն* կը նշանակէ, *պատմութիւն*, *աւանդութիւն*, *լրատուութիւն*, *տեղեկութիւն*, *մեկնութիւն*, *բացատրութիւն*, *խօսակցութիւն*, *ասուլիս*, *միտքերու փոխանակութիւն*, բայց այս բոլորի հետ միասին *զրուցատրութիւն* բառով կը հասկնանք *օտար լեզուն սորվեցնող եւ անորմով արտայայտուելու հնարաւորութիւնը տուող տպագրական հրատարակութիւն մը*, ինչպէս նշուած է «Հայոց լեզուի նոր բառարան»² մէջ: Համարեա՛ նոյն բացատրութիւնը կը գտնենք է. Աղայեանի «Արդի Հայերէնի բացատրական բառարան»³ին մէջ, ուր տարբեր բացատրութիւններու կողքին նշուած է նաեւ «ձեռնարկ, որ պարունակում է որեւէ (ծանօթ) լեզուի կենցաղային առօրեայ արտայայտութիւնները՝ թարգմանուած մի այլ (անծանօթ) լեզուի, զրուցագիրք»³:

Արեւմտահայերէնէ անգլերէն զրուցատրութիւններ ունեցած ենք հին ժամանակներէ, նոյնիսկ 19-րդ դարէն. յիշենք՝ 1879-ին Կ. Պոլսոյ մէջ տպուած եւ Արամեան տպարանէն լոյս տեսած զրուցատրութիւնը, որ կը կրէ «Առաջնորդ խօսակցութեան անգլերէն լեզուի» խորագիրը⁴ եւ 20-րդ դարու սկիզբը՝ 1911, 1913 եւ 1920 թուականներուն Պոսթընի մէջ տպուած եւ Երան մամուլէն⁵ լոյս տեսած հայերէնէ անգլերէն զրուցատրութիւնները:

Հայերէնէ անգլերէն զրուցատրութիւնները, որպէս ուսումնական գործնական գիրքեր, ինչպէս վերը նշուած է, լեզուի ուսուցման անհրաժեշտ աղբիւրներ են,

¹ Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան: Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի Ինստիտուտ: Հայկական ՄՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, Ե., 1972, էջ 58:

² Հայոց լեզուի նոր բառարան, Գնէլ արքեպիսկոպոս Ճերէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան: Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէրթոք, 1992, էջ 630:

³ Արդի հայերէնի բացատրական բառարան: Էդուարդ Բագրատի Աղայեան: «Հայաստան» Հրատարակչութիւն, Ե., 1976, էջ 383:

⁴ Մ.Պաղտասարեան Հիւսեանց, Առաջնորդ խօսակցութեան անգլերէն լեզուի, Կ. Պոլիս, 1879: (https://haygirk.nla.am/upload/1512-1940/1851-1900/arajnord_xosakcut_1879.pdf)

⁵ Հայաստանի ազգային գրադարան, շտեմարաններ, հայ գիրք:

բայց անկասկած, անոնք մեծ կարեւորութիւն ունին արեւմտահայերէնի զարգացումին առնչուող հետազօտական աշխատանքներուն համար:

Այս յօդուածով պիտի ներկայացնենք երկու տարբեր թուականներուն եւ երկու տարբեր վայրերու մէջ հրատարակուած հայերէն-անգլերէն զրուցատրութիւններու համեմատական քննութեան մը արդիւնքը:

Նախ պիտի ներկայացնենք 1913-ին Կոստանդնուպոլիս տպուած զրուցատրութիւն մը, որ լոյս տեսած է Պալէնց գրատուն-հրատարակչատունէն, Սահակ - Մեսրոպի աշխատասիրութեամբ եւ կը կրէ «Հայերէն-անգլերէն զրուցատրութիւն» խորագիրը՝ *Ընթերցանութիւն, Խօսելալարժութիւն, Նամակագրութիւն եւ Քերականութիւն* ենթավերնագիւններով⁶: 271 էջէ բաղկացած այս ձեռնարկի կազմութեան ու հրատարակումին անհրաժեշտութեան մասին այսպէս կը վկայէ Սահակ-Մեսրոպ, իր *ԵՐԿՈՒ ԽՕՄՔ* -ին մէջ. «Ա՛լ բացորոշ է թէ անգլերէնը օրէ օր աւելի անհրաժեշտ կը դառնայ Հայ Ազգին համար: Քաղաքական իրադարձութիւն, մտաւորական նոր հոսանք եւ ազգային վերածնունդի խլրտում այդ ամենակարեւոր պէտքին առջեւ կը դնեն մեր ցեղը»⁷: Իսկ ընթերցողներուն ուղղուած խօսքին մէջ կը կարդանք. «Լեզու մը սորվելու համար միշտ պայման չէ ուսուցիչի քով դաս առնելը: Ռեւէ անձ կրնայ սորվիլ, առանց ուսուցչի ալ, եթէ ճշմարտապէս փափաքի, տոկայ աստէն մը դժուարութեան եւ զանց չառնէ իրեն տրուած հրահանգները»⁸:

Ինչպէս նշեցինք, տուեալ զրուցատրութիւնը բաղկացած է հիմնական չորս մասերէ: Առաջին մասը, *Ընթերցանութիւնը*⁹ կը սկսի անգլերէն ալֆապետով, այբուբենով՝ տպագիր եւ ձեռագիր: Անգլերէն այբուբենի իւրաքանչիւր տառի դիմաց տրուած է հայերէն տառադարձութիւնը եւ արեւմտահայերէնով բացատրուած է տառերու, վանկերու արտասանութեան ձեւերը, առոգանութիւնը: Ընթերցանութեան յատկացուած են դասեր, ամէն մէկ դասէն առաջ ներկայացուած է մօտաւորապէս 30-40 անգլերէն բառ՝ հայերէն տառադարձութեամբ եւ թարգմանութեամբ: Ապա այդ անգլերէն բառերով կազմուած են կարճ բնագիրներ, թեքսթեր՝ ընթերցելու համար¹⁰:

Երկրորդ մասի, *Խօսելալարժութիւն/Չրուցատրութիւն*¹¹ բաժինի անգլերէն բառապաշարը ներկայացուած է թեմատիկ մօտեցումով: Այս բաժինը ունի ներքին ենթաբաժանումներ եւ ամէն մէկ ենթաբաժինի մէջ կը գտնենք տարբեր նիւթի շուրջ բառեր եւ արտայայտութիւններ. ինչպէս՝ ընտանիքի, տան, կահ-կարասի-

⁶ Հայերէն-անգլերէն զրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913:

⁷ Հայերէն-անգլերէն զրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 5:

⁸ Հայերէն-անգլերէն զրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 6:

⁹ Հայերէն-անգլերէն զրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 7:

¹⁰ Հայերէն-անգլերէն զրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 13:

¹¹ Հայերէն-անգլերէն զրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 25:

ներու, հագուստ-կապուստի, մթերքի, եւ այլ թեմաներու առնչուող բառեր, որոնք, նախ տրուած են հայերէնով, յետոյ՝ անգլերէնով, ապա՝ հայերէն տառադարձութեամբ: Ընթերցանութեան բաժինի մէջ *Պարզ ոճեր*¹² վերնագիրի տակ տրուած են թեմատիկ բառերով կազմուած կարճ նախադասութիւններ, բնականաբար տուեալ բառի օգտագործումը սորվեցնելու միտումով:

Այս գրուցատրութիւնը ունի *Նամակագրութիւն*¹³ խորագիրով բաժին մը, որ շատ իւրօրինակ է: Նախ ցոյց կու տայ անգլերէն նամակ գրելու պատշաճ ձեւը, օրէնքը, ապա կը ներկայացնէ անգլերէնով գրուած ու արեւմտահայերէնի թարգմանուած շնորհաւորական կամ ցաւակցական նամակներու օրինակներ, հրաւիրատոմսի, ծանուցումի եւ ստացագրի օրինակներ: *Քերականութիւն*¹⁴ բաժինը շատ ամփոփ է. կը պարփակէ գոյականի, բայի, դերանունի, ածականի, մակբայի, կապի եւ ածանցներու մասին շատ պարզ տեղեկութիւններ: Կը թուի, թէ նպատակը նոր սորվողը քերականական գիտելիքներով չծանրաբեռնելն է, բայց ահա, տուեալ հրատարակութեան աշխատասիրութիւնը կատարող Սահակ-Մեսրոպ, ընթերցողները քաջալերելու միտումով կը նշէ. «Առանց քերականութիւն գիտնալու կատարելապէս, առանց լեզուին նրբութիւններուն ու կանոններուն տիրանալու, ընթերցող, դուն կրնաս խօսիլ եւ գրել ալ, եթէ չմոռնաս պայմանները»¹⁵:

Իրականութեան մէջ լեզու մը սորվելու համար, 1913-ին նշուած պայմանները նոյնն են, ինչ որ մեր ներկայ օրերուն. բարձրաձայն ընթերցել, սորված բառերը միշտ կրկնել, խօսելու եւ գրելու ատեն այդ լեզուով մտածել:

Երկրորդ գրուցատրութիւնը, որուն կ'ուզենք անդրադառնալ, Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ տպուած եւ լոյս տեսած է Տօնիկեան եւ Որդիք տպարանէն: 256 էջէ բաղկացած «Զրուցատրութիւն հայերէնէ-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ) ընդհանուր խորագիրի տակ ընթերցողին հրամցուած գրուցատրութեան 4-րդ տպագրութիւնը կատարուած է 1963-ին¹⁶: Պ.Պ. Աճէմեանի աշխատասիրութեամբ կազմուած գրուցատրութիւնը ունի 5 բաժին. *Բառագիտութիւն, Խօսակցութիւն, Քերականութիւն, Նամակագրութիւն, Առակներ եւ զեղեցիկ ոճեր*¹⁷: Յառաջաբանին մէջ հրատարկող կողմը կը շեշտէ կարեւորութիւնը այսպիսի ձեռնարկի մը հրատարակութեան, նշելով, թէ Լիբանանի մէջ «Բ. Համաշխարհային պատերազմէն ետք լեզուի պահանջքը փոփոխութիւն կրեց. Ֆրանսերէնը հետզհետէ նահանջեց եւ տեղի տուաւ անգլերէնին. ժողովուրդը սկսաւ անգ-

¹² Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 101:

¹³ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 254:

¹⁴ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 222:

¹⁵ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալէնց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 6:

¹⁶ «Լիբանանահայ գիրքը 1894-2012» Մատենագիտական ցանկ, աշխատասիրութեամբ՝ Անդրանիկ Տազէսեանի, Արմէն Իւրնէշլեանի, Պէյրութ, 2013, էջ 33:

¹⁷ Զրուցատրութիւն Հայերէնէ-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1963, էջ 2:

լերէն սորվիլ. հաստատութիւններ իրենց թղթակցութիւնները սկսան անգլերէնով պահել: Նորահաս սերունդը անտարբեր չմնաց, նոր պահանջքը անհրաժեշտութիւն մը դարձաւ»¹⁸:

Ինչքան ալ որոշ մանրամասնութիւններով երկու գրուցատրութիւնները իրարմէ տարբերին, այսուամենայնիւ մօտեցումը նոյնն է. նախ տրուած է անգլերէն ալֆապետը, տառի ուսուցում՝ հայերէն տառադարձութեամբ եւ թարգմանութեամբ, ապա առօրեայ կեանքին առնչուող թեմատիկ բառապաշար եւ այդ բառապաշարով կազմուած կարճ նախադասութիւններ, որոնք ներկայացուած են հայերէն տառադարձութեամբ ու թարգմանութեամբ, ապա քերականական ամփոփ գիտելիքներ: Այս գրուցատրութեան մէջ թէեւ ընթերցանութեան կարճ բնագիրներ չկան ի տարբերութիւն 1913-ին Կոստանդնուպոլսոյ մէջ տպուած գրուցատրութեան, բայց այստեղ թեմատիկ բառապաշարը շատ աւելի հարուստ է: Բացի ընտանիքի, տան, կահ-կարասիներու, հագուստ-կապուստի, մթերքի, առեստուրի, ձիւղերու, օդերեւութաբանութեան, եւ այլ թեմատիկ նիւթեր ընդգրկող բառապաշարէ, կայ բաժին մը՝ *Գործածական ասացուածքներ*¹⁹ վերնագիրով, ուր ներկայացուած են առօրեայ խօսակցութեան մէջ միշտ կիրառուող այնպիսի խօսքեր, կարճ նախադասութիւններ, որոնցմով կ'արտայայտենք մեր մտորումները, ուրախութիւնը, հիացմունքը, ավստասանքը, ցաւը, տխրութիւնը սերն ու հիացմունքը:

Յիշեալ երկու գրուցատրութիւններու համեմատական զուգադիր քննութենէն ետք պարզ կը դառնայ, որ 1913-1963 թուական արեւմտահայերէնը կրած է յստակ փոփոխութիւն թէ՛ լեզուի կառոյցի, թէ՛ բառապաշարի մէջ: Արեւմտահայերէնի կառոյցի կրած փոփոխութիւնը ակնյայտ է գրուցատրութիւններու յառաջաբաններուն եւ ընթերցողներուն ուղղուած խօսքերուն մէջ, որոնցմէ մէջբերումներ կատարած ենք (էջ 2, 4): Իսկ բառապաշարի պարագային կը նկատենք, որ առաջին գրուցատրութեան մէջ կան այնպիսի բառեր, որոնք երկրորդ գրուցատրութեան մէջ չեն ներգրաւուած եւ հակառակը: Նախ ներկայացնենք 1963 թուականին տպուած գրուցատրութեան անգլերէն բառապաշարէն կարգ մը բառեր՝ հայերէն բացատրութիւններով (նշենք, որ գրուցատրութեան մէջ տրուած է հայերէն բառը, յետոյ անգլերէնը, ապա հայերէն տառադարձութիւնը):

Այսպէս.

1-tomato - լոլիկ²⁰

2- muscle - մկան²¹

¹⁸ Զրուցատրութիւն Հայերէնէ-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1963, էջ 3:

¹⁹ Զրուցատրութիւն Հայերէնէ-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1963, էջ 153:

²⁰ Զրուցատրութիւն Հայերէնէ-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1963, էջ 21:

- 3- brother-in-law - աներձագ²²
- 4- dining-room - ճաշասենեակ²³
- 5- cap - գդակ²⁴
- 6- book case - գրադարան²⁵
- 7- pipe - ծխամորճ²⁶
- 8- tavern - զինետուն²⁷
- 9- bar-room - զինետուն²⁸
- 10- brown - թխագոյն²⁹

Այնինչ, 1913-ին տպուած գրուցատրութեան մէջ միեւնոյն անգլերէն բառերու հայերէն բացատրութիւնները այսպէս նշուած են.

- 1-tomato - ոսկեխնձոր³⁰
- 2- muscle - դնդեր³¹
- 3- brother-in-law - աներորդի³²
- 4- dining-room - սեղանատուն³³
- 5- cap – գտակ/ փեղոյր³⁴
- 6- book case -մատենադարան³⁵
- 7- pipe - ծխափող³⁶
- 8- tavern - կապելայ³⁷

²¹ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 30:

²² Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 16:

²³ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 35:

²⁴ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 46:

²⁵ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 35:

²⁶ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 48:

²⁷ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 50:

²⁸ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 50:

²⁹ Զրուցատրութիւն Հայերէն-անգլերէն» (Պարզ եւ դիւրուսոյց եղանակ), տպ. Տոնիկեան, Պէրոյթ, 1963, էջ 34:

³⁰ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 46:

³¹ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 51:

³² Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 25:

³³ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 26:

³⁴ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 38:

³⁵ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 27:

³⁶ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 40:

³⁷ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 42:

9- bar-room -գինետուն³⁸

10 - թխագոյն – brown³⁹

Բերուած օրինակներէն պարզ կը դառնայ, որ 1913-ի գրուցատրութեան մէջ կան հայերէն բառեր, որոնք արդէն օգտագործուիմ դուրս մնացած են, ինչպէս՝ *նսկէինձոր, դնդեր, կապելայ, փեղոյր* բառերը, կան բառեր, որոնք քիչ կ'օգտագործուին, ինչպէս՝ *աներորդի, ծխափող* բառերը, եւ կան որոնք իմաստային այլ դրսեւորումներ ստացած են ինչպէս՝ *մատենադարան, սեղանատուն* բառերը: Հետաքրքրական է, որ *թխագոյն* բառը որպէս անգլերէն *brown* բառի բացատրութիւն, կը տեսնենք երկու գրուցատրութիւններու մէջ, բայց ներկայիս *brown* անգլերէն բառի դիմաց ունինք *սրճագոյն* բառը, իսկ *թխագոյն* բառի բացատրութիւնը հայերէն բառարաններու մէջ նշուած է *թուխ, մութ գոյն ունեցող, թխաթոյր, թխորակ, մթագոյն, մոխրագոյն*⁴⁰:

Ամփոփում

Զրուցատրութիւնները օտար լեզուի ուսուցման համար մեծ կարեւորութիւն ունեցող գործնական դասագիրքեր են օտար լեզուն սորվեցնող եւ անորմով արտայայտուելու հնարաւորութիւնը տուող տպագրական հրատարակութիւններ են: Հայերէնէ -անգլերէն գրուցատրութիւններուն նպատակը թէեւ անգլերէն սորվեցնելն է, բայց մեզի համար այն ունի մէկ այլ կարեւորութիւն. այն է՝ դիտարկել արեւմտահայերէնի կրած փոփոխութիւնը, կամ զարգացումը՝ 1913 թուականէն մինչեւ 1963 թուական: Երկու տարբեր թուականներուն եւ երկու տարբեր վայրերու մէջ հրատարակուած գրուցատրութիւններու համեմատական զուգադիւր քննութիւնը ցոյց տուաւ, որ ճիշդ 50 տարուան ընթացքին արեւմտահայերէնը կրած է յստակ փոփոխութիւն թէ՛ բառապաշարի, թէ՛ խօսքի կառոյցի մէջ: Այսպիսի սերտողութիւններ եւ ուսումնասիրութիւններ կրնան նպաստել լեզուի հետազօտման եւ բառապաշարի հարստացման աշխատանքներուն:

Хпликеан Зепюр - Армянско-английские учебники (зруцатрутян).- Учебники - практические пособия, имеющие большое значение для обучения иностранному языку. Цель нашего исследования является наблюдение за изменением или развитием западноармянского языка с 1913 по 1963 год. Сравнительный параллельный анализ учебников, изданных в два разных года и в двух разных местах, показал, что за 50 лет западноармянский язык претерпел явные изменения как в словарном запасе, так и в структуре слов. Подобные исследования и экспертизы могут способствовать изучению языка и обогащению словарного запаса.

³⁸ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 41:

³⁹ Հայերէն-անգլերէն գրուցատրութիւն, Սահակ-Մեսրոպ, Պալենց գրատուն, Կ. Պոլիս, 1913, էջ 56:

⁴⁰ Հայոց լեզուի նոր բառարան: Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան: Կ. Տօնիկեան եւ որդիք հրատարակչատուն, Պէյրութ, 1992, էջ 691:

Ключевые слова: западноармянский, английский, учебники, практический учебник, иностранный язык, словарный запас

Khplikian Zeyur - Armenian-English Textbooks.- Textbooks are practical textbooks of great importance for teaching a foreign language. Printed publications that teach a foreign language and provide the opportunity to express oneself in it. Although the purpose of Armenian-English textbooks is to teach English, for us it has another importance: to observe the change or development of Western Armenian from 1913 to 1963. A comparative parallel examination of textbooks published in two different years and in two different places showed that during 50 years, Western Armenian has undergone a clear change in both vocabulary and word structure. Such studies and examinations can contribute to the research of the language and the enrichment of vocabulary.

Keywords: Western Armenian, English, textbooks, practical textbook, foreign language, vocabulary.

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՊՐԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ
ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

Մկրտչյան Գարիկ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՉԺՀ, Ֆոշյան քաղաքի միջազգային դպրոց,
mkrtchyangarik1983@gmail.com
DOI: 10.54503/978-9939-970-07-3-165

Բանալի բառեր: *Շրջանաբաժանում, միջին հայերեն, բարբառ, գրական լեզու, խոսակցական լեզու, հին հայերեն (գրաբար), լեզվի զարգացում:*

Սույն զեկուցումը նախորդ տարվա՝ «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» (նոյեմբեր 2-3, 2023) զեկուցման բովանդակության շարունակությունն է: Ընդունելով, որ միջին հայերենի ընդգրկած ժամանակահատվածի վերաբերյալ չկա միասնական դիրքորոշում հայ լեզվաբանության մեջ՝ այս ուսումնասիրությունը մեր կատարած հետազոտությունների մոտավոր ամփոփումն է: Վերջին երկու դարերի ընթացքում այս ուղղությամբ կուտակված լեզվական և արտալեզվական հսկայական նյութը կարոտ է որոշակի ճշգրտումների և նոր լուծումների:

Հայ լեզվաբանները «միջին» եզրույթը վերագրում են տարբեր դարերի՝ մոտավոր մատնացույց անելով տվյալ շրջանին բնորոշ լեզվական իրողությունների գործածության ժամանակագրությունը: Գրեթե բոլոր լեզվաբանները միջին հայերենի բուն տիրապետման շրջանը համարում են 12-րդ դարից մինչև 16-17-րդ դարերը ձգվող շրջանը: Հատկանշական է, որ միջին հայերենի գրավոր (գրական) տարբերակի ընդունելի ժամանակահատվածը մոտավոր կանխորոշում է նաև միջին հայերենի բանավոր (խոսակցական) տարբերակի սկզբնավորման և ավարտման ժամանակը:

Մեր կատարած նոր դասակարգման անհրաժեշտության համար հիմք են հանդիսանում ոչ միայն նախորդ դասակարգողների թույլ տված բացթողումներն

՝ Տե՛ս Ա. Բագրատունու, Ղ. Հովնանեանի, Ա. Այտրնեանի, Խ. Աբովյանի, Ս. Նազարյանի, Յ. Կարստի, Լ. Մսերյանցի, Հր. Աճառյանի, Ս. Ղազարյանի, Գ. Սևակի, Հ. Կուսիկյանի, Գ. Ջահուկյանի և Ռ. Ղազարյանի աշխատությունները:

՝ Ըստ Ա. Այտրնյանի՝ «միջին դարերը» ընդգրկում են 6-ից 10-րդ դարերը, իսկ 11-ից 14-րդ դդ.՝ «ստորին դարերը», 15-ից 19-րդ դդ.՝ «նոր ժամանակները»: Յ. Կարստը միջին հայերենի շրջանն ընդգրկում է «մոտավորապես» 10-րդ դարից մինչև 15-րդ դարը: Համաձայն Հր. Աճառյանի՝ միջին հայերենով ավանդված գրականությունը մեծ զարկ է ստանում 12-րդ դարի երկրորդ կեսից՝ միջին հայերենի մատենագրական անկախ զարգացման և հայերենի բարբառների առաջացման շրջանը սկզբնավորելով 9-10-րդ դարերից հետո: Ս. Ղազարյանը միջին հայերենի ժամանակաշրջան է համարում 10-ից 17-րդ դարերը, Գ. Սևակը՝ 9-ից 13-րդ դդ., Ռ. Ղազարյանը՝ «12-16-րդ դարերի, մասամբ էլ 17-րդ դարի առաջին կեսի գրական լեզուն»: Համաձայն Գ. Ջահուկյանի դասակարգման՝ միջին շրջանն ընդգրկում է 12-16-րդ դարերը՝ երկու ներքին բաժանումներով: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» (հ. Ա, 1972թ.) աշխատության հեղինակները միջին հայերենը համարում են 12-րդ դարից մինչև 17-րդ դարի վերջն ընկած ժամանակահատվածի լեզվավիճակ զգալիորեն ընդլայնելով միջին հայերենի սահմանները:

ու միակողմանի, սուբյեկտիվ լուծումները, այլև՝ միջին հայերենի միմյանց հակադիր՝ գրավոր-գրական, բանավոր-խոսակցական տարբերակների արհեստական նույնացումը կամ դրանց նույնացմանն ուղղված ձգտումները: Բոլոր հայագետները գիտակցաբար և անգիտակցաբար ձգտել են հասնել գրախոսակցական լեզվի միասնական շրջանաբաժանման՝ կարևորելով հայոց լեզվի «բոլոր տարատեսակների պատմության» ընդգրկման սկզբունքը: Այս, ինչպես գիտենք, ավելի հաջողությամբ գործադրել է Գ. Ջահուկյանը:

Մենք առաջ ենք քաշում միջին հայերենի ընդգրկած ժամանակաշրջանի համար դասակարգման նոր չափանիշ՝ հիմնվելով այդ լեզվավիճակի բանավոր-խոսակցական և գրավոր-գրական տարբերակների վրա: Մեր առաջ քաշած այս նոր չափանիշը պայմանավորված է կենդանի-խոսակցական լեզվին վերաբերող հարցերի նկատմամբ գիտական չափանիշի սկզբունքների փոփոխությամբ: Հետևաբար, սա, որպես նրանց միջև եղած տարամետ հակադրությունները լուծելուն ուղղված դիրքորոշում, ինքնին դիտարկման ենթակա խնդիր է: Խոսակցական և գրական տարբերակների առանձնացման հիմքում նախևառաջ դրվում են այդ շրջանի հայերենի լեզվական տվյալները, հաղորդակցային առանձնահատկությունները և նրանց ունեցած ներքին հակասությունները, որոնք, ըստ էության, վկայում են հայոց լեզվի զարգացման ներքին օրենքները:

Հատկանշական է, որ խոսակցական լեզվի բնույթը բանավոր լինելն է, իսկ գրական լեզվինը՝ գրավոր: Սա նրանց միջև եղած առաջնային և ակնառու հակադրությունն է: Գրավոր և բանավոր գրեթե բոլոր լեզուների զարգացման պատմությունները ցույց են տվել, որ գրավոր (գրական) լեզուն հազվադեպ է դառնում խոսակցական լեզու և հասարակության ոչ բոլոր թիրախային խմբերին է բնորոշ, իսկ բանավոր (խոսակցական) լեզուներից ոչ բոլորին է վիճակվում դառնում գրական լեզու: Խոսակցական լեզվի տարածքային տարբերակներից մեկի հիման վրա ձևավորվում է գրական լեզուն: Նկատենք, որ ամեն մի գրավոր լեզու դեռևս գրական լեզու չէ. գրական լեզու դառնալու համար մշակման տևական ճանապարհ պետք է անցնի:

Այս համատեքստում միջին հայերենի համար մենք տարբերակում ենք չորս կարգի լեզվական որակներ՝ ա) **միջին հայերենի խոսակցական տարբերակ**, որը, որպես ինքնատկա լեզվավիճակ, բանավոր հաղորդակցային լեզուն է, բ) **միջին հայերենի գրավոր տարբերակ**, որն ունի տեսակային երկու դրսևորում՝ ա) *խոսակցական միջին գրական հայերեն*, բ) *խոսակցական լեզվի հենքի վրա մշակման ենթարկված գրական միջին հայերեն*, գ) **Տարածքային (ռեգիոնալ) միջին հայերեններ**՝ որպես բարբառային (խոսվածքային) տարբերակներ՝ իրենց բնորոշ տիպիկ հատկանիշներով, դ) **գրաբարը որպես միջին գրական հայերենի առանձին տարբերակ**:

1 Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 20-24:

Վերջինս, որպես հոգևոր-եկեղեցական, պետական-պաշտոնական լեզու, առանձնաբար տիրապետում է միջին հայերենի զարգացման բոլոր փուլերում:

Այս չորս խմբերն ունեն ժամանակային որոշակի ընդգրկում: Նրանց միջև եղած ժամանակային համընկնումները և ընդհատվածությունը, որոնց և վերաբերում է սույն դասակարգում-շրջանաբաժանումը, հիմնավորվում են բազմաթիվ լեզվական ու արտալեզվական փաստերով: Մեկ հանգամանք ակնհայտ է՝ խոսակցական լեզվի գործածությունը և լեզվական հուշարձաններում նրա տարրերի ի հայտ գալու ժամանակը տարբեր արդյունքներ են հայտաբերում լեզվի պատմական զարգացման տեսակետից: Մենք առաջարկում ենք կատարել հետևյալ տարբերակումը՝

ա) բանավոր (խոսակցական) միջին հայերենի զարգացման փուլեր (բանավոր-խոսակցական միջին հայերենի պատմության շրջանաբաժանում),

բ) գրավոր (գրական) միջին հայերենի զարգացման փուլեր (գրավոր-գրական միջին հայերենի պատմության շրջանաբաժանում):

Միջին հայերենի խոսակցական և գրական տարբերակների առաջացման սոցիալ-պատմական նախադրյալներ են հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող պատմական գործընթացները (հայ թագավորությունների և իշխանական տների գործունեությունը), հանրային-սոցիալական տեղաշարժերը (միջնադարի ադանդավորական շարժումները, հարատև արտագաղթերը, վաչկատուն ցեղերի ասպատակությունները և սոցիալական ցնցումները), մշակութային-հոգևոր կյանքը (գրականության ժանրային տեսակները և արտահայտվածության լեզվական միջոցները): Նկատենք՝ այս ամենի մասին միջինհայերենյան լեզվական իրողությունների ավանդման միջոցները բազմատեսակ են ու բազմաբնույթ:

Մենք կարծում ենք՝ միջին հայերեն պետք է համարել հայերենի զարգացման այն շրջանը, երբ նրան բնորոշ լեզվական բուն և էական սաղմերն ի հայտ են գալիս և աստիճանաբար տարածում ստանում: Այդ լեզվի գրականացման գործընթացի ավարտը պետք է համարել այդ սաղմերի հիման վրա ձևավորված, ժողովրդի խոսակցական ընդհանուր լեզվի գրավոր և մշակված այն վիճակը, որը հանդես է գալիս ոչ միայն որպես գրական լեզու, այլև՝ մասամբ խոսակցական (բանավոր) լեզու: Այս իրողությունները հաշվի առնելով՝ բանավոր-խոսակցական միջին հայերենի համար տարբերակում ենք զարգացման երեք փուլեր՝ ա) **Սկզբնավորման շրջան (8-10-րդ դդ.), բ) Կազմավորման և գործառնության շրջան**

Քննարկման ենթակա լեզվական երկու տարբերակների ժամանակային սահմանների տարանջատման մասին գաղափար ենք կազմում հայոց միջնադարից ավանդված լեզվական տարաբնույթ հուշարձաններից, այդ թվում՝ միջնադարյան գրավոր հիշատակարաններից, վաղ և բուն միջնադարյան վիմագիր արձանագրություններում եղած լեզվական տվյալներից:

(11-14-րդ դդ.), գ) **Գործառնության և ավարտի շրջան** (15-17-րդ դդ.): Ընդգրկում է շուրջ տասը դար:

Խոսակցական և գրական միջին հայերենների միջև եղած ժամանակային հեռավորությունը կամ մերձավորությունը, ըստ վերականգնումների, կարող է լինել ճշգրիտ կամ մոտավոր, բացարձակ կամ պայմանական/ հարաբերական: Այս առումով Հ. Աճառյանը գրում է. «Բայց ինչպես որ գրաբարի և միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի չէ դնել մի որևէ վճռական կետ, նույնպես նաև միջին հայերենի և աշխարհաբարի համար: Այնպես որ, երբ կարդում ենք աշխարհաբարի հնագույն շրջանի գրվածքները, դեռ զգում ենք միջին հայերենի շունչը»: Կարծում ենք՝ Հ. Աճառյանի այս վկայությունը ևս հուշում է, որ այս խճողումից խուսափելու լավագույն լուծումը բանավոր (խոսակցական) միջին հայերենի և գրավոր (գրական) միջին հայերենի զարգացման փուլերը տարբերակելն է: Ի դեպ, այս տարբերակումը հաջողությամբ կարելի է տարածել նաև հայոց լեզվի զարգացման մյուս փուլերի վրա: Այսքանով հանդերձ՝ ըստ վերականգնված լեզվական փաստերի՝ միջին հայերենի բանավոր (խոսակցական) և գրավոր (գրական) տարբերակները գոյացել են ժամանակագրորեն տարբեր դարերում, իսկ նոր հայերենին անցման շրջանում երկու տարբերակները չնչին տարբերություններով հայտարարում են մոտավոր համընկնումներ:

Միջին հայերենի բանավոր (խոսակցական) տարբերակը, ժամանակագրորեն նախորդելով գրավոր (գրական) տարբերակին, լեզվական բոլոր մակարդակներում ունի հատուկենտ վկայություններ, որոնք ավելի ուշ շրջանում են վերածվում համակարգի: Որպես լեզվական վկայություն՝ կարող ենք բերել լեզվական հետևյալ վկայությունները՝ հին կոշտ Լ-ի ղ հնչման հանգելը, երկբարբառների և եռբարբառների մենաբարբառնալը, **հ**-ի որոշ բարբառներում **խ**-ի վերածման փաստերի գրավոր լեզվում հաճախադեպ կիրառություն ստանալը (այս երևույթը հնագույն սուբստրատ է համարվում), բառակազմում **ա**-ից առաջ որոշ բառերի **հ** ստանալը, բառավերջում յ կիսաձայնի անհունչ դառնալը (հնչյունական իրողություններ) և այլն: Հին հայերենի **-ք** և **-ս** հոգնակերտների իմաստների մթագնման դեպքերի առատությունը, հին հայերենի ներկայի ըղձական եղանակի իմաստով հանդես գալը, վաղակատար դերբայի **-եր** մասնիկի ի հայտ գալը, հին հայերենի խառը հոլովման ենթարկվող բառերի աստիճանական վերացումը՝ ի շահ ընդհանրական հոլովման, եզակի և հոգնակի ուղղական և հայցական հոլովների նույնանման դառնալու միտումների ակտիվությունը, քերականական **-ում** մասնիկի աստիճանական տարածում ստանալը տրական հոլովի իմաստի գործածմամբ,

¹ Ավարտի շրջանում արդեն ձևավորվել էին ժամանակակից գրեթե բոլոր գործող, հին և նոր բարբառները, որոնցից երկուսի հիմա վրա 18-րդ դարի սկզբից ի վեր պետք է կազմավորվելին արդի գրական երկու լեզուները:

² Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երկրորդ մաս, Ե., 1951թ., էջ 441:

հրամայական եղանակի եզակի և հոգնակի թվերում բազմաձևությունների կրճատումը՝ միօրինականացման միտմամբ, արաբական, ապա՝ թյուրքական ու նոր պարսկական փոփառությունների ի հայտ գալը (քերականական և բառապաշարային իրողություններ): Հավելենք՝ որպես խոսքային ընդգծված հակադրության՝ «գեղջուկ բարբառի», «գեղջուկ բանի» նմուշ է համարվում 9-րդ դարի պատմիչ Շապուհ Բագրատունու պատմությունը:

Թե՛ լեզվական, թե՛ պատմական տվյալները ցույց են տալիս, որ միջին հայերենի խոսակցականն իր ծագմամբ ավելի վաղ շրջանի երևույթ է, քան գրական տարբերակը: Ինչպես նկատեցինք, միջին հայերենի բանավոր (խոսակցական) տարբերակը ձևավորվել է 8-րդ դարից՝ իր ամբողջական տեսքն ստանալով 11-րդ դարում: Սա համընկնում է այն ժամանակահատվածին, որ Հր. Աճառյանը բնորոշում է գրաբարի և կենդանի խոսակցական լեզվի տարբերության աստիճանական աճով³: Ըստ Հր. Աճառյանի, 9-րդ դարից հետո եկած շրջանը հատկանշվում է միջին հայերենի մատենագրական անկախ զարգացմամբ և հայերենի բարբառների առաջացմամբ: Այս ընթացքում են ուրվագծվել հին գրական լեզվի և նոր ձևավորվող խոսակցական լեզվի (լեզուների) տարբերությունները: Հետևապես պատահական լինել չեն կարող մատենագրական աղբյուրներում հիշատակվող «քերթողական», «արվեստաւոր» և «գեղջուկ բարբառ», «գեղջուկ բան», «մթին լեզու» լեզուների հակադրությունները⁴: Գ. Չահուկյանն հայերենի զարգացման այս շրջանն անվանել է «հին շրջանի նախամիջին ենթաշրջան» (ընդգրկում է 8-ից 11-րդ դարերը)⁵, համապատասխանելով մեր կատարած **բանավոր (խոսակցական) միջին հայերենի** դասակարգման Ա ենթափուլին ամբողջությամբ և Բ ենթափուլին մասամբ:

Կարծում ենք՝ Գ. Չահուկյանի տարբերակած այս շրջանը պետք է տարանջատել հին շրջանի գրախոսակցական միասնական տարբերակից և այն պարզապես համարել միջին հայերենի խոսակցական տարբերակի նախնական շրջան: Ըստ էության, Գ. Չահուկյանը «նախամիջին» եզրույթով ընկալում է հենց միջին հայերենի խոսակցական տարբերակը: Գ. Չահուկյանն այս շրջանի հայերենի մասին գրել է. «Խոսակցական-բարբառային լեզվին համեմատաբար մոտ կանգնած հուշարձաններում դրսևորվում է այդ լեզվի հետագա փոփոխության ու զարգացման պրոցեսը: Գրավոր հուշարձաններում մասնակի արտահայտություն գտած այս լեզուն է, որ հետագայում հանգում է միջին հայերենին»⁶: Ըստ նրա, լեզվական

³ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երկրորդ մաս, էջ 228-231:

⁴ Ի դեպ, Հր. Աճառյանը ժողովրդական, հետագայում «աշխարհաբար» անունը ստացող լեզվի «ծիլերը» և «ժողովրդական ձևերի մեծ խառնուրդը» տեսնում է 7-րդ դարի հեղինակ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարաւնի» աշխատության մեջ:

⁵ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Ե., 1960, էջ 57, Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երկրորդ մաս, էջ 231:

⁶ Գ. Չահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 26:

⁷ Գ. Չահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 43-44:

այս որակները մատնանշում են միջին հայերենի սկզբնավորումը: Խորացող բարբառային տարբերությունների և բարբառային-խոսակցական տարբերակների հիման վրա հետագայում պետք է կազմավորվեին միջին գրական հայերենի տարբերակները:

Գրավոր (գրական) միջին հայերենի համար տարբերակում ենք երեք շրջան՝ ա) **Սկզբնավորման և կազմավորման շրջան** (10-11-րդ դդ.), բ) **Գործառնության և զարգացման շրջան** (12-13-րդ դդ.), գ) **Գործառնության և ավարտի շրջան** (14-15-րդ դդ.): Ընդգրկում է շուրջ վեց դար:

Հայ լեզվաբանության մեջ վերոբերյալ դարերի մասին տարբեր գնահատականներ կան: Գրավոր (գրական) միջին հայերենի համար մեր տարբերակած «սկզբնավորման և կազմավորման շրջան (10-11-րդ դդ.)»-ի մասին պրոֆ. Ռ. Ղազարյանը գրել է. «Միջին գրական հայերենը, որի առանձին տարբերն առկա են դեռևս 10-11-րդ դարերի մատենագրության մեջ, գերազանցապես ներկայացնում է խոսակցական-բարբառային լեզվի այն բնորոշ երևույթները, որոնք առաջին հերթին դրսևորվել են Կիլիկիայի հայկական պետականության շրջանակներում»:

Գ. Ջահուկյանը, տուրք տալով իր միասնական դասակարգման սկզբունքին, բուն միջին հայերենն ընդգրկում է 12-14-րդ դարերը («վաղ միջին կամ կիլիկյան նորմավորման»), որի ընթացքում «...հանդես է գալիս միջին գրական հայերենը՝ խոսակցական լեզվի հիման վրա, բայց նրա կողքին գործառական որոշ տարբերակմամբ որպես գրական լեզու գործում է նաև գրաբարը»: Ըստ Գ. Ջահուկյանի, միջին գրական հայերենի հիմքում ընկած են առաջին հերթին Կիլիկիայի տարածքի բարբառային-խոսակցական նորմաները: Գ. Ջահուկյանը միջին հայերենի բուն շրջանն սկսում է 12-րդ դարից՝ հիմք ընդունելով Կիլիկյան հայկական թագավորության պայմաններում գրական լեզվի առկայությունը, հաշվի առնելով հայախոսության մի կենտրոնի տվյալները: Միջին գրական հայերենի հիմքում ընկած է Կիլիկիայի բարբառը, որը պայմանավորվում է Բագրատունիների թագավորության անկմամբ և Կիլիկիայում հայկական պետության հաստատմամբ: Գ. Ջահուկյանը, կենտրոնանալով մեկ տարածքի լեզվական տվյալների վրա, անտեսում է դրանից մեկ դար առաջ կենտրոնական Հայաստանում Բագրատունիների թագավորության գոյության հանգամանքը:

15-16-րդ դարերի համար Գ. Ջահուկյանը տալիս է «ուշ միջին կամ աշխարհաբարացում» բնորոշումը՝ նոր հայերենի՝ աշխարհաբարի տարբերը տեսնելով միջին հայերենի շրջանում: Մենք, հիմնվելով լեզվապատմական տվյալների վրա, համարում ենք, որ միջին գրական հայերենը 15-16-րդ դարում արդեն դադարել էր գոյություն ունենալ՝ նախևառաջ պայմանավորված լինելով պատմական և հասա-

7 Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 3:

8 Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 26:

րակական տարբեր հանգամանքներով: Ըստ էության, Հայաստանի մասնատումը, հարատև գաղթերը և վաչկատուների ներհոսքերը չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել նաև հայերենի զարգացման վրա: Պետականության բացակայության պայմաններում միջին գրական հայերենի կիլիկյան տարբերակը կորցնում է պետական լեզվի իր կարգավիճակը. այդ շրջանի հայերենը ներկայանում էր տարբեր բարբառային ընդհանրության մեջ: Պատահական չէ, որ շարունակում էր գործել միջին հայերենի խոսակցական տարբերակը՝ բարբառային ընդգծված տարբերակվածությամբ և նոր հայերենի լեզվական տարբերի հաճախադեպ կիրառությամբ: Աստիճանաբար բարբառային եղած տարբերություններն առաջ են բերում նոր գծեր ու առանձնահատկություններ՝ հիմք հանդիսանալով բարբառների, ենթախոսվածքների ու խոսվածքների աճող տարբերություններ համար: Նույնիսկ գրական լեզվի տարբերակներն են ներկայանում անմիօրինակությունների համակարգերով. բարբառայնությունները բազմանում են: Պատահական լինել չի կարող, որ Հր. Աճառյանը միջին հայերենի և նոր հայերենի (աշխարհաբար) սահմանը պարզ չի սահմանազատում: Որպես աշխարհաբարի հնագույն նմուշ ներկայացնում է Ա. Այտընյանի վկայակոչած Բջնիի 1358թ. մի արձանագրություն՝ քաղված Հ. Շահխաթունյանցի գրքից: Ստորև կբերեք այդ արձանագրությունը՝ *«Ես Աթաբակ շահինշահ, ի բռնակալութեան Մէլիք Աշբափին՝ զմեր հայրենիքս զԲջնի քաղաք հիսնէ հուրմով խլէր էր, զիր ճորտերին էսիք կացուցեր. եւ Հաճի Բեկ նիազեցալ ու զքաղաքս ի հիմանց քակեց ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զերկիրս ի չորս դիաց անբնակ արար ու քրիստոնէք անխնայ կոտորեաց, մէք յԱստուած ապաւինելով զմեր սալահր... հեծելին զլուխ կացուցաք, որ զիր ապրանքն նախնաբաշխէր, որ Աստուած խղճաց մեզ ու մեր հայրենիքս զԲջնու բերդս ի մեր ձեռս բերաց, զբունիաթ, արձանս վերստին հաստատեցաք. զվիճակ, զվանք, զգեղ, զսարի գղաշտի հայրենիք, բէց ու շինական ու գործաւոր ազատ և թարխան արարին հարկէ և ի ծառայութենէ... ով որ զմեր հաստատած արձանս խափանել ջանայ՝ դատի յԱստուծոյ»:*

Միջին դարերի գրավոր (գրական) լեզվի հիմքում ընկած է բանավոր (խոսակցական) լեզուն, որը, որպես լեզվական նոր համակարգ, ձևավորվել է ավելի վաղ: Միջին հայերենի գրական տարբերակների հիմքում ընկած մի շարք խոսակցական տարբերակներ, որոնք բարբառային որոշ դրսևորումներով գրավոր արտահայտություն են ստացել, տարբեր դարերում ենթարկվել են աստիճանական փոփոխությունների: Այս ամենը հիմք են հանդիսացել, որ ռեզիոնալ տարբեր գոտիներում ամբողջանան, կազմավորվեն և կերպավորվեն հայերենի առանձին, հին ու նոր բարբառները:

9 Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երկրորդ մաս, էջ 441:

Ինչպես նկատելի է մեր առաջ քաշած դասակարգումից, բանավոր-խոսակցական միջին հայերենն ընդգրկում է ավելի երկար ժամանակաշրջան, քան գրավոր-գրականը: Ողջ միջին հայերենի համար հատկացվում է տասը դար, որից միայն վեցն է վերաբերում գրավոր-գրականին: Խոսակցական և գրական լեզուների այսպիսի ընդհատվածությունը, ինչպես հիմնավորելի է, պայմանավորված են տարաբնույթ սոցիալական, քաղաքական, հասարակական, պատմական, տարածքային և մշակութային խնդիրներով, որոնց թուլուրուլում հայերն ապրել են իրենց պատմական բնօրրան-կենսատարածքում՝ հայրենիք-պետությունում:

Գրախոսակցական լեզվի լիակատար միասնություն երբեք չի լինում, լինելու դեպքում էլ՝ հազվադեպ: Նույնիսկ արդի խոսակցական և գրական լեզուների ուղղակի համեմատությունները կարող են վկայել այդ: Այդուհանդերձ, գրավոր պատմություն ունեցող ցանկացած լեզվի գրախոսակցական միասնական որակ ունենալու հանգամանքն առաջնահերթություն դարձնելիս միջին հայերենի համար այդ ժամանակահատվածը կարելի է համարել 12-ից 14-րդ դարերը: Գրախոսակցական միասնության միջանկյան այս ժամանակահատվածը, ըստ էության, համընկնում է Գ. Ջահուկյանի կատարած դասակարգման «վաղ միջին կամ կիլիկյան նորմավորման» շրջանին, իսկ դրան հարող ժամանակներում միմյանցից ժամանակագրորեն տարբերվում են միջին հայերենի խոսակցական և գրական տարբերակները: Առանձնացված այս դարերը կարելի է համարել միջին հայերենի գրախոսակցական տարբերակի միասնության շրջան, իսկ մյուս դարերը պետք է համարել գրավոր (գրական) և բանավոր (խոսակցական) տարբերակներով առանձնացող շրջաններ: Ըստ էության, 14-րդ դարից հետո գրախոսակցական միասնությունը տրոհվում է՝ գրական լեզվի անկմամբ և խոսակցական (բարբառային) տարբերակների ակտիվացմամբ այնպես, ինչպես այդ գործընթացը տեղի էր ունեցել 7-րդ դարից հետո հին հայերենի և միջին հայերենի խոսակցական տարբերակի պարագայում: Համաձայն մեր դասակարգման՝ գրավոր (գրական) միջին հայերենը կազմավորելիս և գոյության դադարից հետո բանավոր (խոսակցական) միջին հայերենից հեռու է երկուական դարերով:

Կարծում ենք՝ հայերենի գրավոր պատմության շրջանաբաժանման պարագայում պետք է տիրապետող դառնա շրջանաբաժանման երկու ըմբռնում՝ **բանավոր (խոսակցական) լեզվի պատմության շրջանաբաժանում** և **գրավոր (գրական) լեզվի պատմության շրջանաբաժանում**: Վերջիններիս մոտավոր սահմանները ոչ շատ հեռու են, ոչ էլ մոտ իրար: Որքան էլ հայ լեզվաբանության մեջ դրանք ներկայացվել են միասնաբար, որոշակի վիճարկությունների տեղիք են տալիս: Դրանց ժամանակագրական բացարձակ նույնացումն արդի լեզվաբանական ստանդարտներով այլևս ընկալելի և ընդունելի չեն՝ լինելով կարոտ համապարփակ ուսումնասիրության գալիքում: Լեզվաբանական նոր ուսմունքներում սկզբունքային է

գրական և խոսակցական լեզուների՝ միմյանց նկատմամբ ունեցած տարաբնույթ հակադրություններով տարբերակումը: Ըստ ամենայնի, միջին հայերենի բանավոր (խոսակցական) և գրավոր (գրական) տարբերակների ընդգրկած ժամանակաշրջանների շրջանաթափանման մասին այս ուսումնասիրությունը նման մի փորձ է:

Мкртчян Гарик- Новая попытка периодизации среднеармянского языка. Основываясь на том, что в новых лингвистических исследованиях важно дифференцировать разговорный и литературный языки на основе различных контрастов между ними, автор предпринял новую попытку периодизации и деления подэтапов среднеармянского языка. Автор пришел к выводу, что необходимо провести дифференциацию этапов развития разговорного (устного) и литературного (письменного) среднеармянского языка. Для устно-разговорного среднеармянского языка выделяют три этапа развития – 1. **Начальный этап** (8-10 вв.), 2. **Этап становления и практики** (11-14 вв.), 3. **Этап практики и завершения** (15-17 вв.). В литературном (письменном) среднеармянском языке выделяют три этапа – 1. **Этап зарождения и становления** (10-11 вв.), 2. **Этап практики и развития** (12-13 вв.), 3. **Этап практики и завершения** (14-15 вв.). Как видно из приведенной классификации, устный (разговорный) среднеармянский охватывает более длительный период, чем письменный (литературный). На весь среднеармянский язык выделяется 10 веков и из них только 6 веков письменный (литературный) язык.

Ключевые слова: Цикл, среднеармянский, диалект, литературный язык, разговорный язык, Старый Армянский (Грабар), развитие языка.

Mkrтчyan Garik - A New Attempt of Periodization of Middle Armenian. - Based on the fact that in new linguistic studies it is essential to differentiate spoken and literary languages based on various contrasts between them the author tried to make a new attempt of periodization and division of sub-stages of Middle Armenian. The author concluded that it is necessary to make a differentiation of development stages of **spoken (oral) and literary (written) Middle Armenian language**. For oral-conversational Middle Armenian language is separated three development stages – 1. **Initial stage** (8-10 cc.), 2. **Formation and practice stage** (11-14 cc.), 3. **Practice and termination stage** (15-17 cc.). For literary (written) Middle Armenian language is separated three stages – 1. **Initiation and formation stage** (10-11cc.), 2. **Practice and development stage** (12-13cc.), 3. **Practice and termination stage** (14-15 cc.). As it is seen from the above classification oral (spoken) Middle Armenian covers longer period than written (literary). For the whole Middle

Armenian language, it is given 10 centuries and from these only 6 centuries cover written (literary) language.

Keywords: Period, middle Armenian, dialect, literary language, colloquial language, Old Armenian (Grabar), language development.

ԲԱՐՂՈՒՂԻՄԵՈՍ ԲՈԼՈՆԻԱՑՈՒ «ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ» ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎԱՂ ԵՎ ՈՒՇ ՇՐՋԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Միրունյան Տիգրան

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ,
բ.գ.թ., ավագ գիտաշխատող
tigran.sirunian@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-07-3-175

Բանալի բառեր: Լատինաբան քերականություն, ձեռագիր, մեկնություն, շա-
րահյուսություն, ձևաբանություն, դիալեկտիկա, տրամաբանություն:

Հայկական միջնադարյան տրամաբանությունը արևմտյան սխոլաստիկան
ճանաչել է հատկապես ունիթոն¹ վարդապետ Բարդուղիմեոս Բոլոնիացու «Դիա-
լեկտիկայի» միջոցով² («Հաւաքումն համառօտ և յոյժ օգտակար ի դիալեկտիկէն, որ է
տրամաբանութիւնն», 1330-1332 թթ.): Սա բանաբաղոյան սկզբունքով կազմված,
մասամբ թարգմանական երկ է, որի հիմքում տրամաբանոյան անտիկ ուս-
մունքն է և դրա հետագա լրացումները լատինական մեկնողական գրականոյան
մեջ:

Այս գործը ներկայացնում է բուն Հայաստանում ստեղծված առաջին
տեքստերից մեկը, որ կրում է լատիներենի ուղղակի ազդեցությունը, ուստի նաև
ունի լեզվական կարևորություն, մասնավորապես՝ քերականական լատինաբանու-
թյունների ուսումնասիրոյան համար: Սրանց վաղ և ուշ դրսևորումների առանձ-
նահատկոյունները ցույց տալու նպատակով՝ քննոյան առարկա ենք դարձրել
«Դիալեկտիկայի» ԺԳ. և ԺԷ. դդ. ձեռագրերի տվյալները³:

Ա. Ձևաբանական առանձնահատկոյունները

Ձևաբանոյությունը, ինչպես հայտնի է, կայուն լինելով ազդեցոյունների
նկատմամբ, սովորաբար չի ընդունում օտար ձևեր: Այնուամենայնիվ, «Դիալեկտի-
կայուն» գործածված մի քանի ուշագրավ ձևեր վկայում են այդ կարգի փոխառու-
թյունների հնարավորոյան մասին:

Լատ. *ab* նախդիրը անցել է հայերեն բնագիր *աբ* ձևով, որը որոշ կայունու-
թյուն ունի՝ հանդիպում է մի քանի տեղ. «Իփօթեթիկայն ասի յունարէն *աբ իփօտէ*,

¹ Unitores. միաբանողներ կամ միաբարներ՝ բուն Հայաստանում և Կիլիկիայում կաթողիկոյուն
քարոզած լատին միսիոներների և նրանց հայ գործակիցների անվանումը:

² Տե՛ս С. Аревшатын, К истории философских школ средневековой Армении (XIV в.), Ереван, 1980,
стр. 25, Յովհաննէս Քոնէցի, Յաղագս քերականին, ներածոյուն, Ե., 1977, էջ 34-35:

³ Ուսումնասիրոյունը կատարել ենք մեր կազմած բնագրի հիման վրա, որ ընդգրկում է ԺԴ. դ. և
ԺԵ. դարասկզբի 6 հնագոյն ձեռագրերը՝ Վիեն. 293, ՄՄ 69, 2382, 3902, 7151, Եղմ. 1314, և հետագա
ԺԷ. դ. 3 ձեռագրերը՝ ՄՄ 606, 1684, 2348:

որ է ի ներքոյ, և ի թեզիսէ, որ է եղումն, այսինքն՝ ի ներքոյ եղումն» (Նրծ., 136). "Et dicitur ypotetica ab 'ypos', quod est sub, et 'thesis', quod est positio, quasi suppositiva" (Tr. I, 8-9): Նաև՝ «Առաջարկութիւն է բան ստորասական կամ բացասական՝ ումեմն գումեմնէ կամ ումեմն *այ ումեքէ*» (Ա., 95). "Propositio est oratio affirmativa vel negativa alicuius de aliquo vel alicuius *ab aliquo*" (Tr. IV, 43), իսկ շարունակութեան մեջ, որը թարգմանությունն չէ, այլ հասկացության լրացուցիչ բացատրությունն, նույն ձևը տրված է անփոփոխ. «Բանս այս մարդ է կենդանի, է ստորասական ումեմն գումեմնէ, իսկ բանս այս մարդն ոչ է էջ, է բացասական ումեմն *այ ումեքէ*» (Ա., 163):

Ակնհայտ է, որ այս նախդիրը գիտակցված գործածվել է որպես բացառականի ձևությամբ՝ *աբ/այ + է*: Սակայն մյուս կողմից առատորեն գործածված է *ի/յ* նախդիրը (վերևի օրինակում՝ փոխառյալի հետ կողք կողքի՝ *աբ իփօսէ, ի թեզիսէ*): Կարելի է ենթադրել, որ փորձ է արվել կիրառության մեջ դնելու *ի/յ* նախդրի տարբերակային ձև:

Վերևում ցույց տրվեց, որ շատ տերմիններ, հավանաբար ճշգրիտ ձևը պահպանելու նպատակով, ենթարկվել են ամբողջական տառադարձության: Սրանց կազմում տառադարձվել են նաև քերականական մասնիկներ, ինչպես՝ *-nisi / -us, -nisi / -um* սեռանիշները՝ *Ֆալսիգրաֆուս. falsigrafus, արգումենթում. argumentum* նն: Հետաքրքրական է, որ այս ձևերը երբեմն ստացել են հոլովական իմաստներ՝ ձևավորելով քերականական հարաբերություններ: *Գիրքն Թօփիզիքորում* (Topicorum liber), *Էլենքորում գիրքն* (Elenchorum liber) կապակցություններում *-որում*-ը սեռական հոլովի հոգնակի թվի ցուցիչն է, ինչպես՝ լատ. *-orum*-ը. այն, որ գիտակցվել է սրա հոլովական իմաստը, վկայում է *Էլենքում*-ի կանոնավոր թեքմամբ կիրառությունը՝ *ի գիրս Էլենքոնց*: Նույնպես նաև *տգիտութիւն Էլենքի* (ignorantia elenchi) կապակցության մեջ *ի*-ն լատ. *-i*-ի համարժեքն է՝ եզակի սեռականի նշանակությամբ: *Փրօբաբիլէ* (probabile), *ինօփինաբիլէ* (inopinabile) բառերը փոխառվել են լատ. *-bile* ածականակերտ ածանցի ընդօրինակությամբ:

Ուշագրավ է նաև *կու* եղանակիչի առկայությունը ներկա դերբայի կազմության մեջ. «Ընդունելութիւնս այս, որ է *կու աշխատող*, ինքն ըստ ինքեան լատինացոնցն զներկայ ժամանակ նշանակէ» (Ա., 184). "*laborans... dicitur presentis temporis*" (Tr. VII, 104), նաև՝ *կու նստող- sedens, կու գրող- scribens*: Ընդ որում՝ եղանակիչ գործածվել է միայն օրինակներում տրված ներկա դերբայը թարգմանելիս. հավանաբար անկատար կերպը ընդգծելու միջոցով փորձ է արվել տարբերել լատիներենի ներկա դերբայը: Բուն շարադրանքում այս դերբայը միշտ ունի կանոնավոր կազմություն:

Դերբայական մեկ այլ ձև՝ *infinitivus perfecti*-ն, թարգմանված է անցյալ դերբայի և *գոլ* բայի հարադրությամբ. «Բայց են եւ այլ պատահմունք, որ միշտ համա-

հետեւին միմեանց, որպէս՝ զղջանալոյն հետեւի *մեղանշեալն գոլ*» (Գ., 367) - "Alia autem sunt quorum alterum semper sequitur alterum, ut penitere sequitur *deliquisse*" (Tr. V, 70): Այս կազմութիւնը իբրև առանձին միավոր հետագայում հայտնվում է լատինատիպ քերականություններում (սրա խոնարհված ձևերը հատկացվում էին աներևոյթ եղանակի գերակատար ժամանակաձևին):

Վաղ շրջանի ձեռագրերում ի հայտ եկած անսովոր ձևերը չեն առնչվում գրաբարը «նորոգելու» խնդրին, որ ավելի ուշ երևոյթ է, ուստի նաև չունեն այն համակարգային բնոյթը, որ հատուկ է հետագա լատինաբանություններին:

Լատինաբան հայերենի հետազոտություններում բերված ձևաբանական հատկանիշներից այս խմբում հանդիպում են⁴

1. ներգոյական հոլով՝ *ն* արհեստական նախդիր + հոգնակի հայցական կազմությամբ՝ *նամենեսեան* (մեկ օրինակ՝ ՄՄ 3902, 202բ⁵), նաև՝ եզակի տրականի ակտիվացած -*ոջ* վերջավորությամբ՝ *ի ենթակայոջ* (մեկ օրինակ՝ ՄՄ 69, 340ա):

2. -*ք* հոգնակերտի տարածում *մարդիկ* բառի վրա՝ *մարդիկք* (մեկ օրինակ՝ ՄՄ 69, 335բ),

3. *ա, ու* լծորդության բայերի կրավորական սեռի ձևայնացում -*իմ* վերջավորությամբ՝ *բանիմ, հիանիմ* են, նաև՝ ածանցավոր կազմությամբ՝ -*ան* + -*իմ*՝ *առնանիմ* (երկու օրինակ՝ ՄՄ 7151, 123ա-բ),

4. կրավորական իմաստի արտահայտում անկատար անցյալի եզակի երրորդ դեմքի -*իր* վերջավորությամբ՝ *դնիր, յարմարիր* (երկու օրինակ, որոնք հետագա խմբագրումներ են՝ ՄՄ 3902, 197ա),

5. բայի արմատական հիմքերի ցոյականացում, որ ստացել է կրավորական իմաստ՝ *տարբերեցելոց* (մեկ օրինակ՝ ՄՄ 7151, 129ա), նաև՝ կրավորականին հատկացված -*իցեալ* վերջավորությամբ դերբայ՝ *ասիցեւոց* (մեկ օրինակ՝ Վիեն. 293, 235ա). բնագրում գործածված է նախդրի անսովոր կիրառությամբ՝ *ցասիցեւոց*,

6. *նոյն* դերանվան հոլովաձևերի արհեստական կազմություններ՝ *նոյնոյ* (երկու օրինակ՝ ՄՄ 69, 336, ՄՄ 3902, 213բ), *նոյնով* (մեկ օրինակ, *ով*-ը՝ հետագա հավելում. ՄՄ 3902, 215ա), նաև՝ միջին հայերենին բնորոշ՝ *նոյնուն* (ՄՄ 3902, 220բ),

⁴ Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշներն առավել ամբողջական նկարագրել է Վ. Համբարձումյանը. տե՛ս Լատինաբան հայերենի պատմություն, Ե., 2010, էջ 142-164:

⁵ Այս խմբի հատկանիշները համարելով կարևոր վաղ լատինաբանությունների բնութագրման համար՝ նշել ենք ձեռագրային տվյալներով:

⁶ Կատարյալի արմատական հիմքերի ցոյականացումը և այս օրինակը ժառանգված են հունաբան հայերենից. տե՛ս Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Ե., 2010, էջ 130:

⁷ Տե՛ս անդ, էջ 235:

⁸ Եսայի Նչեցին, հիշատակելով Բարդուղիմեոսի երկի այս հատվածը (բայի սահմանում), խուսափում է ց նախդրի գործածությունից. «որպէս իմաստասերն որոշէ զսա ասելով բայ է, որ առ նշանակէ ամանակ, որոյ մասն ոչ նշանակէ զատ, եւ է միշտ զայլմէ ասիցեւոց նշանակ». Եսայի Նչեցի, Ճառք, աշխատասիրութեամբ՝ Յակոբ Քեօսեանի, Ե. 2023, էջ 97:

7. *երկաքանչիւր* արհեստական դերանվան գործածություն (երկու օրինակ, Վիեն. 293, 235ա),

8. *ոմն* դերանվան իրի առումով գործածություն⁹, որ թվարկվածների մեջ միակ կենսունակ հատկանիշն է. «նշանական ձայնիցն *ոմն* նշանակէ բնականաբար, եւ *ոմն*՝ ըստ կամաց», «են *ոմանք* նախադասութիւնք», «են առարկութիւնք *ոմանք* հաւաստականք եւ հարկաւորք» են (ՄՄ 69, 270ա են):

Հատուկենտ այլ ձևեր ևս խոսակցական լեզվից թափանցել են բնագիր՝ *սպանեւ, գնայու* (Բ., 264, 274, Գ., 366):

Հետագա ձեռագրերում, որոնց ստեղծման ժամանակը համընկնում է լատինաբան հայերենի վերելքի շրջանին¹⁰, բնագրի քերականությունը զգալիորեն փոխվում է. արհեստական ձևերը, ի տարբերություն նախորդ դրսևորումների, ձգտում են կանոնավորության:

1. Ներգոյականը գործածվել է՝ ա) *ն/ըն* դիրքային տարբերակներով (ձայնավորից առաջ և բաղաձայնից առաջ). «առաւել լինի հնչիւմն *նօղս*, քան *ըն ջուրս*» (Նրծ., 76), նաև՝ *ըն գիրս, ըն հոլովս, նորս, ներկրորդ* (Նրծ., 70, 100, 78) են, բ) տրականի *ոջ, ում* վերջավորություններով. *ի լեզուում, ի ձայնոջ, ի զգալոջ, ի խնձորոջ* (Նրծ., 81, 83, 87, Գ., 380) են, սրանցով այլափոխվում է հատկապես դերանվան հոլովման հարացույցը. *նայսպիսւոջ, ի սոսում, յայսոսում, յամենայնում, ի նոյնում* (Նրծ., 76, 89, Ա., 127, Գ. 222, 255) են: *Նոյնոյ, նոյնում* սեռական, տրական հոլովածները ևս կիրառական ակտիվություն են ստանում՝ կայունանալով իբրև տարբերակային ձևեր (Ա., 117, 137, 142, Բ., 220 են):

2. Կրավորական նշանակությամբ *ա, ու լծ.* ածանցավոր բայերի գործածությունն ընդարձակվել է «անորոշելի բայն կարէ *առնանիլ* իբր մի ասումն»՝ նախկին *առնուլի* դիմաց (Նրծ., 32), նաև՝ *յաւելանի, յաւելանայ* (փխ.՝ *յաւելու.* անդ, նաև՝ Նրծ. 96, 131): Ընդհանրապես *ի լծորդության* հատկացումը կրավորական սեռին հիմնականում կայունացած է՝ «ասի». "dicitur", «դնի». "ponitur", «անդրադարձի». "convertitur", «կու շարժի». "mouetur", «շարադրին». "conjuguntur", «բառնի». "removetur" (Նրծ., 75, 92, 127, 136, 137, 109) են: Այս խմբի ձեռագրերում *ի լծորդությամբ* բայերի դերբայական ձևերը ևս, որոնցում արտացոլված չէ նրանց խոնարհման տիպը, ենթարկված են այս կանոնին՝ *ծնանիլ, սկսանիլ, տանիլ, մեռանիլ, ուսանիլ, գտանիլ* (Նրծ. 163, Բ., 212, 250, 257, 266, Գ., 372) են. սա հատկապես արտահայտվել է *լինել* բայով կազմված կապակցություններում՝ *կարէ լինիլ*, փխ.՝ *կարէ լինել* (ՄՄ 1684-ում այս բայի լծորդությունը գրեթե միշտ փոխված է): Սրանով բաղադրված ժամանակաձևերն արտահայտում են կրավորական իմաստ՝

⁹ Սա, նաև ստորև ներկայացված անցյալ դերբայ + էական բայ կառույցը, Գ. Մուրադյանը նշում է անտեսված հատկանիշների նկարագրության մեջ. տե՛ս անդ, էջ 233-236:

¹⁰ Տե՛ս Վ. Համբարձումյան, անդ, էջ 110-115:

դրվելով պարզ ժամանակաձևերի փոխարեն. «տարեալ *հանեն* առ անկարելին» > *հանեալ լինի* (Բ., 306), *դնի, արասցուք* > *եղեալ լինի, առեալ լինի* (Գ., 451, 462) են:

-*Իւր* վերջավորությամբ անկատար անցյալը հանդես է եկել իբրև սկզբնական ձև՝ *դնիր, յարմարիր* (վաղ շրջանում սրանք հետագա հավելումներ էին), նաև՝ *երեիր, կանգնիր, ունիր* (Ա., 143, Բ., 251, 260):

Կրավորական անցյալ դերբայը կայունացել է բազմիցս կիրառված *ստորոզիցեալ* ձևով (Նրծ., 98, 101, 107, 112, 116, 127, 128, 150, 151). նաև ծառայել է որպես բառակազմության հիմք՝ *ստորոզիցելումն* (Նրծ., 144): Հանդիպում է նաև *ի ծնիցելոյ* ձևով (Գ., 325):

3. Արհեստական հոգնակիի *մարդիկք* ձևը հաստատվել է նոր օրինակներով (Բ., 161, 191, Գ. 270):

4. Ստորադասական եղանակի ժամանակաձևերը միօրինականացնելու փորձ է արվել՝ ներկան փոխելով առաջին ապառնիի. «թէ *ասէ* հանդերձեալ...» > *ասիցէ* (Նրծ., 100), *նշանակէ* > *նշանակիցէ, ունի* > *ունիցի, հարցանէ* > *հարցանիցէ* (Բ., 171, 174, 175) են, նաև՝ կատարյալի հիմքով ժամանակաձևերը. «եթէ *դարձցի* այս պարզաբար...» > *դառնայցէ* (Ա., 115), *լիցի* > *լինիցի, անցցէ* > *անցանիցէ, մնասցէ* > *մնայցէ*, (Բ. 178, Գ. 305) են, բայց սա բացարձակ անցում չէ, նաև՝ *լինի, լինիցի* > *լիցի* (Նրծ., 102, Բ., 207) են:

Նկարագրված ձևերը հիմնականում պատկանում են հունարան ավանդույթին, որը, ինչպես հայտնի է, անցել է լատինարան հայերենին՝ կազմելով նրա նկարագրի կարևոր մասը¹¹:

Բ. Շարահյուսական առանձնահատկությունները

Թարգմանական հատվածներում որոշակի սկզբունք կիրառված չէ, նկատելի է ձգտում՝ պահպանելու լատ. սկզբնագրի բառաքերականական համարժեքությունը, օր.՝ «Չայն է հնչումն (= vox est sonus) ելեալ (= prolatus) ի բերանոյ կենդանոյ (= ab ore animalis) բնական գործեօք (= naturalibus instrumentis) ձևացեալ (= formatus)» են, միաժամանակ քիչ չեն ազատ թարգմանության դեպքերը, օր.՝ «Dialectica est ars artium ad omnium methodorum principia viam habens»- «Դիալեկտիկական արհեստների արհեստ է, որ ունի ճանապարհ (բառացի՝ ճանապարհ ունեցող) բոլոր մեթոդների սկզբունքների համար» / «Դիալեթիկայ է արհեստ արհեստից առ ամենայն մեղողայիցն, այսինքն՝ գիտութեանց սկզբունս ճանապարհ ունել»: Կառույցները երբեմն ինքնին անկայուն են, կարող են տարբերակային դրսևորում ունենալ՝ անկախ սկզբնագրից, օր.՝ "cuius nulla pars significat separata finita recta"-ը թարգմանվել է տարբեր կերպ՝ «որոյ ոչինչ մասն գատեալ նշանակէ որոշակի, ուղղակի» / «որոյ մասն ոչ է նշանական՝ գատեալ որոշակի, ուղղակի», նաև՝

¹¹ Տե՛ս անդ, էջ 165-180:

"sumptus in maiori propositione"- «առեալ ի մեծ առաջարկութիւնն», "sumptus in minori propositione"- «որ առեալ լինի ի փոքր առաջարկութիւնն» են:

Վաղ շրջանի ձեռագրերում օտար կադապարները ստեղծվել են լատ. սկզբնագրի ազդեցությամբ, ինչպես նաև՝ հետևելով հունարան ավանդույթին:

Հիմնական դրսևորումները. դերբայական դարձվածների կիրառության ընդարձակում ի հաշիվ երկրորդական նախադասությունների՝ ա. որոշի արժեք ունեցող ենթակայական դերբայով դարձված. «Նախադասութիւնն է բան՝ նշանակող ճշմարտութեան կամ ստութեան» (Նրծ., 106) - "Propositio est oratio verum vel falsum significans" (Tr. I, 3), բ. նույն արժեքով անորոշ դերբայի գործիական հոլովով դարձված. «էլէնքուսն է հակասական հավաքաբանութիւն միոյ եւ նոյնի, ոչ խնդրելով զայն, որ ի սկզբանէն էր առ նոյնն ըստ նոյնոյն, նմանապէս եւ՝ ի նոյն ժամանակի» (Բ., 287) - "Elenchus est sillogismus contradictionis unius et eiusdem,.... non connumerato quod erat in principio, secundum idem, et ad idem, et similiter, et in eodem tempore" (Tr. VII, 161-162), գ. խնդրի արժեք ստացած անորոշ դերբայով դարձված. «Եզական սահման է այն, որ բնաւորեալ է միայն ի միոյ ստորոգիլ» (Նրծ., 108) - "Terminus singularis est qui est aptus natus de uno solo predicari" (Tr. I, 4-5) նւ¹²: Սա հանգեցրել է նաև դերբայական դարձվածների կուտակման, օր.՝ անցյալ դերբայով արտահայտված լրացում դարձված և սրա գլխավոր անդամին լրացնող դերբայական դարձված. «առաջարկութիւնն՝ նշանակեալ ձայնաւոր գրովն՝ անմիջաբար զնախեդեալն» (Ա., 198)- "propositio intellecta per vocalem immediate precedentem" (Tr. IV, 53) են:

Շարադասության պատճենմամբ, որի օրինակները բազմաթիվ են, զանց է առնվել մասնական բացահայտչի կապը, որը զանազանվել է լրացյալից նախորդի գործածությամբ. «.... որ ունի ենթակայ և ստորոգեալ՝ զնախկին մասունս իւր» (Նրծ., 106) (փխ.՝ իբրեւ զնախկին մասունս իւր) - "... que habet subiectum et predicatum principales partes sui" (Tr. I, 3), նույն կառույցի թարգմանության մեկ այլ տարբերակում փոխվել է խնդրի հոլովը. "... que habet duas [propositiones] cathedricas principales partes sui" (Tr. I, 8). «.... որ ունի երկու քաթեքօրիկայ՝ նախկին մասունք իւր» (Նրծ., 136). լատ. «բացարձակ բացառական/գործիական» (ablativus absolutus) կառույցից ևս մեկ շեղում՝ անսովոր խնդրառությամբ. «ի ստորոգելոյն լինի ենթակայ՝ մնալով նոյն որակին, այլ փոխեալ քանակին» (Նրծ., 127) - "de predicato subiectum, etiam manente eadem qualitate, sed mutata quantitate" (Tr. I, 8): Մյուս կողմից ակնհայտ խորթ կառույցը, ինչպիսին մասնական սեռականն է (genetivus partitivus), հարմարեցվել է հայերենին՝ սեռ. + սեռ.-ի փոխարեն դրվելով սեռ. + բաց. «Իսկ արդ գիտելի է, զի ամենայն հաւաքաբանութիւն լինի յերից սահմանաց և յերկուց առաջարկութեանց, որոց ի նախադասութեանցն

¹² Սրանք հունարան հայերենից սերող հատկանիշներ են. տե՛ս Գ. Մուրադյան, անդ, էջ 160-170:

առաջինն կոչի մեծ և երկրորդն՝ փոքր» (Նրծ., 94). "Omnis autem sillogismus constat ex tribus terminis et duabus propositionibus. *Quarum propositionum prima vocatur maior propositio, secunda minor.*" (Tr. IV, 43-44):

Խնդրառության պատճենում է «կայանայ յայնմիկ» կառույցը, հմմտ. "consistit in eo"¹³, որ կիրառվում է հետագա լատինաբան թարգմանություններում, օր.՝ «Ճշմարիտ ողորմածութիւն կայանայ ի յերիս. այսինքն. ի տալն, ի ներելն, և ի յառատաբաշխելն»- «*Misericordia vera, consistit in tribus: in dando, in condonando, et in supererogando*»¹⁴: Այս կառույցը հանդիպում է նաև «Դիալեկտիկայում». «յայսպիսի հաւասարութիւնս կայանայ ճշմարտութիւնն» (Նրծ., 87), «յայսպիսի անմիաբանութիւնս կայանայ ստութիւն» (Նրծ., 88), «կայանայ ի յեզրսն վերջին վերլուծութիւն դիալեթիկոսին» (Ա., 163):

Շարահյուսական լատինաբանությունների հայտնի հատկանիշները այս խմբի ձեռագրերին բնորոշ չեն՝ դեռևս անկանոնություններ են: Այդպիսին են, օրինակ, նախադասության անդամների պարտադիր համաձայնության դեպքերը՝ «ներհականաւ կերպիւ» (Նրծ., 131), «այլով անուամբ» (Բ., 291), «եղանակք նշանակեալք» (Ա., 197), «նախադասութեանցն հաղորդելոցն» (Գ., 398) ևն. սրանց մեջ համեմատաբար կայուն դրսևորում ունի դերբայների թվի համաձայնեցումը էական բայերի հետ. «հաւանեալք են» (Ա., 164), «որոշեալք են» (Գ., 343), «գուգեալք են» (Գ., 382) ևն:

Հետագա ձեռագրերում այս հատկանիշները ընդգրկել են ամբողջ շարահրանքը (տատանվող հաճախականությամբ). այդպիսով, կապակցությունները, կարելի է ասել, քերականորեն հողավորվել են՝ կազմելով մեկ ամբողջություն: Սա արտահայտվել է պարտադիր համաձայնության զանազան կաղապարներով:

Համաձայնություն՝ ա) թվով՝ ենթակա + ստորոգյալ. «ձայնք են նշանակք» (Նրծ., 90), ստորոգյալի բաղադրիչների միջև (դերբայ + էական բայ). «գիտեցեալք լինին» (Բ., 225), որոշիչ + որոշյալ. «այլք բազումք հաւաքաբանութիւնք» (Ա., 207), որոշյալ + որոշիչ. «տարբերութիւնք եւթունք» (Նրծ., 96) ևն, բ) տարբեր հոլովներով՝ «վասն բաղադրելոց պատրանացն» (Բ., 267), «եղելոց բային» (Նրծ., 99), «զամենից անբանից կենդանեացն» (Գ., 390), «յերրորդէ եղանակէն» (Ա., 183), «այլով բազմաւ կերպիւ» (Գ., 326), «յայսմ օրինակոջ» (Ա., 169) ևն:

Կապակցման այս եղանակով ստեղծվել են քերականորեն միաձույլ բազմաբաղադրիչ կառույցներ՝ մինչև հնգանդամ կազմով, ինչպես՝ «առեալք լինին երկուք կանոնք զանազանք» (Ա., 208): Այդուհանդերձ, պարտադիր համաձայնությունը

¹³ Սա թափանցել է աշխարհաբար ռուսերենի միջնորդությամբ («կայանում է նրանում» – «состоит в том»):

¹⁴ Գիրք Երանելոյն Ալպերտի որ կոչի Դրախտ հոգւոյ, Վէնէտիկ, 1729, էջ 100, Albertus Magnus, Opera omnia, ed. P. Jammy, Paradisus animae, vol. 21, Lyon, 1651, p. 12:

բացարձակ դրսևորում չի ունեցել և հաճախ նաև չի գործել. «երկու նախադասու-թիւնքս» (Նրժ., 130), «ընդհանուր ստորասականք» (Նրժ., 131) ևն:

Այսպիսով, «Դիալեկտիկայում» գործածվել են մի քանի նոր և ուշագրավ քերականական ձևեր, որոնք ստեղծվել են լատիներենի ազդեցությամբ կամ նրա կաղապարների ընդօրինակմամբ և հիշատակված չեն լատինաբան հայերենի նկարագրություններում: Վաղ շրջանի ձեռագրերում լատինաբանությունները հազվադեպ են՝ չունեն համակարգային բնույթ, մինչդեռ ուշ շրջանի բնագիրը հանդիսանում է լատինաբանության նմուշ, որ պարունակում է այդ ուղղության հիմնական հատկանիշները:

Тигран Сирунян, «Грамматические латинизмы в «Диалектике» Варфоломея Болонского в сравнении ранних и поздних рукописей».– В статье исследуются грамматические латинизмы одного из важнейших трудов унииторской литературы– «Диалектика», на основе данных рукописей XIV и XVII веков. Показано, что латинизмы в ранних рукописях не имеют системного характера, тогда как текст позднего периода представляет собой образец латинизма, содержащий основные черты этого направления. В статье также представлены несколько новых грамматических форм, созданных под влиянием латинского языка, которые ранее не упоминались в исследованиях латинизированного армянского языка.

Ключевые слова: латинизированная грамматика, рукопись, комментарий, синтаксис, морфология, диалектика, логика.

Tigran Sirunyan, «The Grammatical Latinisms in Bartholomew of Bologna's «Dialectica» in Comparision of Early and Late Manuscripts».– The article examines the grammatical Latinisms of one of the most significant works of Uнитарian literature– «Dialectica», based on data of 14th- and 17th-century manuscripts. It is demonstrated that Latinisms in early manuscripts are not systematic, while the late-period text represents an example of Latinism containing the main features of this movement. The article also introduces several new grammatical forms created under the influence of Latin, which have not been previously mentioned in studies of Latinizing Armenian.

Keywords: Latinizing grammar, manuscript, commentary, syntax, morphology, dialectics, logic.

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ`
ԸՍՏ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՈՒԻՔԻՓԵՏԻԱՅԻ**

Ստեփանեան Ազնիւ (Սուրիա)

Արեւմտահայերէն Ուիքիփետիայի ղեկավար,
«Արեւմտահայ գիր ու լեզու» Կրթական ՀԿ-ի հիմնադիր նախագահ.
aznivstepanian@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-07-3-183

Բանալի բառեր. Արեւմտահայերէն, արեւելահայերէն, արեւմտահայերէն ուիքիփետիա, բառապաշար, տարբերութիւններ, կրթութիւն, Սփիւռք, առցանց հարթակներ:

Լեզուին կարելորութիւնը մեծ է մայրենին սիրողներուն համար: Հայ գիրի ու դպրութեան, հայ մամուլի հազարաւոր հրատարակութիւններու կողքին, մեծ եւ կարելոր է առցանց ձեռնարկներու առկայութիւնը, լեզուն օգտագործելի եւ կենդանի պահելու համար:

Ուիքիփետիան, իբրեւ առցանց ձեռնարկ, տեղեկատուական եւ գիտելիքներ փոխանցող արդիական միջոց է, ուր օտար լեզուներով դրսեւորումներու կողքին, վերջի շրջանին աշխատանք սկսած է տարուիլ հայոց լեզուի երկու գրական հայերէններու տարբեր դրսեւորումներու, տեղ գտնել այդ հարթակի վրայ: Իսկ որոնք էին նախադրեալները:

21-րդ դարուն, Միջին Արեւելքի մէջ սկիզբ առած ընդհարումներն ու պատերազմները նոր արտագաղթի պատճառ հանդիսացան՝ նօսրացնելով Միջին Արեւելքի գաղութները: Արեւմտախօս հատուածին զանգուածային գաղթը, յատկապէս՝ Սուրիայէն, Լիբանանէն, Իրաքէն եւ այլ շրջաններէն, իրենց ժխտական ազդեցութիւնը ունեցան Արեւմտահայերէնի նահանջին: Տեղին է նշել նաեւ, որ 2010-ին «ԵՈՒՆԵՍԿՕ»ն Արեւմտահայերէնը դասած էր «վտանգուած լեզուներ»ու շարքին: Ուստի, ծառայած վտանգին դէմ յանդիման գտնուող եւ առաւելաբար միայն սփիւռքի մամուլին մէջ «գործող» Արեւմտահայերէնը պէտք էր պահպանել, իբրեւ կենդանի լեզու:

«Արեւմտահայերէն Ուիքիփետիա» հարթակին ստեղծման հիմնական նպատակներէն եղած է համացանցի ճանապարհով, խթանել ու հարստացնել Արեւմտահայերէնը՝ գիտական նոր բառերով ու եզրոյթներով, եւ գիտելիքի ազատ հանրագիտարան (շտեմարան) ըլլալուն առընթեր, կարելոր դեր ու ներդրում ունենայ Արեւմտահայերէնի առցանց տարածման եւ պահպանման գործընթացին մէջ:

Երկար աշխատանքներէ ետք, 2019-ի սկիզբը, ստեղծուեցաւ Արեւմտահայերէնի համար առանձին՝ «հԿՄ» կարգանիշ¹, որ կրնայ ծառայել համացանցի վրայ Արեւմտահայերէն լեզուի գործածութեան համար օժանդակ ծրագիրներ մշակելու աշխատանքին: Կարգանիշը տրամադրուեցաւ «SIL International»-ի² կողմէն, որ «ISO 639-3»-ը³ գրանցող մարմինն է: Իսկ նոյն թուականի 1 Ապրիլին, Արեւմտահայերէն Ուիքիփետիան ունեցաւ համացանցի իր առանձին հարթակը:

Իսկ եթէ մենք մեզի հարց տանք, թէ այս կարգանիշը որեւէ առնչութիւն ունի՞ այս աշխատանքին զարգացման ու հարստացման ծիրին եւ կրթական ծրագիրներուն հետ, պիտի ըսենք՝ «Այո՛, այս աշխատանքին զարգացման ու հարստացման գործին եւ կրթական ծրագիրներու միջեւ տեսանելի է յստակ առնչութիւն մը՝ այն առումով, որ երկու կողմերն ալ փոխկապակցուած են իրարու իբրեւ տեղեկութիւնն ու գիտելիքը փոխանցելու գործառոյթ, կրթական ծրագիրը՝ դասական, իսկ Ուիքիփետիան՝ ամէնէն ժամանակակից ձեւերով: 21-րդ դարուն, սխալ պիտի ըլլայ, որ ուսուցումը գործէ այնպէս, ինչպէս կը գործէր 20-րդ դարու վերջին քառորդին»:

Արեւմտահայերէնը Սփիւռքի տարածքին, այո՛, պայքարի մէջ է: Նոր սերունդը, ո՛չ թէ չի սիրեր հայերէնը, այլ՝ կը դժուարանայ զայն արտասանելու, ուստի նաեւ՝ բանաւոր եւ յատկապէս գրաւոր լեզուն վերարտադրելու: Հարթակը կը հաւատայ, որ ինչպէս արհեստագիտական նորարար ուղեգիծերով մշակուած բոլոր այն ծրագիրները, որոնք կը միտին կենսունակ պահել Արեւմտահայերէնը, նոյնպէս ալ Արեւմտահայերէն Ուիքիփետիան կը փորձէ իր համեստ ներդրումով ծառայել նոյն նպատակին՝ ընդգրկելով տարբեր տեսակի, տարբեր մասնագիտութիւններով հայկական եւ օտար նիւթեր, Արեւմտահայերէնով: Անիկա կրնայ կարեւոր խթան հանդիսանալ Արեւմտահայերէնի գործածութեան համար՝ Արեւմտահայերէնը օգտագործելով իբրեւ գրաւոր լեզու:

2014-էն ի վեր, մաս կազմելով Արեւմտահայերէն Ուիքիփետիայի հարթակին ստեղծման եւ զարգացման աշխատանքներուն, 5 տարի վարելով

¹ «հԿՄ» կարգանիշը . կարգանիշ ունենալու միտքը սկիզբ առած էր Արեւմտահայերէն Ուիքիփետիայի առանձին բաժին մը ստեղծելու հեռանկարով, սակայն կրնայ ծառայել նաեւ համացանցի վրայ Արեւմտահայերէնով տարբեր (ինչպէս սրբագրիչ, փոխադրիչ, թարգմանիչ) ծրագիրներ մշակելու աշխատանքին:

² Ոչ հասութաբեր, քրիստոնէութեան հաւատքին վրայ հիմնուած կազմակերպութիւն մըն է, որուն հիմնական նպատակն է ուսումնասիրել, զարգացնել եւ վաւերացնել լեզուները, յատկապէս քիչ յայտնիները՝ լեզուական գիտելիքները ընդլայնելու, գրագիտութիւնը խթանելու, քրիստոնէական Աստուածաշունչը տեղական լեզուներով թարգմանելու եւ փոքրամասնութիւններու լեզուին զարգացման նպատակով նպատակով:

³ «ISO»-ն (International Organization for Standardization) Կանոնաւորման միջազգային կազմակերպութիւն մըն է, որ կը մշակէ եւ կը հրատարակէ միջազգային օրինաչափութիւններ՝ առեւտրական եւ արդիւնաբերական. ունի նաեւ լեզուներու ենթատարբերակներ, որոնք ճանչցուած են եւ կարգանիշ ունին: «ISO»-ն կը ցանկագրէ եւ տարբեր համացանցային գործողութիւնները կը դիւրացնէ:

ծրագրի համակարգողի աշխատանքը, ապա՝ 2020-ին գրանցելով «Արեւմտահայ գիր ու լեզու» ՀԿ-ը հիմնելու Արեւմտահայ խմբագիրներու միջազգային խմբակը, եւ ցարդ, վարելով հարթակն ու յօդուածներու տեղադրման եւ տեղադրուած յօդուածներուն մէջ նշուած աղբիւրներու ստուգման, խմբագրման ձեւերուն ու գործիքներուն ծանօթացման աշխատանքները, ընթացքին նկատած ենք Արեւելահայերէն բառերու որոշ անհամապատասխանութիւն. խօսքը կը վերաբերի Արեւմտահայերէն եւ Արեւելահայերէն բառապաշարի տարբերութիւններուն: Ռուբէն Սաքապետոյեան իր աշխատութեան մէջ տուած է բազմաթիւ բառեր, բառաձեւեր եւ դարձուածքներ, որոնք Արեւելահայերէնի մէջ գործածուող ձեւերու համեմատ ունին առնուազն մէկ ձեւային կամ իմաստային տարբերութիւն⁴:

Աշխատանքին մէջ առանձնացուցած ենք 70 բառ, զանոնք դասակարգած ենք ըստ խօսքի մասերու, նաեւ նշած ենք անոնց իմաստային առանձնայատկութիւնները: Նշուած բառերը կարելի է համարել, իբրեւ ժողովրդախօսակցական եւ բարբառային բառեր. սակայն գոյութիւն ունի նաեւ ժողովրդախօսակցական եւ բարբառային բառերու գրականացում: Մեր գեղարուեստական գրականութեան եւ մամուլին մէջ մուտք կը գործեն նաեւ ժողովրդախօսակցական լեզուի եւ բարբառներու բազմաթիւ բառեր: Այդ բառերը կը պատկանին մեր գրական լեզուի բառապաշարի ժողովրդական եւ բարբառային բառաշերտերուն: Սակայն բառապաշարի զարգացման ընթացքին, անոնցմէ շատերը կը ստանան լայն գործածութիւն եւ ժամանակի ընթացքին մուտք կը գործեն գրական լեզուի բառերու շարքին⁵:

Ստորեւ կ'անդրադառնանք երկու գրականներուն բառապաշարային որոշ տարբերութիւններու, հետեւեալ դասակարգումով՝

Առաջին խումբ՝ գոյականներ.

<i>Արեւելահայերէն</i>	<i>Արեւմտահայերէն</i>
ամանոր	կաղանդ
աշխարհամաս	ցամաքամաս
դանդուր	փերփեր/փրփրեմ
դասաժամ	դասապահ
դասղեկ/դասվար	դաստիարակ
դարպասապահ	բերդապահ
դեկան	տնօրէն
դեղատուն	դեղարան
դրամատուրգ	թատերագիր

⁴ Ռուբէն Սաքապետոյան, «Արեւելահայերէն եւ արեւմտահայերէն. մերձեցման հնարավորութիւններ», էջ 36-42:

⁵ Տե՛ս Է. Բ. Աղայեան, «Լեզուաբանութեան հիմունքներ», Ե., 1987, էջ 411:

ընդմիջում	դադար
լուսամուտ	պատուհան
լուսացույց (ռուսերենեն՝ սվետաֆոր)	ազդալոյս
կենդանի	անասուն
կրակայրիչ	հրահան, կայծքար, կայծհան
հաշվեհարդար (հատուցում, պատիժ, փոխհատուցում)	հաշուեյարդար (հաշիւները կարգի բերելը, մաքրելը)
հարեվան	դրացի
հեռակառավարման վահանակ (ռուսերենեն՝ պուլտ)	հեռադեկ
ճամբար	բանակում
մեքենա	ինքնաշարժ
մթերախանութ/նպարխանութ	նպարավաճառանոց/ Նպարավաճառի խանութ
մուրաբա	անուշ
նկարիչ	գծագրիչ (նկարիչ՝ լուսանկարիչ)
շախմատ	ճատրակ
պատվեր	ապսպրանք
սարք	գործիք
սրբիչ	անձեռոց
վարսավիրանոց	Սափրիչ, վարսայարդար
վիրահատություն	գործողութիւն
տիկնիկ	պուպրիկ

Հոս կան նաեւ համանուններ, որոնց գրութիւնը ե՛ւ Արեւմտահայերէնի եւ Արեւելահայերէնի մէջ նոյնն է, սակայն կը դրսեւորեն իմաստային տարբերութիւններ.

ախոյան (թշնամի)	ախոյեան (մրցանակաւոր, յաղթող մարզիկ)
առաջադրանք (հանձնարարություն)	առաջադրանք (ծրագիր, որոշում)
բերդ (կալանավայր)	բերդ (ամրոց)
գաղութ	գաղութ
պալատ (հիվանդանոցի սենյակ)	պալատ (ապարանք, իշխանական նստավայր)
պանդոկ (ճաշարան)	պանդոկ (իջեւան)

Երկրորդ խումբ՝ բայեր.

անջատել	մարել
արարել	ստեղծել
գրկել/ առի՛ գրկեմ	փաթթել/ եկո՛ւր փաթթուկ ընեմ
զգել	նետել
զանգահարել	հեռաձայնել
խնդրել	հաճիլ
նկարել	զծել
շտապել	աճապարել
շփվել	յարաբերիլ
պահել	կանգնեցնել
պատվիրել	ապսպրել
վախճանվել, մեռնել, մահանալ	մեռնիլ, մահանալ

Վերոնշեալ բայերուն մէջ կ'առանձնանայ «վախճանիլ» բայը, որ թէև կը գործածուի Արեւելահայերէնի մէջ, սակայն Արեւմտահայերէնի մէջ բացառապէս կը գործածուի հոգեւորականներու պարագային:

Երրորդ խումբ՝ ածականներ եւ մակբայներ.

ահալոր (ծայրահեղ, երկյուղ առաջացնելու չափ, ապշեցնելու չափ)	ահաւոր (ահալի, երկիւղալի)
անգիր	զոց (անգիր արտասանութիւն)
զեշ	տզեղ
ընդմիշտ	յաւերժ, յաիտեան
թանկ	սուղ
կազարագոյն	նարնջագոյն
հավես ⁶ /հավաս ⁷ /արձանագրուած է Էդուարդ Աղայանի բառարանին մէջ տրուած է գաւառական նշումով/ կը նշանակէ	փափաք, լաւ տրամադրութիւն, եռանդ

⁶ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ., Ե., 1974: Մաս 3, էջ 309:

⁷ «Արդի հայերէնի բացատրական բառարան», Էդուարդ Բագրատի Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Ե., 1976: Մաս 1, էջ 836:

փափաք...	
հիւանդ	անհանգիստ
մշտական	մնայուն, տեւական, մշտատեւ
սառը	պաղ
սոված (անոթի, քաղցած)	անօթի (սոված՝ սնունդի ընդհանուր չգոյութիւն. օրինակ՝ ... ժողովուրդն ալ նոյն ցեղասպանին կողմէ սովի մատնուեցաւ)

Վերոնշեալներէն՝ ահաւորը, երկու ճիւղերուն մէջ ալ կը գործածուի նոյն, բացասական, իմաստներով: Սակայն պէտք է նշել, որ Արեւելահայերէնի մէջ գործածուած է եւ կը գործածուի նաեւ «շատ, ծայրայեղ, չափազանց խիստ» իմաստներով, չափազանցելու նպատակով. Արեւելահայերէնը կ'ընդունի, որ լեզուներու մէջ յաճախ կը պատահին նման իմաստային զարգացումներ՝ պատկերաւորութեան կամ չափազանցութեան նկատառումներով, եւ երբեմն անոնք նոյնիսկ «կը բառայնանան» բառապաշարին մաս կը կազմեն: Օրինակ՝ ահաւոր հարուստ է, ահաւոր ընդունակ է. Արեւելահայ գրականութեան մէջ եւս կը հանդիպինք նման օրինակներու. «Ամեն մեկն աշխատում էր, որ շատ հիանա այս ահավոր գեղեցկութեան վրա:» (Հովհաննէս Թումանյան):

Արեւելահայերէն բառամթերքին մէջ ընդհանրացած եւ գործածական դարձած են օտար բառերը: Արեւելահայերէն յօդուածներուն մէջ նկատելի են բառամթերքին մէջ ընդհանրացած եւ գործածական դարձած այն օտար բառերու պարագան, որոնք մանաւանդ Արեւմտահայերէնի գրական լեզուին մէջ ընդունելի չեն եւ չեն օգտագործուիր. Հրաչեայ Աճառեան իր աշխատութեան մէջ բազմաթիւ օրինակներ նշելով գրած է. «Արեւմտահայերը հնարեցին բազմաթիւ նոր բառեր, որոնց դէմ արեւելահայերը կ'ան ուրիշ բառ են հնարել եւ կամ աւելի յաճախ օտար եւրոպական բառ են գործածում»: Մեկնելով Արեւմտահայերէն Ուիքիփետիայի յօդուածներէն կը ներկայացնենք ստորեւ նշեալ քանի մը օրինակներ.

ակադեմիա	կաճառ
աուդիտոր	հաշուեքննիչ, հաշուետես
ավտոբուս	հանրակառք
բազա	հիմք
Էկոնոմիկա	տնտեսութիւն
ինստիտուտ	հիմնարկ

8 Տե՛ս Հովհաննէս Թումանյան, Պատմվածքներ, «Քաջերի Կյանքից», էջ 22:

9 Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», Ե., հ. 2, 1951, էջ 567-568:

կատեգորիա	ստորոգութիւն, հանգամանք
կարտոֆիլ	գետնախնձոր
կինետիկ	ժառանգական
կուլտուրա	մշակութ
հիգիենիկ	առողջապահական
չեմպիոն	ախոյեան
սոցիալական	ընկերային
սպորտի	մարզական
ֆինանսական	էլեւմտական
ֆինանսիստ	էլեւմտագէտ

Կը նկատենք, որ Արեւմտահայերէնը որդեգրած է բառապաշարի հարստացման ներքին միջոցը, որ ըստ Էդուարդ Աղայեանին, նոյն լեզուի հնարաւորութիւններով նոր բառեր կազմելն է¹⁰. օրինակ՝ «ինքնաշարժ» եւ «հեռադէկ», վերոնշեալ բառերը, ինչպէս նաեւ այլ բառեր:

Կարգ մը բառեր արեւմտահայուն համար հասկնալի կը թուին ըլլալ, սակայն անոնք իմաստային որոշ առանձնայատկութիւններ ունին, օրինակ՝ արեւմտահայուն համար խորթ է «մշտական ջուր ունենալ» կապակցութիւնը, Արեւմտահայերէնի մէջ աւելի գործածական է «մշտատեւ ջուր» արատայայտութիւնը:

Թեմային շուրջ մեր կողմէ կատարուած հետազօտական աշխատանքը յանգած է հետեւեալ եզրակացութեան. 70 բառերէն՝

ա- 35-ը գոյականներ են, որոնցմէ 6-ը ունի նոյն հնչիւնական կազմը, բայց կը դրսեւորեն տարբեր իմաստներ,

բ- 12-ը բայեր, 11-ը ածականներ եւ մակբայներ, իսկ 16-ը հայերէն՝ բառեր օտար բառերու դիմաց /հայատառ օտարամուտ բառեր/:

Այսպիսով, Արեւելահայերէնի եւ Արեւմտահայերէնի բառապաշարային եւ իմաստային առկայ որոշ տարբերութիւններու վերաբերեալ հրապարակուած ոչ բոլոր յօդուածները անդրադարձած են արեւմտահայերէնի բառապաշարի իմաստային դասակարգմանէ նկատի ունենալով որ այսօր առցանց հարթակը դարձած է մեր ամէնօրեայ օգտագործման աղբիւրը, ուստի հնարաւոր է խորապէս հետազօտել այս ոլորտը, որովհետեւ արեւմտախօս Սփիւռքի համայնքներուն մէջ որոշ բառեր կրնան իմաստազրկուած ըլլալ, եւ դրսեւորուած նոր իմաստներով՝ ազդուելով արեւելահայերէնէն եւ տուեալ երկրի լեզուամտածողութենէն:

Ուստի, լեզուն պահպանելու հեռանկարով, պէտք է զինուած եւ ճկուն ըլլալ:

¹⁰ Տե՛ս Է. Բ. Աղայեան, «Լեզուաբանութեան հիմունքներ», Ե., 1987, էջ 388:

Stepanian Azniv - "Western Armenian and Eastern Armenian Vocabulary Differences, According to the Western Armenian Wikipedia".- In the work, we singled out 70 words, classified them according to parts of speech, and noted their semantic peculiarities. Of 70 words:

- a- 35 are nouns, 6 of which have the same phonetic structure, but have different meanings.
- b- 12 are verbs, 11 are adjectives and adverbs, and 16 are Armenian words for foreign words /foreign words in Armenian/.

Bearing in mind that today, the online platform has become the source of our daily use, it is possible to research this area deeply. In the Western-speaking Diaspora communities, some words may be deprived of meaning and manifested with new meanings, influenced by Eastern Armenian and the language culture of the given country. Therefore, one should be armed and flexible with the perspective of preserving the language.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մխիթարյան Գայանե -Հայերեն Աստվածաշնչում սեռական, տրական հոլովով ենթակաների գործածության շուրջ.....	5
Դիլբարյան Նարինե -«Տուն, բնակավայր» հասկացության փոխառյալ ծագման բառերը Մովսես Խորենացու «պատմութիւն հայոց» երկում.....	11
Այվազյան Սարգիս -Ուրարտերենի որոշ բառաքննական դիտարկումներ և ստուգաբանություններ.....	26
Արուսյան Սարիա - Խնուսի խոսվածքի դրսևորումները Ռուսաստանի դաշնությունում.....	51
Ափոշեան Աւետիս -Յատուկ անուններու տառադարձութեան խնդիրները արեւմտահայերէնի մէջ. պատմական զարգացումն ու զուգընթացութիւնը արեւելահայերէնի հետ	71
Բառնասյան Ջեմմա -Դերանվանական իրողություններ Մուշ- Տիգրանակերտի բարբառախմբում.....	83
Բարսեղյան Վարդուհի - Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն» երկի գրաբարյան նախդրային կառույցների թարգմանությունը արդի արևելահայերեն բնագրում.....	89
Вичкаева Анна Викторовна - Надписи на древнеармянском языке в системе орнаментального декора хачкаров.....	96
Գրիգորյան Մուսաննա, Պարոնյան Նաիրա - Նորակազմությունները Սահակ Չորոփորեցու երկերում.....	102
Գրիգորյան Մուսաննա - Իրավական հասկացությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի «Նորին քարոզ վասն տասնաբանեան օրէնս» գլուխներում.....	108
Զաքարյան Հովհաննես - Տարածաժամանակային հարաբերություններ նշող հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.....	117
Թադևոսյան Հասմիկ -Բառակապակցական բուսանունների կիրառությունը Ա. Ամասիացու բժշկարաններում.....	135
Խաչատրյան Վալենտին - Միջինհայերենյան փոխառությունների գործածությունը XIV դարի երկերում.....	144
Խալիկեան Զեփիու - Հայերենէ անգլերէն գրուցատրութիւն.....	158
Մկրտչյան Գարիկ - Միջին հայերենի ընդգրկած ժամանակաշրջանի շրջանաբաժանման նոր փորձ.....	165
Միրունյան Տիգրան -Բարդուղիմեոս Բոլոնիացու «Դիալեկտիկայի» քերականական լատինաբանությունները՝ վաղ և ուշ շրջանի ձեռագրերի համեմատությամբ.....	175
Ստեփաննեան Ազնիւ - Արեւմտահայերէն եւ արեւելահայերէն բառապաշարի տարբերութիւններ՝ ըստ արեւմտահայերէն ուիքիփետիայի.....	183

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2024, նոյեմբերի 26-27)

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի